

ՀԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ. Ա. Ա. Գ. Ի. Բ

№ 3 1889

Մ Ա Ր Տ Տ

1889 № 3

Ա Դ Ա Զ Ի Վ Տ Ա Ր Ի


Երես

1. ՊՈՅԵԱՅՅՅ ՊԵՐՃ	375	ՅԵՐԵՐ (Հարունակաթիւն):
2. ՄԱԿԱԿԱՅՅՅ ԼԵՐԻՆ	419	Եղեին (բանասահզմաթիւն):
3. " "	420	Խանուշակ (բանասահզմաթիւն):
4. ԹԱՎԱՌՈՒՅՆ ՅՐԵՎԱՆԻՖԻՐ	421	Պուտին (բանասահզմաթիւն):
5. ԵԱՐԱՎՈՐ ԱԼԵՎԻՈՒՆԻՐ	422	Պատրժիկեանի համակները:
6. ՏԵՐ-ՄԵՐԻ-ՔԵՎԱՅՅՅ ՅԱՎՀԱՅԵՆԻՈ	434	Հոգեբան.-Մանկ. խորհրդածութիւն.
7. Ա.ՐԵՒԲԵԱՅ	458	Առաջանան երդ (բանասահզմ.):
8. ՔՈՐԱՄԵԱՅՅՅ ԵԲԻՈՎԱՅՅՈՒ	459	Պ. Պաօչեանց և նարու վլոգերը: (վլոց)
9. ԵԱՐԱՋԵՎՈՒՅՅ ԿՈՐԱՎՈՅ	476	Պատուա. վերանորոգութիւն: (վլոց)
10. Ա., Ա., Լ., Ա. Պէ	500	Գլախառութիւն:
11. " " " " "	516	Եկեղեցն ակատ.թիւն:—
12. " " " " "	"	Պ. Պաօչեանցի լորեկանը:
13. " " " " "	517	Եկարտանան Դապր. պատու. խճպրին:
14. " " " " "	522	Կավիկանան արդիւնահանդիւ:
15. " " " " "	531	Մահացուցակ:
16. Z.	532	Բաղադրակ. տեսաթիւն:—Բալանել:
17. ԽՈՒՅ	546	«ԱՄԵՐՃ»-ի նոտակապատճեն:

Թ Ի Ֆ Լ Ի Ա

Ա. Գ. Ա.Օ.Տ.Ե.Ա.Յ.Բ. ՏՊԱՐԱՆ

1889



ՄՈՒԾ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 3 1889

ՄԱՐՏ

1889 № 3

ԱՊԱԶԻՆ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՎԵԱՆՑԻ
1889

Дозволено цензурою Тифлисъ. 20-го февраля 1889 года.

Типографія М. Д. Ротинянца на Гол. просп. домъ № 41.

ՅԵՅԵՐ

Վ. Է. Պ.

ՊԵՐԱ ՊԻՇԵԱՆՑԻ

(Շաբունակովթիւն՝ 1)

ԺԱ.

ԵԶՄԻԱԾՆԻ ՈՒԽՏԱԿՈՐԸ.

Արարատեան նահանգի ամեն մի գիւղացու աչքին սովորական
է յաճախ տեսնել եկեղեցումը՝ զրան առաջին կանգնած՝ մի մի
օտարական ժամաւորի, որոնք կուրծքը կոծելով՝ անզադար ծունր
են զնում և առանց աջ ու ձախ նայելու՝ Յիշուսի ներկայացրած
մաքսաւորի նման զլուխը խոնարհեցրած՝ միմիայն տեսնում են իւ-
րեանց բամբակի թելից գործած տրեխները:

Ամեն մի երեխայ, ամեն մի սուր աչք զիտեն, թէ ո՞վ է ջերմ
աղօթականը, ո՞ր աշխարհքիցն է և ո՞ւր է եկել:

— Ե'լի եկել են, արմնով հրում են և ցոյց են տալիս ժամա-
ւորներն իրար և քթերիցը զայրալիր ցուահատական ծուխ արձա-
կելով լռում:

Ժամին արդին դուրս է եկել. ժամաւորները Աւետարանը համ-
բուրել են, տուել են ժամփշին «ոզորմի Աստուածը» և լսել
նրա մեքենայարար «ոզորմի ծնողացդ» պատասխանը. տէրտէր-
ներն արդին ծալել են իւրեանց փիլմնը և կախել կանանց գասի
վանդակից ու իւրեանք դուրս եկել ժամից, խաւնուել զրսել ժողո-
ված ժամաւորներին: Ժամհարը հանգցրեց վերջին ճրագը և մօտե-

1) Տե՛ս «Մոբձ»-ի 1 և 2 համարները:

ցաւ օտարականին. բայց նորեկը ոչինչ չի տեսնում, նա մաքով սլա-
ցած է հրեշտակների զասը, նա վերացած է անցաւոր աշխարհից:

Երկու անգամ ժամհարը զգուշութեամբ շարժել է աղօթակա-
նին, բայց նա չի շտապում, նրա շրթունքները մրմնջում են և կես-
ցէն:

—Տէրաէրն ինձ սպասում է, տիրացո՛ւ, պաշտումահաց ունինք,
կրկնում է ժամկոչը. բայց օտարականը կարծես անտարբեր է դէպի այդ
առաջարկը: Նա մի երկու ծունք ևս կրկնում է և երկիւղածութեամբ
ուղղում է քայլերը դէպի բեմը, ամեն մի խաչ, մէն մի պատկեր կարգով
համբուրում է, ամեն սիւնի անկիւնին երեք անգամ մօտեցնում՝
շրթունքը և ամեն մի համբուրին երեք անգամ խաչակնքում՝ երեսը:
Վերջապէս Աստուծոյ մարդը եկեղեցու արտաքին շեմքից առ-
ուալ իւր փափազը և զլմիկո՞ հաշուած ու համեստ քայլերով՝ գլ-
նում է յառաջ, շարունակելով Խաղաղականի Հաւատով խոս-
տովանիմը:

—Ոզորմի Աստուա՛ծ, տիրացո՛ւ, խանգարում է մեր ճգնաւորին
տէրտէրը եկեղեցու բակումը:

Պանդուխտը հանդարտօրէն գլուխը վեր բարձրացրեց, յառաջեց
դէպի ձայնը և մի անլսելի շշուկով արտասանած «օր հն եա տէր»
խոսքի հետ՝ ակնածական համբույր զրոշմեց տէր հօր սուրբ աջին և
ամենահամեստ ու ամօթխած նորահարսին պատշաճ խոնարհութեամբ
երկրսպազութիւն տուեց շուրջ բոլորած ժողովրդին:

Նոքա ժամաւորներն էին, նոցանից ոչ մինը չէր հեռացել եկե-
ղեցու բակից, ամենքը սպասում էին այս ներկացացմանը:

—Բարի զալո՛ւստդ, տիրացու եղբա՛լր. Վանեցի՞ ես:

—Այո՛, սուրբ հայր:

—Հայրիկի աշակերտներիցը կը մինի՛ք:

—Ծառա՛յ եմ:

—Ի՞նչպէս է Հայրիկը:

—Օրհնող է:

—Հիմա ո՞ւր է:

—Վանէն նուաստութիւնս ճանապարհ դրաւ ու ինքը Վարադ
գնաց, հօն զալրոցին հանդեսը կը զիսուր:

—Ո՞ր կողմն է Աստուած ձեզ առաջնորդում, ո՞ւր էք զնում:

— Առւրբ էջմիածնի ուխտաւոր ենք:

— Խնդրու ածքիդ կատարո՛ւմն:

Պատասխաննը՝ խոնարհ երկրագութիւն:

— Ո՞ր տեղ էք իջևանել:

— Բայց երկնից տակ, բայց սիրելի, հարազատ և հիւրասիր հայ

հարց և եղբարց հովանիին ներքոց:

— Լաւ ձայն ունի՞ք, լաւ երգել զիտէ՞ք:

— Որչափ սուրբ Հոգին անարժանս օժտեր է:

— Էջմիածին գնացի՞ք:

— Ո՞չ, Կարսէն Ազուանեան սրբազանին յանձնարարականով Աղեք-

սանդրապօլի յաջորդ Յուսիկ հայր սուրբին ուղղուեցայ, ան ալ զիս այս

կողմէն ճանապարհ դրաւ քանի մը Աշտարակեցի եղբարց ուղեկցու-

թեամբ:

— Ուրեմն ձիով էք եկել:

— Իմ ոտքերս ամուր են, անբան անասունը նեղելու հարկ չը

կար. Հայրիկ մեզի յաճախ ոտքով քալելու և չարքաշութեան տոկա-

լու վարժութիւններ կ'աւանդէր, ինքն ալ մեզի հետ Վանայ շըր-

Զակայքը կը պոլոտէր, զիւղերը մեզի քարոզութիւն ընել կ'ուսուր:

— Հայրիկն աշակերտներ շա՞տ ունի, տիրացու աղաէ՛ր, խօսակ-
ցութեան մէջ խառնուեց մի զիւղացի:

— Մէկ կողմէն կը յաւելին, միւս կողմէն կը պակասին, դպրոցն
աւարտողներուս կը փոխարինեն նորեկներ:

— Դուք ե՞րբ էք աւարտել:

— Երկու տարի կայ: Հայրիկին պատուիրանաւ Կարնոյ կողմէրն երբ
ուսուցութիւն կ'ընեինք, ամիս մը յառաջ վերակոչեց զիս և բարե-
հաճեց այս կողմէրն առաքել իւր սուրբ դրաւոր հրամանաւ:

Տիրացուն ձեռքը ծոցազրանը տարաւ, հանեց մի մեծաղիր
փոստի թղթի լայնութեամբ հաստ թղթի վերայ խոշոր տառերով
զրութիւն և տուեց տէրտէրին:

Թուղթը ձեռքէ ձեռք պալսեց, դրագէտ, անդրագէտ մի թե-
թե հայեացքով, մի հաստատուն զլսի շարժումով հաւատի եղան
նրա անկեղծութեանը:

— Հայրիկի իր ձեռքն է, վաւերացրին ամենքը:

— Հազար թղթի մէջ կը ճանաչեմ Հայրիկի սոորագրութիւնը,

պարծեցաւ մի երիտասարդ իւր կողքին կանգնած ընկերին:

— Նատ զժուար բան էր ա'յ, կշտամբեց խօսողի մնալարծութիւնը մի ուրիշը. ամեն երեխայ կը ճանաչի «Հայրիկ» սոսրագութիւնը:

— Քիչ ենք տեսնում, շաբթական քանի՞մն են դալիս ու անց կենում, քչփշաց երրորդը:

— Կարելի է՝ կեղծ են, պատասխանեց առաջինին մի անհաւատ թովմասը:

— Դէ Հայրիկը մի առատազութ և բարեսիրտ մարդ է, ուզազին զրում, տալիս է, էլ ընչի՞ պէտք է շինովի լինի:

— Տիրացու աղակ'ր, մեր գեղումը վարժապետ չը կայ, չ'ս մնալ մեր երեխանցը կարգացնիլ, յանկարծ առաջարկութիւն արեց տանուտէրը:

— Սրբազն պարտքերնիս է ազդիս մանուկ սերունդը կրթել. բայց դեռ ժամանակ կայ, զուցէ նուաստութիւնս անարժան թուի ձեր մեծասրութեան, կամ մի այլ հանգամանք խոչնդոս կըլլաց:

— Էլ ի՞նչ զժուարութիւն, Հայրիկի թուղթը քեզ համար լաւ ա վկացում, մենք էլ վարժապետ չունինք, գեղումն էլ մի օրինաւոր զրագիր չը կաց, գեղական դասարաննումը օրինատետր կայ, քեզ կը տամ, քիչ քիչ կը սարվես, քեզ զ էլ օգուտ կրինի, մե՛զ է:

— Մենք այդ օրինատետրէն մի հատ մը ձեռք բերած ենք, բովանդակութիւն մեզի քաջ ծանօթ է, անոր համաձայն գործափարութիւն ընել մեզի համար զիւրին է:

Տիրացուն հանեց նոյն ծոցազրպանից մի գիւղական օրինագիրք:

— Դէ՛ բանը զլուխ եկաւ էլի՛, յուսադրեց տանուտէրը. կա՛ց, մի՛ վախիլ, զու էստեղ մեծ շահմունք կ'ունենաս, մի սիրուն աղջիկ էլ կ'ուզենք քեզ համար, կը պսակենք:

— Աստուած չընէ, միացնակեցութեան ուխտեր եմ ի մանկութենէ:

— Տէրուէրը թողութիւն կը տայ, վեաս չունի:

— Կա՛ց, տիրացու, կա՛ց, լաւ է ասում մեր տանուտէրը. էս է՝ ես ծերացել եմ, մի քանի տարուց յետոյ քեզ կը ձեռնադրենք, խորհուրդ տուեց քահանան:

— Տէր ինքն ինչպէս անօրիներ է, անոր սուրբ կամքը թո՛ղ օրհնեալ ըլլաց:

—Անունդ ի՞նչ ա, տիրացո՛ւ, մէջ խառնուեց Մելիք-Բաղալլը:

—Աւազանիս անուն Մազաքիս Բաստուրմանեանէ, բայց զըպ-րոցական անունս Հայրիկ Համեցաւ կոչել Տաճառ Գնթունի:

—Արտակ Պալունի, Հմայեակ Դիմաքսեան, Խորէն Խորխուունի...

—Արայ Արաման, Հաւանակ Վաշտակեան, Հոյ Յուսակեան...

—Ցոյլակ Արբակեան, Պարոյր Պաճուճեան, Պերճ Արբունեան...

Այս անունները միմեանց ետևից կրիսողներն երեք երիտասարդ-ներ էին. նոքա ոչ ոքի չէին խանգարում, նոքա բերան գիտէին Հայ-րիկից եկած երիտասարդների գսրոցական կոչումները և իրանց մէջ ծաղրում էին՝ վախալով ու ծիծաղելով:

—Ուրեմն, տէրուէ՛ր, գործը վճռուեց, ձայնը բարձրացրեց Մելիք-Բաղալլը, մեր տիրացու Տաճառը կը մնայ մեր գեղումը. շատ լաւ իրար ենք ընկել, մեզանում զինին քոլ, սրա էլ հին անումը Բաստուրմաչի, նորն էլ Գնթունի, էս վերջինի և գիրը դուս կը քըցնք, մենք շուտ խօսող մարդիկ ենք, լեզուըներիս տակիցը կը սլայ դուս կ'ընկնի՝ կը մնայ Գնունի. յետոց կը նատենք լազաթին բաս-տուրմէն տժտժալով շամփրիցը սիստակ լաւաշի մէջը դուս կը քա-շնք, գեօգրով (գրամատառակ) զինին էլ կը զնենք գնչներիս, էլ ի՞նչ զարդ ունինք. կե՛ր ու կոնծա՛, դէ, քէ՛ ֆարա, Բաստուրմաչի'—Գնունի, ծծա՛ ու ծծա՛, կաց ու պուօշներդ ծայծալացրու, բեզերդ լապտի, վա-խիլ մի՛, հատնիլ չի:

—Ներեցէք, յարգամեծար իշխա՞ն, որքան ալ մեր հին և նոր ազգանուններ յարևար են ձերին ասութեան, բայց մենք նախ՝ ուխտած ենք եօթ տարի սուրբ Կարապետու ուահիք սրահել և երկորդ՝ զինիի հոտ ու համ առած չենք ցարդ:

—Դէ՛, ասա թուրք ես էլի՛:

—Մեզա՞ց Ասուճոյ:

—Դէ՛, կարգացողը դու ես, մենք անգէտ գեղցիցի ենք, հիմի դո՛ւ-ասա, հայ-քրիստոնէի հաւատը զինու վրայ չի կապա՞ծ:

—Ան ուրի՛շ բան:

—Դէ՛, տեսա՞ր, որ ես իմ բուադեալ (տգետ) տեղովս քեզանից շատ բան գիտեմ, դեռ էն մի խօսքն էլ քեզ բաշխեցի, չասեցի թէ ո՛վ ա տարին 12 ամիս բանջարեղէն ուտում:

—Բայց արդէն դուք զիս արբեցողի մը ընկերն ըրիք և խոտա-կեր կոչեցիք, աղ փոքր ինչ վիրաւորական է:

— Ե՞ց, խելքդ ո՞րտեղ ա, տիրացո՛ւ, ես քեզ իմ հընկերը շիւնեցի, ի՞մ; ինձ չե՞ս հաւանում, քեզ պէս օխար աղայ ունիմ: ես որ մի օր զինի չեմ խմում, իրիկունը գնում եմ տէրտէրի առաջին չոքում, մեղայ գալի, թողութիւն առնում: հէնց զիտես մենք հայ-քրիստոնեայ չե՞նք. զինի էլ ենք խմում, պաս էլ ենք պահում: բաս՝ քո ասելով՝ մենք պիտինիցներ (արքեցող) ու հայվաններ ենք էլլի՛. խօսք էր, սազեց՝ տեղն եկաւ, ասեցի. ի՞նչ ես փալանդ շուռ տալի (Վեցառքուել):

— Մի՛ նեղանալ, տիրացու Տաճա՛տ, մեր Մելիք-Բաղալլ հանաք է անում, սա մեր զիւղի իշխանն է, սրա քաղցր խօսքերը քեզ էլ դուր կը գան, ականջներդ կը վարժուին, հասկացրեց տէրտէրը:

— Այժմուս կը հասկնամ, որ յարգամեծար Մելիքին ըրած անմեղ կառակի մ' է:

— Տօ՛ արի, խելօ՛ք, վախիլ մի՛, մենք կը բարեկամանանք, նորից շարունակեց Մելիք-Բաղալլ, արի՛ գնանք էս զիշեր մեր տանը մի լաւ քէֆ անենք, կնիկս իր դմբուճիկ (ծովիչի) ձեռներովը քեզ համար մի կակող տեղ կը քցի, թէ կուզես՝ ոտներդ էլ կը մածիր (շիշլ). վախիլ մի՛, ես ծեր եմ, բաց կնկանս աչքումը գեռ. եղ կայ, զիշերն երազումդ կը տեսնես, կերածդ կը մարսես, առաւառը քէ-ֆով վեր կը կենաս:

— Հրամանքնիդ բաւականին զուարձախօս անձ մը կերեւիք, անմեղ կառակներ կը սիրէք, ինձի նման նորատի պանդուխտին քիմք կ'ուզէք պարարել ձեր պարկեշտուհի տիկնոջ մայրական հրապուրանքներով և հայուն յատուկ հիւրասիրութեամբ:

— Ո՛... օ՛... օ՛..., լա՛ւ ես, լա՛ւ, մեր աղա՛յ, բերնումդ համ ևս ունեցել, ձեռաց հասկացար, որ հալիւոր մարդի հընկերն ատամները թափուած պառաւ կըլնի, դունչդ ջահէլների փէշերքին ևս մեկնում. վախի՛լ մի, իմ խաթունը վրայ հինգ կնիկս ա, քո տարիքումն անճախ (հազիւ) ըլնի, ամեն մի աչքը ձեր հոսհոսների զայֆի ջնջաններից մեծ ա, ա՛սլը (իսկ և իսկ) քեզ պէս սուտ ճգնաւորի ու խարեբանների շալակը տալու ապրանք ա, արի՛ զիսանք:

— Եա՛տ շնորհապարա ենք, սակայն արատիք կը բերէք անբծութեանս:

— Դէ՛, դէ՛, արի՛ զնանք, ա՛յ դարմանի տակի ջուր. խաչագող վանեցի չէ՞ս, զող կատուի աչքերիցդ ա մալում (յայֆնի), թէ ի՛նչ պտուղ ես, ամեն մի մաղիդ տակին օխոր սատանայ կալ. ախար Յամանլուի խաչագողերն էլ Վանեցիք են, Սալմասոցնց հարեան էք է՛:

— Այդ արդէն կարի անարգական է, դէմքի վերայ տհաճութիւն արտայացուեց Գնթունին: Բաց Մելիք-Բաղալը նրա վզակոթը թոթռելով՝ շարունակեց իւր ծաղրածութիւններն և դէպի իւրեանց կողմը քաշեց:

— Տէրուէ՛ր, տանուտէ՛ր, դարձաւ Մելիքը դէպի վերջիններս, դուք էլ եկէ՛ք զնանք, մեր Գնունի Բաստրմաշու հետ մի քիչ սէր ու սոհբաթ անենք, սրան երկու տարեկան քուռակի պէս խամահանուկ անենք (Հարծեցնել), թէ չէ սա շատ ա տռճնկ քցում:

Աւելորդ է ասել, թէ չէ ջմի ածնի ուխտաւորի ուխտը յետ թողուեց դիպող ժամանակին կատարելու:

Օ. զիւզի հիւրասիրութիւնը, Մելիք-Բաղալի համեղ կատակ-ները, երեսուն երեխսէքանց ուսուցչական առատ վճարքը և որ զըլ-խաւորն էր, տանուտէրի առաջարկութեամբ զիւզական գրագրի իւղալի պաշտօնը խիստ հաճոյական թուեցին հացրիկի առաքեալին:

Ի պատիւ Գնթունուն պէտք է ասենք, որ նա մինչև էս օր էլ զինու հոտը չի առնում: ուխտազրուժ գտնուեց միայն սուրբ Կարապետի դէմ: առաջին իրիկունը Մելիք-Բաղալի համոզմամբ պասը բաց արաւ՝ ծերութեան օրերում ուխտը վերանորոգելու պայմանով:

ԺԲ.

ՇԱՆ ՀԵՏ ԱՂՊԵՐԱՑԻ, ՓԵՏԸ, ԶԵՄԵՑԳ. ՄԻ ՎԵՐ ՔՅԻԼ.

— Բարե՛ ձեզ, ալ. Գնթունի՛, ի՞նչպէս էք, ծանրախոհ դէմք առած՝ երկու մատի ծայրով արժան տեսաւ Բալասան աղէն դիպչել գիւզական գրագրի խոնահութեամբ պարզած ձեռքին, երբ վերջինս շողոքորթ ժպիտով անվատահ յառաջ եկաւ դէպի Մելնիկովը:

— Ողջութիւններդ կը ցանկամ, վերմափոյլ տէ՛ր, իշխա՞ն հայկագն:

— Ի՞նչպէս էք կառավարուում այս լեռնացին արջերի մէջ, նեղութիւն չէ՞ք կրում, չէ՞ք յուսահատում:

— Սկզբներ շատ խորթ կը թուեր մեզի ասոնց անկրթութիւն, բայց հետագա վարժեցանք, այժմ իրենց ալ սակառիկ մի քաղաքակրթեցինք, մարդավարութեան ուղին առաջնորդեցինք:

— Յետոյ օտարութիւնը ձեզ զգալի չէ՞:

— Անշա՛ւշտ հայրենեաց անձուկ շարունակ կը տոչորէ հողիս, սակայն սպարկեշտ լծակից մը և գողտիկ մանկիկ մ'ունենալէս վերջ՝ բոլորն ալ անցան:

— Լսել եմ, այս', մեզ հայրենակից ես դարձել, շատ ուրախ եմ. իմ կարծեօք, գտուար կը լինի ձեզ օտարութեան մէջ՝ առանց սեպհական տուն ու աեղի՝ առանց ացգու և հողի՝ միայն գրագրական սահմանափակ ողնոյի ընտանիք կառավարել:

— Ձեր շնորհիւ, ողորմած բարերա՛ր, այժմ տնակ մը և փոքրիկ ացդի մի ևս ձեռք բերած ենք, նախախնամութիւն մի պատառիկ ցամաք հաց ալ ինայած չէ, կ'ասպինք կերպիւ իւիք:

— Հա՛, այդ ըստ զիտէի, շատ շո՛ւտ, կարծեօք, ձեր զալը հինգ տարուց աւելի չէ:

— Այս', ացդպէս է, բայց մեր գատառոր Խուզավերդի ըէղին շրջնորհիւ, զիւզական տանուտիրոջ մարդասէր ներողամտութեամբ տեսակ մը կենաց եղանակ գտած ենք:

— Մեր վարժապետը հիմի լաւ վտղ էլ ունի, աղա՛յ, մէջ մտաւ Խուզոն, շահով տուած ա մօտիկ գեղերի թուրքերի մէջ, սրա ֆանդ ու ֆէլլ (հայրագիտութիւն) ոչ ով չի' իմանալ, մենք ինչքան ուղենք՝ ձեռը պատը կը քսի, մխուր չի դալ (ռուբոն) ու երկու օրից յետոյ՝ մին էլ տեսար՝ թուրք հաջիներից մին հինա դրած միրուքը ճանգել ա ու իծի պէս տկի տկի անելով (հիշողնել) բերում, կոխում գատարան, սանադը զավէրնի անում (զաքրիտ, վաւերացնել), փէշատը (հնիկ) կոխում ու ճամփու քցում:

— Ո՞րքան է մեր տուած, քանի մը կոպէներ, արդարացաւ Գնթունին:

— Հենց էդ ա է՛, շարունակեց Խուզոն, Հաջի Մուստաֆէն սրան տասը մանէթ էր պարտ, ուզեցայ իմանալ թէ քանի՛ մանէթ էր պարտքի զլուխը. նա ասեց՝ զրանից ո՞վ ա փող աւել, գտարանումը գանգատ ունէի, վճռեցիք իմ օգտին, հրամացեցիք սպօլնի (исполнительный листъ, հայուրողական լեռն) տալ. գնալով գալով

հողիս զուս եկաւ, չարէս կորեց՝ կաշառք խոստացայ. երկու մանէթի թուղթ առաւ բերնիցս մի ամիս ժամանակով, էս ա երկու տարի ա՝ վեց ամսէ վեց ամիս շահը շահին գալով՝ տասը մանէթ ա դառել. ես ի՞նչ եմ հասկանում, ասում ա, ինքը դրիլ ա տալիս իր մոնթերին, ինքը հաշուում, ինքը հաստատում:

—Յետոյ սասացա՞ք թուրքից ձեր փողը, վարժապե'տ, հարցրեց Բալասան աղէն:

—Սասացաւ՝ էս էլ ո՞նց, աղայ ջա՞ն, սկատավան տուեց Խուզօն. վճռեցինք՝ եասավուլը վերկալաւ, զնաց դաշտիցը լսեղճ Մուստափի ոչխարի սուրուից (հօթ) չորս հատ էնպէս դաւուրմացու շիշակ (երչու պարէկան նոր ոչխոր) բերեց, որ աղպէրն աղպօրը հինգ մանէթով չի տալ. շուն—Մուստափի հողին դուս եկաւ աղանչաք անելով, որ մինը յետ տայ. էս անիրաւը քարացաւ, քար կտրուեց: Էս զլիսամեռն էս ոչխարներիցը 17 մանէթ փող հանեց ու ո՛չ տանուտէրին, ոչ դաստաւորներիս մի մի շամփուր խորովածացու էլ ըլդրից, որ բերաններս եղուսենք:

—Եթէ ոտքի վերաց ողջ ողջ է ծախել՝ ի՞նչպէս ուղարկեր, սկաշտպան հանդիսացաւ Բալասան աղան:

—Տօ՛ չէ, աղա՛յ, քա՛ր լնկնի սրա զլիսին, զասարին մի չարէք միս խոստացաւ, մորթիլ տուեց, ծախեց, փողերը նաղբացրեց, ջերը լցրեց, ոչ իր տունը մի մսխալ միս զրկեց, ոչ զասար Պապի Գէվօյի միսը տուեց. ասե՞նք՝ Գէվօն սրան հում հում կուտէր, կը խեղպէր, բայց լեզուն կարծ էր, զատարանուումը գործ ունէր, պարտքատիրոջ ասնապը վճռած՝ սրա ձեռին էր, սպօլնին կը տար, փողի տէրը Գէվօյի տան ծածքի կոճերը կը քաշէր:

—Որքա՞ն տոկոս էք տուանում, վարժապե'տ, հարցրեց Բալասան աղան:

—Տօ՛, աղայ ջա՞ն, զրանից ի՞նչ կ'իմանաս, դու ինձ հարցրու, կրկին լնդմիջեց Խուզօն, անումը՝ տասին երկու շահովն ա, բայց սրա պարտքատէրերն էնքան տիսմար են, որ ինչ զրում ա՝ աւատում են. հինգ մանէթին մի տարումը հինգ մանէթ էլ շահ ա առնում:

—Յետոյ չե՞ն կորչում փողերդ, վարժապե'տ:

—Հատ կապէկը չի կորչիլ, աղայ ջա՞ն, քանի սա դատարանումը պիսը (գրագիր) ա, ոչ ով չի համարձակուիլ սրա քու սև փո-

զին խելթ մահիկ տապ: Գլխովդ եմ երդում ուտում, աղա՛յ, ոնց որ քեզ
արգ եմ արել՝ զլա՛մին էլ, սուղիէ՛քս էլ սրա բռանն ենք մախկ տա-
լիս, տանտառէրի հետ միացել առ ու վճռում առա՛, կարգադրում ա-
սա՛, մենք հենց բերաններս բաց՝ ճանձին անող ձիռւ պէս զլիներս
տմբումբացնում ենք ու ձեռք քաշում: Ե՞նչ ես կարծում, աղա՛յ,
ինչքա՞ն փող ունենալ:

— Իմ կարծեօք, սա հիմա փող պէտք է չ'ունենայ, այդ էլ մեծ
բան է, որ հինգ տարուայ մէջ տան և այգու տէր է դարձել:

— Դու ո՛չ մեռնիս, աղայ ջա՞ն, 3000 նաղդ նիկօլայ — մանելթ
ունի, ես եմ բոլորը ձեռք քաշել:

— Ուրեմն սա Տաճկաստանից գալուս իւր հետ փող է ունեցել:

— Ե՞նչ ես հրամանք անում, աղայ ջա՞ն, ի՞նչ փող, ի՞նչ գենիշկայ (ի՞չ էրակէ), մի ջուխս թելից գործած Վ. ու ըշը կի տրեխս ունէր՝ տակը
հարիր տեղից կարկասան, մի հին պատուարուած Վանի մազի շա-
լից կարծ չուխի պէս բան ունէր՝ արմնկիցը միսն երեւում էր: Մելիք-
բայլալին հարցրո՛ւ՝ տես՝ ի՞նչ կը պատմի, երկու երեք ամիս նրա
տանն էր կենում: մի սիստակ կտախի շապիկ ունէր, ասում ա, որ
կեղուումը փտել էր, կսիկս, ասում ա, զզուեց որ լուանայ, իմ շապ-
կահինն ա նղել, զլուխն անց կացրել, մի տեսակ եօլայ տարել, ընշանք
գնացել ենք Պուլուզի դուքսանիցը նիսիա (ապառէ) մի քանի գաղ
ամրքեան վերցրել, շուլալել՝ շինքը քցել:

— Կարծե՛մ, զլիսիցը դուրս է տալիս, վարժապե՛տ, էս փչի տա-
սը խօսքից մինն ուղիղ չէ, նորից պաշտպանողական դիրք ստացաւ
Մելիկովը:

— Մասամբ ճիշդ է, գերազնիւ Տէ՛ր, Վանէն ելայ մաքուր հա-
գուստով, բացց քիւրդեր ճանապարհին զիս կողոպտեցին, բոլոր ի՞նչքս
տարին, մնացի մերկանդամ: մերձակայ զիւզականք զիս գտին, իւ-
րեանց ցնցոտիքով զիս պատուպարեցին: Անոնց հնոտիքովն էր, որ
մոտանք այս զիւզ:

— Տօ՛, աղայ ջա՞ն, դու սրա խօսքին մի՛ աւատալ, ի՞նչ թա-
լանել, ի՞նչ քուրդ, թալանուողի ձեռքին թղթերն ի՞նչ բան ունէին,
շորերը կը տանէին ու մի խուրձը զրեր յետ կը տայի՛ն. սրա ծոցը
լիքը թղթեր էին:

— Այս ի՞նչ զրեր է պատմում, վարժապե՛տ, ի հարկէ չեմ հա-

ւասում, ոս սովորել է, ավեղցվեղ, անկապ, անտեղի ցոփաբանութիւններ անել և, անտարակո՞յս, այժմ էլ կատակ է անում, հարցրեց Մելիկովը:

—Մեր յարգոյ գաստաւոր Խուզավէրդին իրաւ կըսէ, հետո Հայրիկին և քանի մը հաս ալ ուրիշներու յանձնարարականներ ունեինք, որոնք քիւրգեր մեզ վերաբարձուցին՝ զիջեալ մեր աղերսազին թախանձանքներէն, մեզի նման անփորձ և անստակ ուղեղորին անշուշո կարեոր են անոնք՝ ջերմեռանդ հայ ժողովրդին մէջ արժանավայել ընդունելութիւն զտնելու, ինչպէս ալ մեզի հետ եղաւ, ամենուրեք յարգանօք կը պատուասիրէին:

—Իրա՛ւ, այդ յանձնարարականներն ի՞նչպէս են ձեռք բերում, վարժապե՛տ. ինձ շատ է պատահել Տաճկա-Հայաստանից եկածների ձեռքին տեսնել Հայրիկից և զանազան վանահայրերից ու առաջնորդներից տուած յանձնարարական թղթեր, և մի՞թէ անպատճառ կարեոր են նոքա:

—Անշուշո:

—Հե՛շտ են ձեռք բերուում:

—Հայրիկին իննդրելու ոչինչ զժուարութիւն չը կայ, ան զժուս և բարեհամբոյք հայր է ընդհանրութեան, անգամ մ' եթէ զիմես իրեն, կուտայ՝ ով կուզէ, թող լինի. մեծամեծ զժուարութեանց կը հանդիսակին միւս վանահայրերու և առաջնորդներու քով, առանց ստակի (ռբամ) հազիւ կը յաջողի. ի՞նչ ընելու է, պիտի տալ, ասպաթէ ոչ նպատակին անհնար է հասանել:

—Մի՞թէ:

—Այո՛, Տէ՛ր, հայ ժողովուրդ վարժած է այդ յանձնարարականներուն, վանահայրեր այդ քաջ գիտեն և ստակի կը կապեն. ըստ իսամենայն իրաւամբ, անոնց թողթ մեծապէս կը նպաստէ, մանաւանդ՝ որք խոշոր գումար մը շահելու կը միտին:

—Դուք էլ փող տուի՞ք:

—Քանի մը տեղ Հայրիկին յանձնարարականն օդնեց, սակայն սուրբ-Կարապիտ՝ սակաւ մնաց Հայրիկին յանձնարարականէն զրկուելինք և մենք ալ զանակոծ դուքս մնայինք:

—Ի՞նչպէս:

—Մենք տեղեակ չենք սուրբ-Կարապիտայ միաբանութեան

ոհած տրամադրութենին առ Հայրիկ, հիւրընկալին զիմեցինք յանուն Հայրիկի մեղի պատապարելոյ. նա առժամայն բռնկեցաւ, խարեւ բայ Վանեցի և այլ վիրաւորական ածականներ տեղաց մեր զլիսուն և կոչեց իւր սպասաւոր, մեզ պարապէն վանել հրամայեց: Քիրած ծառացն մեր բազուկ ճմեց վազրենի քիւրդի նման և հայոց յանքներ թափելով՝ մեզ զուրս գոնսեց: Երեխոյ էր, ուր երթալնիս չը գիտէինք, ընտրեցինք սոսակի անուամբ մեր զործ տեսնել: Հասինք բաղձանացա, քանի մը զուրուշ կորուսինք, բաց հոգ չեր, զործերնիս յաջող ելք ստացաւ:

— Այդ շատ հետաքրքիր է, խնզրեմ պատմես, վարժապե՞տ:

— Սպասաւոր զաղոնապէս մեզ իւր սինեակն առաւ, խորհութ տուաւ մեզ Հայրիկի անուն չը տալ, հարցասիրաց քով հայշոյանօք խօսիլ անոր դէմ, կշտամբանք ու լուսանք թափել նորա ստուերին և յանձնարարականին միշողութիւնը չընել: Մենք ալ այնպէս ըրբինք: Միւս օր սպասաւորին ձեռօք քսան զուրուշնոց աջահամբոյր մեղի կարապետեց առ հիւրընկալ: Քանի մ' օր ալ այնուեղ մնացինք, վանահօր ծառային ծանօթացանք, շահեցինք, վերջ՝ քառասուն զուրուշնոցվ յանձնարարական մը ձեռօք բերինք: Ի՞նչ ընելու էր, սուրբ Կարապետայ անուամբ հայ գիւղական շուտ կ'ոգեսրի. անոնց թուղթ մեղի մինչև Կարին շատ ձեւնոտւ եղաւ, ամենուրեք հիւրասիրութիւն դառնա, քանի մը ստակ ալ ճանապարհի պարէն առինք, որով թէ մեր պիտոյք հայթհայթեցինք և թէ Կարնոյ առաջնորդին յանձնարարականի շահեցանք:

— Ուրեմն ընդամենը դրւք երեք թուղթ էք ունեցել ձեզ հետ:

— Տօ՛, զբա խօսքի քա՞նիսը մի շահով կ'առնեմ, ազայ շա՞ն, էլի կոտրած զրգալի նման մէջ խառնուեց Խուզօն, գա օր եկաւ, ծոցաջէբերը հէնց էին ուղած՝ կ'ասէիր երկու շարթէն ջահէլ ծնլնդկանի ծձեր ընելին. ի՞նչ երեք թուղթ, ի՞նչքան սուտ սուտ փէշատներ, ի՞նչ Տէրսկամ որդու կոնդակիներ, ի՞նչ մատնահարներ, մմոտ թղթեր, որբի սպասկերներ:

— Ուղի՞ղ է ասում, վարժապե՞տ:

— Բարուրանքներ կը բարդէ մեր վերաց, մեր ունեցած թղթեր մեր յիշատակարաններ էին. արդարեւ կուգան այլպիսի թղթերով Տէր Յուսկան որդուոյ, Պտկաց սուրբ Գէորգաց զուլեր, կոնդակիներ ու մատ-

Նահարներ կը բերեն, խաչեր ևս կ'ունենան, բայց այդ մենք չենք,
օսարք կ'ունեն:

— Դէ՛, ըստոր ձեր Վանեցիքն են էլի՛, ընդհատեց Խուզօն, սաքի
ի՞նչ ես թաքնում, մենակ դու հօ չե՛ս, օրը մին ա՝ եկողը տասը.
ձեր տոք կոտրուի՛, գեղ ըլ կայ՝ որ բուն զբած շընիք, քանդեցի՛ք,
քարասահի՛ցիք էս երկիրը:

— Կը մեզանչես, թափառաշրջիկներ տգէտ ուսմիկներ են, Արծուի-
Հայրիկն ճետեր միայն վսեմ գաղափարներ և լուսաւորութիւն կը
տարածեն, ուր կերթան:

— Սաքի ո՞վ են քո Հայրիկի աշակերտները:

— Դուք ինձնէ քաջ կը ճանաչէք, ամբողջ Այրարատ նահանդ,
Գողթնիք, Սիւնիք իւրեանց դիւղերով անոնց գաստիարակութիւն
կը վայելեն, որոցմէ վերջին նուասոս, կարծեօ՛ք, ըստ կարեացս սա-
կաւ ծառացութիւն ըբած չենք ձեր զիւղին. մնապարծութիւն կ'ա-
տեմ, բայց ճշմարտութիւն դաղել յանցանք կը համարիմ:

— Ձեր ճամփէն փուշ ու տառաշ գառնա՛ր, էս աշխարհքը չը
մտնէիք. էլ գե՛զ, տո՛ւն, օջա՛զ, ընտանի՛ք թողել էք, որ չը վչաց-
նէք, ամեն տեղ հիմն արեգակ շուռ տուիք. Իգդիրը ձեր ճեռովն
ընշանք էս օր էլ արնի մէջ լեղ ա տալիս, Աշարակ՝ հերը որդուց
հանեցիք, բաժան բաժնութիւն քցեցիք, երեխէքանցն իրար հետ
թշնամացրիք, Վամարլու՝ աղքաների բերանից սուտ սուտ սանադ-
ներ շնուցիք՝ հարուստներին ծախեցիք, Մարգարի գեղումը միա-
մտ հարմարին ճանգեցիք, աղջիկ փախցրիք, գեղն երկու թիրայ
(Քռառակցութեան) արիք՝ էս օր էլ իրար միս են ուտում. Ազուլիս,
ասում են, քիչ մնաց ձեր ձեռքովը հասուատ ուսումնարանը շուռ
զայ. ո՞ր մինք միաս բերեմ, քանի՞որ շարեմ, հաւողի մասն ուտող
դաղձի պէս բոնել էք էս աշխարհքը, փաթաթուել խեղճ ժողովրդի
բողազին, հուփ էք տուել, աչքերը զաղաթն էք թոցրել, հլա էլի՛
խօսում ե՞ս...

— Կարծեմ, ինձնէ օգտէ աւելի ոչինչ տեսած չէք, ձեր եկեղե-
ցին այօր պայծառ կը փայլի նուասախ ջանքով, մանուկներ հրեշ-
տակաց հետ սրբասացութիւն կլնեն, ինքնին խստավանեցար՝ ձեր
զիւղ բարւոք կը կառավարի, ամենուդ ևս ձեռքէ եկածին չափ
կը ծառացենք. այժմ ալ զերազնիւ Հայքենասէր տէր Մելնիկեան

իշխան մեզի հրաման ունի արձակելու, որ չնորհ ըրեր է իւր լուսափայլ զիմաց տեսութեան անպրժանս արժանացնելոց:

—Յեսոյ մէջը ոչինչ շահմունք չունիս էլի՛:

—Մենք անդոհին մէկը չինք, այդ մասին կանխաւ խօսեցանք:

—Մի՛ նեղանալ, վարժապե՛տ, խօսեց Վաղիմիր Նեստորիշը, սրանք ողջ գիւղով ի նախնեաց անտի ասպերախտ չներ են, ինձ դէմ էլ ասպաշորհութիւն են անում, ձեզ հօ՛ լաւ յացնի է, թէ ես այս գիւղին ի՞նչ մեծ բարերարութիւն եմ անում:

—Քաջ զիտակ եմ, Տէ՛ր, մուրհակներ բոլոր մեր զրածն է:

—Հասկա տեսնում էք, սրանք էլի իմ շուաքիս վերայ հաշում են:

—Կը մեղանչեն:

—Թողնենք այդ, պ. Գնիժունի՛, մենք դործ ունինք կառարելու: Բալասան աղան աչքով նշանացի արեց Խուզօյին և նա դուրս դնաց:

—Գիտէք, ի հարկէ՛, թէ ընչի՛ եմ ձեզ կանչել:

—Կը գուշակեմ, մուրհակների թուականներ փոխելու, շշնչաց զրագիր Վանեցին:

—Բաւակա՞ն չէ:

—Գումարն ևս շարժելու է անշո՛ւշտ:

—Հասկացա՛ր. մի քանի անավտաններ երկար ժամանակ ինձ տանջում են, պէտք է սեղմել դրանց. զիցո՛ւք, ես վերջը կը բաշխեմ, բայց այժմ այդ մեզ պէտք է:

Բալասան աղան նախապէս պատրաստած ուներ ցուցակը և փոխելիք գումարների որքանութիւնը: Այդ պատճառաւ էլ նա կարիք չունեցաւ մի առ մի թելազրել Գնիժունուն: Վերջինս շատ քաջավարժ էր երեսում քերել—ջնջելու և նոր գրելու մէջ: Նրան օդնում էր իւր փոքրիկ յղկուած, ոսկրէ կոթով սրածացր զրչահատը: Մեծ դործ էր տեսնում քերուած տեղը թանաքը չը ծծելու համար Վանեցու գտած հնարքը. եթէ շօշափելու լինեինք նրա ձախ բութ մատի եղունգը և համեմատէինք աջի հետ, ձախը շատ բարակ կը գտնէինք: Քրազիրը քերում էր եղունգը և փոշին քերած տեղը գանակի կոթով տրորում. թանաքը դործում էր՝ ինչպէս մաքուր թղթի երեսին:

Մինչ Վանեցի վարժապետն իւր գործը տեսնում էր, Վլադիմիր Նեստորիչը շարունակ սենեկի երկանութիւնը չափում էր իւր քայլուվ։

—Վերջացա՛ւ, բոլոր կառարուեցաւ գերազնուութեանդ կարգադրութեան համաձայն, ասաց Գնիժունին։

—Ա.ա՛ւ, այժմ վերցրո՛ւ մի թերթ թուղթ և գիւղի կողմից նաշանիկի անուամբ մի խնդիր գրիր, որի մէջ յայտնիր ամբողջ հասարակութեան ջերմ ցանկութիւնը՝ Խուզոյին տանուտէր ունենալու իւրեանց մէջ։

—Աղէկ'կ մտածեր էք, մեր ալ փափաղն է, Խուղավէրդի-բէդ կատակներ կը սիրէ, բաց մեզ հովանաւոր է։

—Ե'ս եմ քո հովանաւորդ, վարժապե՛տ, ե'ս, քանի ես կամ դու ապահով ձեի ու կարի, ոչ ոք մազիդ չի կարող մօտենալ։

—Յմահ երախտապարտ եմք, ասաց գրագիրն և թուղթը ձեռքն առաւ։

—Պատրա՛սո է, փոքր ժամանակից ձայն հանեց նա։

—Այս կը մնայ ինձ մօտ, պատախանեց Մելնիկովը, վաղը մի քանիսին կը կանչեմ, ինքս ստորագրել կը տամ, անգրագէանների կողմից էլ անելիքը քո բանն է, Խուզոյի ձեռքով քեզ կ'ուղարկեմ, բաց աշխատիր, որ ձեռքերը, որքան կարելի է, միմեանցից զտնազանուին։

—Միամիտ կարող էք ըլլալ, Տէ՛ր, մենք երեսուն եօթ տեսակ գրութեան մէջ վարժուած ենք. Վարագ՝ զպրոցն այդպիսի վարժութիւններ կը նէինք Հայրիկէն գաղտնի, գաւառներ կարեւոր են գոքա. անգամ մ' ալ Հայրիկ տեղեկացաւ, շատ վշտացաւ և պատուիրեց գէլ ի չարն գործ չ'արկանել։

—Վեր կա՛լ հետդ այս մուրհակի թղթերը։

Վլադիմիր Նեստորիչը տուեց գրագրին բաւականին մուրհակի դրոշմած թղթեր։

—Կնքեմ, այնպէս չէ, ընչանցքի տակին ժպիտի նշով երևեցնելով հարցրեց գրագիր Վանեցին։

—Հետն էլ վաւերացրո՛ւ։

—Տանուտէր Կարապետի ձեռք կը բաւէ, թէ դատաւորներունն ևս դնեմ։

— Այն մեկը որ ձեռք զիտէ՛:

— Անհո՛գ եղիք, պարծա՞նք հայրենեաց, դիւզիս բոլոր ազդեցիկ անձանց ձեռք մենք կարող ենք կեղծել, իւրաքանչիւրին վերաց ժամեր վատնած ենք:

— Ուրեմն մի քանի թերթ հասարակ մաքուր թուղթ ևս վերցրո՛ւ քեզ հետ:

— Կնիք շա՞տ մօտ ըլլայ:

— Աղք մօտ, որը հեռու, դանազան նպատակների համար:

— Քաջ զիտեմ, երեկեան օր հարիւր թերթի շափ կնքեցինք և վաւերացուցինք տանուտեր Կարսպետի համար, նա կը զգաց, որ առաջիկայ ընտրութեան իրեն հերթ հասնելու չէ. նուասոիս յանձնեց իւր համար պատրաստել: Քանի մը հատ ալ մեղի համար կընքեցինք:

— Ընդի՛դ էր պէտք, կամ տանուտերն ի՞նչ պէտք է անի:

— Ազագացին մեծ կարեռութիւն կայ, ինզրողներ անպակաս են, դանազան կեղծ կալուածաղիրներ, կեղծ մուրհակներ, կանխավճար սպահովագիրներ շինելու պէտք կըլլան:

— Յետոյ չե՞ս վախենում յայտնուելուց:

— Հզօր պաշտպանս ողջ ըլլա՛յ:

— Իսկ եթէ ես չը պաշտպանե՞մ:

— Մենք աներկմաս ենք, թէ կը գնահատէք հիշին ծառայութիւնիս և չէք թոյլ տար օտարաց օգնութեան և միջամտութեան դիմելու:

— Օ՛... օ՛... Վանեցի՛, լաւ եմ հասկանում, ուզում ես ասել՝ թէ զողն և զողակիցն ի միում պատժի կան. ձեռաց կը մատնես, էն-պէս չէ՛, ուղիղն ասա:

— Վատահ ենք, որ գործն այդ տեղ հասուցանելու փոյթ չը լինիր:

— Աղաջ ջա՞ն, ներս մտաւ Խուզոն, լաւ միտս եկաւ, երեկ աղ-վակաս Զոլախ-Յարութիւնն էտեղ էր, որ քո հրամանքի կողմից գնացել էր Դվակոթենց Հայրօնի մօտ: Ասում էր մի թուղթ ա հարկաւոր զրել տալ, որ գեղցիք վկայեն, թէ Դօնդարենց Ասօնի սպանուած օրը Հայրօն սաքի գեղումը չէր, բամբակները տարել էր Երևան ծախելու. ասում էր՝ մի թուղթ էլ ինքը շինել կը տայնիւանի դանթարի (ՀՀ սուրբ) տակի թուրք դալաների կողմից՝ սաքի

թէ Հայրօխի բամբակներն էն օրն իրանք են ծախել, Հայրօն լնչանք իրիկուն դանմարի տակին ա էլել:

—Իրա՞ւ, վարժապե՞տ, քաղցր զէմքով դարձաւ Մելնիկովը դէպի գրագիրը, մի այդպէս թուղթ էլ պատրաստիր էն Հայրօխի համար. ի՞նչ ցիմար բան դուրս եկաւ. ես պատուիրեցի գնդակն այնպէս արձակել, որ պատուհանը կոտրի, գնայ առաստաղումը ցցուի, որ միայն երկիւղ տանք փուշ Ասօին, անշնորհքն այնքան ցած է նշան տուել, որ գնդակը դիպել է Ասօին զլիսին և ապանել: Դիցուք, արժէր, վշերի մէկն էր, ասում են սրտէ՝ ի սիրո ընկեր էր Պետրոսենց Սամիսոնի հետ, եթէ նա չը լինէր, Սամիսոնն անտրոտունջ կը հեռանար Բարսեղի աղջկանից. ասում են, որ հերու էլ այն փուչն է եղել մեր գրանը կուպը քառողը. շատ լաւ էր, որ վերջացաւ, պրծաւ. բաց ի՞նչ օգուտ, որ անպիտան Հայրօն դլիներիս ցաւ դարձաւ. ուզեմ չուզեմ, պէտք է ազատեմ:

—Խոչեմութիւն վսեմութեանդ յատկանիշն է, գուհին մէկն է Հայրապետ, կարող է բերանէն հանել և ձեր անբիծ անուանն արատիք պատճառել:

—Ընչո՞վ կ'առպայցուցանի:

—Ասոււածատրոյ Հայր Վարդան, կարծեմ, Միսակին ձեռքով ինքնածեռագիր ստորագրութիւն մ' առեր է զիւղականաց շատերէն, որով կը ստուգուի, թէ Հայրապետ Գվակոթեանց զիւղին մէջ շարունակ գողութեամբ կը պարապէր և անոր գողացած իրեղէնք երկիցս գտեր էն ձեր քեռորդի Վասակին քով. պղնձապատ գոտու անցքն ալ մէջ ցիշեր է:

—Հասպա՛, այդ գօտին էլ քիչ աղմուկ չը հանեց, անպիտան Հայրօն մի քանի բաների հետ այդ գօտին բերել էր քաղաք մեր տունը: Ես, իրեւ անպէտք բան, անկիւնը ձգեցի: Կինս միամտաբար բաշխել էր մեր ծառային. նա էլ կապել էր մէջքը, գնացել փողոց: Սատանէն հակառակ է լինում. հէ՞նց այդ օ՞րը պէտք է Անտօնենց Սահակը քաղաք գար, մեր ծառային հանդիպէր, գօտին ճանաչէր, պօլիցիա կանչէր և միջքիցն արձակէր: Յիմար ծառան էլ պարզ պարզով խոստովանել է, թէ տիկինն է բաշխել: Դիտէ՛ք, վարժապե՞տ, որչա՛փ նեղութեամբ կարողացայ պօլիցիականին մի տեսակ արձանագրութիւնը փոխել տալ և զրել, իբր թէ ծառան փողոցումը

մի թուրքից է գնել։ Անելիքն արինք, պատասխանառութիւնից ազատուեցանք, բայց ժողովրդի բերանից ոչ ամբողջ ամիսներով դիւռ քաղաքի խօսակցութեան առարկան էր։

—Աղաջ ջան, մի գիր էլ զրիլ տուր, թէ Բարսեղի աղջիկն իմ քեռու հալալ թուրը չի՝ խորթ ա, խնդրեց Խուդոն։

—Ահա՛, վարժապե՛տ, ձեղտգէտ զիւղացի, շարունակեց նալասան աղէն, կարծում է՝ թէ զիրնէ, որ չհասը հասցնելու է, քանիցս իրեն ասել եմ, դարձեալ իւրն է կրկնում. տո անսաս՛ւն, թղթով գործ չի յառաջ գնալ, մինչև ես Վանքի խցերն օրական հինգ անգամ անլուայ ելու մուտ չանեմ, մինչև դու քսան անգամ լիքը չը գնաս, դատարկ վերադառնաս, մինչև դործակալի ձեռքով երդմնական քննութիւն չը կատարուի՝ գործ յառաջ կերթա՞ց։

—Ներողութիւն կը խնդրեմ ազգասիրութեանդ ձանձրով մը պատճառելոց, շողոքորթ ժպիտն երեսին, պարանոցը ծուեց Գնթունին։

—Ասա՛, ի՞նչ կայ։

—Ակներև է, որ եթէ Սիսակ զիւղական գրադիր լինի, վսեմութեանդ այս ամենացն դիւրութիւնք կը դժուարին. կանիսաւ ձեր մեծութեան կը յացոնեմ, որպէս զի ամենատեսակ հնարք ի գործ դրուին Գոմշակերեանց Յարութիւնին ընտրութիւն խափանելին յետ՝ առաջիկայ ընտրելիք տանուտէրին պատուէր մ' արձակել՝ անարժանութիւնս ձեռքէ չը հանել. նուաստս կը խօսի յօդուտ աղնուութեանդ, Սիսակ ձեր շահերուն չի բոներ։

—Գնա՛, ապահով եղի՛ր, վարժապե՛տ, ես ողջ մնամ քեզ համար, երկիւզ մի՛ կրիր, ոչ ոք քեզ զիմազրել չի համարձակիլ. հինդ օր չանցած՝ Սիսակին բանտարկել կը տամ, դու աշխատիր վարժուել նրա սոռորազրութիւնը կեղծելու։

—Ծառայդ արդէն յաջողած է, մեծաղիր երեմներ կարենք դրել անոր ձեռքով։

—Ուրեմն, բարի գիշե՛ր, վաղն այդ բոլորը պատրա՛ստ լինին։

—Կա՛ց, կա՛ց, նորից վերադարձեց Մելնիկովը դրազրին միւս սենեկից, լաւ յիշեցի, անցեալ օրը փաստաբան Վասիլեիչն ասաց Հայրօյի դործի մասին՝ թէ վատ չէր յանցանքը մի ուրիշի վերայ կարկատուէր. ի՞նչ ես կարծում, ի՞նչպէս անենք, ո՞ւմ վերայ բարդենք, թուզիմ ի՞նչպէս յարմարեցնենք։

—Սպանութիւնին քանի մ' օր յառաջ ոմանք տեսեր են զՍի-.

սակ՝ հրացան ի յուս՝ Հայրապետեանց տան քովէն անցնելիս. Հարցանողաց պատասխաներ է, թէ իւրեանց ազգւոյ մէջ աղուէս մը բուն զրած է, կերթաց սպանելու. մնաք արդէն սեազրութիւն մ' ալ պատրաստած ունինք, ծոցս է, եթէ կամիք, կարդամ:

Վանեցին ձեռքը տարաւ ծոցազրականը:

— Եաւ յետ եկածն ես, վարժապետ, վա՛յ նրան ով քեզ չը ճանաչի, զլուխը շարժելով ասաց աղան. դեռ դու Սիսակին թո՛զ, ես ասում եմ Գալ-ափունի Սամիսոնը լաւ հրացան արձակել է իմանում, մեր Խուզօցի սիրոն էլ շահենք: Դիցուք, Գալ-ափուն լաւ մարդ է, որդին էլ մի հատիկ է, բայց ացտ իմ գործն է, դեռ Հայրօցին աղասինք, մեր Խուզօցի աղին էլ պատիենք Բարսեղի աղջկայ հետ, յետոյ որսէս և իցէ Սամիսոնին ես աղասուել կը տամ:

— Մենք Խուզավէրդի բէզին հետ լնելիք կընենք, դուք ալ այս գիշեր կարեորը խորհեցէք, կանուխ՝ խոնարհ ծառայդ եմ:

— Ել մասածել հարկաւոր չի, դու Սամիսոնի մասին շաբագրի, յիսուն մարդի ստորագրութիւն էլ զիր, բայց չը կնքես:

Վանեցի զրազիրը խոնարհ երկրապաղութեամբ բարի զիշեր մազթեց իւր խնամակալին և հետացաւ:

— Աղա՛, վեգդ ալշու կանգնեց; փուչ կենդանի՛, դարձաւ աղան գետի Խուզօն, Սամիսոնիցդ պրծար, աղիդ ստօքի տակի քարերը սրբուեցին, մնաց չհասի դժուարութիւնը՝ այն էլ մի փոքր թիկունքիդ ծանրութիւն կը լինի, բայց վանքցոնց կամքի կը բերենք. դու ա՛յս առա՛ ձայն ու ձուն չը կայ, աղացքը շատ ուշացան, էն շատ հարկաւոր է:

— Ես վազուց եմ զբկել, մի կուժ նաւիթ իմ ձեռովս եմ հանել քո զէրուզամբից (Կէռող), իրանց տուել:

— Տեսնենք՝ տէրակըն ի՞նչ կանին:

— Տէրակըն իր գործը զիտի:

— Դլուխոդ մեսնի, մինչեւ ե՞րբ ես քեզ համար աշխատեմ, դէ՛ զնա՛, զնա՛ տես տղայքն ո՞ւր մնացին, Գալ-ափունին պէտք է խճճել:

ԺԳ.

Ս Ի Ս Ա Կ.

Միեւնոյն երեկոցին Պետրոսենց Դալօյի տանը մեծ պատրաստութիւն կար, ինչպէս ասում են՝ ձեռքների մէկն իւղումն էր, միւսը մեղրումը։ Մեծ հացատան թօնիրը գուրս է թողում իւր վորից կատաղի բոցի կոցերը և մօտ եկողին կլանել է սպառնում։ միայն տանտիկինն է, որ խաչերկաթով սանձել է անզուսալ կրակի զօրութիւնը և մեծ մեծ կաթսաները վերան շարել։ Ահա քլթքլթում, փլթփլթում են անուշահամ կերակուրները, ահա ճենճի ցայտքումները թոնրի մէջ են թոշում, մի պայծառ լոյս արձակում ոսկեդոյն բոցի միջից և կրկին չքանալուց յետոց՝ անոյշ բուրմունքով քթեր պարարում։ Միւս կողմից վերնայարկի սենեակը գորգերով ու կարպեաներով զարդարուած՝ կարծես ժապում է ուրախ և սպասում սիրալիր ընդունելութիւն տալ այս երեկոցին իւր մէջ բազմողներին։

Դեռ սենեկութը մի քանի ամենախօս բարեկամներ են վեր ունիտ անում, աւելի պատուելի հիւրերի են սպասում։

Ամենքի հետաքրքրութեան առարկայն լուսամուտի վերայ զրուած մատուցարանն է՝ երեսը ծածկած մի սփոռոցի։ Երբեմն երբեմն ժողովուածներից մէկն ու մէկը մօտենում, բարձրացնում է ծածկոցը և չոր մրգով լիքը մատուցարանի միջից վերցնում մետաքսեայ թաշկինակի ծայրին կապած յակինթեայ մատանին, տրնազում, զովում և ցած զնելով՝ ձեռքն առնում տասներկու պաճախ հոլանդական ոսկէ մանեակը, դլսի շարժումով հաւանութիւնը յայտնում և կրկին ծածկում։

Այդ Դալ-ափունի տղի—մեր Սամիստինի նշանն է, որ շուստով պէտք է տանեն Ալէքենց Բարսեղի տունը։

Քիչ քիչ սենեակը կենդանութիւն առացաւ։ Բաւականին անձինք ժողովեցան, սպասաւորողներն էլ մի կողմից սեղանի պատրաստութիւն են տեմնում։ Գալ-ափուն մինուճար որդուն նշանը փառաւոր անելու համար՝ մի փոքր շեղումն էր արել սովորական կարգից, կամեցել էր բարեկամներին ընթրիքով պատուել և ապա նշանը տանել նոր խնամոնց տունը։

— Ես ընչի՞ ուշացան, սկսեց լսուել անհամբերութեան արտառնջը,
ի՞նչ էլան Գալ-ափուն ու Սամիսոնը:

Նոքա երկուսն էլ տանը չեն, Հայրը քահանայի քամակիցն է
զնացել, որդին տանուտէրի, Մելիք-Բաղալի և մի քանի սրատուելի
իշխանների. բայց ոչ մինը կայ և ոչ միւսը:

Նոքա ամենքը հաւաքուած էին Մելիք-Բաղալի մօտ կարեոր
խորհրդի: Առաջիկայ տանուտէրական լնարութեան համար էին նոքա
մտածում: Յանկանում էին ընտրել մի մարդ, որ կարողանար ազատել
զիւղը ներքին և արտաքին ցեցերից:

Այս մարդը կար, մեզ ծանօթ Արտեմ Սերգէյիսը կարող էր շա-
րիքների յառաջն առնել, խսկ նա հեռու էր, Նախիջևանի կողմե-
րումն էր: Նրան էին գիտել սրանը գրաւոր և նրանից եկած պա-
տասխանը լսելու համար էին ժողովուել:

Նատ չեն հաւաքուածները, Մելիք-Բաղալն էր նախագահի զեր
կատարում, տանուտէր Կարապետն էր, որին մի կերպ քարշ էին տուել,
ամենքից յարդուած Պաղար-բիձէն էր, հին երեցփոխ նաւօն և ժա-
մահար Սուքիասի թոռն՝ երիտասարդ Սիսակը:

Վերջինս քնիկ 0. գիւղացի էր, առ էր միակ օրինաւոր գրագետը:
Սրան էր միշտ ակնարկում գրագիր Վանեցին, սրանից միայն միշտ եր-
կիւղի մէջ էր. վաղուց չեր, որ Սիսակը վերադարձել էր 0. գիւղը
Վէորգեան ճեմարանից՝ աշքերի հիւանդութեան պատճառով:

Մինչև այս նորատի երիտասարդի գալը, զբագիր Վանեցին ան-
արգել գործ էր զնում իւր սուր գրիչը, բայց անուհետեւ շատ տեղ,
ինչպէս ասած է, խոփր քարին էր հանդիպում: Սիսակը միշտ պաշտ-
պան էր հանդիպանում գիւղական և հասարակական շահերին: Նա
ինքն էր, որ ծնեցրեց ժողովրդի մոքումը Արտեմ Սերգէյին վեր-
ընարելու, ինքը սկսեց նամակներով համեցնել Պոմշակերեանցին ձեռք
քաշել Նախիջևանու կողմերի սահմանապահ զազախներին զարի և
ցորեն մատակարարելու շահաւետ պաշտօնից և զայ Հայրենի դիւղը
կորստից փրկելու:

Սիսակը զիմադրեց Մելիկովի մի վնասակար նակատակին:
Վերջինս իւր հեռու ձգտումների համար համախօսական էր
առել 0. գիւղացիներից բանալու աջնոտեղ մի հաստատութիւն, որը
միանդամացն վնասակար էր զիւղի ներկայ և ապագայ սերնդին Վի-

սակը. բաց արեց իւր հայրենակիցների աչքերը, հասկացրեց ժողովրդին Բալասան աղացի զիտաւորութիւնները և գլուխ եկած գործը խափառ խափանեց:

Սիսակի նշանակութիւնը և ապագայում կառարելիք դերը քաջ հասկանում էր միայն զրագիր Վանեցին. նա Սիսակի բարոյական ազգեցութիւնից՝ իւր և իւր նմանների կործանումն էր գուշակում: Այս բանը նա Բալասան աղացից շատ շուշ էր հասկացել և ինքն առաջնը Սելնիկովի աչքերը բաց արեց:

Սիմիթարականը Վանեցու. համար այն էր, որ Սիսակին չեր յաջողում շարունակ իւր ցանած սերմերը կանաչած տեսնել. զիւղացիք եթէ սրտանց համակրում էլ էին իւրեանց միջից գուրս եկած մի մարդի՝ բաց արժանի յարգանքը չեին տալիս:

— Ազա՛, Խէ՛օ՛, տեղիցով կաննի՛, գտակի հանիր գլուխս տուր, տեսնում չե՞ս Սիսակ աղէն ա, աչքով ցոյց տալով լնկերին ծաղրում էր խեղճին մինը:

— Այ գլխամեռ, կամաց խօսի՛ր, մարդը չինովնիկ ա, թագաւորական շկոլից դուս եկած ա, տեսնում չե՞ս չները կողքիցը քաշ ա, էզոց էլօր, ասում են, նաշանիկի զիվանխանումը սեկլետար աղաւալու:

— Քեամուլ ա էլել մարդը (կտառքելագործուել), ումնից ա սպակաս, ասում են սա Բալասան աղիցը շատ չին ունի:

— Բաս տեսել չե՞ս, պալտօնի տակին թրի վրաց քաշ ա արած, ֆարազիմ (գիշուա) մարդը չի ուղում իր զլուխը ցոյց տալ, խոնարհութիւն ա բանացնում, թագինում ա. թէ չեք հաւատում Վանեցի վարժապետին հարցրէք:

— Աւատաս աս մեր վարժապետի սպաշտօնը խլի ա՛յ, պիսրլութիւն էլ լաւ կանի:

— Անխօ՛լք, պիսրլութիւնն ու զեղի վարժապետութիւնն ի՞նչ բան ա, որ Սիսակ աղէն վացել համարի, մարդը մի քանի օրից հանելու ա իր մեծ Առաքօ պապի խազինէն ու Բալասան աղի պէս զեղի վրաց ցրուի, զեղն իրան ձորս զրի:

Եւ յանդուգն երիտասարդները ծաղրում էին խեղճ աղացին և ետի իցը հահուալով ծիծաղրում:

Ասում էր այս ամեն սառն արհամարհանքները Սիսակը և չեր

Նեղանում։ Նա քաջ ուստմնասիրել էր տգէտ զիւղացւոյ թոյլ կողմը և աշխատում էր չարիքը արմատից կորդել և այդ փոքր առ փոքր իրեն յաջողում էր։

Սիսակը զիմել էր հրապարակախօսների և գրքեր հրատարակողների և խնդրել էր գրքեր ու լրագիրներ։

Ազգբումը դեռ փախում էին ամենքն այդ բաներից, բայց հետզհետէ ընտելացան։ շատերն իրենք զիմում էին Սիսակին և խնդրում կարդալ իւրեանց համար նորութիւններ։ զրադէտները մինչև անգամ վերցնում էին նրանից և իւրեանք կարգում։

Գրազիր Վանեցին տեսնում էր այս և իւր զլուխը կոծում։

Սակաւ առ սակաւ Սիսակի մաքերը թափանցեցին ժողովրդի բարձր գասակարգի մէջ ևս խօսքս զիւղի առաջաւորների մասին է։

Այս երեկոցեան Մելիքի տան ժողովն էլ Սիսակի նախաձեռնութեամբն էր եղած։

Երեք անգամ Սամփառնը բաղխեց այս երեկոյ Մելիք-Բաղալինց դուռը և երեք անգամն էլ ինքը Մելիքը նրան մի մի սրախօսութիւնով ճանապարհ դրեց։

—Ադա՛, ի՞նչ ա փորդ կատու մտել, ա՛յ Սամփառն, ասայ Գալափունի տղին Մելիք-Բաղալը, երբ նա երրորդ անգամ զալով՝ լեզուն հանած՝ աղաչում էր շտապել, նշանը շուտ տանել. սպասեցէք, մի քիչ հաշիւ ունինք, վերջացնենք ու էս ա զալիս ենք, առանց ինձ, առանց տանուտերի ու իշխանների հօ չէք կարող նշան տանել, բոլորն էլ ինձ մօտ են: Դո՛ւ զիսկոս, կուզէք՝ զնացէք առանց մեզ նշանը տարեք, վայն եկել ա քեզ տարել, էլ հարանիքիդ կառավարի՛: (Առաջարկ) չեմ դառնալ, ձեթ մարդկանց ձեռը կընկնես, լաւ քէֆ չի ըլնիլ, նշանածդ կը խոռովի՝ քացով կը տայ։

—Քանի քո շունչը զնդիդ ծէրին ա, բիձա ջա՛ն, նամարդ (Կամարդ) կրյնի քեզնից ոտքահի ուրիշ կառավարի՛ ջոկովը։

—Թէ զնա՛, էս ա պրծնում ենք։

Թո՛ղ մի փոքր Սամփառնի նշանն ուշանաց, մենք հետեխնք Մելիք-Բաղալի տան ժողովին։

Գոները ներսից պինդ փակուած են, Մելիքի որդին ականջը ձացնի ուրիշ սենեկում հսկում է։ Նա երկու անգամ հեռացրել է և սուն չի թողել Բաղասան աղալից եկող բանբերին։ Այդ Մելիքիովին

քեռորդի Վասակն էր, որ իւր քեռու կողմից եկել Մելիքին կանչում էր, բայց երկու անգամն էլ պատասխան ստացաւ՝ թէ զլսի սասափի ցաւից անկողին է մանել և քունը տարել է:

—Բա՛ տանուտէրի, Վազար-բիձի ու երեցփոխ Նաւօյի տեղն էլ չը զիտե՞ս, քեռիս նրանց էլ էր ուզում, ասաց Վասակը. զնալով գալով հոգահան էլայց, իրանց տներումը չեն, ասում էն՝ ձեզ մօտ են:

—Մեղ մօտ ոչ ով չը կայ, կտրական արեց Մելիքի որդին:

—Բաս էն ի՞նչ ճրագի շառաւիդ ա, որ հօրդ օժախի զրան արանքիցն երեւում ա, թէ որ հէրդ քնած ա, էլ ճրագն ընչի՞ ա վառ:

—Մէրս ա ման գալիս:

Վասակը շատ աշխատեց մի հնարքով Մելիքի զրանը մօտենալ, բայց Մելիքի որդին շարունակ խափան գանկութեանը նրա ցանկութեանը Զգտում էր Վասակը մի հնարքով ներսից ձախներ, դոնէ, լսել, բայց Մելիք-Բագալի շան հաչոցից ռվինչ չէր լսուում:

—Ինքը սուզիս Խուզօն ա եկել, ասում ա՝ հօրդ զարթնացրու, ներս մտաւ միւս սենեկով Մելիքի որդին և ցայտնեց հօրը. բայց պատուէր առաջաւ տուն չը թողնել և ասել, որ տաքութեան մէջ ուշքը կորցրած քնած է, մայրը թոյլ չի տալիս անհանդիստ անել հիւանդին:

Խուզօն էլ ձեռնունացն վերադարձաւ:

—Խորովածի հոտ ա առել, մեր տղէ՛ք, ասաց Մելիքն իւր խորհրդակիցներին, բայց թէ մեր զլսինը դուակ ա ու լաշակ չի, ովէտք ա զրա քնթի տակին մի բրդոտ էշ լանձնենք:

—Ի՞նչ են քամակներիցս լնկել, ուզում են տանին յիմարացնեն ու Խուզօնի համար քար քցել տա՞ն, զզուանք ցայտնեց Նաւօն:

—Մեր աշքն էլ են հանում, աղպէ՛ր, շեշտեց Մելիքը, աղուէսը մարազումը ձագ ա հանել՝ մեր թազու հզութիւնիցն ա. ծառը զանգասա զնաց Ասածու մօտ կացնի ձեռիցը, որ իրան կտրում ա, ասեց՝ կոթը քեզանից ա. մենք որ մի խօսքի ընկնք, իրար տակ չը փորենք, իրարից չուզուլութիւն (Մարեսութիւն) չանենք, Զաղաց-պանեց Խալօն մեզ ի՞նչ կարող ա անել:

—Ի՞նչ չի կարող, Մելիք-Բագալ', պատասխանեց Վազար-բիձէն, մարդս հինդ—տասը շահի ենք պարաք առել՝ ճուտեր ա հասել, մեր վրայ պառկել, տակիցը դուս չենք կարում գալ, մեղաւոր ու

երեսի պէս լիզուլներս կարճ ա, առաջին զլիներս ծռում ենք. էզուց էլօր ունեցած չունեցածներս տօլիի (տժուրու) կը կապի, կը ծախի:

—Էդքանով որ բաւականանայ՝ զլուխը քարը, կը զիմանանք, բայց գէ զեղումս բան կա՞յ, որ էդ անիրաւ որդամեսի մասը խառը չըլնի. լոլի տեղեկա՞նում էք, թէ մեր ջահէլջուհուներին ո՞վ ա փշացրել. ո՞ւմ մարազը կրակուել ա, ո՞ւմ բաղերը կոտորուել են, ո՞ւմ տունը կորուել ա՝ պոչը զրա տակին ա. ձեզ քաջ յացնի ա, որ մեր զեղի սարասի ջահէլների զլուխը զրա քուեր տղայ Վասակն ա, պահող, պարտակողն էլ մեր բարեհողի Խուզօն—զեղիս արդար զատաւորը. նա մէջ տեղից հալալ բաժին ա անում, կէսը մեր փշերին ա տալիս, մէկէլ կիսիցն էլ իր բաժինը վերցնում ա, մէւսը զրկում քաղաք՝ անաքանդ հալասան աղի տունը:

—Դեռ մէնք ողորմութիւն ենք, պարոննե՛ր, խօսեց Սիսակը, միւս զիւղերն իսպաս աւերել է, մեզանից որքան և իցէ քաշուում է, իբրև հայրենակիցներ՝ մէնք տեղեակ ենք իւր անցեալին, ուրիշ զիւղերում միանգաման չափից անց է կացնում:

—Ի հարկէ իրան յացնի ա, որ մէնք իր օխոտը պորտը զիտենք. զրա հէրն երեկ մէկէլ օրը չէ՛ր, որ նրեան Խօշնց ջաղացի շամբը լիզելով հոգին զուս էլաւ, զլուխը շարժեց նաւօն:

—Են օրը Գառնու զլանին արին էր լալիս, ասում ա բերել ա Զօլախ-Յարութիւնին պավէրնի (Կառապարհապար) ա շինել, բաց թողել մեր ջանին. ո՞չ բաղերումս ա հաւող թողում, ոչ դնդերումն չալթուկ, օրը տասի հացն ա կարում:

—Էդ անաքանդն ընչանք Գառնու մհալն էլ ա կունչը հասցրե՞լ:

—Էդ թո՞ղ, Սիսա՞կ, դու մեր ցաւը հոգա՛, Գալ-ափուն հինգ հետ մարդ ա զրկել. դու էս ասա՝ ի՞նչ զիր ես ստացել մեր Արտօնց, պոի զայ որ զլանին ընտրենք իրա՞ն, թէ ոչ. էս բիբօրին (ընտրութիւն) թէ նա դուս չեկաւ, զեղը հողէց հոգի կը կորչի:

—Պ. Յարութիւն Գոմշակիերեանցն ինձ զրում է, պատասխանեց Խօսակը Մելք-Բաղրամին, որ ինքը թէկ միտք չունի միանգաման յանձն առնելու, բայց զիջանելով ամրող զիւղականաց խնդրանացը՝ այն պայմանաւ մէացն կը գայ, եթէ զիւղացիք միահաւան թուղթ տան նաշալնիկին՝ առանց քուէարկութեան ընտրել իրեն տանուաեր.

իսկ եթէ նաշալնիկն օրէնքի վերայ հիմնուած չը համաձայնի, այն ժամանակ միայն քուէի դնեն խոր անունը:

—Ասուուած իր որդիքը պահի, ա՛զգէր, ես իմ հոդին՝ էլի լու մարդ ա, որ մեր խամթրը պահեց. մենք էլ տունը մինը կայ՝ կը դնանք, հինգը կայ՝ կը դնանք ու սիստակ կը քցէնք:

—Վէ հիմի վեր կացէ՛ք դնանք մեր Գալափունի աղի շինքը կարմիր նօխուայ կապենք, նշան դնենք, ասաց Սելիք. Բաղալը, երբ Սիսակը թուղթը զրեց վերջացրեց և ներկայ եղողները ստորագրեցին:

Միւս օրն երկու թերթ էր զիւղամիջին ձեռքէ, ձեռք անցնում. մէկը մեզ ծանօթ ստորագրութիւնն էր՝ Արտէ՛մ Ակրգէլիչի համար, միւսը Խոզոյի օղախն էր:

Եթէ երկու թերթն էլ զիւղէիր, շատ միւնոցն անուններ կը դոնէիր երկուսի մէջ էլ ստորագրած:

Երկու տեղ ստորագրողներից մի քանիսին մենք ծանաչում ենք. Ալագիսիր Նեսոորին: երեկոյեան խօսակիցներն էին նոքառ:

Աերջին թերթի մէջ շատ ձեռքեր միանմանութիւն ունեին. քաջավարժ աչքը միայն կարող էր պնդել, թէ այդ ամենը մի մարդու ձեռքով յերցիւրած կեղծ ստորագրութիւններ են:

Եզդպիսի քաջազործութիւններ առաջինը չէր, որ կատարում էր զիւղական զրագիր Վանեցին:

Ժ. Պ.

Կ Ր Ա Կ.

Գալափունի հիւրերը բոլորը ժողովել են. Սելիք. Բաղալն խոր մօտ հաւաքուած իշխանների հետ բազմել է վերի կողմը, մի մի կմզայ օդի և մի քանի հատ չամիչ էլ վայելել են, բայց հիմա ինքը Գալափուն ուշացաւ:

Այս երրորդ անդամն է, որ Խլզաթենց տէր Առոքիսասի քամակիցն են ուղարկել և նա չի զայխ, խակ առանց տէրակի նշան դնել մի ժամանակ կարելի էր, բայց 15—20 տարի ա, որ հոգիոր տիրոջ հրամանովը նշան եղած տէղը քահանայ պէտք է գտնուի նշան օրհնելու՝ հայոց հին ծիսէն համաձայն:

Գալափուն ասիւուել է ինչն անձամբ զնալ քահանային կան-

շելու, բայց ամենքի համբերութեանն էլ չափ ու սահման կար, հրաւիրուածներն սկսեցին նեղանալ և Գալ-ափունի վերաց տրտնջալ:

— Տօ', մեղրի պուլիկը լպսառդ Սամիստ'ն, վաս հողէառի պէս թողիր էլ ոչ, թէ մեղքներս խոստովանուինք, պարզերես զնանք գրախափ դուռը ծեծենք. ընչանք զնացիր եկար՝ խորհուրդներս կիսաս թողիր. լեզուդ կէս գազ կախ էիր քցել մղկառմ, թէ եկէք նշանը զրէք, որ ինձ տուն քցեմ, բաս ո՞ւր ա քո նահի թամբալ (ծոյլ) հէրը, ի՞նչ ա զնացել չանէն (ծնօպ) կախ քցել ու տէրտէրի հետ Աշուղ-Արիրի առաջներն սկսել, դէ զնա՛ կանչի է՛. ձան տուեց Մելիք-Բաղալլ:

— Երեք հետ եմ գնացել, բիձա ջա՞ն, հրէս մին էլ եմ վազում: Սամիստի զնալուն կարիք չը մնաց, Գալ-ափուն ինքը տուն մոտաւ թթուած, քացախած:

— Ազա՛, չորս ոտաննոց հրեշտա՛կ, Գալ-ափո՛ւ, իւր ձեռով հարցրեց Մելիքը, զու գալլաք (սոֆիէլ) Զաքօն ե՞ս, որ հարսանիքն իրանց տանը թողել ա, զնացել ուրիշի տանը հացի նստել. ի՞նչ ես նոյնան աղուաւի նման լէշով (Գէշ) ընկել, ի՞նչ էլաւ տէրտէրը, զէ պրծէ՛ք՝ զնանք է՛:

— Եմ աչքի լոյս թանկագին զօնաղնէ՛ր (հետթէլ), կը բաշխէք, որ ձեզ նեղութիւն տուի, ասաց յանկարծ Գալ-ափուն սաստիկ յուսահատ ձանով, ամենքդ վեր կացէ՛ք, զնացէ՛ք ձեր տները, ես էլ նշան զնելու որդի չունիմ:

Բոլորը առուեցին, քար կտրուեցին, բայց Մելիք-Բաղալն սկսեց. — ա՛գա, ա՛յ մեռած, շատ զինովներիցն էլ չես, թէ ասեմ՝ զնացել ես, զլուխով կոխել զինու կարասի մէջ, ծծել, կատարդ տաքացրել, խելքդ կորցրել. էդ ընչե՞ր ես զուս տալիս, տէրտէրն ի՞նչ էլաւ:

— Ի՞նչ տէրտէր, աղսկէ՛ր, տէրտէրն իմ ընչի՞ն ա պէտք, երեւում ա՛ ես թուրք եմ, որ չհաս աղջիկ եմ ուզում աղիս:

— Ազա՛, ի՞նչ ես ձաւար անում (ցնորտվանել):

— Այ մարզիկ, ամենդ էլ էս զեղիցն էք, էս նշանի մէջ չհամութիւն կա՞յ:

— Տօ՛ տիւմա՛ր, զեղն արմացած մնացել ա, որ էս տարի մի սպասկ պէտք ա ըլնի, որի մէջ չհաս չը կայ. քանի մեր Խլզաթի դարմ երէցը զինի արագ ծախսիլը թողեց, փիլոն ծածկեց, հասն էլ

զգուեց, Հաւասարուեց, Համան էլ. հիմի դու ի՞նչ ես զլիիցդ դուս
տալիս:

— Դէ՛, ա՛յ հընկեր հարևաններ, մի մին քար վեր կալէ՛ք, գըլ-
խիս քցեցէ՛ք, ինձ տնով, տեղով կրակը զրէք, էրեցէք, որ ձեր հայ-
քրիառնէութիւնի հիմքը շուռ եմ տալիս, տղիս համար Հաս աղ-
ջիկ եմ ուզում:

— Ախար ի՞նչ կայ է՛:

— Զեզ զուրբա՞ն, լսեցէք ու ինձ քարով քարկոծեցէք: Դէ՛,
կարգ ա, ասում ա՛ ոչ հէր անմեռ, ոչ որդի անպասի, աչքիս ու-
ու սիպատակն էդ մի երեխէն ա—Սամփանս ա, աչքս ջուր կարուեց
լէնքս ու երկէնքին մորիկ ապով. Ասուած ձերն էլ պահի, չունե-
ցողին էլ ինքը տայ՝ ուրախացնի. մոքներումն զրինք էս ձմեռ աը-
նաւորենք, մենք էլ հարսնատէր դառնանք: Հալրա՛թ, Ասածու իր
կամքն էր, որ մեր Ալեքենց Բարսեղի նշանածի (Է՞ռջ) հետ մեր
տանտիպնել (Ե՞ր Հե՞ռ) ամառս բաղումը՝ ծառի հովումը քաղցր զը-
րիցների մէջ խօսք էին տուել, խօսք առել: Դէ՛ լաւ ու վասոս ո՞րն
ա, Բարսեղի աղջկանը մի տղայ էր պէտք, իմ տղին էլ՝ մի աղջիկ.
ես էլ, Բարսեղն էլ կամք տուինք (Համաչայնել) ու ասացինք՝ Ասո-
ուած շնչա՛ւոր անիր: Բայց, դէ՛, բան ու զործի խառը ժամանակն
ո՞վ պտի նշան գնէր, ասացինք՝ քարը վերցնենք՝ քարի տակը զը-
նենք (Ժածէլ), աշխարհքովս մին չանենք, բաղաբանից, հանդա-
րանից պրծնենք, նշան գնենք, պսակենք:

— Էս ժամանակին թագուն բան կը մնա՞յ, ասացին այս ու այն
կողմից, երկո՛ւ օրից ձէնը վեր էլաւ:

— Դէ՛, ի՞նչ անենք, թէ վեր էլաւ, դողութիւն հօչե՞նք ա-
րել, բայց դուք բանը լսեցէք: Մի օր մեր մեծ երէցը ծիծաղելով
ինձ ասում ա, Գալափո՛ւ, շորավ (Պուգանի) ունիս, տղիդ աղջիկ
ես ուզել, ինձ չես հարցրել:

— Է՛...

— Աջի՞դ մեռնիմ, ասում եմ, առանց քեզ ո՞նց կը լինի, էղուց
էլոր քո առւրբ օրհնութիւնով կը նշանենք, ամենքն էլ ի՛իմանան:

— Զէ՛, ասում ա, դու մոքումդ զրիր թէ չէ, իմ ծուխն ես,
պտի գայիր ինձ հարցնէիր. երբ որ ես խորհուրդ կը անանէի, կամ
ինքս իմ սոսովս կ'երթացի իննամախօս, կամ ուրիշին կը զրկէի:

—Կարգիդ կապուած ըլնիմ, տէրտէր ջա՞ն, ասում եմ՝ թէ ես
աեղեակ էլած կամ, մէրերն իրանք են ծառի հովումը տուել ու առել:

—Ես խաբար չեմ, կպել ա՝ մեծ շորավի կայ շնչիդ:

—Դու ողջ կենա՛ս, ասում եմ, ինչ որ քո քէֆնա՝ (ցանկանան)
հրամանիդ կանգնած եմ:

—Կապուտ շապկաւորն, ասում ա, իր ոսովը պաի գայ մեր
տունը:

—Քո ցա՛ւը տանի, տէրտէր ջա՞ն, ասում եմ, աշխարհքի ծախս
ա գնալու, մի գլուխ շաքարն էլ դու անուշ արա, հալբա՛թ, Աստ-
ուածի միադ կը բերես, մի օր մեզ մի թաս չայ կը խմացնես Բայց,
տէրտէր ջա՞ն, ասում եմ, էդ քո կապուտ շապկաւորը, կամ ուղիղն
ասենք՝ մի գլուխ կապուտ թղթով փաթաթած շաքարը զու չհաս
տեղիցն ես վերցնում: ես լնչի՛ պաի զրկեմ, փառք Աստծու մէջը
չհաս-մհաս չը կայ:

—Թարջիման (Պուգանչ) ունիս, ասում ա, լաւ իմացիր, որ
լնչանք կապուտ շապկաւորը՝ հետն էլ մի գրուանքայ իր սիրե-
կանիցը (Անյ) կապած, փէշատած, ծերիցն էլ արծիճը կախ լնկած՝
մեր շեմքովը ներս չը գան՝ ես ո՛չ քո տունը ոս կը կոխեմ, ոչ նը-
շանդ կ'օրհնեմ, ոչ կը պսակեմ:

—Տէրտէր ջա՞ն, ասում եմ, շատ լաւ ես հրամանք անում,
զրկեմ՝ զրկեմ՝ բայց մեղքս դեռ շնչիս դիր, յետոյ ծանր ապաշ-
խարանքն էլ միջքիս բարձի:

—Դու, ասում ա՝ էդ աղջկանն ուղելով՝ իմ տանիցը մի Քրդի
կարմիր կարպետ խլեցիր:

—Կարգիդ մատա՛ղ, ասում եմ, ի՞նչ կարպետ, մեր տանը Քրդի
կարպետ չը կայ, մենք կարպետներ ունինք՝ բայց բոլորը Թարա-
քեամի են՝ Երեանաց բազարումն առած:

—Ախմա՛խ, ասում ա, գէ՛, տեսնում ես, որ տաւարի հրեշտա-
կութիւնից—զասաբութիւնից աւելի գլուխդ ոչինչ բանից չի դուս
զալիս, Քրդի կարպետ՝ հարիւր մանեթանոց թուղթ փողի անունն առ

—Այ տէրտէր, ասում եմ, հայ-քըրիստոնէի տանը 100 մանեթն
ի՞նչ բան ունի, ես սովորաբեա՛ր եմ, վաճառակա՞ն եմ, բամբակիս
հակները Թիֆլի՛զ ա՝ հասել, արաղիս բեռները Զալալօղլի՛ն ա անց
կացել, որ 100 մանեթի երես տեսած ըլնիմ, մենք մեր էլած չէլածը

մեր գրանը ծախում ենք, մեր ցաւը քաշում, վախս վախս էլ մի ոչխարի, կամ տաւարի զլուխ ենք կարում, նիսիա (աղոստին) բաժանում, միջիցը մի երկու շամփուր խորովածացու աշխատում, Վանձուն վառք տալիս:

—Հանաքը մի կողմը կինայ, ասում է՝ Գալ-ավու՛ւ, զու ինձ հարիւր մանեթ միսա տուիր. տասը տեղից նարսեղի աղջկանն ուզում էին, տասն էլ չհաս էր, մէջ տեղն էլ իմ ջէրն էր լցուում. զու ո՞ր տեղից ներս մտար, հաս տեղից աղջիկ ուզեցիր, որ ինձ մի կոպէկ օգուտ չը լինի: Եդ ամենն էլ ոչինչ, զու իմ տունը քանդեցիր, իմ բարեկամի ու բարերարի մօտ ուերես արիր:

—Ի՞նչ բարեկամ—բարերար, հարցնում եմ:

—Բալասան աղի:

Լսողները միանգամից անմիջապէս ցնցուեցան, սարսափն ու սառը քրտինքը մեծ ու փոքրին պաշարեց. մինչև հիմա Գալօցի պատմութիւնը կատակ էր թուում, կամ, շա՛տ, շա՛տ՝ քահանացի շահասիրութեան և չարութեան հետևանք, այժմ զործի ծանրութիւնն ինքն ըստ ինքեան բացատրուեցաւ:

—Խօսքդ շարունակի՛, երկար շշուկից յետոյ առաջարկեց Մելիք-Բաղալը:

—Ո՞նց թէ Բալասան աղին վրէդ բարկացրել եմ, ա՛յ երէց, շփոթուած հարցրի ես, կցեց նորից Դալօն իւր երկար պատմութիւնը:

—Բալասան աղի կամքն ա, ասեց՝ որ նարսեղի աղջկանն ուրիշի համար ուզի, մի շաբաթ յառաջ ինձ կանչել էր՝ զնացի. հրամացեց, թէ փիլոնդ ծալի զործակալին դրկի՛ր, թէ որ զու Պետրոսնց Գալօցի աղի նշանն օրհնել ես:

—Յետոյ, տէրտէր ջա՛ն, ասում եմ, հիմի ի՞նչ ես հրամացում, մենք գնանք ո՞ր ջուրն ընկնենք:

—Ոչի՞նչ, ասաց, մազաւափ էլ ա բանի տեղ մի դնիլ, Բալասան աղի ասածը շատ ա չհաս. ինքն իր աղայ տեղովն օրն օխտն անգամ էլ եթէ վանքի խցերը տուն ու գուս անի, շեմքերը մաշի, զլուխ չի կարող բերիլ. ինչպէս քեզ ասում եմ, զու մի զլուխ շաքար, մի զբուանքայ չայ մեր տունը դրկի՛, բոլորի բերանն էլ ցիսիլն իմ բանն ա, զեռ Բալասան աղէն իրան ա տեսել, զեռ իմ սատանութիւնից տեղեակ չի. ուզենամ՝ թէ չէ հէնց կլսկոնձի տալ տամ,

որ փոսն ընկած ձիու պէս թափահարուի, օձի պէս կուտապ կուտապ անի ու թաղուի մնայ, իրա հէ'րն եմ օրհնել. խաթրն եմ պահում, ինձ պէտք է զալիս՝ սիրու շահում եմ, թէ չէ երկ' օրումն իժ օձի պէս հէնց կը շանթեմ, որ ձէնը երկինքը կը հասնի, ինձ ԽՂԱԹԵՆԸ մէնծ տէր Սուքիաս կասեն:

—Խ՞նչ պտի անեի, ա'զադէ, ձեզ եմ հարցնում, տուտ էր ասո՞ւմ, քիչ տուն ա քանդե՞լ. միտք արի, միտք արի ու նշանի քաղցրեղէնի հետ՝ մի զլմի տեղակ՝ երկու գլուխ շաքար առայ ու մի գրուանքայ կապած, փէշատը կախ չայի հետ, Սամփառնիս ձեռքովն իրան դրկեցի:

—Ուրախ ուրախ վերցրել էր չայ-շաքարը, շարունակեց Գալճն, Սամփառնիս հետ էլ բաւական հանաքներ էր արել, նշանը մի հէնց հաստատ պտի քցեմ քո ու նշանածիդ շլինքը, ասել էր՝ որ օխոր լուծ գոմէշը չը կարենայ յետ պոկել: Մենք էլ մեզ համար ապահովացանք, ինամոնց հետ խօսացինք, էս իրիկուն նշանի հոգսը քաշեցինք, շնորհակա'լ եմ, դուք էլ եկել էք մեզ պատուելու: Դեռ կանչուածները նոր էին հաւաքուում, Սամփառնիս դրկեցի տէրտէրի ետևից: Դուռը ծեծում ա ու ձէն տալիս. ինքը ձէնը ճանանշում ա ու տղին հրամացում, թէ ասա՝ տանը չի: Դու մի' ասիլ, Սամփառնս հեռուից տեսած ա ընտում, որ տէրտէրը Բալասան աղենց տանիցը դուս եկաւ ու իր առաջն ընկած՝ գնում ա: Էլ չի ուզում վազի քամակիցը հասնի, թողում ա՝ մինչև տուն ա մտնում:

—Ո՞նց թէ տանը չի, պատասխան ա տալիս Սամփառնս, հէնց հիմի Բալասան աղենց տանից դուս եկաւ ու իմ աչքի առաջին եկաւ տուն մտաւ:

—Արի՛, Սամփառն, արի՛, հանաք եմ անում, ձէն ա տալիս տէրտէրը ներսից. էզպէս կը վախացնեմ, լեզիդ ջուր կը շինեմ ա'յ: Դու գնա՛, հրամացում ա, ես էլ հրոպակ չի քաշիլ՝ էն տեղ եմ:

—Խ՞նչ կասես, Մելլի՛ք, բոլորը հաւաքուեցին, մնացիք դուք՝ մի քանի իշխաններդ ու տէրտէրը. Խեղճ Սամփառնս տէրտէրից ձեզ էր վազում՝ ձեզանից տէրտէրին: Վերջը որ դուք ասել էլք, թէ հէնց հիմի զալիս ենք, համբերութիւնս հատաւ, ինքս վերկացայ, գնացի դալա երէցն ու առանց դուսը ծեծելու՝ թո՛ւշ տուն մտայ: Խ՞նչ էք ասում, աղպէ՛ր, մի քարափ շուռ անցաւ, թէ մի կայծակի ամպ

էր՝ տրաքուեց դա իմ զլիսին. չը թողեց, թէ բերան բաց անեմ, օրհնեա ի տէր ասեմ, ձէնը գագաթն առաւ ու աշխարհքի լափը զլիսիս ածեց. —ի՞նչ էր ինձ անշանգիստ անում, ձեր հէրն էլ, ձեր տէրտէրինն էլ, ես էլ քո տան քահանէն չեմ, գնա՛ տէր Մարկոսին տար:

—Կարգիդ մեռնեմ, ասում եմ, ախար էն վազ էր, որ ծուխ ու մուխ չը կար, տէրտէրիների միջին սէր, խաղաղութիւն կար, իրար հաւատալ կար, մի սև փողը հաւասար աղպէրաբաժին կանէին. քո ձեռնադրուելուց դէսն էն բաներն ո՛վ ա տեսել. իմ ու քո էք արել, մեզ հայվանների պէս միջներիդ բաժին էք արել, անումներս ծուխ էք դրել ու կարգին էլ չէք հովուում. առաջ պատահած ժամանակը՝ ո՛ր տէրտէրին գնում էինք, ձեռաց հասնում էր, հարամներս հալալում, նեղացածին օրէնք հասցնում (հաղորդել), հիմի հէնց օր ա ըլնում, որ եթէ ծխատէր քահանէն գեղումը չի գտնուում, մէկէլդ չէք էլ ուզում տեղից շարժուիլ. հիմի էս կէս դիշերին ես ո՞ւմ ոտը գնամ, ո՞ր տէրտէրը կը համարձակուի իմ հարկը կատարել:

—Զէ՛, ասում ա, Գալօ՛, չէ՛, քանի շանը բաց չեմ թողել, քեզ գզզղիլ տուել, համով, յարգեւորով (պատրուլ) վեր կաց քաշուի:

—Տէրտէր ջա՞ն, ասում եմ, ախար ընչի՞, ի՞նչ սհաթ անցկացաւ, որ փոխուեցիր, էն օրը դու ինձանից չաց-շաքար ուզեցիր՝ առայ ու զրկեցի, էլ ի՞նչ անեմ:

—Մի շատ մեծ բան էլ չես արել, ասում ա՝ միջքիդ զու ահասե՞լ, որ 25 տարի ա՝ քո տանու քահանէն եմ, մի զլուխ շաքար ես զրկել. հարիւր հետ հօրդ գերեզմանն օրհնել եմ, տռաւածդ մի մի ապասի ա էլել, շաքարն էլ նրանց հաշուում դուս արի:

—Գէ, տէրտէր ջա՞ն, ասում եմ, իմ ուժս էնքան ա պատել, էն եմ տուել, գեղըցու ապասին քաղզցու մանէթից թանգ աւ

—Նատ չեն դուս տալ, ասում ա՝ ես քո նշանն օրհնողը չեմ, մէջը չհասութիւն կաց, էղուց կը տանեն, միրքիս ձարելը (Տաղ) մի մին կը քաղեն:

—Ի՞նչ չհասութիւն, ի՞նչ ա զլիսիցը դուս տուել, բարձրագոչ աղաղակ վեր ելաւ բազմականների միջից:

—Ես էլ ձեզ պէս էդ խօսքի վրայ քար կտրուեցի, սառած մնացի, շարունակեց Գալօն. ոտի՛դ մատաղ, տէրտէ՛ր, հարցնում եմ, ի՞նչ չհասութիւն կայ:

— Եղ մենք կը պարզենք, ասում ա՝ երբ բանը տեղը կ'ընկնի,
դեռ էլի ուրիշ արգելքներ կան, որ ժամանակին կ'ասենք. վերջա-
պէս, ասում ա, Գալօ՛, դու էլ հացակեր ես, Էն օրն ես քեզ ցերեկի
պէս պարզ յայտնեցի, որ իմ բարերարս Բարսեղի աղջկաց համար ուրիշ
մտքի ա, դու անմեղ տեղը ծախսի ու խարջի տակ մի՛ ընկնիլ, Էն
աղջկը քո Սամփառնի կնիկը չի կարող դառնալ, ականջիդ բուրդը
հանի՛ր: Հիմի էլ բարեկամաբար ես քեզ հասկացնում եմ, որ Բա-
լասան աղի մի դատարկ հրամանը ձեր ողջ գեղի հետ ինձ համար
հաւասար ա. թէկուզ որ էս օր ասի՛ փիլոնդ վիր դի՛ր, մտի՛ մէշիդը՝
անխօս կերթամ, ալլահ ու ակպեար կանեմ, միտքդ ի՞նչ ա, ես
կարամ նրա հրամանը գետինը քցի՛լ, ինձ հրամայած ա ասել՝
չհաս ա՝ ես էլ մինչեւ Հոգեոր տիրոջ ոտքը չհաս դոռալով
պէտք է գնամ:

— Այ, կապուած ըլի նա իր անտօնական կարգին, ինչքան նա
հաս ու չհաս ա հարցնում, ընդհատեց Մելիք-Բաղալը, ա՛յ մարդիկ,
դուք ու ձեր Աստուածը, էս գեղումն յառաջ հարիւր պսակից մինը
չհաս պատահում է՞ր, ո՞վ առաջինն էդ սովորոյթքը մեր մէջը մըտ-
ցրեց, էդ պոճոկուածը չէ՞ր:

— Բաս ո՞ր անիծածն էր, պատասխանեց Սիսակը, մոռացե՞լ էք
այն տարուայ 14 չհամարը, որ ինքը յորդորեց, ինքը նշանեց, տանա-
կան մանէթ ստացաւ իւր համար, վերջը չհաս հրատարակեց, 14
զլուխ շաքար բարձեց ձիուն՝ տարաւ տեղ հասցրեց ու հրամանը
բերեց և ահա այն օրից յայսօր մեր մէջը կարգ է լնկել՝ օտարին
թողած, արենակիցներին ենք վազում:

— Գալ-ափունի ջա՞նն էլ ենք հանում, կատակի տուեց Մելիք-
Բաղալը, իր քուեր աղջիկն օխտն օրէն ճանապարհ կորցրեց, Կող-
բումը մարդի տուեց, որ իր մորթոտած տաւարի հետ անփող աղ-
լպստի ու գեղի ծէսը քանդեց, տղին հաս տեղից աղջիկ ուղեց:

Ամենքը ծիծաղեցին, բայց այդ դառը ծիծաղ էր, յուսահատ
սրտից արտաժայթքուած մաղձ էր քահանալի ստուերի դէմ:

— Յետո՞ց, յետո՞ց, խօսքդ վերջացրո՞ւ, Գալօ՛, ասաց Մելիք-Բա-
ղալը, հիմի չի դակիս նշան օրհնելու էլի:

— Գալօ՛, ասեց ինձ վերջը, թէ ինձ կը լսես, գնա՛ կանչած
զօնաղներիդ մի հնարքով յանի՛ր, ճամփո՞ւ դիր, Բարսեղի աղջկա-

նից ձեռք քաշի՛ր, թէ չէ զլիիդ շատ խաթաբալէք կը գան,
ես քեզ...

— Կրա՛կ, կրա՛կ, աղաղակելով տուն լնկաւ յանկարծ մի երի-
տասարդ. Գալափո՛ւ, հասիր, գոմզ ու մարագդ էրուում են:

Ամենայն ինչ մոռացուեցաւ, բազմութիւնը բովէական դուրս
թափուեցաւ: Աստուած հեռու տանի, երկինքը շառագունել է,
Պետրոսենց Գալօյի գոմի ծածքը բլել է, տաւարի բառաչն ու ձիու
խրիինչը լաղի սիրոն է կարառում, մարագը միանգամայն բոցի
մէջ հուրհրառում է: Գիւղումը կուժ ու բղուղ չը մնաց՝ դուրս եկան,
բայց օգուտը ասկաւ, մարագն ամբողջ այրուեց, քարաշար պատերը
մնացին ցցուած, գոմումն էլ հինդ կով իւրեանց հորթերով և մի
ձի ծխախեղդ եղան:

— Լաւ նշան չը զբե՞ց, ո՞նց եր, փափառմ էին իրար հետ
բազմութեան մէջ խառնուած երկու երխասարդներ:

— Դէ հիմի թո՛ղ զնաց, իմ նշանածը տանի՛, Վասակ ջա՞ն:

— Քեռուս կեանքն երկար ըլի՛, Կարօ ջա՞ն, նա որ չը հրա-
մայէր, քո հէրդ ի՞նչ կը համարձակէր երկու կուժ նաւթն աղենց
զէրուզամբիցը (Ակուզ) զուս բերել, մեզ տալ ու զրկիլ կրակ տալու,
կամ թէ չէ շատ էլ որ քո հէրն ասէր, ես կը լսէի՞:

— Բաս ո՞նց էլաւ:

— Ես իրիկնապահին որ քեռիս ձիուցը վէր եկաւ, ինձ զրկեց
Գիլակերենց զուքանի դրուը. շամա՛, ասեց, բազմութիւնն էստեղ
հաւաքուած ա, քեզ համար մի քնչնում (Թոնէն) կանգնի՛ր, ականջդ
կախ արա՛, տես ո՞ւմ բերնիցն ի՞նչ ա զուս գալիս էս ու էս շատ
պարի վայրահաշութիւն անեխն քեռուս շուաքին, բայց մաշակար
(Էօշէտէտր) Համբօն՝ էն սուրբ Կարաբետի զէվլ չը թողեց, աշքով,
ունքով խալլսին հասկացրեց, որ ես էստեղ կանգնած եմ, նրանք էլ
ցրուեցին, քուչէն դարսակուեց:

— Յետո՞յ:

— Ես էլ զնացի քեռուս յայտնեցի:

— Վնաս չունի, ասեց աղէն, ես էզուց առենքի հէրն էլ կ'անի-
ծեմ, զու մեր Խուզօյի տղի հետ պատրաստ կաց, մութը զետինն
առաւ թէ չէ, Խուզօն ո՞ւր կը զրկի, ի՞նչ բանի կը զնի, տեղն ու
տեղը կատարեցէք:

— Դէ՛, մնացածը զիսենք, հէրս նաւթը հանեց աղենց զէ-
րուզամբիցը, մեզ տուեց ու դրկեց Գալ-ափունի մարագն ու գոմը
կրակիլու՝ մէնք էլ արինք:

Խօսողներն էին Բալասան աղայի քրոջ որդի Վասակը և Խուզոյի
տղայ Կարապետը:

ԺԵ.

Ը Պ Ա Ծ Ի Ե Բ Օ!

Եկուց գլավուռ՝ սուզիէքանց բիբօր (ընդուն-Եկեղ) ա՛, ճա-
շից յետոյ տունը մի մարդ հաւաքուին Զիթահանքի բակը, ինքը
նաշանիկն ա գալիս բիբօրի. չեկողի մօրը կը լացացնեն, մի մանէթ
շարագի ունի, 0. գիւղն ընկած՝ ձան էր տալիս կապիերես քաշալ
գզիր Յականը:

Հարկաւոր չէր տուզանքի անունով երկիւղ տար, տան գլուխ
մէկը կար՝ գնաց, երկուսը կար՝ գնաց. մի մի լաւաշ հացի մէջ մի
կտոր պանիր, կամ աղը զրած ձուկը փաթաթում. էր ամեն ոք ու
զրպանը կոխում, վազում դէպի Զիթահանքը:

Զիթահանք կոչուած տեղն 0. գիւղումը չէր:

Մի փոքրիկ պարսկական դիւղի մօտ 0. գիւղից ժամաշափ հե-
ռաւորութեամբ գտնուում էր մի աւերակ: Ոչինչ յիշատակարան կամ
փորազրութիւն չէր նշմարուում աւերակի վերաց. միայն հիմքն և ա-
րևելեան կողմում մի շարք սրբատաշ քարեր՝ ազատուել էին ժամա-
նակի անողոք ճանկերից. իսկ միւս քարերը թէ ո՞ւր էին, հաս-
տատ չէր կարելի ասել. ոմանք ենթադրում էին պարսիկ ռամիկների
ձեռքով իւրեանց գոմերի յատակը սալայատակած. այլք հակառակն
էին պնդում, ըստ որում պարսկական դիւղը շատ փոքր էր և շատ
աղքատ. մի կամ երկու նիհար եղներ և հինգ վեց հատ էին
նոցա տնտեսութեան առարկացքը. պարսիկներից շատերը գոմ էլ
չունեին, մի կիսազետնափոր, կիսախարխուլ խրճիթի մէջ մի անկիւ-
նում եղն էին կապում, միւս կողմը մերկանդամ պարսկածագերն
էին կուչ գալիս իւրեանց բոկոտն ծնողների հետ, էլ ընչի՞ վերաց
պէտք է գործ գնէին քարերը:

Աւերակն, ինչպէս երեւում էր, մի փառաւոր անցեալ պէտք է
ունենար. այս աշկարայ էր շրջապատած մեծանիստ պարսկատեղի
հետքերից:

Եթէ հաւատ չընծայենք պարսկական արևելեան ճաշակով յերիւրած աւանդութիւններին, ապա աւերակը հայկական սրբարաններից մէկի մնացորդն էր անշուշտ: Տեղական պարսկինների շռայլ երևակայութեամբ, այն հնութիւնն իւրեանց նախկին տիրապետող իշխանի ասլարանքն էր. նրա մօտի ասպառած քարի ճեղքուածքից դուրս բղիսած առաստահոս և ականակիս աղբիւրը տոփասէր իշխանի մարմարեայ շատրուանին ջուր է մատակարարել. նրա փղոսկրից ճերմակ հոլանի կանանց և հուրի-փարի հարմերի նրբակազմ ու լուսափայլ մարմինները զովացնող ու թաւշացին փափկութիւն տուողն է, հանդիսացել: Խոկ հասուն և խոհական դատողութեամբ՝ աղբիւրը սրբավայրի ջերմեռանդ միաբանական եղբացրութեան միակ ըմպելիքն է եղել, նոցա անդերն ու մարգաստաններն է ջրել, նոցա ջրաղացներն է պտըռել և հետզհետէ իւր մէջ առնելով ներքեւներում՝ բղիսած մեծ ու մանր աղբակները՝ մի գետակ է կազմել:

Աւերակի շրջակացքն այսօր յառաջուանից տարբեր մի այլ պատկեր է ներկայացնում: Գիւղի ներկայ տիրապետող քաղցած պարսկի բէզի պարտէզն է կոչուում դա, որ ըստ ինքեան ոչ այլ ինչ է, եթէ ոչ սաղարթաշատ ուսենիների երկու շարք, որոց հովանու ներքե, փափուկ սէզի վերայ, արժէ, ամառները սրտակից և սիրելի բարեկամների հետ պարարտ զաւան տժտժան խորովածներ վայելել՝ վրէն էլ դատարկել 0. գիւղի հեշտախում և զուարթացուցիչ զինին՝ անշուշտ բարեխառնած աղբիւրի քաղցրահամ և սառը ջրով:

Այդպէս էլ անում են. ամառուան շոքին՝ կիւրակի օրերը՝ միշտ կը լսես ծառերի տակից մերձակայ գիւղօրէից կորիճների երգերի ելեէջները:

Այսոեղ էր կարգադրել նաշալնիկն 0. գիւղի տանուտէրի լնորելատեղին, ոչ թէ գրաւուած տեղի հրապուրանքներից՝ այլ գիտմամբ լնորութիւնը գիւղից հեռու կատարելու նպատակաւ, ըստ իւր ասութեան՝ որպէս զի անգործ հետաքրքիրների խառնաշփոթի խանգարմունքն արգելք չը դառնայ գործի շարունակութեանը:

Բազմափորձ դաւառապետի բազմամեայ պաշտօնուալարութեան գործնական կողմն էր այս:

Բազմութիւնը շատ մեծ է, 0. գիւղն էլ մեծ է. մեծ առունը մեծ ընտանիք կունենայ:

Անհրաժեշտ է ասել, որ աւերակի հարաւարելելեան անկիւ-

նում մի երկու սեւացած քարեր միմեանց թիկնած՝ կազմել են տակը մի պատուհանածե խորշ. անձրեն ու արել չեն ծեծում՝ այդ իտոռով, ուրեմն չին էլ կարող ի հնումն հանգցնել այն ձիթաճրագները, որոնք յաճախ վառուում են եղել ջերմեւանդ հայ և թուրք ուխաւորներից. գերչակի ձիթի թանձր ծուխը մրուել, սեւացրել է ամբողջ խորշը և նրա մէջ ընկած ձիթաշաղախ քարը, որին հայերը Ձիթահամերի քար են ասել, իսկ պարսիկներն՝ օջաղ, որին հայերը մի նշանաւոր բազմավաստակ հայ գործողի գերեզման են անուանել, իսկ պարսիկներն՝ Խալամի հաւատարիմ աւանդապահի դամբարան։ Մյս է եղել՝ թէ ա'յն, ո՞րն էր ուղիղ՝ մենք կարեւորութիւն չունինք խորազննին գտնուելու. փաստ է, որ այդ տեղը վաղ ժամանակ միապէս յարգուած է եղել երկու ալակրօն դրացիներից։ Այսօր եղածների հետքերն էլ չքանում են։

Ահա եկել է գաւառապետը. նա կանգնած է աւերակի բաշի վերաց, նրա տեղը բարձր է ամենքից, նա նմանում է այսօր մի թխակ, որի ձագերը համեմատաբար շատ փոքր են իրանից։

Գաւառապետը ձեռքը բարձրացրեց։

Ըսդհանուր և մեռեալ լուսթիւն։

Իոլորեցունց զլուխները բաց են. երեք պաշտօնական զլիսարկ միայն հանգիստ նստած են իւրեանց տեղը. երեք ճակատ միայն փայլում է երեկոյեան պահու կարմիր արևից ցոլացող ճառագալթներից. մետաղեայ ասողը պսպղում է երեք հոգու ճակատին. նոցանից մինը գաւառապեսն է, միւսն իւր ատենապղի օգնականը և երրորդը՝ մեզ քաջածանօթ Վլաղիմիր Նեստորիչ Մելնիկովը։

Նատ ժամանակ չէ վերջինիս գալուտոր. նա գաւառապետից յետոյ՝ իւր սանձակուոր նժոյգը հեծած՝ սիգապանծ մորակելով եկաւ, իջաւ, ձին տուեց վաղուց իրեն սպասող Խուղօցին և մօտեցաւ սեղմեց քաղցրաժակիս զէմքով գաւառապետի ձեռքը։

Տհաճութեան կնճիռները խորշունեցրին գաւառապետի ճակատը. բազմութիւնը հաճութեամբ նկատեց այս և ուրախացաւ. ոչ ոքից ծածուկ չը մնաց, որ սրուանց էր գաւառապետի սառը վարմունքը Բալասան աղայի հետ։

— Հրամայեցէ՛ք, Վլաղիմիր Նեստորի՛չ, փնթփնթաց նա և ձեռքով իւր ձախակողմեան քարը ցոյց տուեց նստելու։

Մի թեթև և թռուցիկ հայեացք բաւական էր գաւառապետի
համար ապահով լինել, որ իւր սիրելի ժողովուրդը չէր երկմտում
իւր վերայ եկած անախորժ տրամադրութեան ստուգութեան մասին։
Նմէ գաւառապետն իւր բազմամեայ փորձառութիւնով և բա-
րակ խելքով ուսումնասիրել է իւր կառավարած գաւառի մեծ ու
պատկին, շատերին յականէ յանուանէ ճանաշում է, ժողովուրդն էլ
կշռել ու չափել է իւր սիրած նաշանիկի ամեն մի շարժուածքը։

—Գտակներդ դրէք զլիներիդ, սիրելի՛ք, առաջին հրամանը
դուրս եկաւ գաւառապետի բերանից։

Հրամանը կատարուեց։

—Զորս հինգ ամիս է, ես ձեր մէջ չեմ եղել, սկսեց բարձր և
հաստ ձայնով նաշանիկը, և ինչպէս տեսնում էք՝ տանուտէրի ընտ-
րութիւնն այսօր ժուրքի գիւղում ես՝ կատարում։ Դուք, ի հա՛րկէ,
պատճառը չը զիտէք, բայց ես ձեզանից խոռով եմ։ Այս վերջին տա-
րին՝ մեր անշնորհք տանուտէր Կարապետի յիմարութիւնից՝ ձեր
գիւղը միանգամայն Աստուծոյ երեսից ընկել է. օր չի անցկենում, որ
մի խայտառակ դէսկը չը պատահի. մարադ կրակել, հնձան այրել,
այգի կտրատել, արա կրակ տալ, իրար գլուխ ճղել, վերջապէս սպա-
նութիւն՝ միմեանց վերայ կարդում ես տանուտէրի յայտարարութեան
մէջ, կարդում ես ու շփոթուած մնում. ի՞նչ դարձան այս մարդիկը,
մնուածում ես՝ կարծե՛ս, սրանք 0. զիւղացիք չեն։ Մի ժամանակ
սրանք ոչ միայն մեր գաւառի՝ բոլոր Արարատեան աշխարհի օրինակն
էին, ամենքից հարուստ էին, հացով, քաղաքավարութիւնով, լեզ-
ուով աշխարհքի բերանն էին փակել, այսօր ընդհակառակն ամեն
տնաքանդութիւն ձեր մշջիցն է դուրս գալիս. քառասուն տարի է
ես պօլիցիական ծառայութեան մէջ եմ, կեանքիս մեծ մասը ձեր
գաւառումն եմ անց կացրել, հայր ու որդու նման ձեզ հետ աղ ու
հացկեր եմ դարձել և այսքան անպիտանութիւն՝ ինչպէս այս վեր-
ջին երկու երեք տարումն եմ ձեր զիւղիցը տեսնում, միտքս չեմ բե-
րում. ո՞վ էր լսած ու տեսած 0. զիւղացուն բանտ նատած, շղթա-
յակապ բերդը տարուած. բայց այսօր քանի՞սը կան։ Սո՞ւտ եմ ասում։

—Աստուած պատճառի տունը քանդի՛, որդիքը կոտորի՛, աղայ
ջա՛ն, կոտրած զրգալի պէս մէջ մաւա Մելիք-Բագալը. ո՞վ մեր գեղի
հալալը հարամեց, ո՞վ մեր դառը քրտնքով աշխատած տիտանորի

(իմար) մէջ արիւն խառնեց, յեց դառաւ մեր քիսէն (կոտ) մտաւ, գեղն իրար քցեց, մեր դառան պէս իտնարհ ջահէներին օձեր շինեց, մեր բոկը (պարտնոց) վասթաթեց, նրա տունը հրեղէն սուլը մտնի՛, էս Զիթահանքի օջաղը նրան դունդ ու կծիկ ածի՛ (խշացնել), հաւե պէս թռպռացնի՛, էստեղ վէր քցի՛: Դու, աղայ ջա՞ն, ասա՝ ամէ՞ն:

—Է՛հ, ձէնդ կորի՛, Մելիք-Բաղա՛լ, քեզ անէծքը չի սազում, քոնը խամ խամ ուշուցներն են, որ եթէ բերանիցդ հանել ես, իեզուդ կը ծակեմ, պարան կ'անցկացնեմ ու էս ծառիցը կախ կ'անեմ, կատակի տուեց դաւառապետը:

—Ձ՛, աղա՞յ, չէ՛, զլիսիդ մեռնե՛մ, Աստծով կը տեսնի էս խալիր իր արիւնը ծծողին իր աշքի առաջին բղղալով (Բառաչք) զետինը զիազելուս. էն սուրբ Խուսաւորչի լոյս հաւ ատիցն եմ խնդրել, որ քեզ է՛լ, էս էրուած ու խորովուած հասարակութիւնին է՛լ ինձ՝ էս զերեզմանի դուռը հասած անքեղ անմիրուք հալիւորին է՛լ արժանի անի բաց աշքով էն օրը տեսնելու:

—Է՛հ, ծերացել ես, խելքդ յետ է տուել, Մելի՛ք, ձէնդ կորի՛, թող խօսիմ, չաչանակի (շափակօն) պէս բերանիս մի՛ դալ:

—Խօսի՛, աղայ ջա՞ն, հրամանք արա՛, դու էլ զիսես, թէ քամին ո՞ր կողմիցն ա վչում:

—Ի՞նչ էք շանն իրաւոնք տալիս հաշալու, կամաց հրելով դաւառապետին՝ փափաց ռուսերէն Բալասան աղան:

Գաւառապետը չը լսել պատրուաիեց, բայց դէմքից երեեցաւ, որ ներսն արիւնն եփ եկաւ:

—Խոչ և իցէ, Օ. զիւղի հասարակութի՛ւն, նորից շարունակեց գաւառապետը, ես ձեզ ժողովել եմ այս սրբատեղի մօտ՝ լայն ու ազատ դաշտում տանուաէր ընտրելու: Ահա քուէտուփը զրած է ճիշդ ուխտատեղի մօտ. այս զիսութեամբ է արած. դուք պէտք է հիմի մօտենաք տիփին. թո՛ղ մօտ զնացողը յառաջ համբուրի սեացած քարը՝ յետոյ քուէն ձեռք առնի: Ես իրաւոնք եմ տալիս ձեզ երեք հոգու քուէարկել՝ ում որ դուք ցանկանում էք. ով որ, ի հարկէ, օրէնքի զօրութեամբ ընարուելու իրաւոնքից զրկուած չի լինիլ. ում սպիտակ քուէները շատ կը լինի, նա կը լինի ձեր տանուաէրը: Ասուած կը սիրէք, սիրելի՛ք, ընտրեցէ՛ք մի օրինաւոր մարդ, որ ձեր ցաւերին դարման տանի:

— Աղջ 0. գիւղի հասարակութիւնն, աղայ ջա՞ն, իմ ձեռովս էս
թուղթը քեզ ա տալիս:

— Եղ ի՞նչ թուղթ է, Մելիք-Բաղա՛լ:

— Էս էն թուղթն ա, նաշանիկն ապրած կենա՛յ, որ մենք տա-
նուտէր ենք ուզում էն մարդին, որից, թէ միտող ա՝ քեզ ձորումը
ձուկն ուտելուս զանգատ էի անում, որ իմ ջիբի կապէկները կորեց
շարաֆ առնելով, որ իմ բլըռուի լիզուն ծախն էր կոփել, որ ուզում
էր մեր գեղի վրից ուշունցնատու անումը վերացնի, որ մեր մէջը
կարգ ու կանոն մտցրեց, որ...

— Դէ լա՛ւ, Մելիք, խուլ՝ չենք, հասկացանք, դուք ուզումէք
Արտեմ Սէրգէյիչն. Ես է՛լ շատ ուրախ կը լինէի, բայց նախ՝ կարծե՛մ,
նա չի համաձայնիլ իւր պաշտօնը թողնել և երկրորդ՝ թո՛ղ՝ ձեր փո-
խարէն քուէն խօսի:

— Գլխիդ մեռնի՛մ, մեր ցաւը մեզ էլ յացանի ա՛, քեզ է՛լ, քար
մի՛ քցիլ տալ, վա՛յ թէ տակիցը Մօլլա նասարադինի եղի պուլիի պէս
շոռ դուս գայ:

— 0. Գիւղի հասարակութիւնն, ձայն տուեց գաւառապետը,
ցանկանո՞ւմ էք միաձայն ընտրութիւն, այս թուղթը ձեր գրա՞ծն է:

— Ցանկանում ե՛նք, ցանկանում ե՛նք, ոսիդ զուրբա՞ն, նաշալ-
նի՛կ, թուղթն էլ մեր բերանն ա:

— Աղայ ջա՞ն, ցառաջ եկաւ ամբոխի միջից Բալասան ազայի
քրոջ որդի Վասակը, թո՛ղ էս թուղթն է՛լ խօսի:

Գաւառապետը բաց արաւ երկու հանրագրութիւնները. առա-
ջինն Արտեմ Սէրգէյիչի մասին էր՝ երկրորդը Խուզօի օգտին: Գաւա-
ռապետը մնացել էր մոլորուած, ուսերի բարձրանալու հետ դէմքի
վերայ տարակուսանքն էր արտօսփայում:

— Ամօ՛թ ձեզ, 0. գիւղացի՛ք, զզուանքով արտօսանեց նա
վերջապէս, այսափ էլ մի հասարակութիւն իրեն սոտրացնի՞, մի
մարգ երկու տեղ սոտրագրի՞: Դու սրանո՞վ ես խօսում, Մելիք-Բաղա՛լ:

Գաւառապետն սկսաւ կարդալ երկու թերթի վերայ միաժամա-
նակ սոտրագրողների անունները:

Մի քանիսն, արդարեւ ամօ՛թահար սւացմն ու լոեցին. նոյս
ձեռքերը կեղծ չէին. բայց մեծամասնութիւնը բարձրածայն աղա-
ղակեց.

—Գլխիդ մեռնե՞նք, նաչալնի՛կ, մենք մենակ Գոմշակերենց
Արտօյի թղթիցն ենք տեղեակ, մենք ուրիշ տեղ ձեռք չունինք:

—Այս խնդիրներն ո՞վէ գրել, տանուտէ՛ր, հրամացեց գաւառապետը:

—Առաջինն իմ գրածն ա, մօտ եկաւ ամբոխի միջից Սիսակը:

—Երկո՞րդը:

Ո՛չ մի ձայն:

—Այսու՛ղ արի, ա՛յ աղաց, կանչեց գաւառապետը Վասակին,
այս զիրն ո՞ւմ գրածն է:

—Երեսն ենք գրել տուել, յանդինաբար պատասխանեց Վասակը:

—Սուտ չեմ ասում, ես ինքս եմ տարել մի աղաց մարդի հինգ

մանէթով գրիլ տուել:

—Ո՞վէ գրել, շեշտեց գաւառապետը բարձր և թնդաձայն:

—Խնձ տուէք՝ տեսնեմ, նաչալնի՛կ, յառաջ եկաւ Սիսակը և
ձեռքիցն առաւ:

—Առէ՛ք, յետ տուեց նա թուղթը, ես գրողին քաջ ճանաշում
եմ, բայց հաստատել գժուար է. գողն ինչքան կամեցել է թագցնել
իւր գողացած աքաղաղը, բայց պոչը դուրսն է մնացել, Տաճկաս-
տանի ոլոր մոլոր գրուածքներն երեսում են:

—Կը խնդրեմ յարգոյաբար Զերին զերալնուութենէն՝ հրաման
ընէք արձանագրութիւն կազմել. պարոն Սիսակ մեզի կ'ակնարկէ, մենք
պատիւ կը պահանջենք՝ օրինաց որոշեալցուածոց հիմնաց ապաւինած:

Ժողովրդի միջից մի ընդհանուր քրքիջ և դասն տհաճութիւն
դուրս թուաւ գրազիր Վանեցու բողոքին պատասխան:

Սա պաշտօն ունէր այսուղ, ձեռքին բոնած ժողովրդագրական
ցուցակը՝ սպասում էր անունները կարգալու:

—Իրաւունքս պաշտպանել կը խնդրեմ, Տէ՛ր, Հայրիկին ճետերն
ամեն նախատինք կը տանին, բայց պատուոյ խնդիր կենսական է
իւրեանց համար:

—Լա՛ւ, լա՛ւ, այդ վերջին բանն է, արհամարհական հայեաց-
քով պատասխանեց գաւառապետը Վանեցուն և վճռեց. —ո՛չ մի
թուղթ չեմ ընդունում, քուէտուփը թող խօսի:

—Որ էղակէս ա, նաչալնի՛կ, ասաց Մելիք-Բաղալը, թո՛ղ քար
քցողների անումները Վանեցին չը կարդայ:

Գաւառապետի հրամանաւ իւր քարտուղարը կարդաց:

Քուէի գրուեցաւ նախ՝ Արտեմ Սէրգէյիլը:

Քուէներն Օ. զիւղի հաստաբուն ընկուղենիների պառւղներն էին:

Ամենքից յառաջ քուէտուփին մօտեցաւ Մելիք-Քաղալը:

—Օ. զիւղի հասարակութիւն, զոչեց նա, էն ա՝ ժամե, ժամքը

մօտ ա, օրը մօմնում ա, բայց թո՛ղ իմ պօալօքն (ժուէն) արևի պէս
լոյս տայ: Աստուած Էլ, բանդէն Էլ (Տարբը) Արտօյին է յանկանում:
Է՛ս Էլ իմ սիստակ քարը:

Հասարակութիւնն ուրախ էր, Արտեմ Սէրգէյիլի քուէտուփը
լցուեց. բայց Խուզօյից, Դարբնենց Մատօյից, Փոշմանենց Սարօ-
յից և սուղիա Դաւթիյ՝ բոլորն սպիտակ քուէ տուին:

Վերջիններս Բալասան աղայի անցեալ զիշերուան խորհրդակից-
ներն էին. սրանք Էլ, զիցո՞ւք, չէին ցանկանում Խուզօյի տանու-
տէրութիւնը, բայց ահը վեր էր՝ քան մահը, հողեհաններն այն-
տեղ նստած էր և մի առ մի զիտում էր ամենքի ձեռքի շարժում-
ները. ուստի ստիպուեցան սեանալ հասարակութեան յառաջ՝ քան
թէ Բալասան աղայի և աւ քուէ տուին:

Մեղադրելի չէր:

Մի դէպք միայն անհասկանալի մնաց ամենքի համար:

Օրէնքով քուէտուփի երեսը պէտք է վարագուրած լինէր: Մուա-
ցա՞ւ արդեօք գաւառապետն այս կէտը, չենք կարող ասել, առաջմ
զեռ մեզ համար այդ արկածքն Ազամաց մութն է: Խօսքս այն ան-
թափանցիկ աղջամղջի մասին է, որ մեր Ազամ պապին յուսահա-
տութեան մէջ ձգեց:

—Դէ՛, հասարակութիւն, Էլ ո՞ւմ էք ուզում քար ձգել,
ձայն տուեց գաւառապետը:

—Դու տեսար, աղայ ջա՞ն, որ բայց մի քանի յածահողի, ոս-
լպսողներից ողջ զիւղն Արտօյին ա կամենում, Էլ ո՞ւր ես քեզ զիսա-
ցաւանք տալիս, յառաջ եկաւ Մելիք-Քաղալը:

—Օրէնքն է հրամացում:

Քուէարկուեցաւ և նախին կանդիդատ Սարօն, բայց սակաւ
քուէ սուացաւ:

Մութն արդէն գետինն առնում էր:

—Նո՞ւս արէք, իմ ճանապարհն Էլ է հեռո՞ւ, ձե՛րն Էլ, ձայն
տուեց գաւառապետը. ո՞ւմ էք ուզում քուէարկել:

—Խուզգոյի՞ն, գոչեց միայն վասակը:

—Ո՛չ, նաչալնի՞կ, ո՛չ, կանչեց Մելիքը: Նրա հետ ձայն տուին

մի քանիսն է՝ բայց ձայնը փոխած քունջ ու սուճախից:

Խեղճերը ճշմարտութիւնն ասելը վախենում էին, Բալասան
աղջն իւրեանց կորկոտը կ'եփէր:

—Ո՞ւմ էք քար քցում:

—Խուզգոյի՞ն, դարձեալ լսուեցաւ Վասակի ինքնավայտահ ձայնը:

—Խուզգոյի՞ն՝ հօ՛ Խուզգոյին, հրամացեց նաչալնիկը և ընկոյզները
նորից բաժանուեցան:

Մութն արդէն գետինն առաւ. սարերի գագաթները սևա-
պասուել էին, միայն Մասիսն էր իւր արեմուեան այտով աննշմար
ժպտում, մարդիկը հազիւ ճանաշում էին իրար, մինչև թուրքի սոված
աղացի տանից ձիթի ճրագը կը բերէին, քուէտուփը լցուելու վերայ էր:

—Ել մարդ մնա՞ց քուէ տալու, եկ՛ք, հրամացեց գաւառա-
պեռը:

—Քանի՞ ձէն տաս, աղայ ջա՞ն, ես իմ աչքովս տեսայ, թէ
ընչե՞ր անցկացան, հէնց մարդ իսր՝ երեք չորս հետ էր տփին մօտ
գալիս, ջիբիցը բուռը բուռը հանում էր պօպօքներն ու լցնում,
արդ արաւ Մելիքը:

—Թէ որ շատ էք նեղանում; Օ. զիւզացի՞ք, ձայնը բարձրաց-
րեց գաւառապեռը, եկէք ինձ լսեցէք. Էլ Խուզգոյի քարերը չը հա-
մարենք, Արտեմ Աէրդէյէին զրե՞նք տանուտէր՝ Խուզգոյին կանդիդատ:

—Ինձ թէկ խօսք չի հանիլ, ասաց Բալասան աղան, բայց
իմ կարծեօք պ. նաչալնիկը շատ խելօք է դատում, նեսկոս մեռնի
թէ սուտ եմ ասում, թող Արտեմ Աէրդէյիշը լինի տանուտէր՝ Խու-
զոն կանդիդատ. դիուխը քարն ա տուել Խուզգոն, աչքն ինչքան
բարձրանայ՝ ունքից վերև չի բարձրանալ, երկումն էլ իմ բարեկամ-
ներն են, բայց Խուզգոն Արտեմին չի հանիլ:

Մելիք-Բաղալը լիկուեց, ձայն չը հանեց, բայց բոլորեքեան
համաձայնեցին:

Գաւառապեռի հրամանաւ ճրագի լուսով տանուտէր գրուեցաւ
Արտեմ Աէրդէյիշը և նրան կանդիդատ՝ Խուզգոն:

—Ի՞նչ կասէք, տղէ՛ք, սուդիկքանց ընտրութիւնը ցետ թողնե՞մ,
թէ միաձայն ընտրութիւն անենք:

—Միաձա՛յն, միաձա՛յն:

—Ո՞ւմ էք կամենում:

—Թողէ՛ք՝ էս անգամ էլ ես խօսեմ, կրկին միջամտեց Մելնիկովը, եթէ Մելիք-Բագալին իր հասակն արգելք չը լինէր, ես ոչ ոքի իրաւունք չէի տալ նրանից յառաջ բնինիլ, բայց ըստ որում զբան հիմի հանգատութիւն է պէտք, ես լաւ եմ համարում առաջարկել Մատօխն, Սարօշն և Դաւթին: Լաւ չեմ ասում, Մելիք-Բաղա՛լ:

—Նա՛տ լաւ ես ասում, Բալասան աղա՛յ, թուրքն ասում ա՛ հընկերը հընկերին թէ չը գտնի, աշխարհքս ախ ու վախով անց կը կենաց. ես էս օրուանից հոտն առնում եմ, ես լաւ գիտեմ, թէ տանուտէրն ո՛վ պտի ըլնի, խեղճ իմ Արած', մեր ձեռովը քո տունը քանդեցինք, բայց հո՛գ չի, վերևն Աստուած կայ. Պետք չունի՛ թող սուդիկեքն էլ ըլնին Սարօն, Մատօն ու Դաւթիթը:

—Համաձա՞յն էք, հասարակութի՛ւն, կրկնեց գաւառապետք:

Սի քանի ձայներ միայն խուլ արձագանք տուին Վասակին, ընդհանրութիւնը լուս էին:

—Լուսութիւնը համաձայնութեան նշան է, վճռեց նաշանիկը և քարտուղարը ձայն տուեց.

—Ըստրուեցան Օ. գիւղի համար հասարակութեան ստարշինա կամ տանուտէր՝ Արտեմ Սէրգէիշ Գոմշակերով, նրան կանդիդատ՝ Խուդավագրդի Դուքանէրուածով, իսկ սելսկի սուդիկեք կամ գիւղական դատաւորներ՝ Մարտիրոս Դարբինով, Սարիբէդ Փոշիմանով և Դաւթիթ Կաշեպոզով:

—Կճուճը զլորուեց, խուփը գտաւ, ասաց Մելիք-Բաղալն ու զլուխը գարձեց դէպի Օ. գիւղը:

Ամենքը արտունջներ արձակելով՝ քարշ էին գալիս յուսակուուր և խաւարի մէջ այս ու այն քարին դիպչում, գնում էին և օրհնում պատճառի եօթը սղորաը:

Ամենքից վերջը ձիաւորուեցան գաւառապետն իւր մարդիկներով և Մելնիկովը:

—Ծասիօ! (Հնորհակալութեան), սեղմեց Բալասան աղէն այս խօսքով գաւառապետի ձեռքը:

Վերջինս չը պատախանեց. նա յուզուած էր: Դաւառապետը մտրակեց իւր ձիուն և աջ գնաց՝ դէպի իւր կենդրոնատեղին, իսկ Մելնիկովը՝ դէպի ձախ՝ Օ. գիւղը:

(Կը շարունակի)

ԵՂԵՒԻՆ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԿԵԼԵԱՆՑԻ

Եղբայրում էր՝ իստակ ձիւնով փաթաթւած,
Ադամանդափալլ, պայծառ եղեին,
Եւ բանաստեղծի կարծես ծերացած՝
Ճերմակած ալիք ծածանւում էին:

Բայց այն պաղ ձեան տակ եղեին ցըրտում
Ծաղկում էր գարնան կանաչ թարմութեամբ.
Սսես ալէզարդ քերթողի սըրտում
Եռում էր արիւն բուռը, ջերմ զեղմամբ:

Մօսկվա. 1888 թ. դեկտեմբերի 21-ին:

ՄԱՆՈՒՇԱԿ

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԻԼԵԱՆՑԻ

Ո՛հ, մի ողբալ դու, թառաման
Եւ գալկացած մանուշակ,
Որ քո անոյշ ըոյըլն առած՝
Քեզ ձըգեցին ոտի տակ:

Աւելի պարզ էր շողշողում
Իմ գարունը մանկութեան.
Բայց ինձ համար տիս աշխարհում
Նա չըքացու յաւիտեան:

Քո ըուրմունքը ներշընչելով
Գէթ անունըդ օրհնեցին.
Բայց ինձ վերայ գեռ վառ սիրով
Մի հայեացք չը ձըգեցին:

Ո՛հ, մի ողբալ դու, թառաման
Եւ գալկացած մանուշակ.
Դուցէ էգուց անշընչացած
Դու ինձ տեսնես հողի տակ:

Մօսկով. 1888 թ. մարտի 12-ին:

ՊՕԵՏԻՆ

Ք. ԹԱԴԻՌՈՒԵԱՆԻ

Տես, բիրտ ամբոխը ծաղրում է քեզի,
Եւ քո աշխատանք, տանջանքով ծնած.
Տես, ի՞նչ հրճւանքով, ի՞նչ խինդով վալրի
Ցեխն է շպռտում նո քո երկ սիրած...

Դեռահայ ոլոէտ, դու մի՛ վհատի.—
Կենսատու տաօվը բացավառ սրաի
Եւ հրապուրը հանճարեղ մտքի
Անմիտ ամբոխն չեն ըմբռնելի:

Ծափը կամ ծաղը ամբոխի վայրագ
Թո՞ղ հեչ չունենան քեզ համար ո՞ի գին.—
Դու, բարձր բռնած միշտ քո դրօշակ,
Գնա համարձակ քո նախատակին:

Թիֆլիս, մետրուարի 14-ին:

ՊԱՏՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

II

ԵՐԻՑԱՍԱՐԴ ՀԱԹԱՄԵԱՆԸ

Սէրելի քո'յը.

Դու ցանկանում ես, որ նկարադրութիւններիս մէջ բաց չժողովակցութիւնները: Այդ քո յանկութիւնը ես կը կատարեմ ո՛չ լիապէս: Բայց կ'աշխատեմ առաջ բերել այն կետերում, ուր խօսակցութիւններս պարզում են այսուղի հասարակական կեանքի միունքում:

Անցեալ օրը մի փոքր երեկոյթում ծանօթացայ Հաթամեան անունով մի երիտասարդի հետ, որի մասին արժէ քեզ տեղեկութիւն տալ: Հաթամեանի մէջ աւելի սուր և որոշակի կերսով նկատեցի արտայացուած այն գծերը, որոնք մի խումբ երիտասարդների մէջ խառնւած են երեռում ուրիշ առանձնայատկութիւնների հետ: Ես կը նկարագրեմ քեզ այն երեկոն, որտեղ դէպք ունեցայ Հաթամեանի հետ ծանօթանալու:

Պէտք է ասեմ քեզ, որ այսուեղ զրականական երեկոներ առհասարակ չեն յաջողութեամ: Զանազան ժամանակներ եղած են փորձեր, որոնք մնացել են իրանց հետևանքներով ապարդիւն: Ուստի այժմ՝ երբեմնապէս միայն, կազմում են նոր շրջանի համար մանր մունքնատանեկան երեկոներ, ուր խօսում են առօրեայ հասարակական խընդիրների վերաց կամ կարդացւում են յօդւածներ: Մի այդ տեսակ երեկոյ սարքւած էր Մնացականեանց անունով պարոնի տանը: Ես թէւ նոր էի միայն ծանօթացած Մնացականեանցի հետ, նա այնու-

ամենայնիւ հրաւիրեց ինձ անպատճառ պարգելու իւր հրաւերը։ Առ հասարակ Մնացականեանցը շատ սիրում է նոր ծանօթներ և հիւրեր, այն էլ զանազան շրջանների և հայեացքների պատկանող։

Երեկոն, իբրև ընտանեկան, կարելի էր համարել բազմամարդ ժողովւած էին մինչև քսան անձ։ Կային վեց հողի կանանց սեռից մէկը տիկին Մնացականեանցը, միւսները օրիորդներ՝ ըստ մէծի մասին նոր աւարտած իրանց ուսումը զիմնազիօնում և ծխական դալրոյներում։ տղամարդիքը—զանազան պարապմունք ունեցող և պարապմունք պլոտող երիտասարդներ։

Մնացականեանցը ներկայացրեց ինձ բոլորին և բացատրեց ինձ երեկոյի ծրագիրը։

—Ահա՛ մեր յարգելի բարեկամ Ալավեանը այս երեկոյ կը կարդայ մի յօդւած, որի մասին ցանկալի է իմանալ ներկայ եղողների կարծիքը։ Եթէ ազատ ժամանակ ունենանք՝ ուրիշ խնդիրների վերայ ևս կը խօսենք։

Մանր մունք խօսակցութիւններից յետոյ, որոնք կենդրոնացած էին օրիորդների շուրջը, Մնացականեանցը հրաւիրեց սկսելու ընթերցումը։

Ալավեանը իւր յօդւածը խորագրել էր այսպէս։ «Մի աղջի առաջադիմութեան պայմանները։ Յօդւածը գրել էր կոկ և բաւականին դեղեցիկ ոճով։

Յօդւածի գլխաւոր իմաստը աս էր։ Խրաքանչիւր ժողովուրդ հետեւանք է այն ազգեցութիւնների, որոնցով նա շրջապատւած է։ Որչափ զանազան են այս կամ այն ժողովրդի վերայ եղած ազգեցութիւնների համադումարները, այնչափ և զանազան են այդ ժողովրդների սպառիւրները։ Ալավեանը շեշտում է, որ պէտք է ժողովրդի կեանքը և նորա բնաձիր շարժումը զիտակցական շնել և առաջարկում է հայրենագիտութեան շատ մեծ տալ թէ՛ դբուրոցի և թէ գրականութեան մէջ։

Ընթերցումը վերջանալուց յետոյ, լսեցին զանազան կողմերից նկատողութիւններ, որոնց ընդհանուր իմաստը համակրական էր և ի նպաստ յօդւածում յայտնած մաքերի։

Փոքր ինչ ուշ խօսք ինսդրեց մի երիտասարդ, որի մասին է գըլ-խաւոր գրելիքս այս անգամ—Համամեան ազգանունով։ Սա սկսեց խօսել շատ խիստ, շեշտելով իւր ասածների վերայ և մարտնչողի

զիրք առնելով։ Երիտասարդներից մի երկուսը շատ ծուռ էին նայում Հաթամեանի վերայ. իսկ մնացածները անտարբեր էին պահում իրանց և մինչև անգամ համամիտութեան նշաններ էին ցոյց տալիս Հաթամեանը ասաց մերձաւորապէս, որչափ յիշում եմ, հետեւեալը. —

— Հեղինակը իւր յօդւածը խորագրել է. «Մի աղջի առաջադիմութեան պայմանները»։ Ես նախ հարց կը տայի՝ կարելի՞ է միթէ մի ացդպիսի մեծ խնդրի, ինչպէս աղջի առաջադիմութեան պայմանների խնդիրն է, ձեռք զարկել առանց հիմնաւոր ծանօթոթիւն ունենալու այն բանի հետ, թէ ի՞նչ է առաջադիմութիւնը ևս պնդում եմ, որ հեղինակը չը գիտէ ի՞նչ է առաջադիմութիւն։ Եթէ նա այդ իմանար, չեր գըիլ և չեր կարդալ մեր առաջ իւր յօդւածը։ Նա ուզում է այնքան կանոն ստեղծել, որչափ ժողովուրդ կայ աշխարհում։ Մի ուսումնական վաղուց ասել է, որ բոլոր ժողովուրդների զարգացումի տարրերը միեւնոյնն են։ Ես կ'աւելացնեմ այդ կարծիքին, որ եթէ մարդկութեան առաջադիմութիւնը մէկ է, ուրիշն և լուսաւորւած աղջերի գաղափարները պէտք է զեկսվար լինեն չը լուսաւորւածների համար։ Իսկ հեղինակը ի՞նչ է առաջարկում։ Նա առաջարկում է զիտակցական շինել աղջի բնաձիր շարժումը։ Ասեցէ՛ք. «Բնաձի՛ր շարժումը»։ — Թո՛ղ ինձ բացատրեն՝ ի՞նչ է նշանակում ժողովրդի բնաձիր շարժում։ Ենթադրում եմ, որ զանշանակում է թէ աղջը ունի մի ցայտնի հակում զարդանալու։ Եւ ուրիշն՝ հակումը պէտք է միայն թեաւորել։ Թողէ՛ք այդ լիմար միտքը՝ թէ զու ք պէտք է նոր Ամերիկա գտնէք և այն էլ ձեր հայրենին նախապաշտունքների մէջ։ Միանանք բոլոր աշխարհի առաջադիմութերի հետ և կուտենք հնի և փասածի դէմ։ Որչափ դուք ուզէք հնի և փասածի մէջ լաւ բաներ գտնել — այնչափ պէտք է ընկըզմէք անլուծելի հանելուկների մէջ։ Ի՞նչ բնական հակում էք պլուռում մեր կեանքի մէջ։ Գիտե՞նք այդ բաւականաչափ։ Սիմեանց կողոպտել, հարստահարել, միայն փորի վերայ մտածել հայրերի նման անպիտան որդիներ պատրաստել — ահա՛ մեր կեանքի բնաձիր հակումը։ Վերջին տարիները ո՞րտեղից տարածւեց այս ժանապարհութերներ կայել թէ մաշած շորերի մէջ զաղափար կայ, նոյս մէջ չերմաշնող ոյժ կայ։ Յետադիմութիւնը ակներեւ է։ Մեր հեղինակը, որ

նպատակ է դրել խօսել առաջադիմութեան պայմանների մասին—հիմնում է բոլորը եղածի վերաց. խակ ես եղածի մէջ չեմ ընդունում տարրեր, որոնցից կարողանար բղխել որ և է առաջադիմութիւն: Պնդում եմ, պէտք է նորից կազմակերպել կեանքը աւելի արդար հիմնագների վերաց: Եղածից սուանալիք չունինք, այլ եղածին տալիք ունինք:

Հաթամեանը իւր ասելիքը վերջացնելուց յետոյ էլ՝ մրմուաց այսպիսի մի քանի կծու խօսքեր—թէ պիւր երկրի մէջ գտել է պարոնը իւր դրախտը, իւր որջից դուրս էլ աւելի լաւ բնակարան չի գտնում խեղճը և այն:

Հաթամեանը տպաւորութիւն գործեց. և նորա լոելուց յետոյ բոլորը մի բոպէ լոեցին: Ապա յօդւածի հեղինակը սկսեց իրան պաշտպանել. միւսներն էլ մասամբ նորան օգնեցին և, կարելի է ասել, վերջի վերջոց արդարացրին հեղինակի մոքի լայն օգտակարութիւնը, ապացուցեցին, որ Ալավեանի և Հաթամեանի ասածների մէջ այնքան մեծ տարբերութիւն չկայ: Բայց ընդհանուր ուրախ տրամադրութիւնը :ը վերականգնեց, նամանաւանդ, որ Հաթամեանը աւելացրաւ, թէ նորա ասածը բոլորովին տարբեր է յօդւածում յայոնած մոքից և զարմանում է, որ խօսակիցները նպատակ են դրել ո՛չ այնքան հասկանալու զանազան մոքերի արտայալտութիւնը, որչափ հաշտեցնելու վիճաբանողներին:

Տանտերը յանկարծ դարձաւ ինձ, որ ես էլ յալտնեմ կարծիքս: Ես ամենեին միտք չունէի այդ երեկոյ խօսելու: Վէճի վերաց նայում էի աւելի դիտողի, քան թէ մասնակցողի աչքով: Ես լաւ տեսնում էի այն զանազանութիւնը, որ կար երկուսի մտածմունքի եղանակի մէջ և ցանկանում էի իմանալ թէ ո՛րչափ որոշւած է այս կամ այն տեսակտուր և արդեօք այդ զանազանութիւնը պատահակա՞ն է թէ գիտակցական, պատմական:

Դու գիտես, սիրելի քո՛ց, որ ես համարում եմ Ալավեանի առաջարկութեան գործնական մասը շատ կարեոր մի ազգի գիտակցական և կանոնաւոր զարգացումի համար: Ես նորան համարում եմ անցետաձգելի գործերից մէկը, որով պէտք է սկսել խորյն զբաղւել: Ես համաձայն չեմ այն կարծիքի հետ թէ՝ կեանքից սուանալիք չունինք: Ալավել է. շատ սուանալիքներ ունինք: Իսկ

ուրիշ խնդիր է, թէ զիտութիւն մեղ պէտք է թէ ոչ. ի հարկէ պէտք է, անհրաժեշտ է, պարտաւորեցուցի կերպով հարկաւոր է:

Աշա այս իշխանութիւնը ես յայտնեցի ժողովին, որ լսեց լոելեայն: Համաձայնւեցին իրանց մտքում ժողովականները թէ ոչ՝ չը զիտեմ. միայն աջնուհետև յօդւածի մասին վիճաբանութիւնը դադարեց: Տանտիկինը յայտարարեց, որ այդ երեկոյի զուտ գրական մասը նա համարում է վերջացած. այժմ առաջարկում է հանդատանալ, զբաղւել զրոյցներով, կատակներով, ինչպէս յարմար կը գտնի հասարակութիւնը:

Երկու օրիորդ և մի պարոն մօտեցան գաշնամուրին և սկսեցին երաժշտական աշխարհից խօսել: Նս ևս հարեաններիցս մէկի հետ մասնաւոր խօսակցութիւններով զբաղւեցի: Վննկատելի կերպով իմ շուրջը ժողովւեց մի հինգ մարդ, որոնց մէջն էր և Հաթամեանը: Վերջինս գարձրաւ խօսքը իմ յայտնած մտքերի վերայ և շեշտեց, որ ես իբր թէ միամտաբար թե եմ տալիս այն երիտասարդներին, որոնք խմորւած են իրանց շրջապատող փեթակի մվմնոլորտով և այդ փեթակից դուրս ոչինչ չեն տեսնում:

Նս հարց ու փորձ արի այժմեան երիտասարդութիւնը սոգորով դաղափարների մասին: Երիտասարդներից մէկը փորձ էր անում մի երկու երեք նոր երեսովների մասին խօսելու, բայց Հաթամեանը խօսքը կտրեց.

— Ի՞նչ երիտասարդութիւն, ի՞նչ զաղափարներ. ի՞նչ էք կորցրել, ո՞ւր էք պոռում: Այսուեղ չը կայ երիտասարդութիւն ասած բանը, չը կայ Հասարակական կեանք, չը կայ քննադատութիւն, չը կայ մամուլ: Եղածները միայն ամօթաքեր են:

— Բայց և այնպէս մի բան պէտք է լինի. առանց այդ չէ կարող լինել:

— Ոչի՞նչ չը կայ. թո՞ղ ցոյց տան ինձ մեր կեանքում մի միութարական կէտ, որ խակապէս հասուած զարգացումի նշան համարւել կարողանար:

— Ես այդ չեմ պահանջում, ես պտուռմ եմ մոքի այն նոր ճիւզաւորութիւնները, որոնցով փոքր ի շատէ հարստացել է մեր հասարակական մոածողութիւնը:

— Ափսո՞ս են այդ բառերը, պատասխանեց Հաթամեանը, որովհետեւ նոցա նշանակութիւնը այսաեղ աղաւաղւած է:

—Պ. Հաթամեան, դուք երեխ ինձ չեք հասկանում. ես այն չեմ ասում՝ թէ ո՞րշափ մեծ գնահատութեան արժանի բաներ են կատարւած մեր կեանքի մէջ. շատ կարելի է, որ այդ տեսակ մի բան չը կայ ամենւին. բայց մեր հասարակութիւնը, որ նոր է սկսում զարգանալ, անշոշտ մի որ և է առանձնայատկութիւն ցոյց է տալիս իւր զարգացումի ընթացքի մէջ. ինձ հետաքրքրում է այդ տեղական առանձնայատկութիւնը, նորա հասարակական նշանակութիւնը:

—Այդ առանձնայատկութիւնը այն է, պատուսխանեց Հաթամեանը, որ առաջինը՝ մերայինները սկսել են պատգամօրէն համոզել, որ մեր կեանքը ինքն լսու ինքեան և՛ նիւթ է և՛ գաղափար. երկրորդ՝ հասել են այն ծիծաղելի համոզմունքին, թէ ընդհանուր մարդկային շարժումի մէջ մենք էլ արդէն տեղ ենք բռնում:

—Բայց այդ եղածներից դուրս գուք չեք տեսնում հաստատ գործունելութեան մշտիներ, որոնք առաջ տանում լինէին առաջադիմութեան գործը:

—Կան մանր մունք. ես ո՞րտեղից այժմ մէկ մէկ թւեմ. ես խոտում եմ ընդհանրապէս:

—Խակ այժմ խօսեցէ՛ք մասնաւորապէս:

—Ինձ չէ զբաւում մասնաւորապէսը, որովհետեւ նա մարդուն շատ փոքրացնում է, մանրակիկիտ է շնուռն: Այ, մի այդ տեսակ պարու կայ այժմ մեզանում. նա ամեն օր կոտորակների հաշւով է զբաղւած:

—Խճափէս թէ կոտորակների:

—Հաշւում է թէ ո՞ր զիւղում ի՞նչքան առաջադիմութիւն եղաւ, ի՞նչքան ձախորդութիւն պատահեց:

—Մի՞թէ նորան վաս գործի էք համարում:

—Նա լսու և լուսաւորւած մարդ է, բայց նորա հետ խօսելը ձանձրալի է:

—Ո՞վ է այդ պարոնը, այս ժողովումն է:

—Ո՞չ, նա այսպիսի ժողովները համարում է շռայտութիւն, որ կարելի է թոյլ տալ միայն երբեմն, ըստ պատահման: Նա այգեզործութիւնով է սկսել զբաղւել, ունի կանոնաւոր խնամած վազեր և լաւ պաղասու ծառեր: Ինձ մի տամն անգամ պատմել է այդ բոլորի մասին, բայց ես շուտ եմ մոռանեում մանրամանութիւնները: Ահա այդ պարոնը ամեն անգամ, որ զալիս է քաղաք մեզ մօտ, զարմանալի բա-

ներ է պատմում իւր հարևան գիւղացիների կեանքից։ Զարմանալի եմ ասում, որովհետեւ նա զարմանում է գիւղում եղածների վերայ։ իսկ մենք զարմանում ենք նորա զարմացքի վերայ։

Ես ենթադրեցի, որ Հաբեամեանը երևի ակնարկում է իմ ընկերակից և քո լաւ ծանօթ Սանարէզեանի մասին, որ՝ ինչպէս քեզ յայտնի է՝ ահա երկու տարի է այս տեղերքն է և որի այլեզործութեան և զանազան տարաւորութիւնների մասին գաղափար ունիս կազմած նորա նամակներից։ Բայց ես ցանկանում էի գիտենալ Հաբամեանի կարծիքը և շարունակեցի խօսակցութիւնս։

— Զոր օրինակ՝ ի՞նչ է նա պատմում։

— Հազա՞ր տեսակ բաներ։ զոր օրինակ՝ նորա հարևան գիւղացիները շատ մեծ կասկածով են նայում եղել նորա խորհուրդների վերայ և իրանք փորձում են եղել վեասելու իրանց անկոչ բարերարին և յետոյ երբ, մի քանի գէպքերից յետոյ, համոզւում են, որ սա անկեղծ է և իսկապէս բարեցակամ, սկսում են վերաբերւել ամենալաւ կերպով։ Պէտք է տեսնէիք, թէ ի՞նչ ոգեւորութիւնով էր խօսում պարոնը իւր հաստատած բարեկամութեան մասին. նա կարծես այդ բանին աւելի նշանակութիւն էր տալիս, քան գուցէ գերմանացիները իրանց պատերազմական յաղթութեանը։ Մի անգամ նա եկաւ և դարձեալ աւետեց մի նոր յաղթութիւն. նա կարողացել էր համոզել գիւղացիներին՝ մի ժայռ բանդել և ջուր բերել մինչեւ այգիները։ Այդ յաղթութեան մասին նա խօսում էր ամբողջ օրեր. հաշում էր մի առ մի թէ՝ ո՛րշափհար ստութիւն պէտք է աւելանաց գիւղում, ո՛րշափ նոր հողեր կարելի է մշակել, և այլն։

— Դարձեալ հարցնում եմ. միթէ դուք այդ բոլորը վաս կամ ծիծաղելի եք համարում։

— Խնչո՞ւ էք այսպիսի հարց գնում. դուք ինձ այն ասացէք թէ ծիծաղելի չէ, երբ դուք աւենում եք մի մարդու, որ մի շինութեան մասին աւելի աղմուկ է հանում, քան ամրող բաղաքի բարեկեցութեան մասին։ Նա շատ է իրան սահմանափակում աննշան մի շըանի մէջ։ Երբ նա գալիս է մեր շըանները, միշտ տիսրում է. միշտ կրկնում է թէ՝ պէտք է գիւղ վազի—եթէ չէ էր հիւանդանայ։

— Արդեօք դուք Սանարէզեանի մասին չէ՞ք խօսում, հարցրի ես։

— Այո՛, դուք ուրեմն նորան ճանաչում եք։

—Այո՛, նա իմ ուսանողական ընկերս է:

—Ճիշդ է, ճիշդ է, նա ձեր մասին պատմել է: Ասացէ՛ք ինքներդ. մի՞թէ կարելի է այդքան փոքրանալ, այդքան կզգիանալ, այդքան սահմանափակւել:

—Ես համաձայն չեմ, փոքր ինչ զայրացած պատասխանեցի ես: Ինչո՞վ է նա փոքրացել, կզգիացել, սահմանափակւել: Դուք աւելի էք կզգիացած քան նա, որովհետև դուք մուտք չունեք դեռ ժողովրդի մէջ: Նա ձեզնից աւելի մեծ շրջան ունի իւր գործունեութեան համար: Ինչո՞վ է նա փոքրացել, նորանո՞վ որ համարում է առ այժմ ընդհանուր խօսակցութիւնների իմաստը սպառած և փորձ է անուացում է ընդհանուր զաղափարի. և մինչդեռ ուրիշները միայն շարունակում են հին ծամննը ծամել, նա աշխատում է զաղափարը իրականութեան վերածել ժողովրդի մեծամանութեան մէջ:

—Բայց ի՞նչ կ'ասէք այն բանին, որ ձեր պարոն Սանաբէգեանը զիւղացուն շատ քիչ նոր զաղափարներ է տալիս և կարծես նորան մի տեսակ շողոքորթում է:

—Նա չի կարող շողոքորթել:

—Այնքան քնքոյց վարել զիւղացու նախապաշարմունքների հետ՝ շողոքորթել չէ՝ ի՞նչ է:

—Ես ձեզ ասում եմ, որ Սանաբէգեանը շողոքորթել չը գիտէ:

—Ահա մարդը զիւղում ապրում է մօտ երկու տարի և զիւղում համարեա թշնամի չունի: Այստեղ մի վաշխառու կայ, մի հաստ մէջք, ինչպէս ինքը Սանաբէգեանը ասում է. այդ վաշխառուն հարստահարում է զիւղացիներին: Սանաբէգեանը պատմեց մեզ մի դէպք, ուր վաշխառուն կորզում է եղել մի զիւղացու մի տարւայ այգեպառուղը և յաջողութիւն չէ ունեցել Սանաբէգեանի միջամտութեան շնորհիւ: Ես մոտազիր էի Սանաբէգեանի պատմածը տպել լլրազրի մէջ և խայտառակել այդ հաստ մէջքին. բայց Սանաբէգեանը քիչ մնաց հետո կուի, այսպէս խիստ պահանջեց, որ ոչինչ չը գրեմ: Ասացէ՛ք, ինդիրեմ, այդ ի՞նչ է:

—Ի՞նչ էք կարծում, երեխ վախկոսութիւն է:

—Եթէ վախկոսութիւն չէ, դորա նման մի բան է: Եթէ ես լինեի, գոնչ այդ աեսակ վարմունքը կը համարէի կամ կեղծաւորու-

թիւն կամ վախկոտութիւն կամ թոյլութիւն։ Պէտք է բողոքել ազատ, համարձակ, առանց կոպէկների հաշիւների մէջ մտնելու, առանց զիջումներ անելու։

— Բայց պ. Հաթամեա՞ն, մի՛թէ դուք չէք զգում, որ խնդրին սխալ ուղղութիւն և գոյն էք տալիս։

— Ի՞նչպէս սխալ։

— Այ ինչպէս։ Ի հարկէ ամեն աղնիւ մարդ պէտք է բողոքի վատի, վնասակարի դէմ։ Ես աւելի էլ կասեմ՝ պէտք է մարտնչի։ Սանաբէզեանին ես ճանաչում եմ իբրև ամենաազնիւ անձնաւորութիւններից մէկը։ Հարցնում եմ ձեզ. մի՛թէ դուք ուղղում էք ասել, որ նա չէ օգնում զիւղացուն և չէ վնասում ձեր ցիշած վաշխառուին։

— Ո՞չ։

— Այժմ ես աւելին կասեմ։ Ես ևս ծանօթ եմ Սանաբէզեանի գործունէութեան հետ։ Լաւ յիշում եմ նորա նամակներից, որ վաշխառուի զիրքը քանի գնում է՝ դառնում է խախուտ, իսկ զիւղացիները արդէն սկսել են հաւատալ Սանաբէզեանին։ Այսօր չէ, էղուց, մէկ էլ կը սեմնէք՝ Սանաբէզեանը, հիմնած զիւղական մեծամասնութեան վերայ, կը կործանի վաշխառուին։

— Այն ժամանակ Սանաբէզեանի համար կ'աւելանաց նորա մեծ յաղթութիւններից մէկը. և նա զարձեալ կ'աւետի մեզ իւր բոլոր ոգևորութիւնով։

— Ես զարմանում, եմ պ. Հաթամեա՞ն, ձեր ացգալէս թեթև վերաբերւելուն դէպի հասարակական գործունէութիւնը։

— Ըսդհակառակը, ես եմ համարում Սանաբէզեանի և գուցէ ձեր վարմունքը թեթև։ Դուք էք ացգքան մեծ զիջումներով, ացգքան ծռմուելով մօտենում կեանքին։ Պէտք է լինէք առաջադէմ ձեր կեանքի իւրաքանչիւր բուպէին։ Նև նայում եմ կեանքին համարձակ, ամեն տեղ ազատ յայտնելով իմ զդացումները. վատին ասում եմ վատ, հարստահարողի երեսին թքում եմ, վաշխառուին ապոակ եմ տալիս։

— Ես չեմ հաւատում, որ ացդ ձեզ միշտ յաջողի։ Բայց զլիսաւորը ացդ չէ։ Դուք ասացէք ինձ. ի՞նչ զրական բան էք դո՛ւք առաջարկում ժողովրդին։ Ի՞նչ նոր բան էք մտցնում ժողովրդի մէջ։

— Այդ զիստութիւնը կը տայ, ասաց հանդիսաւոր կերպով Հա-

թամեանը. զիտութիւնը պէտք է տարածել ժողովրդի մէջ. նա իւր անելիքը կանի: Թող ժողովութիւնը իմանաց, որ շոգին ոյժ է, մի այս պիսի ոյժ, որ փոխարինում է ձիու, քամու, մարդու ոյժը. թող նա աեւնի մէքենաներ գործողութեան մէջ՝ և նա կ'ունինաց իւր դրական օգուտը:

—Մի՛թէ Սանաբէգեանի գործունէութիւնը գիտութիւն մըսցնել չէ. նա առաջինը՝ զիտութիւն է մոցնում, երկրորդը՝ ծանօթանում է գործնական կեանքի պայմանների հետ:

—Խոկ ես կարծում եմ, որ նա խախուտ ճանապարհի վերաց է: Դիցուք զիտութիւն է ուղում մոցնել. այդ կարող է եթէ յաջողեցնի մի քանի տարի մնալ զիւղում: Բայց ո՞րշափ մըսաներ կը սուանաց: Աննկատելի կերպով կ'ընկնի կեանքի աղղեցութեան տակ: Դոնէ մի քանի տասնեակ տարիներ տեսնում ենք, որ մեր երիտասարդները, երբ մտնում են կեանքի մէջ՝ շատ են գործնական դառնում: Մեր գործնական կեանքից պէտք է շատ զգոց լինել: Գիտութիւնը տարածեցէք դպրոցի, արհետանոցների, մամուլի միջոցով: Բայց մի՛ տոփեք ինձ կատարելու կրթւած մարդու զգացումներին դէմ խաղեր:

—Մենք միմեանց չենք հասկանալ: Դուք այնպէս էք խօսում, իբր թէ Սանաբէգեանները ընդունակ են անազնիւ գործունէութեան:

— Բայց գոնէ ան զիտեմ, որ նոքա կարողանում են ապրել անպիտան միմոլորդի մէջ:

— Դուցէ ցաւելով, տանջւելով, իրանց զոհելով գաղափարի համար:

— Չեզ ասացի, որ Սանաբէգեանը տիրում է քաղաքում և զիւղ է վազում:

— Միթէ՞ չէք հասկանում, թէ ինչո՞ւ է ախրում այսոեղ և ինչո՞ւ վաղում զիւղ: Արովհետեւ զիւղում գործելով գաղափար է իրագործում, առաջալիմութեան ճանապարհ է հարթում: Խոկ այստեղ գործողներ առանց այն էլ շատ է աեսնում և իւր համար ասպարէզի վերաց նոր գործ առ այժմ չէ էլ նկատում: Արչափ և ծանր լիներ զիւղում ապրելը ընդհանուր կինցաղափարական տեսակետից, նա, այնուամենացնիւ, աւելի քաղցր է համարում այնտեղի անշուք կեանքը՝ քաղաքի շքեղ կեանքից:

— Դուք երեւի կարծում էք թէ այստեղի գործերը քիչ են:

— Զե՛մ կարծում։ շա՛տ շատ են։

Մնացականեանցը վաղուց է, որ մօտեցել էր մեր խմբին և նոյն-
պէս լսում էր մեր վէճը։ Նա կամենում էր, որ մեր խօսակցութիւնը
համառօռուէր։ Զէր իմանում, թէ ի՞նչ տեղում միջամտէր, վէճը ընդ-
հատէր։ Վերջապէս յուսահատ կերպով խօսեց։

— Ներեցէ՛ք, ձեր վէճը կարծեմ վերջանալու վերայ է, զոնէ ես
նկատում եմ, որ դուք սկսում էք կրկնութիւնների դիմել։ Գնանք
միւսների մօտ։ Դաշնամուրի մօտ յարգելի օրիորդը բարեհանում է
երգել մեզ համար։ Ունկնդիր լինենք։

Մենք տեղներիցս շարժւեցինք և պատրաստեցինք ունկնդիր
լինելու։

Օրիորդը նւազ ձայնով երգեց մի եւրոպական կարճ քնարերգ,
որ հաւանութիւն գտաւ։ Ասացինք, խօսեցինք, զւարձացանք և կէս
գիշերին մօտ՝ ցրւեցինք։

Այս երկու օրը ես շատ անդամ եմ կանգ առել Հաթամեանի
անձնաւորութեան վերայ։ Մի ծանօթի հետ մինչև անդամ խօսեցի
նորա մասին։ Հաթամեանը այստեղ բաւական յայտնի անձն է երի-
տասարդների շրջանում։ Նորան գնահատում են՝ իբրև համարձակ
խօսացողի, իբրև առաջադէմ մարդու։ բայց չեն համարում նորան
տոկուն, անխոնջ, անվհատ մշակ։ Խմ ծանօթը ասում էր, որ Հաթա-
մեանը հարկաւոր է գալիս յայտնի վէպքերում, երբ պէտք է զգաց-
ւում մի որոշ ծրագրով արագ գործելու և եւանդ զարթեցնելու հա-
մախոհների մէջ։

Խսկն ասած, Հաթամեանը քեզ համար շատ էլ նորութիւն չէ. նա
նման է իմ ուսանողութեան ընկեր Բարդամեանին։ Միայն Բարդամեանը
ծովերի թագաւորն էր, իսկ Հաթամեանը, ասում են, եռանդուն է
առհասարակ։ Բարդամեանը կրակու և սուր խօսակցութիւնով ծած-
կում էր իւր ծուլութիւնը։ Հաթամեանն էլ կրակ և մախաթներ ունի,
բայց ծով չէ։

Հաթամեանը ուսումը աւարտել է այսակի մի միջնակարգ զբա-
րոցում, որի անունը չէ ուզում լսել և որի սաներին նա համարում
է խղճալի արարածներ։

Դու կը հարցնես՝ ի՞նչ է անում Հաթամեանը։ Այդ հարցը ես
էլ տւի ծանօթիս և ստացայ հետեւալ պատասխանը. —

Նա ո՛չ մի հաստատութեան մէջ պաշտօն չէ ուզում ունենալ
և չունի: Մի երկու տեղ փորձել է պաշտօն ունենալու, բայց շուտով
տիպւած է եղել թողնել, որովհետեւ նկատում է եղել զանազան
անարդարութիւններ, որոնց դէմ խիստ բողոքում է եղել: Այժմ նա
մասնաւոր գործեր ունի, որոնք բաւականաշափ ապահովում են նո-
րան: ոնի մասնաւոր գասեր, կատարում է թղթակցի պաշտօն մի
հարտատի մօտ, տանն էլ պահում է մի քանի զիշերօթիկներ: Լրա-
գիրներում նա յաճախ յօդւածներ է գրում «Փայլակ» ծածկանունով:
Յիշում ես Փայլակի յօդւածները. մի քանիսը շատ սուր և կոկ են,
բայց, ինչպէս նկատած կը լինես, բաւական միօրինակ բովանդա-
կութիւնով:

Յդրութիւն:

Քռ Ա. Պ.

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ—ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՅՐԴԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ¹⁾

Պ. ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑ

Ա. Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մեր նախորդ մանկավարժական ժողովներից մինում կարգացի խօսուած ջարկութիւնները զպրոցական կարգապահութեան մասին։ Այս խնդիրը՝ նախքան ուսումնարանի բացւելը՝ ամենակարևորն էր, ուստի մենք պէտք է շտապէինք, աշակերտներին զտարան թողնելուց առաջ, սովորեցնել, թէ նրանք ինչպէս պէտք է վարւէին վաղոցում, գաւթում, զատարանում և ավել։ Այսուեղ դիտմամբ զործ ածեցի սովորեցնել բառը ուսուցանելու փոխարժեն, վասն զի այս ուսումնարանի կարգապահական անօրինութիւններն ու պատէրները իսկապէս շօշափում են աշակերտի արտաքին կեանքը, նրանք առանց ալ և ազլութեան անկարող են թափանցել աշակերտների հոգին ու զդացմունքները. ալ խօսքով՝ այս կարգապահութիւնը մի անսակ սովորութիւն է, որ մարդու մէջ մարմին ու արիւն է զառնում միայն չոլովակի և անընդհատ նրանց համեմատ վարւելուց։ Փորձն այս անգամ էլ ցոյց տևեց, որ այդ կարգապահամկան անօրինութիւնները որքան որ մեզ սովորական էին թւռմ, անգամ ևո նոր էին մեր ուսումնարանի համար։ Նրանց չարմարւելու բաւարար վարժութիւնը պակաս էր թէ ուսուցիչներիս և թէ աշակերտներին. ուստի մենք պէտք է կրկնապատկէինք մեր ճիպն ու ջանքը առ այժմս գոնէ մի որոշ չափով մեր նըպատակին համեմու։ Վերոֆիշեալ առաջարկութիւններու կարգավիս և անցեալ անգամ մեր ուսումնարաններում արած կարգապահական զիստըութիւնների մասին խօսելիս կրկին անդամ լիշեցրի, որ, առանց խիստ կարգապահութեան՝ անհնար է ուսուցման զգալի արդիւնքը։ Մրանում զարդներդ վարձով համոզւած էիք ու հիմա էլ տեսնում էք, թէ որքան խանգամ պարուում է ձեւ զաստամենդութիւնը, երբ մինչև անդամ մի կամ երկու ան-

1) Այս յօդւածը կարգացել եմ՝ Ալբանդը սապօտու երկուու գպօցների մանկավարժական ժողովում, որից յետոյ ահա՛ ներկայացնում եմ բոլոր հայ ուսուցիչների ուշաղըութեանը և ուսումնարանական գործով հետաքըրւող հայ ընթերցողներ։

կարգ աշակերտներ ևն դասարանում նստած: Ել չը կիշենք այն ուսուցիչ-ներին, որոնք իրենց ձախով չը կարողանալով զսպել աշակերտների ընդհանուր աղմուկը կամ քանոնի ձախին ևն զիմում (որ տարածւում է ամբողջ ուսումնարանում) և կամ աշակերտներին անկարող լինելով զսպել դասից դրկում հն:

Ի հարկէ, եթէ բանն աղտուել համարի, այլ ևս ուրիշ միջոց չի մնալ. բայց ինչու ալպէս վարւել մթիշէ չպէտք եր հենց առաջին ձախին կամ անկարպութեան երեալուն պէս զսպել:

Եթէ միւս, վաղուց աւանդուղ առարկաների մեթօդները մնացանում այնքան լիւ են մնացել, պարզ է որ այս առարկալինը, որ նորամուծ է, գեռ աւելի ևս լիւ մնացած պէտք է լինի, թերեւ ոչ ամենուրեք այն աստիճան, որի վերաց գտանւում էր այդ արևեստի զառաւանդութիւնը իւր կեանքի առաջին շրջաններում: Մենք չենք կարող և աս դէպրում Եւրոպակի ազգեցութեանը չենթարկել: ոսկիան աչն, լիչ որ այսուեղ առողջամիտ ու թարմ մանկավարժական շկոլաներում արդէն հրճացած ու հակամանկավարժական է համարւում, մնացնում կարծես զեռնոր է սկսում ու չարունակւում: Մի երկու օրինակ, այն ուսուցիչը, որ աշակերտին բնութեան իրերից (կարող են ոկրում և ամենաստարբական քանի լինել) լինքնուրուն նկարել չէ ուսուցանում, այլ ստրիաբար արտանկարել է սովորեցնում (այն էլ լաճախ քիթ ու ականջներ, ծնօս ու աչեր, որոնց արտանկարելուց լիսուց աշակերտը չը գիտէ թէ ծնօս ու կրսին է դնելու), նա լիւ է մնացել ժամանակակից մանկավարժում երևսին է դնելու), նա լիւ է մնացել ժամանակակից մանկավարժում ներկից: Ուվ նկարչութեան նիւթի ընտրութեան մէջ չէ ժութեան պահանջներից: Ուվ նկարչութեան նիւթի ընտրութեան մէջ չէ հետեւ այս գեղարվեստի կուլտուր-պատմական աստիճաններին, իւր աղ-

1) Սւենի ընական է և շատ գործնական փոխանակ իւրաքանչիւր երի ամբողջ նկարագրութիւնը թելագրելուն երբ ուսուցիչը հասնում է 4. աստիճանին կամ համակարգութեանը, այսուղ համառօտ ձեռով գրել տալ լոկ այն ընառըշշատկանիշները, որոնք ներկայ իւր գանազանում են նախորդներից և յաջորդներից:

զի լիշտառակարանների մէջ չի պտուում նկարչութեան ընտիր նիւթը, նա գործում է առանց նախադժի. ով ակա գեղարւեստի ուսուցումը չի չարմարեցնում կեանքի հանդամանքներին ու չի նպաստում տեղական արհեստի ու արևեստի լառաջաղիմութեանը, նրա նկարչութիւնը անդիասկյաբար է գործում:

Անա գարձեալ խնդիրներ, որ մասնագէտների հն կարօառում, որոնք զինւած լինելով և մանկավարժական սկզբունքներով՝ կը հաւաքէին միր հալրենիքի ճարտարապետութեան և ազ գեղարւեստների նշարները, պատոմական սիստեմի տակ կը դնէին, կը մշակէին նկարչութեան մեթօդը: Ան ժամանակ մեր ուսումնարաններում աչս արհամարտած խորթ մանուկը լիելու կը ստանար և ուզեցոց կը լինէր մեր նորագոյն սերնդի բարոյական կեանքի շաղին: Նի լլ ը ը իւր «Մարդու էսթետիկական կրթութեան մասին» ծանրակշտու երկում ասում է. «գեղեցկութեան միջոցով մարդս կարողանում է դէպի աղատութեան մասին է և աշխարհանոչակ բանաստեղծի և էսթետիկոսի կարծիքով՝ գեղարւեստն է բարոյականութեան հիմոնքը: Հայրենի աշխարհին մի առարկակի ճաշակով նկարելը մի գեղեցիկ գործ է, որ ազնւացնում է մարդուս բնութիւնը և նրանում բազմատեսակ առաքի նութիւններ ծնեցնում:

ը. Նրգեցողութեան մասին:

Թէ մենք ամենից շատ զուրկ ենք երաժշտական ճաշակից, այդ բոլորս էլ գիտենք. օրինակ՝ հայ երաժշտարդների մի խումբ, այն էլ քիչ թէ շատ կրթւած, սկսում է Անի քաւաքիու ողբը տիսւր եղանակով երդել խոկ զասաւարտումից լիտո՞ մին էլ տեսնես, առանց ալլեալլութեան, միենոնք երգը մեծ ոգևորութեամբ կերգէ շտապանախութեամբ (մարշի եղանակով)...: Ի հարկէ, ուրախալլի է, որ մեր երջանկալիշատակ Գէորգ Ակաթովիսի շնորհիւ՝ աչսօր մեր ուսումնարանները ձախադրութիւն և ուսանում և աչսպասով մեր ազգակին և նամանաւանդ եկեղեցական թանկաղին երգերն ու մեղեգիները մեզ համար անկորուստ զանձ ևն դառնում: Սակայն միթէ զոնէ մեր ուսուցչանոցներում չը պէտք է ուսուցանւի և՛ եւրոպական ճախագրութիւնը, որ մեր ուսուցիչները մասնակից լինէին նաև եւրոպական երաժշտութեան, որպէս զի նրանք ալսալիսի ընդարձակ կըրթութիւն ստանալով՝ օդուտ քաղէին քաղաքակրթւած ազգաւթիւնների երաժշտական գրականութիւնից, կարողանալին որոշել աղդայինը օտար տարրերից: Խոկ մասնագէտ-երաժշտները հայ ազգի հոգեբանութեան միջոցով պէտք է թափանցէին հայութեան ողու մէջ ու աչսպէս շօշափէին սրա սրանի լարերը:

Եւ երգեցողութիւնն ու երաժշտութիւնն ունին ազօր լայտնի մանկա-

վարժական սկզբունքներով զեկավարող մեթօդ. նաև ձախների ըմբռնողութիւնը կատարում է համաձայն լաւտնի հողերանական օրէնքների:

Ալսակող էլ մանաւանդ երգի, լեզուի և պատմութեան դասասուներն առնչութիւն պէտք է պահպանեն: Նոյն՝ իւրաքանչիւր տատանաւոր պէտք է համապատասխանէ դասարանի մատաւոր հասունութեան աստիճանին և նրա որոշ ժամանակի տրամադրութեանը: Ոտանաւորը մտքի և լեզուի կողմից մշակւելով, կարող էր պարզաբանող և լրացուցիչ նկատ տալ պատմութեան նոյն ժամանակիակ դասէն: Առաջ կանցնէր ալդ տատանաւորը երգեցողութեան ուսուցչի ձեռ քը:

ԱՌԱԻՈՏԵԱՆ ԵՐԳ

ԱՐ ԾԻՒԻ ԵԱՆԻ

Եւ այսօր փալլեց տուաւօտս ուրախ.
Ես սղջունեցի գարնան արշալոյս,
Զեռք առալ քնար երգելու անվախ
Աղատ զեղմունքը տնվեհեր հոգոյս:

Եւ ինձ իւր անշէջ, դիւթիչ հայեացքով
Դարձեալ փաղաքշեց կենսատու արև.
Սլացաւ զեփիւռն ականջիս մօտով
Եւ ես լսեցի. «բա՛րե քեզ, բա՛րե»...

Եւ թռչունների տնթիւ երամներ
Ճախրելով շուրջըս ինձ աւետեցին
Նորից քաղցը լոյս, քաղցը երազներ,
Եւ անդորր վիճակ իմ մատաղ կեանքին:

Հրձւիր դու ազատ, սիրտ իմ լուսավառ,
Վայելիր կեանքի բուռն քաղցրութիւն.
Հրձւիր, քանի քեզ ժալտում են պայծառ
Եւ անամակ երկինք և՛ վառ բնութիւն...

Անվերջ չէ գարուն... Կը գալ ցուրտ ձմեռ,
Կը թօշնի վարդը, կը լոկ սոխակ,
Եւ ալնուհետե մնաք բարեաւ և՛ սէր,
Եւ անվերջ գգւած ցնորք ու տենչանք...

ՊԵՐՃ ՊՈՅԵԵԱՆՑ

ԵՒ

ՆԹՐԸ ՎԵՊԵՐԸ

Աւսումնասիրութիւն

Ն. ՔԱՐԱՄԵԱՆՑԻ

Է.

Կ Ռ Ո Ւ Ա Շ Ա Դ Ի Կ Ա

Պոռօչեանցի վէպերից ժամանակազրական կարգով երկրորդն է Ալոռածաղիկութիւնը, որ նրա առաջին փորձն է պատմական վէպ դրեւաւ: Պատմական վէպն իբրև մատնազրական արտադրութեան մի ձե՛ շառ հին ծագումն ունի: Մեզ հասել են Քրիստոսից հինգ դար առաջ հեղինակներ ծագում ունենալու պատմական վէպերը, որոնց նպատակը՝ սկզբնական վիզավաճների հասկած պատմական վէպեր, որոնց նպատակը՝ սկզբնական վիզավաճների հասկած կացողութեան և ցանկութեան համաձայն՝ մանկավարժական էր. մի օրինակ միայն թող բաւական լինի լիշելու: Յունական պատմագիր և Փիլիպոփակ Գևենովինը դրեց իւր կիւրոպէ է դի կամ «Պատմութիւն խրատու Կիւրոսի» (Հակերէն թարգ. Գաթըրճեանի 1843 թ. Վիէննա) պատմական վէպը, որ նա կամինում է մի գաղափարական իշխան ներկայացնել, որ կրթւած էր Սոկրատեան Փիլիպոփաչական ուղղութեամբ: Գևենովինի հերոսն է մեծն Կիւրոս, որի զաստիարակութեան պատմութիւնն է անում Փիլիպոփան հիմնականի պատմական իրողութիւնների վրայ Յունական գրականութեան մէջ պատմական վէպը լաջորդ ժամանակներում առաւել ևս զարգացաւ. Քանի պատմազրութիւնն ընկնում էր, անգան զարգանում էր պատմական վիզավաճութիւնը, որ մանաւանդ ծագկեց Աղեքսանդրիայի դպրոցում: Ծանօթ օրինակներով խօսելու համար՝ վշենք այս զպրոցի մի դործը, որ մեր դրականութեան մէջ ծանօթ է հինգերորդ զարուց սկսած և որ որոշ ազդեցութիւն է արել մեր պատմազիրների վրայ: Մեր ակնարկութ վէպն է Պատմութիւնը, է արել մեր պատմազիրների վրայ:

մութիւն Աղէքսանդրի» կոչւածը, որ արդէն հին պատմական վէսլից տարբերում է իւր նպատակով և ձևով. սորա մէջ առաւել տիրապետողն է Երևակալութիւնը՝ փոխանակ վիլսովիալութեան և պատմութեան, որով և աւելի մօտենում է բանաստեղծութեան:

Պատմական վէսլի ծաղկման դարը սական իրաւամբ համարում է վիպագրութեան ոռմանական (ռոմանտիզմ) կոչւած շրջանը: Այս շրջանի մեծամած աստղերը փալել են մեր դարու առաջին կրտում, ինչպէս Վալտեր Ակոստը, Հիւգ օ ն (Նոտր-Դամ զը Պարի), Դիւմա աւագն և ազն: Պատմական վէսլի խակական ներկալացուցիչը կարող է իրաւամբ Վալտեր Ակոստը համարել, որ իւր բաղմաթիւ վէպերի մէջ, որոնց նիւթն է միջնադարեան պատմութիւնը, ինչպէս ասում է մի նշանաւոր գրադէտ, «ոչ թէ կենդանացրած մի հնախօսութիւն է տալիս, ազն ներկալացնում է մեղ մի անցեալ, որ իւր երևակալութեան մէջ ապրում էր աշնակս պարզ, ինչպէս ներկան, ինչքան առանց անդրադաւնալու նա ինքն այն անցած ժամանակներում ապրում էր, նոյնչափ աւելի որոշ և պարզ ատեղծում էր նրա երևակալութիւնը տեսաբաններ և տարաղներ, և նոյնչափ աւելի կենդանութիւն էին տտանում նրա հերոսները: Ակոստի անցեալ զարերու տիպերը բոլորավիճ տաք արիւն, զ գ ա ի ւ ն, կ ե ն դ ա ն ի, հ ո գ ե ր ա ն օ ր է ն ծ մ ա ր ի տ ե ն. իսկ նրանց կեանքի հանդամանքները տեսեղում էր ինքը բանաստեղծական զարդութեամբ՝ օպտւելով կեանքի անհամար երևոյթներից»: Ահա այսպիսի կատարելութեան էր հասել Եւրոպակում պատմական վէսլը, երբ մեր զրականութիւնը զեռ խանձարուրում էր: Թէ ինչպէս ալդ մանուկ մատենագրութիւնը դուրս եկաւ իւր առաջին շրջանից, արդէն անցեալ գույներից մէկումը համառօտակի չօշափեցի: ալժմ տեսնենք նրա ձգտումների և արտադրութիւնների այն փորձերը, որ վերաբերում են պատմական վէսլին: «Աէրք Հայաստանին» մի կողմով պատմական վէսլ է, որովհետև անմահացնում է ուստամական մի նշանաւոր ժամանակի կեանքը, —պարսկական իշխանութեան ոռուսականի փոխսփլը: Արովեանի իսկական աշակերտը, Պերճ Պոօշեանցը, որի բանաստեղծական դրականութեան սապարէզ մտնելը «Աէրք Հայաստանին»-ի ընթերցման հետեանքն էր, պիտի անշուշտ ընկնէր և ալդ եղերեղի նիւթի աղղեցութեան տակ: Կարծես թէ Պոօշեանցի գործերի ժամանակադրութեան մէջ մի անարմարութիւն կաէ, բնական կարզը կարծես պահանջում էր նախ «Առուածաղկի» հեղինակութիւնը և ապա «Սօս և Վարդիթերի», Բայց աղդպէս չէ:

Գրեթէ տասը տարի վետոյ միանց համարձակւեց Պոօշեանցը ձեռնարկելու այն գործին, որով պիտք է իւր վարպետին նմանէր: Այս նմանողութիւնը անգան պարզ է և անքան արտաքին, որ առաջին հակեացքից իսկ աչքի է ընկնում: Բաւական է միանց վիշել, որ Պոօշեանցն էլ իւր վիպատանութեան նիւթը ճիշդ ալ աման ից է տռնում, որից առել էր Արտվեանը, —պարսկական տիրապետութեան վերջին հողելարքի

ժամանակից: Եթէ Աբովեանը ընտրել էր հայկական հպատակութիւնը փոխելու ձգտումն ունեցողների շրջանից մի երկրորդական կամ մինչև անգամ մտացածին հերոս, Պուօշեանցն ընտրում է ազդ պատերազմի առաջին հերոսին, Ներսէս Ե. կաթողիկոսին:

Մեր գրականութիւնը «Արուածադաղկի» հրատարակումից լիսոյ տւել է բաւական թւով պատմական վէպեր. նոյն իսկ Պոօշեանցը մի երկրորդ փորձ է արել իւր «Շահէն» վիպասանութեամբ: Թէ ինչ զարդացման աստիճանի է հասել ազդ մեր գեղարւեստական դրականութեան ձիւղը և ինչ մոլոր կամ ուղղի շաւկղներով է ընթացել, ուրիշ անդամի թողնելով, աղմմ ծանօթանանք «Արուածադաղկի» բովանդակութեան հետ և տեսնենք թէ, իբրև առաջին փորձ հեղինակի, ինչքան լաջողակ է:

«Արուածադաղկի»-ն առաջինն էր Պոօշեանցի՝ «Արուածակի» դադարումից լիսոյ երկրորդ անդամ «Փորձ» հանդիսի երեսան գալով մատենադրական ասպարեզ հանած վէպերից: Այս վէպի 1878 թւին եղած արտատպութիւնը¹⁾ նւիրած է օրիորդ Աշխէն Դօլդեանցի վշատակին, որ վէպի գրւելու սկզբնապատճառն է և նրան ազդ անունը տևողը. բացի դրանցից, ինչպէս խմանում ենք լաւաշաբանից, օրիորդ Դօլեանցը «իսորհուրդներ է տւել հերինակին Կոռաւածադաղկին վերաբերեալ» (լաւաշաբան եր. ա.):

Ահա թէ ի՞նչ է կամենում տալ հեղինակը «Արուածադաղկի» միջոցով. «Տարի և կէս սրանից անց, ևս լատնեցի քեզ (օր. Աշխէն) իմ ցանկութիւնս՝ սրանից մի դար չառաջ իմ քաղցր հաէրենիքում գտնուած մեծ մարդկանց չիշատակներն անմահացնելու,— որոնց մէջ դլիսաւոր տեղերից մինն անդատճառ ալատ կանելու էր Հայոց ազգի գլուխի երջանկակիշատակ Ներսէս իմ հաւրենակից Աշտարակիցի կաթուղիկոսի մանկական անմեղ տարիներին» (լաւաշ. սկիզբն):

Հեղինակի ցանկութիւնն է ուրեմն տալ Աշտարակ գիւղում ծնւած հայկական մեծ մարդկանց պատմութիւնը և անմահացնել նրանց վիշտակը: Լսնք աղմմ թէ ինչպէս է նա ձգտել հասնել այս նպատակին: «Առուածադաղկիս նիւթը, ինչպէս ընթերցողը կը տեսնի, առած է Աշտարակու գարով չառաջ կեանքից: Գրաւոր աղքիւր-ներն ես քաղել եմ Սիմէօն բազմաշխատ կաթուղիկոսի տպուած աշխատութիւններից և, ալ. Յարութիւն Շահազիդեանցիւնից և Ներսիսի գրութիւններից: Իսկ իբրև անսպառելի աղքիւր՝ եղել են ի մանկութիւնէ մինչև վերջին տարիներս Աշտարակի՝ իմ ծննդեան տեղի՝ ծերաւնին երից լսածներս, որոնցից շատերը խորին ծերութեան հասած, ականատես են եղել շատ իրողութիւններին: Ի՞նչ կարծիք, որ վիպառանութեան պահմանին համաձայն:

¹⁾ «Արուածադաղկի» աղմային վիպասանութիւնն է հեղինակութիւն Պերճ Պռօշեանց Աշտարակեցւոյ, 1878. Թէֆլիս.

թող տուած է նոր արկածքներ և նոր անձներ ևս ստեղծելու ժամանակագրական ճշգութեանը ևս չեմ ուզեցել և չի ել կարող անաշխապէս հետեւ ներսիսի ծննդեան տարիքը մինչև այսօր պատմաբանական փաստերն անգամ տկարանում են խակապէս հաստատել։ Մանկական չի շողութեանս մէջ տպուածներն աչսօր հաւընթերց ասէր դասին և մնուիրում։ (Համեմատիր որա հետ նաև գլ. ծէ. եր. 333): «Ահա առա իմ մեծ տաստին ևնք պարտական, ընթերցնդ, ես և դու, ես գրելով, իսկ գու՝ կարդալով»։

«Առուածաղիկ»-ը, որ 344 ութածալ երեսից և 58 գլխից բաղկացած մի վիպասանեութիւն է, և որի մէջ հեղինակը կամենաւմ է անմահացնել Աշտարակցի ան մեծ մարդկանց վիշտառակը, որ ապրում էին 18-րորդ դարու վերջին և 19-րորդի սկզբում, հետեւալ բովանդակութիւնն ունի։

Աշտարակ գիւղի Շահազիղեան. Կամսարական ցեղի երեք նշանաւոր աների ներկայացուցիչների գործունեութեան ժամանակն է կատարւում անցքը. կամսարական մի տան ներկայացուցիչն է գիւղի քահանան՝ Տէր Յարութիւնը, որ մի ճշմարտս քրիստոնեաց և հաւ քահանալի տիպար է. նա Աստուծոյ պաշտօնեաց է թէ իւր վարքովն և թէ իւր խոսքովն. Նրա կինն, Սուսամբարը, մի հահապետական և քարեսիրտ հաւ գիւղական մայր է, որ հաւասարապէս կարողանում է սիրել թէ իւր որդոց և թէ ուրիշի որբերին։ Միւս կամսարական տան գլուխն է Գէորգ խալֆան՝ հարուստ, հիւրասէր, առատածեռն և հասարակութեան ցաւերին զարման տանող գիւղի իշխանը, որից հաւասարապէս պատկառում են գիւղացիք և չարգում են թէ պարսիկ տիրապետողները և թէ բարձր հաւ հոգեորականները. Սրա կինն էր Խորիշան խանումը՝ Պոօշեանց աղնւական ցեղից։ Սա չետ չէր մնում բարեգծութեամբ իւր ամուսնուց. նա «բոլոր որբերի և անտէր քաղցածնեն երի մազըն էր»։ Գէորգ խալֆէն ներկայացրած է իբրև օրինակելի հարուստ, խելօք (մինչև անգամ քաղաքագէտ), բարեսիրտ, արդար, գործունեալ գիւղացու և նահապետական հօր և ամուսնու տիպար, իսկ Խորիշանը՝ հաւատարիմ, բարեսիրտ, առատածեռն և աշխատասէր գիւղական տան տիկնոջ և քնքուչ ամուսնու տիպար։ Սրանց համապատասխանում են Տէր-Յարութիւնը և իւր կինը՝ մի զահազանութեամբ միախն, որ Տէր-Յարութիւնը որդիք տնէր, որոնցից մէկը՝ Թորոսը վիսպասանութեան զիսաւոր հերոսն է, իսկ Գէորգ խալֆան անորդի էր. նա «բոլոր գիւղին և գաւառուին հաչըրութիւն էր անում» (եր. 22)։ Սոքա և ուուածաղկի» իրէալական տիպարների զիսաւորներն են։

Կամսարական-Շահազիղեանց երրորդ տան գլուխն ու ներկարացուցիչն էր Պետոնդ աղէն։ Սրան արդէն ի մանկութիւնէ ճանաչել էր իւր հազը իբրև մի վնասակար և չար մարդ. ուստի գիւղի ամրոցի (տախտակապատ այբերի) մուտքը ծածկել էր նրանից։ Վեսնը փառասէր, շահասէր, չար և դաւաճան մարդ էր. իւր անձնական

շահից և բաւականութիւնից առաւել ոչինչ նշանակութիւն չուներ նրա համար՝ ոչ ազգութիւն, ոչ հաւատ, ոչ հասարակութիւն և ազգակցութիւն, մինչեւ անդամ ընտանեկան սէր և հայրական ու ամուսնական գութ։ Սակայն դեռ ևս ընդունակ էր ընկճեւելու մարդկավին ամենասկզբնական և մնած զգացումներից, իւր ամուսնու և աղջկան սիրուց. այս ընկճումն սակայն բոպէական էր։ Սրա պակասութիւնները և թուլութիւնը չուներ ընդհակառակներից, Տէր-Մելքիսէթը անհամակրելի կերպարանք ուներ, խորամանկէ էր, գոզ, ոտախօս, կեղծաւոր, քծող և ազն, «մի ժանտախտ էր Աշտարակ ցիների համար, որից ամենքը խորշում էին, որից զգւելու ամեն մինը իրաւունք ուներ, բայց որ չէին կարողանում» (Գլ. Ժզ. Եր. 90).—Ղետնդի կինը, Համասփիւռը, իւր ամուսնու հակապատկերն էր, բարեսիրու և ազնիւ, կարեկցող, ամենի ցաւին և իր վշտերն լուսութեամբ տանող, մի կատարեալ կենդանի նահասակ իւր մարդու ձեռին։ Սրա նման չէր Տէր-Մելքիսէթի կինը, որ իւր ամուսնու զուգակից ընկերունին էր։ Այս երկու ընտանիքներն եւ հակատիպար են վերեն վիշած երկու ընտանիքներին։ Իթէ նրանք բարութիւնով և մարդկավին ամենան կատարելութիւններով գիրազանցում են մէկ-մէկու, սրանք էլ չարութիւնով և մարդկավին ամենան տեսակ ստորութիւններով։ մէ զանազանութեամբ, որ Ղետնդի կինն չէ հակապատկերն Խորիշան խանունին, այլ նման է նրան իւր բարութիւնով։

Այս առաջնակարգ գիւղական ընտանիքների և նրանց ներկայացուցիչների կեանքին խառն է և մի հասարակ ընտանիք, այդ է Նախընթիւ Մանուկի ընտանիքը, որ թէն նշանաւոր ծագումից է, բայց աղքատացած նախրչութեամբ է ապրում իւր Շուշան կնոջ հետ միասին։ Այս երկու աղքատ գիւղական անձնաւորութիւնների պատկերը բոլորովին կեանքից է վերցրած։ սրանք «Կռուածաղկի» իրական տիպարի ներկալացուցիչներից են, ինչպէս նաև Ղետնդ աղի տան աղախին Սանդուխտը, որ իւր տիկնոջ մահանից կետու մարդութիւն է անում Մանաշակին։ Ղետնդ աղի աղջկան։

Ահա ապս աղջիկն է վէպի հերոսուհին, սա ինքն է բուն կռուածաղիկի և Մանուկի, աղքատ նախրչուտղի՝ Վարդի և Տէր-Յարութիւնի որդու, Թորոս-Ներսիսի մէջ։ Մանուկի կինը անդաւակ է վնում, բայց ուխտ գնալով որ. Կիւրակի վանքը, մի տղակ է ունենում, որին անւանում է Վարդ։

Ղետնդի կինն էլ, Համասփիւռ խանումը, անորդի էր։ Մի օր պատահումէ նախրչու կնկան սր. Կիւրակու ճանապարհին և լսելով նրա ուխտի կատարման պատմութիւնը, ինքն էլ ուխտ է անում և խոստումն է տալիս, իթէ իրեն աղջիկ ծնուի, տառ նախրչու տղին, իսկ թէ տղակ ծնուի՝ վան-

քական անի: Տարւակ զլիսին Համառփիւռը ունենում է մի աղջիկ, որին անւանում են Մանուշակ: Ագդ օրւանից Ղետնդի կողջ միակ վասիազը վճռում է հնար գտնել իւր ուխտի կառարման, իսկ Ղետնդը երբ այդ խմանում է, աշխատում է, որ այդ իրեն պատին արատ բերող զործը դրուի չը զար:

Ղետնդ աղէն և Քաֆթառենց Մելքիսէթը, Աշտարակի այս երկու չար ողիները, զրդում են Երեանի սարդարի ախորժակը, խոստանալով նրան մեծ աւար, եթէ հրաման տաք դիւղը առ երևոթս մի օրով քօչացնելու: Սարդարը համաձանում է, որովհետեւ նրան խոստանում են և մի ուկէ գութան Գեարանենց տնից չափշտակելու և իրեն պարզմելու:

Սարդարի հրամանով սկսում է ք օ չ ը, որի բոլոր պատճառում աղէտները նկարագրած են Զ. և Լ. դլիներում: սրան է վերաբերում և արանչիների (զիւղի պահապանների) նկարագիրը, որ «Առուածաղկի» զեղեցկադոն զլուխներից մէկն է: Աշտարակից տարած աւարը շատ անճան է վինում, որովհետեւ Ծիրանաւոր եկեղեցու պահարանները պարսիկները չեն կարողանում ձեռք ձգել, իսկ ուկէ գութանի պատմութիւնը մի փոխարերութիւն է վինում, որի բացատրութիւնը տալիս է Գեարանենց պապը իններորդ զլուռում, ասելով, որ երկաթէ ծալրով ան փափոէ դութանը, որ ընկած է իրենց բակում, ուկէ գութան է կոչւում: Դաւագիրները խալսառակում են և ընկնելով խանի ոտները՝ թողութիւն են ստանում:

Քօչից ցետոց Ղետնը սկսում է հիւանդութեամբ հիւծւլը, նախըրչի Մանուկին զաշտում թուրք աւազակները վիրաւորում են, նա երկար ժամանակ անկողնին է ծառացում և իւր ընտանիքը նեղ վիճակի մէջ է ընկնում, որի հետևանքն է մինում նուշանի մա՞ր, Ղետնդի կինն էլ հիւանդանում է մերձ ի մահ, միան ազժմ քիչ կակղում է Ղետնդի սիրաը, Համասիւռը կշտամբում է նրան, խնդրում է իւս կենալ իւր չար զործերից և ջանալ կատարել իւր ուխտը՝ Վարդին տալ իրենց Մանուշակին: Ղետնդը խոստանում է, իսկ Համասիւռը մեռնում է որը թողնելով Մանուշակին: Ղետնդը գտանում է գիւղի քէօխավէն, իսկ Մանուկը նրա զզիրը. եսկու որբերը սկսում են խաղընկեր գտանալ: Գիւղը հանգստանում է, որովհետեւ Ղետնդ աղէն թողնում է առ ժամանակ իւր չարութիւնները և սկսում պարապել իւր կալածների մշակութեամբ և գիւղի բարօրութեան հոգսերով: Տէր-Մելքիսէթը չաջող հանգամանքն հասած համարելով, կամննաւմէ ջափշանել իւր հակառակորդին՝ Ղետնդին, որպէս զի կարող վինի միահեծան իշխոել և մենակ օղուիի: Սարդարը լսում է Ղարաքէշից ամբաստանութիւնը, Ղետնդին տանել է տալիս Երեան և Փալախացով պատժում: բայց սա կարողանում է ամոքել խանի սիրող և զարձեալ իրեն իշխան զառնում է Աշտարակ:

Չար ողին կրկին ուժով զարթնում է Ղետնդի սրտում, երկու խթան ավտոմ նրան բոռաջ են մղում, առաջին վրէժմանը զբացումն դէպի Տէր-Մելքիսէթը, երկրորդ՝ Սարդարին հաւատարմութեան ազացոցներ տա-

լրւ ցանկութիւնը, Ասրդարի հրամանալ գորք է հաւաքում զիւղից, պատուելով Տէր-Մելքիսէթի զիմակը և ցաց ասլով, թէ նա է այս դաւաճանութիւն պատճառը: Զօրաժողովի ժամանակ սպանել է տալիս Մանուկին, իսաց չի կարողանում մահացնել նրա որդուն՝ Վարդին, որին Տէր-Յարութիւնը որդեգրում է և սպանում: Քիչ ժամանակից լետոյ Դանդղը բերում է իւր աղջկանն էլ Տէր-Յարութիւնի տանը, նրան է լանձնում որ մեծացնի, որովհետեւ ազդ խղճի խայթին չէր կամնեում միշտ աչքի առաջ ունենալը Երեք մանուկներն էլ՝ Վարդը, Մանուշակն և Թորսուր, որ ծնողների ցանկութեամբ վարդապետ պիտի լիներ, միասին մեծանում են. նրանց մէջ զարգանում է փախաղարձ սէր և ծագում են խանդի առաջին նշովները, Մանուշակի համակրութիւնը հակում է դէպի Վարդը:

Այս մանկանց սկզբնական կրթարանի, Տէր-Յարութիւնի ուսումնարանի նկարագիրն էլ տալիս է մեզ բանաստեղծը 22-րդ զվարում: Ահա ազդ խիլ ժամանակում պատերազմ է բացւում վրաց Հերակլ արքացի և Երևանի Ասրդարի մէջ. պարսիկներն ստիպւած են վիճում իրենց հպատակների, հաւերի օգնութեան զիմելու: Սիմէօն կաթուղիկոս Աշտարակցին և Գէորգ խալֆէն հաշտութիւն են կահացնում. վրաց թագաւորը հավերի համար նըսպատաւոր պապմաններ դնելով՝ խաղաղութիւն է կապում. և դնում է կջմիածին ուստի, ալճանդից էլ Աշտարակ է դնում և հիւրասիրում է Գէորգ խալֆի տանը:

Հերակլի Աշտարակ եղած ժամանակը՝ մանուկ Թորոս-Ներսէսը, դեռ 8—9 տարեկան հասակում, խօսում է թագաւորի հետ և լաւտնում զրեթէ իւր ասպարազ գործունէութեան բոլոր ծրագիրը, զլ. 26. եր. 152, որ շատ անբնական է:

Վրաց թագաւորից լետոյ Աշտարակ ալցելութեան է գալիս Սիմէօն կաթուղիկոսը և Յուշի զիւղի թուրք մօլլան, որոնց ընդունելութիւնը մանրամասն նկարագրած է:

Վերջապէս որրացած Թորոսին (Տէր-Յարութիւնը քիչ ժամանակ առաջ մեռել էր) տանում են կջմիածին և աշտկերտ են տալիս. նա փախչում է վանքից և կրկին լետ է բերում: Այս առիթով Պոչշանցը տալիս է մեզ վարդապետների և առ հասարակ կջմիածնի նկարագիրը: Կջմիածնում Սիմէօն կաթուղիկոսը շատ հաւանում է Թորոսին, առիթ ունենալով տևանել նրա անմիեներ սիրան՝ նրա անունը փոխելով՝ Ներսէս է դնում: Ներսիսի նրա անմիենը սիրան՝ նրա անունը փոխելով՝ Ներսէս է կջմիածին, ուխտի ժամանակ վանքում եղած ժամանակի խանը գալիս է կջմիածին, ուխտի ժամանակ վանքում է շատ աղջիկ առեանգելու նպատակով, որ Ներսիսի ճարպիկութեամբ չի լարմի աղջիկ առեանգելու նպատակով, որ Ներսիսի ճարպիկութեամբ չի լարմի աղջիկ առեանգելու նպատակով:

Ներսիսի ափացութեան տարիների նկարագրութեան ժամանակ պատճեռ է Սիմէօն կաթուղիկոսի մահը և Ներսիսի քանի մի մանկական պատճեռ է Սիմէօն կաթուղիկոսի մահը և Ներսիսի քանի մի մանկական պատճեռ է Ներսիսի ճարպիկութեամբ աղջիկ առեանգելու նպատակով, որ Ներսիսի ճարպիկութեամբ չի լարմի աղջիկ առեանգելու նպատակով:

Տէր-Մելքիսէթը Ղեռղին երկրորդ թակարդն է լարում, կամհնաւլով փախցնել նրա աղջիկը խանի համար, սական ազդ չի չաջողում Վարդի քաջագործութեամբ։ Այս գիշերային արկածի ժամանակ Ներսէսն և Վարդը ճանաչում են միմեանց իբրև ախտեաններ և Վարդը չէ կամենում զիջանել Ներսիսի թախանձանքին՝ իրեն թողնելու Մանուշակին։ Դէպքը կարծես օգուում է տիրացուին։ Ղեռղի թուրքերի ձեռքով Վարդին փախցնել է տալիս գիւղից և ուղարկում Տաճկաստան, ուր նա աւազակների մի խումբ է կազմում։ Հայ գիւղացուն քրդերի ընդդէմ պաշտպանելու համար։ Աջէ մ Վարդանի անունը դողէ պատճառում քրդերին և սիրա և տալիս ընկճւած հաւերին։

Աշտարակում Վարդին կորած են համարում, Գէորգ խալֆի միջնորդութեամբ նշանում են Մանուշակին տիրացու Ներսիսի հետ, որ իւր մօր ուխտը կոտրելու մեջքը քաւելու համար սր. Կարապէս ուխտի է գնում։

Ճանապարհին քրդերի ձեռքից աղասում է նրան Վարդ-Վարդանը։ Ներսէսը չէ ճանաչում Վարդին։ Ուխտագնացութիւննից լեսոց անմիջապէս տիրացուն հարսանիք է անում և մինչև պսակի օրը սպասում է իւր աղասչին, որ նոյն օրը զափս է։

Մանուշակը հիւրերի մէջ ճանաչում է Վարդին և ուշաթափւում։ Վարդանի ով լինելը լայնուամ է։ Ներսէսը վեհանձնութեամբ հրաժարում է իւր հարսնացուից և նրա փոխարէն Վարդին են պսակում Մանուշակի հետ։ Պառաւ Մանուշատը տեսնում է վերջապէս իւր խօսքերի կատարումը և ասում է «Մ Ա Ռ Ե Մ Ս Ր. Կ Ի Ր Ա Կ Ո Ւ Ո Մ Ի Շ Ա Կ Ի Ն, Ք Ա Ս Ե Խ Ա Ս Ո Ր Ա Ս Ո Ւ Մ Է Ի Բ Գ Ր Ա Ծ Ը Ի Ց Ն Չ Լ Բ Ը Ը», (եր. 341)։ Վէպը վերջանում է ներսոների տապանաքարերի վշատակութեամբ։

Արդէն վէպիս բովանդակութիւը պատմելու ժամանակ որոշեցի ներսէսը կազմացրած տիպարներն ու նրանց բնաւորութիւնները, որ այժմ պէտք է միայն դասաւորել։

Գաղափարական և բանաստեղծի ստեղծած օրինակելի բնաւորութիւններն են՝ Գէորգ խալֆակ, Տէր-Յարութիւն, և այս երկուսի կանաչքը։ Խորիշան խանումը և Սուսամբարը. սոցա նման են իրենց շրջանում Շուշանը, նախրչու կինը, Համասփիւոն և իւր աղախին Մանուշատը։ Այս կարգին է վերաբերում և նախրչի Մանուկը։ Պատմական անձնաւորութիւններից գաղափարացրած է Սիմէօն կաթողիկոսի, Հերակլ վրացոց թագաւորի և Ներսիսի տիպարները։ Մանուկ Ներսէս 8 տարեկաննից սկսած արդէն իբրև մի հանճար է հանդիսացրած։ Ներսիսի հակառակորդը նմանապէս իդէալական տիպարի ներկազացուցիչ է. որբ, աղքատ, բայց բնական ինելքի և ուժի տէր Վարդը մի շատ համակրելի ներկազացուցիչ է իւր շրջանի։ Խնջը կոռածաղիկը, Մանուշակը, թէև մանկաւական հասակից մինչև ամսումնալը մնդ ներկազացրած է, բայց մի որոշեալ տիպարի աղջեցութիւն չի անում, նա անբնական է թւում մնդ.

Երկրորդ դասակարգի, աւտինքն վնասակար և չար տիպարի ներկայացուցիչները զվարապէս երկուսն են՝ Պանդ աղէն և Քաֆթառենց Տէր-Մելքիսէթն և իւր կինը, որի մասին միայն լսում ենք՝ թէ չար էր, բայց ոչ մի նշանաւոր գործով չենք ճանաչում։ Բուն սատանան Տէր-Մելքիսէթն է, նա անդեղջ չարն է, որ միշտ հաւատարիմ է իւր բնաւորութեան, նաև հաստատուն բնաւորութեան տէր է, ոչ մի արգելք նրան չէ կարող փոխել, իսկ Վանքը, թէև չար ձղումներ ունի, բայց դեռ ամոցի կարող է տալ լաւ զզացումների և, եթէ խթանահարներ չունենայ, կարող է փոխել։ Երկրորդական անձնաւորութիւնները «Առուածաղկի» մէջ բոլորն էլ գրեթէ բնութիւնից ևն վերցրած, ուստի և ամենաճիշդ նկարած բնաւորութիւններն են։ իբրև օրինակ՝ Վիշնք Փիլապոս ապէրն, Գալուստ Կողմանը, մահանեսին, սարդարը, թուրք իւղարշին, սարվաղները և այլն։

Վէպիս բարակական գաղափարն է ու խտի սրբութիւնը, ժողովրդի հաւատը՝ թէ գրածը չի ջնջւիլ և նրա հաստատութիւնը։ Աճափիսի քըրիստոնեակ ժողովրդի համար, որպիսին մերն է, այդ գաղափարը մեծ հրապուր ունի և մի բուն ժողովրդական զրողի լատուկ նուրբ զզացողութեամբ զտել է այս Պաօշեանցը, որի աչքի ընկնող առաւելութիւններից ամենամեծն հէնց ալդ է։ Պուօշեանցը ոչ միայն ժողովրդի հետև նրա պէս է զդում, աչև և նրա պէս է արտաչափում իւր զգացածը։ Սրա հետևանքն այն է, որ նա շատ հեշտութեամբ հասնում է վիպականիրականին (օբյետն)։ Նա, օրինակ, երազն այնպէս է պատմում և այնպէս է նկարագրում նրա հետևանքը, որ ընթերցողը չէ նկատում պատմողին, այլ կարծես ժողովրդի հետ է խօսում և իւր աջերով տեսնում (տե՛ս գլ. 13)։ Ափսոս սական, որ մեր արդէն մատնանից արած թերութիւնը, այն է՝ հրապարակախօսի լեզուն, ձեւըն ու գարձւածները բոլորովին անհետացնում են ալդ զգացումը։

«Առուածաղկի» գրեթէ ամեն մի գլուխը սկսում է այնպէս, ինչպէս մի որ և է այժմեան հայ լրագրի բանասիրական կամ առաջնորդող լողւածը։ Օրինակ, երրորդ զլուխն սկսում է՝ «Հալոց աղզի պատմական վշատակարաններին ծանօթ լինողը, նրա կրած անհամար թշուառութիւնների նկարագիրը իմաստասիրովը մեծապէս կը զարմանալ, եթէ մի հետաքրքիր հաժացք ձգի նոյն աղզի ընտանեկան կեանքին»... (իր. 11—15)։ Այս ամբողջ զլուխմէլ ինչ բանի մասին ասես չէ խօսում—հայկական աւել ք ակն և ը ի, խաչքար և ը ի, գիշերւան և ցիրեկւան ժամանակի որոշման մասին և ազն։ Գլուխը վերջանում է այս խօսքերով։ «Յէստեղ, ընթերցն առ և ը երեսս խաչակնքեցի, ուռ էլ ինձ հետեիր»։ Եթէ այս զլուխը բոլորովին հանենք, ոչ միայն չի խանգարուիլ վէպի ընթացքն, այլև նկատելի անգամ չի լինիլ, ընդհակատակն ազմ կարծես մի օտար ձեռք է մոցրել ալդ վէպը խանգարելու համար։ Աւրիշ օրինակներ չեմ ցանկանում բերել, ցանկացողը ինո՞ւ կարդալ զլ. Ե. Ի. (Հակատանի համեմատութիւնը

Նվէցարիակի և Խոտալիակի հետ) ԽԵ. ԽԵ. և ալճ. Պուօշեանցի «Սօս և Վարդիթերը» համեմատաբար աւառել աղաս է պատիսի աւելորդարանութիւններից և ճամարտակութիւնից (Փրազօքտեօ), իսկ «Առուածադաղիկ»-ն ու «Հացի խնդիրն» այդ կողմից մըցում են միմեանց հետ. Աչսպիսի վիալական գաղափարին և պահանջին բոլորովին վնասող շատախօսութիւնը Պուօշեանցի ամենամեծ պակասութիւնն է, որ արզինք է անշուշտ նրա հրապարակախօսական ճգումնեմներին և պարապման, աճնակէս որ, ևթէ մեզ լուսնի չը լինէր թէ նա գրել է լրագիրներում, այդ կ'նշակացնէինք իւր վէպերից. Այս վէպով կամնաւմ է Պուօշեանցը Աշտարակում ծնւած հայ մեծ մարդկանց «իշառուակն անմահացներ», եթէ ուղիղ ենք հասկանում, նա ուղում է այդ մարդկանց կնանքն ու ճգումները մեզ ներկացնել. Իւր նիւթն առնում է մի աճնպիսի պատմական շրջանից, որ մի մեծ իրողութիւն էր պատրաստում. ուրիմն «Առուածադղիկ» վրայ պիտի նակնք և իրքի պատմակ ան վէպի վրա:

Պատմական նշանաւոր անձնաւորութիւններն են Ներսէս և Սիմէօն կաթողիկոսները և Հերակլ վրաց թագաւորը. Այս երեք անձնաւորութիւններից վերջին երկուսը քիչ տեղ են բաւում վէպիս մէջ. Սիմէօն կաթուղիկոսը ներկացրած է իբրև մի սրտացաւ և ժամանակի պայմանները լաւ հասկացող և ըստ անմ վարւող եկեղեցական. Նրա միան այն գործերն են թւած, որ մեղ լաւոնի է պատմութիւնից—եկեղեցական ժամանակագութեան կանոնաւորելը, թղթի գործարանի հիմնելը և Զամբռի լորինելը. Բանաստեղծի երևակալութիւնը ստեղծել է միայն այն տեսարանի նկարագիրը, ուր կաթողիկոսը հաշտութիւն է կաչացնում վրաց և պարսից մէջ, որ բաւական անգոտն է. իսկ երկրորդ՝ նրա խանին ընդունելն և իւր ացելութիւնը Աշտարակ գիւղը:

Վրաց թագաւորին, Հերակլին, ևս չառ անդոն է նկարագրել բանաստեղծը. ևթէ «Առուածադղիկն» լսենք, Հերակլը միայն հալոց աղատելու համար էր եկել սպատերազմի, որոնց համար քանի մի թեթևացուցիչ պայմաններ կապնելով Սարդարի հետ, գնում է էջմիածին ուխտի: Բայց բանաստեղծը մի նոր տեսարան է ստեղծել Հերակլի կեանքից. այն տեսարանն է, որ Հերակլը հանդիպում է մանուկ (8—9 տարեկան) Թորոս Ներսիսին և ուր նրա հետ (՞՞՞) խօսում է պարսից բարբարոսութեան, նըրանց վանդելու և գաղթականութեան մասին: Խոստովանում եմ, որ այս տեսարանը ոչ արքայական է, և ոչ էլ իշխանական: Հերակլը կարծես թէ մի Թիֆլիսից գնացած հայ խմբագիր է, իսկ Թորոսը՝ հաւոց դպրոցն աւարտած և լրագրի թղթակցող մի 18—20 տարեկան պատանի:

Ուշագրութիւն գարձնենք Ներսիսի կամ Թորոսի պատկերի վրայ: Ի մանկութենէ արդէն նա մեծ բաների ճգուղ է, բայց որ զվասարն է՝ աւլի հակումն է ցոյց տալիս աշխարհական կեանքի: քան թէ հոգեորական: Թորոսի վաճքում արած քանի մի մանկական չարտութիւնները հաւանական:

Են և առնւած անշուշտ առանդութիւններից (փախչելը, կատուին պատմելը), իսկ նրա հերոսութիւնները և արիական որտի ասպացոցները, թւանքչիներին կանչելը, առևանգուղ աղջկան աղատելն և աչճ, թէև աղքատ, բայց աջու ամենալինիւ ստեղծագործութիւններ են, որոնք համաձայն են բնութեան։ Ներաէս տիրացուի կեանքը Աշտարակում և նրա անդործութիւնը զրեթէ անհասկանիլի է, որովհետեւ այն մարդը, որ ապազայում անդադար և առանց հանգստութեան գործող է, որ միշտ մեծամեծ բաների է ձգտում, չէր կարող հէքիաթներ լսելով անցնել իւր ժամանակը, թէ արդեօք պատմական աւանդութիւն է Ներսիսի, նշանւելն ու սուրբ Կարապետ ուխտի գնալն, թէ մուսացածին՝ ինձ լաւոնի չէ, միայն ապաքանո նկատելի է, որ Վարդի Վարդանանալն և Տաճկաստանում քաջութիւններ անելը լիշեցնում են մեզ Աղասուն և ենթալրել են տալիս, որ այս էլ Արովեանի հետեղութիւն է։ Գալով նովն իսկ պատկի աւուր մէջ կատարւած իրողութիւններին, Ներսիսի իւր հարսից հրաժարւելու և Վարդին ընծակելուն, այդ թէ անբնական է և թէ ոռմանական։ Ներսէսը սիրում էր աշխարհը, հասել էր իւր ցանկացածին և սողաէս զիւրաւ հրաժարում է ամենալի ինչից և վանք է գնում։

«Կոռածածաղկում» Պոօշեանցը փորձում է հակառակ իւր տաղանդին, որ գէսի իրականը ձգտումն ունի, ոռմանական դառնալ, սակաբն չ'ունենալով արտակարգ երեակացութեան ոժ, ընկճւում է։ Պոօշեանցի բոլոր ըստեղծագործութիւնների մէջ, ուր նա առօրեակ իրականից հեռանում է և ստիպում է երևակացութեամ դիմել, տեսնում ենք միշտ մի թուլութիւն։ Պոօշեանցը չունի հարուստ երևակացութիւն։

Ասածներիցս հետեւում է, որ այս վեպը չէ կարող իսկական պատմական վէպ համարւել, որ կենդանութիւն է տալիս անցեալին, ուր գործող մարդիկ մարմին, արիւն և հողին են առնում և ժամանակը կենդանանում է։ «Կոռածածաղկի» մասին պիտի նորն ասենք, ինչ ասացինք «Սոս և Վարդիթերի» և «Հայի Խնդրի» մասին։ եթէ նրանց մէջ բանաստեղծը աշխատում էր տալ մեզ մի որոշեալ ժամանակի կեանքի բոլոր սովորութիւնների նկարագիրը, այստեղ էլ նա աշխատել է տալ բոլոր իւր լսած աւանդութիւնները մերձակազ անցնեալի մասին, նրանց կորսից աղատելու համար։ Ուրեմն եթէ առաջին վէպերը սովորութիւնների շտեմարան էին, «Կոռածածաղկին»—աւանդութիւնների։

Տեսնենք աչժմ թէ ինչ աւանդութիւններ են մեզ աւանդածները «Կոռածածաղկի» մէջ և ինչ պատմական արժէք ունին նրանք։ Պատմական հետազոտութեան նշոյն անզամ չը կա։ վէպիս մէջ, ինչ պատմական իրողութիւն պատմած է, բոլորն էլ աչդ համառօտ ձեռվ մեզ լաւոնի է։ իսկ նորութիւններ են բազմաթիւ լէզէնդները (légende) և զաւէշտական պատմութիւնները (առեծոտ), օրինակ, արդար Դաւթի, Փռանդ վարդ աղետի, կատուն իրի, նահատակի գերեզմանի, քէշիշ մաղա-

րու, ընկնաւորի և ազն պատմութիւնները, Այս ամենը վէպին առաւ և լի խանգարում են, քան թէ նրան ճոխացնում:

Եղբափակելով խօսքներս, պիտի ասենք, որ «Կռուածադաղիկը» իբրև պատմական վէպ՝ շատ անխջաղ է, բայց իրեւ ժողովրդական կհանքի որոշեալ շրջանի նկարագիր և շատեմարան նրա հաւատալիքների և սնոտիապաշտութիւնների, կարող է Պոօշեանցի միւս վէպերի չարքում երրարդ տեղը բռնել: Գալով «Առուածադաղիկ» գրութեան ոճին և լեզուին, պիտի խոստավանենք, որ սա ամենից անմշակն է. Էլ ինչ ասես բանասանեղծը չէ խառնում այս վէպում՝ Նվէցարիա, Ավազովսկի, և բրոպացիք և ազն, իսկ լեզուի վրաց ուշք չը դարձնելով՝ գործ է զնում այնպիսի դարձւածներ, որ չասուկ են միդ օրաթիւերին, Յաւում եմ, որ տեղի սղութիւնը թուլ չի տալիս օրինակներ բերել:

❖

«Ե Ա Հ Ե Ն»

Կին, ո՞սպէսի մըրեկ վտանգաւոր խորհրդները
Զարթուցանում ես դու այժմ իմ խաղաղ կըծում,
Հոգուս ներքինն ամբողջ արեկն ես դարձնում...
Վիշ. Տէլ. Հանդէս Խ. տեսիլ 2. ա. 296—298..

Պոօշեանցի այս վլապատանութիւնը վերջինն է մինչև ցարդ հրատարակածներից և իւր գրութեան նիւթով ու ոճով տարբերում է առաջիններից: Երեք նախընթաց վէպերի նիւթն առել էր բանասանեղծը Արարատեան գաւառի և մասնաւորակիս Աշտարակ դիւղի կեանքից. լոլոր այդ վէպերի գործողութիւնն էլ կատարւում էր նուն գաւառի շրջանում, «Շահէն»-ի նիւթն ընդհակառակն առնւած է պարսկահայքից, իսկ նրա մէջ պատմւած գործողութիւնները կատարւում են զրեթէ ամբողջ արևելիան Ուուստանում, սիսած Մոսկովից մինչև Երասիս:

Նախընթաց վէպերի մէջ Պոօշեանցը նկարագրում էր գիւղական կեանքի զանազան երեսները, միան բացառութեամբ և հարևանցի կերպով տալիս էր մեզ նաև երկրի Երևան և Էջմիածին նստող մարմնաւոր և հոգեոր վարիչների պատկերը, որ սակաէն իւր նպատակի երկրորդական պահանջն էր: «Շահէն»-ում թողնում է արդէն Աշտարակն էլ, Էջմիածինն էլ, Երևանն էլ և զիւղացիներն, վարդապետներն, խաներն ու մոլովներն էլ և նկարագրում է մակուաքաղաքի ուսանողին, կոմսուհուն, պանդոկապետն, բժշկին, հիւպատուին և աշն:

Բայց «Շահէնը» միան իւր նիւթով ու գործողութեամբ կատարւող հեռաւոր տեղերով չէ զանազանուում իւր նախորդներից, այս իւր արտաքին ձևով, գրութեան ոճով է զանազանուում: Առաջին վէպերի մէջ պատ-

մողը հեղինակն ինքն էր, որ առանձին վերտառութիւն ունեցող զվանեարամ պատմում էր ամբողջ վեպը, «Շահնշահ»-ի մէջ նախ՝ զվաները վերտառութիւններ չոնին և երկրորդ պատմողը հեղինակը չէ, ազնուն իսկ վեպի հերոսը, թէս ինչպէս կը տեսնենք՝ շեղումներ կան:

Այս վեպի նիւթն առած է նոյնպէս մի լաւանի պատմական շրջանից և աշատեղ փշտում են որոշեալ պատմական անձներ իրենց գործերով, ուստի և պէտք է սրա վրայ նայենք նաև իբրև մի կէտ-պատմական և կէտ-ժամանակակից վեպի տեսակիտից:

Ցեսնենք ինչքան է լաջողւել Պոօշեանցին իւր որոշեալ շրջանից և զրութեան ոճից շեղումն՝ «Շահնշահ»ի համառ օս բովանդակութիւնն հետևեալն է:

Շահնշահ, վեպի հերոսը, մի բժիշկ է, նա գանւում էր ծառայութեամբ ջարսկի-հօլողցում իբրև զինուորական բժիշկ, երբ ալնտեղ է համառ մի լուսանկար իւր արւեստով պարապելու համար, բայց հիւանդանալով ստիգմում է դիմել զինուորական բժիշկի օգնութեան, որ նրան տեղափոխել է տալիս սպաների հիւանդանոցը և մեծ զթով ինսամում է: Հիւանդը սկըսում է առողջանալ, բայց մի տեսակ թախիծ զեռ արգելում է նրան բոլորովն կազդուրելու, բժիշկը զրա պատճառն համարում է հիւանդի հայրենական կարօսը, ուստի մի կերպով նրան միիթարելու համար, հաչ վաճառականներ է ուղարկում իւր հիւանդին տեսութեան, բայց նա դարձեալ մեռում է անմիտիթար, որովհետեւ մի գաղտնիք էր գուշակել իւր բժշկի երիսից, որին կամենում էր անպատճառ տեղեկանալ: Բժիշկը վերջապէս բայցում է և մկանում է պատմութիւնը:

Բժշկի պատմութիւնը սկսում է ոռուս-պարսկական վերջին (1828) պատերազմից քանի մի տարի առաջ: Սալբատորի մօտիկ Ասլանիկ գիւղում ապրում էր մի նահապետական ընտանիք, այն մեծ և համերաշխ ընտանիքներից մէկը, որի մասին կարելի է գաղափար ստանալ միայն Հայաստանի զիւղերում: Այս ընտանիքի վլիւաւորներն էին տան մեծ եղբարը՝ Արքահամը և նրա կինը՝ Սալբին: Սրանք ունեին մի մինուճար որդի Շահնշահ անունով, որ, հակառակ տեղական սովորութեան, զեռ չէր ամուսնացած, չը նայելով հասակն առած լինելուն (18 տարեկան):

Շահնշահ չ'ամուսնանալու պատճառն այն էր, որ նա սիրահարւած էր իրենց գիւղացի Սահրաալ անդրանիկ աղջիկ Սուսամբարի հետ, որ ծնւել էր Սահրաալ աւաշջին կնոջից՝ Մարիամից: Արքահամը գիւղի իւր որդու զաղունիքը, որովհետեւ զիւղերին հետեւում էր որբահար զուգերի ացցելութիւններին, որոնց մէկի ժամանակն էլ վիրաւորել էր ինքը Սուսամբարին աղտանել կամինալով Սալբատորնի մի հարուստ պարսկի Ալի և Հիւանձն ծառաների ձեռքից, որոնք եկել էին աղջկան առեանգելու: Դիպւածն անպիս էր լաջողել որ Շահնշահ կարողացել էր Սուսամբարին խել պարսիկների ձեռքից և լիո բերել իւր հօր տունը: Շահնշահ գաղանիքն արգէն բայցւած էր իւր ծնողներին, այժմ Սալբի բաջին էլ զիսէր այդ: Սական

ծնողները տագնապի մէջ էին, նրանք չէին կամննում, որ ալդ ամուսնութիւնը տեղի ունենաց, որովհետև մի գաղտնիք ունէին: Մարիամը, Սահրատի առաջին կինը և Սուսամբարի մայրը, Աբրահամի և Սալի բաջուերիտարդական մեղաց պատուղն էր, որին նրանք ուրիշի էին տւել իրեւ զաւակ, բայց իրենք էին պսակել և միշտ խնամում էին: Շահէնին և Սուսամբարին աւս գաղտնիքը բայտնուում է միաւն այն ժամանակ, երբ ոռու-պարտկական պատերազմից իւսուց պարսկահայերը գաղթում էին Լազրեֆ հայ գնդապետի առաջնորդութեամբ և Շահէնը Սուսամբարին գիշերով փախցրել էր իւր գաղթական հօր մօտից և կամննում էր վերադարձնել հայրենիք. բայց Աբրահամը վրայ համենելով, արդելել էր թէ աղդ և թէ Սալմաստոցի հաջու առեանդողների դործը, սպանելով նրանցից մէկին:

Սիրահարներն լսում են Աբրահամի գաղտնիքը և հնագանդւելով ձակասազրին՝ բաժանում միմեանցից: Գաղթական հայերը չն զանում Աւատեաց երկիրն Երասխի միւս կողմում և ըստ մեծի մասին զո՞ն են զնում զանազան հիւանդութիւնների. նրանցից շատերը վերադառնում են հայրենիք, սրանց թւումն է լինում և Վահրատը: Վական Ասլանիկ դիւզը զո՞ն էր եղած արդէն Սալմաստոցի հաջի Սէփիդ Հասանի վրէժինդրութեան, Աբրահամը և ամբողջ իւր ընտանիքը խողխողւած էին, երբ Սահրատը զսաւ նրանց և իւր աչքերով տեսաւ Շահէնի վրիժուց զործը, Հասանի զլուխը, որ Շահէնը մերձ իմահ Աբրահամին բերաւ և ցուց տւաւ: Սահրատը և Շահէնը անկեալներին թաղելուց իւսուց, անցան Ռուսաստան—Շահէնը՝ Թիֆլիս, իսկ Սահրատը՝ Թմրուլ: Շահէնը ծառայ դառնալով Տէր-Ղուկասեանց մժշին, գնաց Մոսկով, ացնոեղ սկսաւ ինքն իրեն և ապա ուրիշների օդնութեամբ ուսանել, քննութիւն տւաւ Լազարեան ճեմարանում և ապա մտաւ համալսարան՝ բժշկութիւն ուսանելու: Խճամակալի մահը ստիպեց նրան ճաշկելու աղքատ ուսանողի կեանքի բոլոր դառնութիւնները և քաղցրութիւնները. նա մի առ ժամանակ ապրեց պարսկական հիւպատոսի ողորմութեամբ և իւսուց զասերով, որից օպաւել չ'իմանալով՝ զարձեալ ընկաւ իւղանութեան մէջ: Ալդ միջոցին նա ուսումն աւարտեց և ուղարկեց ժամանակամբ բուժելու Ռուսաստանի դաւաններում, ացնոեղ առիթ ունեցաւ գտնելու մի գերմանուհի կին, որ նրան սիրում էր, բայց չ'ամուսնացաւ, իւր Սուսամբարին տաճ խոստումը պահելով և հայրենիք վերադառնալ ցանկալով՝ Շահէնը դառնում է Թիֆլիսում հոչակաւոր բժիշկ: պատահամբ կանչում են նրան Սահրատի տունը Սուսամբարին բժշկելու և ճանաչութիւն են տալիս: Ազդ միջոցին արդէն Սահրատը պարզել էր Սուսամբարին Աբրահամի գաղտնիքը, լայտնելով՝ որ իւր առաջին կինը Մարիամը չէր Աբրահամի և Սալլու աղջիկը, որ ծնունդից իւսուց շրւտով մեռել էր և նրան մի ուրիշով էին փոխանակեւ: Ուրիշն արդելը չկար Շահէնի և Սուսամբարի ամուսնութեան և վրաւի նրանք ամուսնանում են: Շահէնը բժիշկ է նշանակւում կուբանի հովտում. ալսուեղ նա առիթ է

ունենում չերքեցաց ած հակերին օգնելու իրենց ազդութեան և եկեղեցուն վերադառնալու. Այս զետքից վետոյ նրա ծառապութեան տեղը փոխում է և նա առիթ է ունենում, ներսէս կաթողիկոսի միջոցով, օգնելու Ուտի աց ին երին իրենց հարբենի եկեղեցուն հաւատարիմ մնալու. Շահէնը տեղափոխում է Լակողէս՝ իրեր զինուրական բժիշկ. նրա ընտանիքը գերի է ընկնում Շամիլի ձեռքը և Արքահամիկ որդին Ալազան է ընկնում և կորչում. բժիշկն անուհետեւ անմիտիթար շարունակում էր իւր պաշտօնը մինչև հիւանդ լուսանկարին հանդիպելը, որ այս պատմութիւնը լսելով՝ լազանում է թէ ինքն է Արքահամիկը, որ Ալազանից դուրս գալով ընկնում է Գնչուների ձեռքը, վետոյ Աշտարակ և ապա կրթւելով ներսէս Յ.-ի խընամքով Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում և ճանապարհորդելով Լակողէիսում՝ դտաւ իւր ծնողներին, որոնք չը զիմանալով այդ բուռն զգացման մեռան, որոնց հետեւ և Արքահամիր: «Շահէնի» վերջին զրուխն ապագէս է աւարտում. «Ավտոնն, իմ աղնիւ ընկեր Արքահամին, մի շարաթ ես Յարսկի-Կոլոդցումը նրա մօտ էի, նրա նամակն ինձ կանչեց Թիֆլիսից, Շահէնի բալոր պատմութիւնը նա ինքը կրկնեց ինձ և իմ կուանը հոգին աւանդեց»:

Այս ամբողջ պատմութիւնը, ուր բազմաթիւ միջնավիճակեր ևս կան հաջ գաղթականութեան, իւաչագողութեան, ուսանողութեան, ժանտախտի, Շահէնի իւր մաս ին, ունի 211 գլուխ և բավանդակւած է 262 ութածալ երեսում:

Վիպասանութիւնս իրաւամբ կոչւում է «Շահէն», որովհետեւ ինչքան էլ բազմաթիւ անձեր լինին գործողութեան մասնակցողները, նրանք ամենքն ել գրեթէ ծառապում են Շահէնի կեանքը լուսաբանելու, մինչև անդամ Յուսամիարը, վեպիս կին հերոսը, անգան վետ է մղում և անքան դըգողն է, որ հաղլւ է նկատուում. Հեղինակի մտաղութիւնն է մեզ պատկերացնել միացն Շահէնին, իսկ միւս անձերը հարևանցի են վիշտած միացն:

Այս վերջին տիպարներից նշանաւոր են՝ Արքահամը, Սալլին, Սահրատը, Արքահամին և Սալլին այն զիւղական ընտանիքի սիւներն են, որոնք դարերի ընթացքում հայ ընտանիքը պահել են իւր սրբութեամբ. Նրանք թէ երիտասարդական մի մեղք ունին, բայց ամենալի տանջանք պատրաստ են կրելու, որ այդ զաղոնիք մնայ և օրինակ չը ծառալի իրենց որդւոցը. Արքահամի նկարագրութեան մէջ նկատուում է անբնականութիւն և նրա Շահէնի գաղտնիքների հետեւելը անհերքելի ու մանտիք կերպարանք ունի, որ անբնական է մի աչնակիսի ծեր նահապետի համար, որպիսին Արքահամին է. Արքահամը մի քսան և հինգ տարեկան երիտասարդի նման կուում է Հիւսէնի և Ալլի հետ, գնդակակոծ է անում նրանց, հիւսեռում է և կալծակի արագութեամբ գտնում Շահէնին. Ռոմանտիք է նաև Շահէնի հաջի Աէփդի գլուխը բերելը և Արքահամի վետոյ մեռնելը. Զարմանալի մի տիպ է և Սահրատը, եթէ առենք շահասէր, այն ժամանակ անհասկանալի է նրա Շահէնին երկար ժամանակ պառելը. նա աւելի մի պարզամիտ զիւղացի է և

լեռու քաղաքացի արհեստաւոր, որ կեանքն աշնակէս և ընդունում, ինչպէս կալ և ըստ հանգամանաց փոխւում է:

Ինչ վերաբերում է բաղմաթիւ անձերի, որոնք գործող անձերին չարքումն են, նոցա մէջ առանձին տիպեր չը կան, այլ չառաջ են բերւոծ իրրե հանրածանօթ սովորական տիպեր, իրրե զարդարանք գործողութեան: Աւսպէս են՝ Հաջի Հասանը և նրա գործիները, Ալին և Հիւսէլինը, բժիշկ Տէր-Գուկասեանցը, խաչաղողները, ուսանողները, Վարժառա Վասիլեան, պանդոկապետը, զալանչին, կոմուհին, ոռու քահանաները, գերմանուհին և գնչուները:

Սոցանից լւրաբանչիւրն հարեանցի և քանի մի խօսքելով իրենց որոշեալ տիպն ունին, Հասանը, Ալին և Հիւսէլինը իրաւունք չը ճանաչող և քրիստոնեաների ընտանեկան սրբութիւնը պղծող, բայց և երկչու պարաիկներ են. բժիշկ Տէր-Գուկասեանցը, որի գործերը չենք տեսնում, բայց Շահէնի հետ վեհանձն վարուղութիւնից, իմանում ենք, որ նա գիտուն է և աղնիւ: Խաչաղողների մասին պատմելով աւանդորէն չալսնի քանի մի սխրագործութիւններ և նոցա պարապմունքն ու հայրենիքն վշատակելով կամենում է մեղ մի պատկեր տալ նրանց կեանքի, որ շատ թուզ է: Աւսանողական կեանքը չալսնի երեսում է, որ Պոօշեանցը ի լուս է նկարագրում, ուստի և աշնակ կարդում ենք ամենաճ տեսակ ուսանողական կեանքի մասին պատմւած իրողութիւններ, օրինակ, նրանց խեղճ և անհող ապրուստի նկարագիրն և կանացի օգնութիւնները Վարդառա Վասիլենաների նման լւացրարներից և կոմուհիներից: Շատ բնական է այս նկարագրութիւններից պարակական հիւստոսոսի զալանչու նկարագիրն: Շահէնի բժիշկ ժամանակ պատուած անձերի նկարագիրներից նշանաւոր են՝ ոռու զիւզականների, քահանակի, զերմանուհու և Անլիկեանի նկարագրութիւնները:

Բանաստեղծը թափառելով իւր հերոսի հետ ամենաճ կաղմն և անցնելով կեանքի շառ չերտերից՝ առիթ է ստանում աշնակ պատկերացնելու այդ, բայց ուր նա հետանում է իւր գիտած շրջանից, գիւղական կեանքից, ամենաճ տեղ էլ ի լուս նկարագրողի տպաւորութիւն է թողնում:

Շահէնի բարողական գեղեցիկ զաղափարն է սիրու հաւասարմութիւնը և հալրենասիրութիւնը: Բանաստեղծը ալս վիստասանութեան մէջ մտցրել է իւր բոլոր profession de foïs-ն. Եթէ մէկը կումնասի խմանալ թէ Պոօշեանցը ինչ է մտածում զաղթականութեան մասին, ինչ հակեացք ունի Ներսէս կաթողիկոսի և Լազրեփ զնդապետի մատնակցութիւնների մասին պարուկական զաղթականութեան մէջ, թող կարդալ «Շահէնը», Մինչ անգամ փորձեր է անում աղատելու Ներսիսին դաստապարտութիւնից: Այս վեպից կարելը է տեղեկանալ և նրա կրթութեան, աղնուութեան, ուսանողութեան, ընտանեկան որբութեան, օտարի հետ ամուսնանալու, օտարացեալ հաւ քրիստոնեաներին զարձնելու և մինչև անդամ կաթողիկ

միսիոնարների մասին Ստական այս ամենը զուրու վիճելով բանասեղծութեան շրջանից, իմ կարծիքով շատ տեղ բռնադատելով և արաւոմ ընթերցողին և ձանձրացնել կարող էն՝ իրքն անհատական կարծիքների պաշտպանութեան:

Այս վեպի մէջ էլ պակաս չեն միջնավէտերը, օրինակ, Թաղիաղեանի նամակը, որ ամենեւն ներքին կատ չունի վիպասանութեան հետ: «Հանէն»-ը ամբողջապէս միջնավէտերի մի շարապարտութիւն է. Պոօշեանցը ինչ լուր է ուսանողների, խաչապրզների, Արմավրցիների և Ռւոլիացիների մասին վէպի ձևով կապակցել է և մեզ է տեհլ, ոչ եթէ նպատակ ունենալով Հանէնին մեղ ներկապացնելու, այլ առիթ ունենալու. խոր լսածները և տեսածները պատմելու:

Պոօշեանցը մեղանչում է իւր ընտրած ձեւի դէմ անգամ. պատմութիւնը պատմողը բժիշկն է, ստական հեղինակը դարձեալ զառնում է ընթերցողին և ինքն է խօսում նրա հետ (եր. 71. 213), նա չէ կարողանում ընթերցողին մոռանալ:

Թ2.

Պոօշեանցի լոլոր ցարդ հաստարակւած վէպերի ուսումնասիրութիւնից հնուեալ եղրակացաւթեան ենք զալիս: Պոօշեանցը բառի բուն նշանակութեամբ, ժողովը դական բան բան սատեղ է, որ զիտէ ժողովլովի զդացումներն և կեանքը իր լեզուով և ձևով արտադարտել: Նա լաւ ճանաչում է Արարատեան գաւառի ժողովրդի կեանքը, որ և մեղ ներկապացնում է «Սոս և Վարդիթերի», «Հացի Խնդրի» և մասամբ «Արուածադիր» մէջ. սրանով այդ վէպերը շտեմարան են մեր ազգավճն կեանքի ուսումնասիրաթեան համար: Իբրև բանաստեղծ, Պոօշեանցը չունի հարուստ երեակացութիւն և մինչև անզամ ազքատ է երևակայութեամբ, բայց զրա փոխարէն շատ զարգացած է նրա դիտողութիւնը և չի շողութիւնը, որով նա իւր բոլոր տեսածներն ու լսածներն լուսանկարչական ճշդութեամբ կարողանում է նկարազերել:

Նա իբրև վիպասան իրական ուղղութիւն ունի, բայց գտնում է Արքեանի դաղափարական ուղղութեան ազդեցութեան տակ և տեղ ուղարկութեամբ է ցոյց տալիս. ստական երևակայութեամբ, բայց զրա աղքատութիւնը բոլորին չէ թողնում նրա մէջ այդ ձգտման զարգացումն:

Իբրև պատմական վիպասան, Պոօշեանցը շատ ստոր է կանգնած, որովհետեւ կեանքի ուսումնասիրութիւն չէ արել անցեալի համար, նրա պատմական վէպերի փորձերն անկենդան են և աւանդութիւնների շտեմարան:

Պոօշեանցի վիպական օճը ժողովրդական է, բայց տեղ տեղ վարդապետականի է փոխում և շատ է վիպատմ նրա գործերին: Գեղարկեստական ճաշակը բանաստեղծի զեռ չէ զարգացած, թէև աստիճանաբար փոփոխութիւն նկատելի է:

Լեզուն ճոխ է և ամփոփում է իւր մէջ Արարատեան բարբառի բոլոր ճոխութիւնները, ափսոն սական, որ հեղինակը տեղ տեղ ենթարկւում է օրաթերթերի սիալ լեզուի պակեցութեան:

ԱՐԵՔԱՆԱՐ ԱՎԱՅԵՐ ՎԵՐԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԵՐԸ

Ուսւածք

Կ. ԵԱՂՈՒԲԵԱՆՑԻ.

(ՅՈՒԻԱՆ ԱՌԱՋԻՆ)

ԴԱՏԱԽԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ¹⁾

Судъ скорый, правый и милостивый.
Յրազ, արդար և ողորմած զատաստան:

IV.

Նոր դատաստանի հիմնական սկզբունքները, իրաւոնքների և պարտաւորութիւնների հաւասարութիւն օրէնքի առջև, արդե քաղաքացու իրաւոնքներ և պարտաւորութիւններ. դատաստանի գլխաւոր պաշտօնը և նորա յատկութիւնները. ներքին և արտաքին անկախութիւն և ինքնուրոյնութիւն. Վերահսկումն:

«Դատարանի առջև բոլոր հպատակները հաւասար են — ահա այն երկրորդ զինաւոր սկզբունքը, որ Աղէքսանդր II կայսեր դատաստանագրքերը ձգում են պատւաստել ուսաց կեանքին:

Մինչև դատաստանական վերանորոգութիւնը՝ Ուսասատանում չը կար ամենքի համար հաւասար դատաստան; Մեծն Պետրոսի ժամանակներից կազմեցան Ուսասատանում դասակարգերը (составія) և Կատարինէ II-ի օրէնքներով այդ դասակարգերը պետական կազմակերպութիւն ստացան. նոյն ժամանակներից էլ սահմաննեց դասակարգական դատաստան: Ազնւականների գործերը քննում էին գաւառական (уездный судъ) և նահանգական (важнейший земский судъ) ազնւա-

1) Տե՛ս «Մուրան-ի առաջին համարը»:

կանների դատարաններում։ Քաղաքի բնակիչները (զիլիիական վաճառականութիւնը) ունէին իրենց համար առանձին դաւառական և նահանգական դատարաններ (յեզծանի և ցեղեական մագիստրատուր)։ Վերջապէս զիւղացիք էլ իրենց համար առանձին ներքին (գաւառական) և վերին (նահանգական) դատարաններ ունէին (այժմայ և վերքոյ քառականացարան)։ Այդ բազմաթիւ դատարանները միմիացն իրենց դասակարգերի վերաբերեալ գործերն էին վճռում։ Եթէ հարկաւոր էր լինում վասոն գործեր քննելու, օրինակ՝ ազնըւականի և զիւղացու մէջ ծագած վէճը, այն ժամանակ երկու դասակարգերի ներկայացուցիչներից կազմում էր մի խառն դատարան (ըմբանական սյուծ)։ Բացի այդ, ամեն դասակարգ ինքն էր ընտրում իւր դատաւորներին իւր միջից։ Ուստի այդ տեսակէտից ևս հին դատաստանը լոկ դասակարգական էր. օրինակ՝ քաղաքացին չէր կարող զիւղացու դատաւոր նշանակւիլ կամ ընտրւիլ։

Այժմն ամենքի համար մի դատաստանէ սահմանւած։ Ամեն մի անհատ իրաւունք ունի պահանջնելու, որ իւր դատը այդ ընդհանուր (ordinaire), ամենքի համար միևնոցն դատարանում քննւի և վճռւի։ Այժմեան քաղաքակրթութիւնը խորութիւն չէ զնում քաղաքացիների մէջ, չէ ջոկում ազնւականը ռամիկից, քաղաքացին զիւղացուց և դորանց իրաւունքների և պարտաւորութիւնների մէջ դանազանութիւն չէ ընդունում։

Աղէքսանդր II կայսեր դատաստանական վերանորոգութեան նըշանակութիւնը անհասկանալի կը լինի, եթէ համառօտապէս չը թւենք քաղաքացու այն իրաւունքները, որոնք այսօր ամեն մի անհատ վայելում է և որոնց ամենամեծ պաշտպանը դատաստանն է։

I. Ամեն մի հպատակ անխորի վայելում է օրէնքներով սահմանւած բոլոր արտօնութիւնները։ Բաժանել այժմեան պետութեան մէջ որ և է դասակարգ, լինի նա կրօնական համացնք, ցեղ, թէ ազգութիւն և սահմանափակել այդ դասակարգի քաղաքական և քաղաքացիական իրաւունքները միայն այն պատճառաւ, որ նա այդ կրօնի, ցեղի կամ ազգութեան է պատկանում՝ սա հակառակ է այժմեան քաղաքակրթութեան տարրական պաշմաններին։ Պետութիւնները արգելում են միայն այն կրօնական կամ ցեղական համայնքները, որոնց վարդապետութիւնները հակառակ են այժմեան

քաղաքակրթութեան։ Օրինակ, ռուսաց օրէնքները հալածում են ևսկօպցի» անունով կրօնական աղանդի պատկանողներին, որովհետեւ այդ աղանդի քարոզած վարդապետութիւնը, որը ամեն մի անդամից պահանջում է ասկետական կեանք և ներքինութիւն՝ հակահասարակական է։

Հաւասարութեան այդ սկզբունքից, որ այժմեան քաղաքակրթութեան ամենատարրական պահանջն է, առաջ են գալիս քաղաքցու մի շարք վերին աստիճանի կարեոր իրաւունքներ։

ա) Ամեն անհատ հաւասար իրաւունք է վայելում իւր խրզմալունքի և հայեացքների համաձայն որոշել իւր յարաբերութիւնը դէպի բարձրագոյն էակը—Աստուածը։ Մարդու յարաբերութիւնը գէպի Աստուածը կոչում է կրօն։ Կրօնը կապում է մարդու ներքին աշխարհը Աստուծոյ հետ։ ուստի՝ ինչպէս ամեն մի ներքին աշխարհ՝ կրօնը ևս զերծ է պետութեան ազդեցութիւնից, որին միայն մարդուս գործը, արար մուռնքն երն են ենթարկում և ոչ հայեացքները։ Սորանից առաջ է գալիս խղճի կամ կրօնական հայեացքների ազատութեան գաղափարը, որը վարդապետում է՝ թէ անհատի կրօնական հայեացքները ոչ մի կերպով չեն կարող սահմանափակել նորա քաղաքական և քաղաքացիական իրաւունքները։

Այժմեան պետութիւնները երկու տեսակ են որոշում վերոցիւնեալ հարցը։ Մի քանի պետութիւններ, որոշելով այն կրօնները կամ աղանդները, որոնք հակառակ են քաղաքակրթութեան, ինչպէս վերևը բացարեցինք, արգելում են նոցա ծաւալումը (les cultes interdits). մնացեալ կրօնները (les cultes connus) հաւասար զիրք ունին պետութեան մէջ¹⁾։ Միւս պետութիւնները որ և է կրօն պետական են անւանում, որպէս հպատակների մեծամասնութեան կրօնը, որը պետական հիմնարկութիւն է ստունում և պետութեան միջոցներով պահպանուում։ իսկ մնացեալ գաւանութիւններին աղասութիւն է տրում իրենց սեպհական միջոցներով հոգալու իրենց կրօնական պահանջը։ Սակայն պետական անւանուած կրօնի դաւանողները ոչ մի առանձնաշնորհութիւն չեն վայելում և նոցա քաղաքա-

¹⁾ Արապէս է, օրինակ, Զուիցերիալում, Միացեալ նահանգներում։ Նոյն ճանապարհի վրայ է և Ցրանսիան։

կամ կամ քաղաքացիական իրաւունքները դորանով չէ առ ելանում։¹⁾

բ) Ամեն մի անհատ ազատ իրաւունք է վայելում իւր հայեացք-ները արտացայտելու կամ հրապարակ հանելու թէ՛ խօսքով և թէ գրով։ Պետութիւնները միայն մի պաշման են դնում, որ խօսքով կամ գրով չը քարոզւի օրէնքների զեղծումն։ Պետութիւնները միայն այն ժամանակ միջամտում են որ և է արտացայտած հայեացքներին, երբ նրանցով ժողովուրդը յորդորւում է օրինազանցութեան։ Հասարակա-կան կեանքի այս պաշմանը կոչում է խօսքի կամ կարծիքի ազա-տութիւն և մամուլի անկախութիւն, որը յարգւում է այժմա բոլոր քաղաքակրթական երկիրներում։ Անհատի այդ իրաւունքի ամենամեծ պաշտպանը դատարանն է։

գ) Ամեն մի քաղաքացի այժմեան հասարակութեան մէջ ազատ իրաւունք է վայելում յառաջադիմելու, այսինքն իւր մասաւոր և բա-րոյական ոյժերը և նիւթական միջոցները հարստացնելու։ Այդ պատ-ճառով ամեն մի անհատի համար մատչելի պիտի լինին այն բոլոր պետական և հասարակական միջոցները, որոնք ծառայում են հաս-տակների յառաջադիմութեան։ Ամեն մի անհատի մոաւոր ոյժերը զարգացնելու համար, նորա առջե բաց պիտի լինին բոլոր ուսում-նարանները և ուսումնական հիմնարկութիւնները։ Նիւթական ասկա-հովութիւն ձեռք բերելու համար՝ նորա առջե բաց պիտի լինին աշխատութեան բոլոր ձիւղերը, որ նա կարողանայ դոցանից ընու-րութիւն անել համաձայն իւր ձգտման և ընդունակութեան, ազատօրէն ընտրել աշխատութեան տեղը, այսինքն՝ զաղթել մի գաւառից միւս գաւառ, ուր կեանքի և աշխատութեան աւելի յարմարութիւն կայ։

դ) Այժմեան քաղաքակրթութիւնը ոչ միայն թող է տալիս, որ ամեն մի հպատակ ազատօրէն ընտրէ իւր բնակութեան տեղը ամբողջ տէրութեան մէջ, այլ տէրութիւնները չեն արգելում իրենց հպատակներին անզամ ընդ միշտ թողնել հայրենիքը և, գաղթելով ուրիշ երկիր, այդ նոր երկրի հպատակութիւնը ընդունել։

¹⁾ Այս ձեսով է վճռում եկեղեցիների հարցը պետութիւնների մեծա-մասնութիւնը. այս ձեսով է վճռում և սուսաց օրէնքը՝ միմիայն մի բացա-ռութեամբ, ուղղափառների մասին. վերջինները, փոխելով իրենց կրօնը, զրկւում են բոլոր իրաւունքներից և Սիրիոր աքտորուում. Առասաց օրէնքների մի առանձնահատկութիւնն էլ այն է, որ արգելում է քրիստոնեան և լուսունուական դաւանութիւնն ընդունել.

Այս համառօտ տեսութիւնից մարդկացին այն իրաւունքների, որոնք կազմում են անհատի քաղաքական ազատութիւնը, կարելի է եղրակացնել, թէ ի՞նչ մեծ պաշտօն և ծանր պարտաւորութիւն է ըստանձնած դատարաններին, ո՞ր աստիճանի կատարեալ պէտք է լինի դատարանական կազմակերպութիւնը, որ յաջողութեամբ կատարէ այդ ծանր պաշտօնը, պաշտպանէ անհատի իրաւունքները և նրանց զեղծողներին պատժի ենթարկելով, վերականգնէ զեղծւած իրաւունքները:

Իացի այդ՝ ամեն իրաւունք պայմանաւորում է և պարտաւորութիւն։ Խնչպէս օրէնքի առջև բոլոր իրաւունքները հաւասար պիտի լինին, նոյնպէս հաւասար պիտի լինին և պարտաւորութիւնները։ Ուստի այժմեան քաղաքակրթութեան կանոններին հակառակ է, երբ մի կամ մի քանի դասակարգ աւելի քիչ պարտաւորութիւններ են կրում, քան մնացեալները, որովհետեւ որ և է դասակարգի պետական պարտաւորութիւնների թեթևացնելը նոյն է, թէ ծանրաբեռնել նրանց միւս հասարակութիւնների վզին։

Դատաստանի պաշտօնն է հսկել, որ ամենքը, վայելելով իրենց յատկացրած իրաւունքները, միևնոցն ժամանակ իրենց պարտաւորութիւններն էլ ճշդութեամբ կատարեն։ Խնչպէս դատարանը արթուն պահապան է անհատական իրաւունքների, նոյնպէս նա նախանձանդիր է պարտաճանաչութեան, որը առաջինից անբաժանելի է։

Այդ բոլոր իրաւունքները և արտօնութիւնները դատարկ խօսք կը լինէին, եթէ պետութեան մէջ չը լինէր սահմանւած մի հիմնարկութիւն, զինւորւած որոշ պայմաններով և նպատակարմար կազմակերպութիւնով, այդ ծանր պաշտօնը վարելու համար։

Այդ հիմնարկութիւնը ամեն տեղ և ամեն երկրում դատարանն է։

Դատաստանը այլաբանորէն նկարւում է աստուածուհու պատկերով, մի ձեռքին բռնած կշիռ՝ նշան դատաստանի հաւասարութեան և անաշատութեան, միւս ձեռքին սուր՝ նշան դատաստանի կազմնելու իշխանութեան կամ կարողութեան։

Այդ այլաբանութեան մէջ ամփոփւած է դատաստանի բոլոր յատկրութիւնները։ Ամենքի համար հաւասար և անաշատ դատաստանը անկախ պէտք է լինի։ Նա բաժանւած պիտի լինի մէւս բոլոր հիմնարկութիւններից։

Աղեքսանդր II կայսեր դատաստանագրքերը ամբողջապէս ընդունում են այդ սկզբունքները: «Դատաստան կայացնելու իրաւունքը», ասում է «հիմնական կանոնների» 5 յօդածը, «այսինքն քրէական և քաղաքացիական գործեր և վէճեր քննելը և վճռելը ամբողջապէս պատկանում է դատարաններին՝ առանց կառավարութեան որ և է մամնակցութեան»:

Դատարանը միայն այն ժամանակ անկախ է, երբ ինքն է վրձնում, թէ ի՞նչ գործեր օրէնքով ստանձնած են իւր անօրինութեան: Աւատի դատարանը գործի քննութիւնը սկսելուց առաջ ինքը վճռում է իւր իրաւասութիւնը և, երբ մի անդամ նա ձեռք զարկեց որ և է գործի, ոչ մի ուրիշ հիմնարկութիւն իրաւունք չ'ունի նոյն գործը քննելու:

Դատարանը միայն այն ժամանակ անկախ է, երբ գործը վրձնելու ժամանակ միայն օրէնքը և նորա պահանջը ի նկատի ունի և զերծ է կողմնակի ազդեցութիւններից:

«Բոլոր դատարանները, ասում է օրէնքը (քրէական դատաստանագիրք, յօդ. 12 և քաղաքաց. յօդ. 9), պարտաւոր են դրական օրէնքների բուն իմաստով (ու ուշադիր անձնագիրը առաջնային ազգային գործի անդամ է) կամ նրանց ընդհանուր նշանակութեամբ (ու օնդում անձնագիրը առաջնային գործի անդամ է) վճիռ կայացնելու:

III. Դատաստաննը ոչ միայն արտաքին անկախութիւն սկիտի ունենայ, այլ նա անկախ պիտի լինի և երկու վիճող կողմերից, որ նորա վճիռը veredictum—արդար խօսք, անաշառ վճիռ լինի: Դատարանը կոչւած է վճռելու մի վէճ, որը բաց է անում մի կողմը մի ուրիշ կողմի դէմ: Այդ երկու հակառակ վիճաբանութիւններից դատարանը եղբակացնում է իրողութիւնը: Պարզ է, որ եթէ դատարանը որ և է կախում ունենայ այդ կողմերի մէկից, նորա վճիռը արդար խօսք չի կարող համարւել:

Դորա առաջն առնելու համար Աղեքսանդր II կայսեր դատաստանագրքերը սահմանել են մի շարք վերին աստիճանի կարեւոր կանոնների: Այդ կանոնների ընդհանուր իմաստը այն է, որ ասլահով դիրք է տալիս դատաւորներին, որ նրանց վճիռը նրանց անձնական դիրքի վրայ չ'ազդէ: Դատաւորները անփոփխ են և հակառակ իրենց կամքին չեն կարող վարչական միջոցներով պաշտօնանկ լինել: Նրանց պաշտօնանկ անում է միայն օրէնքը քրէական դատաստանի վճռով

արտապայտուած։ Արանից առաջ է գալիս դատաւորի կարծիքի ազատութիւնը օրէնքների բացարութիւններ տալում և գործադրելում։

IV. Դատարանի ինքնուրոյնութիւնը, նրա ներքին և արտաքին անկախութիւնը միակ պայմանները չեն, որոնք ապահովացնում են կանոնաւոր դատաստանավարութիւն։ Ըսդհակառակ, երբ դատարանը միայն ինքնուրոյն է և անկախ, նաև մեծամեծ շարիքների աւիթ կարող է տալ։ Նա կարող է էամայականութիւն մտցնել իւր գործավարութեան մէջ։ Դորա առաջն առնելու համար նոր դատաստանագրքերը վերահսկողութիւն (contrôle) են սահմանում, թէ ներքին երարքիական¹⁾ և թէ արտաքին, ծայրագոյն իշխանութիւնից, ²⁾ հասարակութիւնից և հասարակական կարծիքի—մամուլի կողմից։

Հասարակութեան և մամուլի հսկողութիւնը դատարանների վրայ վերին աստիճանի կարևոր է և տորա համար նոր դատարանների բոլոր դատական գործավարութիւնները հրապարակական են, դատարանների նիստերը՝ դռնբաց։

Դատաբառանավարութիւնը այժմեան հասարակական հայեացք-ների տեսակէտից աւելի ընդհանրութեան շահերին է ծաւայում, քան վիճող կողմերի։ Դատախազը, ընդհանրութեան շահերի, օրէնքի ներկայացուցիչը, յանուն այդ հասարակական շահերին է մեղադրում. մեղադրելը նրա պարուն և պաշտօնն է և նրա այդ գործավարութիւնը դատարանից անկախ է։ Յանուն նոյն հասարակութեան շահերին սահմանուած է երգւեալ փաստաբանութիւնը։ Այդ պատճառով եթէ մեղադրեալ ինքը չի կարող փաստաբան վարձել, նրա խնդրանոք դատարանը պարուաոր է, նրա համար փաստաբան նշանակել։ Հակառակ դէպքում, նրա վճիռը անվաւեր կը մնայ։

Այսպէս՝ բոլոր դատարանը գործում է յանուն հասարակութեան և հասարակական շահերին։

1) Այս տեսակէտից հաշտարար դատաւորների ժողովը (Եվեկան միք. սցեն) հսկում է հաշտարար դատարանների վրայ, պալատը հսկում է նահանդական դատարանների վրայ, իսկ Սենատը պետութեան բոլոր դատաստանական հիմնարկութիւնների վրայ։

2) Ծայրագոյն իշխանութիւնը հսկում է դատաստանական հիմնարկութիւնների վրայ դատական նախարարութեան միջոցով։ Դատական նախարարութիւնը որոշ կազմակերպութիւն անի և դատավաններից անկախ է։ Նրա տեղական գործակալութիւնը դատախաչ ներանց ընկերներն են։

Հասարակութիւնը պէտք է գիտենաց այդ, պէտք է իւր աչքով տեսնէ, թէ ի՞նչպէս քննուում և պաշտպանուում են դատարանի առջենրա շահերը։ Ահա այս իսկ պատճառով դատարանները այժմն դադտնի չեն վարում իրենց դործերը։ Ամեն մի անհատ ազատ իրաւունք ունի ներկայ լինելու դատաստանին, որի դաները բաց են նրա առջեւ։

Այդ էլ բաւական չէ։ Դատարանի վճիռը կարող է հրատարակւել և առհասարակ նրա արած ամեն մի քայլը կարող է հասարակութեան քննութեան ենթարկել։ Հասարակական այդ հսկողութիւնը թելազրում է դատարանին միշտ արթուն մնալ և ամենայն իսկութեամբ կատարել իւր պաշտօնը։

Սորանով՝ նոր դատաստանը Ռուսաստանում մինոր դարագլուխ է բաց անում։ Առաջին անգամ դատարանը հասարակական հիմնարկութեան ձեւ է առանում և դադարում է կանցելիարիտական սնկենդան մի մեքենաց լինել։ Խորանով նա դրաւում է հասարակութեան հաւատարմութիւնը, առանց որի անկարելի է որ և է կանոնաւոր հասարակական դործավարութիւն։ Մինչեւո. հին դատարանի բոլոր արարողութիւնները գուղտնիութեան քօղով էին ծածկւած թէ՛ հասարակութեան և թէ վլրող կողմերի համար։ Հին դատարանի վճիռը այդ պատճառով մի արկած, մի զլսի գալիք, Աստուծոյ պատիժ կամ պարզ էր թւում ժողովրդին։

Բոլրորովին ուրիշ բնաւորութիւն ունի այժմեան դատարանի վճիռը. նա հասարակութեան համար մի տրամաբանական եղբակացութիւն է, որին գալիս է դատարանը՝ դատաստանական ամբողջ և մանրակրկիտ քննութիւնից յետոյ։

V.

Դատաստան կայացնելու ընդունակութիւն. սկզբնական քննութիւնը և նորանշանակութիւնը. քննիչ դատաստորի պաշտօնը Անդլիական և Փրանտիական սխստեմ։ Գրականութեան կարծեքը սկզբնական քննութեան մասին։ Դատաստանութիւնը կազմելի է կողմերի հաւասարութիւնը և մեղադբեալի մի առաւելութիւնը. պետական և երգւեալ դատաստորիների պաշտօնը։ Երգւեալ դատարանի կարեւորութիւնը և նշանակութիւնը. Անդլիական երգւեալ դատարանի գլխաւոր կէտեըը և առանձնայատկութիւնները։

Դատաստանի մինչեւ այժմ մեր թւած բոլոր յառկութիւնները, նրա ինքնուրոյնութիւնը, ներքին և արտաքին անկախութիւնը, նրա օրինական դործուներութիւնը (չափոնմքութիւն) և այլն, այդ բո-

լոր պայմանները մի նպատակի համար են սահմանւած, որ դատարանը ընդունակ լինի դատաստանավարութեան, այսինքն՝ կանոնագրապէս լուծելու իրեն առաջարկւած վէճը:

Տարդու իրաւունքները պէտք է յարգւին ամեն տեղ—լինումէ նա իւր տան մէջ հանգիստ նստած, իւր լնուանիքով շրջապատւած, դուրս է զալիս նա փողոց կամ հրապարակ, կամ որ և է դործէ ունենում վարչութեան հետ՝ այդ բոլոր տեղերում էլ ամեն մի անհատ միշտ պէտք է հաւատացած լինի, որ նա անձնաւորութիւնէ, օժտած որոշ իրաւունքներով, որոնք ամեն տեղ պիտի յարգւին: Այդ է այժմեան հասարակութեան տարրական պահանջը:

Բայց նոյն անհատի իրաւունքների ծայրադոյն պաշտուանը դատարանն է: Երբ նա դատաւորների առջև է կանգնած, երբ նրա կեանքի ամենամեծ շահերն են վճռւում, նա հաւատացած, վառահ պիտի լինի, որ դատարանը ամեն միջոց դործ կը դնէ նրա անձնաւորութեան պաշտուանման: Դատարանը ամեն միջոց պիտի տայց, որ արդարը իւր անմեղութիւնը ապացուցանէ դատաստանական ատեանի առջև: Եթէ անհատի մէջ չը կայ այդ համոզմունքը, եթէ վերջինը կարծում է, որ ծռութիւններ կան դատաստանավարութեան մէջ, այն ժամանակ նրա վճիռը ան աչառ խօսք (veredictum) չէ, այլ լոկ մի ստիպողական ոյժ, որ ճնշում է նրան և ատիպում խնարհել այդ ոյժի առջև:

Ուսւաց ժողովուրդը երկար ժամանակ փախչում էր դատարաններից, որովհետև դատարանների գործավարութեան մէջ տիրապետում էր անարդարութիւն: Ժողովուրդը համոզւած էր, որ արդարութիւն գտնել անկարելի է դատարաններում. գորա համար նա խուսափում էր դատարանից, որպէս մի հիմնարկութիւնից, որի հետ գործ ունեցողը միմիայն կը վնասւի՝ արդար է նա, թէ մեղաւոր, այդ միենոյն է:

Ժողովրդի այդ համոզմունքը փոխելու, նրա վասահութիւնը վաստակելու խնդրին նւիրւած է Աղէքսանդր Ա կայսեր դատաստանագրքերի լաւագոյն էջերը: Դատաստանագրքերի մշակողները շատ լաւ հասկանում էին, որ առանց հասարակական օգնութեան անկարելի է կանոնաւոր դատաստան, իսկ հասարակութիւնից օգնութիւն սպասել կարելի է միայն այն դէպքում, երբ հասարակութիւնը հաւատ էր ընծացում դատարաններին:

Ամեն մի վէճ պարունակում է հետևեալ աստիճանները.

1) Սկզբնական քննութիւն: Ամեն մի դատաստանական գործ սկսում է այն րոպէից, երբ վէճի քննութեան խնդիր է ներկայանում դատարանին: Խնդիր (գրաւոր թէ բերանացի) ներկայացնում են ինչպէս մասնաւոր մարդիկ, նոյնպէսև պետութիւնից սահմանաւած հիմնարկութիւնները, վարչութիւնները, ոստիկանութիւնը (ընդհանուր, police publique—թէ դատարանական—սудебная полиция) և այլն:

Երբ այդ խնդիրը ներկայացած է, դատարանը քննիչ դատաւորի միջոցով գործի մասին տեղեկութիւններ է հաւաքում:

Քննիչ դատաւորի պաշտօնն է վճռել, թէ գործի հանդամանքներից երեւում է որ և է մեղաւորութիւն կամ յանցանք և թէ որ և է նշան կայ, որ այդ յանցանքին մասնակից է մեղադրեալը:

Մեղադրեալին անմիջապէս դատաստանի ենթարկելը, առանց սկզբնական քննութեան, շատ անյարմարութիւններ ունի: Դատարանը առ հասարակ մեծամեծ ծախսեր է պահանջում պետութիւնից և հասարակութիւնից. ուստի դատարանական բարդ մեքենացի շարժելը առանց նախապէս իմանալու մեղադրեալի շատ թէ քիչ հեռաւոր մասնակցութիւնը վէճին, կարող է նիւթական մեծ պատճեն պատճառել: Դորա առաջն առնելու համար սահմանաւած է քըննիչ դատաւորի (ըլքծառանի սудայ) պաշտօնը. նա պէտք է կամ ազատ թողնէ մեղադրեալին, եթէ նրա գէմ փաստեր չը կան, կամ եթէ փաստերը ապացուցանում են նրա մասնակցութիւնը, այդ գէպքում գործը յանձնէ դատարանին և նախազգուշական միջոցներով (սկզբնական բանուարկութիւն, երաշխաւորութիւն, ոստիկանական հսկողութիւն և այլն) կարգադրէ, որ մեղադրեալը դատաստանի օրը դատարանի առջև կանգնած լինի:

Եւրոպական ազգերից մի քանիսը (Անգլիա, Միացեալ նահանգներ, Գերմանիա, Աւստրիա և այլն) քննիչ դատաւորի (ըլքծառանի սудայ) պաշտօնը այգապէս էլ հասկանում են: Քննիչ դատաւորի առջեւ վիճում են երկու հակառակ կողմեր. մեղադրողը (մասնաւոր մարդիկ, ոստիկանութիւն, դատավագանի հետ): Այդ երկու վիճող կողմերն էլ բոլորովին հաւասար իրաւունք են վայելում քննիչ դատաւորի առջեւ:

Ննչավէս մեղադրողը ամեն միջոց գործ է դնում՝ ցոյց տալու հակառակորդի մասնակցութիւնը գործին, նոյնպէս միւս կողմը աշխատում է ապացուցանել, որ նա մասնակից չէ գործին։ Վիճաբանական սկզբունքը (состязательное начальное) ընդունւած է և սկզբնական քննութեան ժամանակ։

Միւս պետութիւնների, որոնց դատարանական հիմնարկութիւնները ֆրանսիացից են առնւած (վերջինների թւին ողառկանում է և Ռուսաստանը), քննիչ դատաւորի պաշտօնը աւելի մեղադրող կողմի՝ դատախազի պաշտօն է, քան դատաւորի։

Այս տեսակիտից քննիչ դատաւորը միմիայն փաստեր է հաւաքում և աւելի մեղադրելու, քան արդարացնելու համար, որովհետև քննիչ դատաւորը գործում է դատախազի զեկավարութեամբ և գրեթէ նրան ստորագրուած է։

Յայտնի բան է, անհատի իրաւունքների պաշտպանութեան տեսակէտից, առաջին պետութիւնների դատարանները աւելի կատարեալ են, քան վերջինների։

Մինչդեռ, ֆրանսիական սիստեմի համաձայն, սկզբնական քննութեան ժամանակ մեղադրեալի անձնաւորութիւնը ամբողջապէս քննիչի ձեռքին է, որը քննում է նրա գործը առանց վերջինի մասնակցութեան և նրանից դադանի։ անդիմիտ սիստեմի համաձայն՝ մեղադրեալը և մեղադրողը վեճի առաջին րոպեից հաւասար իրաւունք են վայելում, մեղադրեալը՝ և անմեղութեան ապացուցիչ փաստեր հաւաքելու, մեղադրողը՝ գորա հակառակը ապացուցանելու։ Ֆրանսիական սկզբնական քննութիւնը ամբողջապէս մեղադրող կողմի ձեռքին է և սա մեծ անարդարութիւն է, որովհետև դատաստանի ամենազլիսաւոր սկզբունքը, ինչպէս վարդապետում է իրաւագիտութիւնը, վիճող կողմերի հաւասար դիրքն է գործի սկզբից մինչև վերջը։

Սկզբնական քննութեան անհատարութիւնը Աղեքսանդր Ակադեմի գտաստատանագրքերի ամենաժողով կողմն է։ Նատաստանագրքերը վերահսատաեցին հին քննական սիստեմը, որը ամենելին չէ կապւում նոր սկզբունքների հետ։ Իրաւաբանական գրականութիւնը միաձայն մատնացոց է անում սկզբնական քննութեան պակասութեան վրայ և նրա վերանորոգութիւնը օրւայ ինդիր է։¹⁾ Նոյն իսկ

¹⁾ Յապանի բան է, ակժմեան սկզբնական քննութիւնը կրկին մեծ առաւելութիւններ ունի, քան հինը, որը ոստիկանութեան ձեռքին էր։

ֆրանսիան ուղում է վերանորոգել սկզբնական քննութիւնը և վիճաբանական սկզբունքը ներմուծել նաև սկզբնական քննութեան մէջ¹⁾:

Եթէ սկզբնական քննութիւնով դատաստանադրքերը մօտենում են հին դատաստանական կարգ ու կանոններին, քննութեան հետեւեալ ատեաններում՝ նրանք բոլորովին հեռանում են նրանցից:

2) Սկզբնական քննութիւնը նախապատրաստութիւն է դատարանի ամենազլիսաւոր գործունէութեան, դատարանական քննութեան համար:

Այսուղ երկու վիճող կողմերը, առանձնացած և կազմակերպւած, ներկայանում են դատարանին: Երկու կողմն էլ իրենց դատը պաշտպանելու հաւասար իրաւունքներ են վայելում (քրէական դատաստանադրիք յօդ. 630). իսկ մեղադրեալը մի առաւելութիւն ունի, որը նրա դրութեան հետեւանքն է. մեղադրեալին պատկանում է վերջին խօսքը: «Դատարանական վիճաբանութեան ժամանակ, ասում է օրէնքը, ամեն մի ծագած հարցում վերջին խօսքը ասելու իրաւունքը պատկանում է մեղադրեալին կամ նրա պաշտպանին (ibidem 632): Ուստի եթէ դատաւորը զրկէ նրան վերջին խօսքը ասելու իրաւունքից, Սենատը միշտ ջնջում է այդ վճիռը:

Վիճաբանութիւններից յետոյ դատարանը խնդիր է դնում: «Ճեղաւո՞ր է այս ինչ յանցանքում մեղադրեալը, թէ ոչ։ Ի՞նչպէս է կազմակերպւած դատարանը, որին յանձնաւած է այդ խորհրդաւոր հարցին պատասխանելու ծանր պաշտօնը»:

Քաղաքակրթւած բոլոր երկիրներում դատարանը երկու տարրերից է բաղկացած: Առաջին՝ պետական դատաւորներից (Եօրոպական սույն), որոնք օրէնքի ներկայացուցիչ են և գործադրող և երկրորդ՝ երդւեալ դատաւորներից (յուր, պրιւայական սույն), որոնք հասարակական խորհրդանշական ներկայացուցիչ են: Պետական դատաւորները քննում են իրաւական հարցերը և ղեկավարում են դատարանական քննութիւնը, իսկ հասարակական խորհրդի ներկայացուցիչները, տաճներկու երդւեալ դատաւորները, վլճում են մեղադրեալի մեղաւորութեան խնդիրը (Յօնութիւն օ Յինութիւն):

¹⁾ 1881 թւին մի մասնախումբ կազմեց Լը Ռուակի նախագահութեամբ. այդ մասնախումբը արդէն մշակել է նոր օրինադիմ սկզբնական քննութեան, որով ներմածում է անդիմական սխառեմը:

Երբ վերջինը արտասահնում է իւր վճիռը, թէ այսո՛, մեղաւոր է՛, այն ժամանակ պետական դատարանը ինքը վճռում է պատժի շափը և աստիճանը:

Այս տեսակ դատարանական կազմակերպութիւն մ.զ՝ կովկասեցիներիս անսովոր է, որովհետև Կովկասում չը կայ երգւեալ դատաւորների հիմնարկութիւն: Ուստի մենք կարեոր ենք համարում ամենահամառօտ կերպով պատմել դատարանի այդ տեսակ կազմութեան նշանակութիւնը, որը հասկանալու համար հարկաւոր է զիմել նրա պատմութեան և նրանից լուսաբանել երգւեալ դատարանի իմաստը: Աղէքսանդր Ա-ի դատաստանական վերանորդութիւնը եւրոպական դատարանների լոկ ձեւի ընդօրինակութիւնը կը լինէր առանց նոցա իմաստին:

Բացի այդ՝ այժմեան դատարանը առանց երգւեալ դատաւորների անկարող է լուծել կեանքի բարդ խնդիրներ, խորասուզւելով այդ խնդիրների ներքին կողմը: Անհատի իրաւունքների ամենամեծ պաշտպանը մի կողմից՝ և հասարակական շահերը զեղծողների դեմ ամենաանհաշտ և ամենախիստ թշնամին միւս կողմից, երգւեալ դատարանը հասարակութեան բարեհիտ մեծամասնութեան ամենասիրելի և համակրելի դատարանն է, որի վճռի առջև խոնարհում է ամեն մի անհատ: Այս իսկ պատճառով երգւեալ դատաւորների վճիռը ամենամեծ կշիռ և հեղինակութիւն ունի ժողովրդի աչքում:

Երգւեալ դատարանը մնել և զարգացել է Անգլիայում և անգլիացոց ազգային հիմնարկութիւններից մեկն է: Թէպէտ Եւրոպայում ևս, միջին դարերի սկզբում, նկատում է երգւեալ դատարանի ծագման սկիզբը, բայց Նւրոպայում նա անհետանում է, մինչդեռ Անգլիայում նա զօրանում և ամրանում է, ինքնավարական միւս հիմնարկութիւնների հետ զուգահեռաբար զարգանալով: Վերջին երկու դարերի ընթացքում երգւեալ դատարանը այն աստիճանի զարգանում է և անգլիացիք այնքան նրան ընտելանում են, որ ոչ ոք Անգլիայում չի թոյլ տաց որ, առանց երգւեալ դատարանի, զրկեն նրան որ և է անհատական իրաւունքից:

Անգլիական երգւեալ դատարանը հետեւեալ կազմակերպութիւնն ունի: —

1) Ամեն մի անդիմական քաղաքացի, որը որոշ քաղաքացիական դիրք ունի (status, այսինքն չափահատութիւն, անկախութիւն, նիւթական ապահովութիւն—30 ֆուն. ստեր. ուրեմն մօտ 210 ր. ոսկի եկամուտ), պարտաւոր է հերթով երդւեալ դատաւորի պաշտօն վարել:

Դորա համար տարւայ սկզբին բոլոր քաղաքացիների անունների ցուցակ է կաղմուում (ամեն գաւառ առանձին) և այդ ցուցակից հերթով գալիս են 48—72 մարդ:

2) Ամեն քրէական կամ քաղաքացիական գործի համար այդ 48—72-ից ընտրում է 12 երդւեալ և 3 փոխ-դատաւոր¹⁾ հետեւալ ձեւով: Մեղադրեալին առաջարկում է հրաժարեցնել (recuser, օտեօձ) մինչև 35 մարդ, որոնց այս թէ այն պատճառով (պարտաւոր չէ պատճառը յայտնելու) հաւատ չէ ընծայում և չէ սպասում նոցանից անաշառ վճիռ: Մնացեալներից դատախազը հրաժարեցնել կարող է միայն այնքան, որ 18 մարդ մնայ, որոնցից պետական դատաւորը մեղադրող և մեղադրեալ կողմերի ներկայութեամբ վիճակով հանում է 12 անուն երդւեալ դատաւորների և նոյն արարողութեամբ երեք անուն փոխ-դատաւորների (չափահանական օրէնքը, ինչպէս տեմուում է ընթերցողը, մեծ առաւելութիւն է տալիս մեղադրեալի կողմին և զրեթէ իսանգարում է հաւատարութեան իրաւունքը: Սակայն ի նկատի պէտք է ունենալ, որ քաղաքացու կեանքը Անգլիայում մեծ արժեք ունի և այդ մարդասիրական միջոցը տրւում է մեղադրեալին in favorem vitae ի նպաստ կենաց: Երդւեալ դատաւորի հենց զլամաւոր յատկութիւնն էլ այն է, որ երկու կողմերը ևս այնպիսի մարդկանց դատաւոր ունենան, որ ոչ միայն որ և է կասկածի տեղիք չը լինի, այլ երկու կողմն էլ նրանց անաշառութեան ամենամեծ հաւատ ընծայեն:

Այդ 12 դատաւորները և երեք փոխ-դատաւորները, պետական դատաւորի նախագահութեամբ, երգում տալուց յետոյ կազմում են դատարան, որին առաջարկում է գործի քննութիւնը: Այդ ձեւական արարողութիւնները կրկնուում են ամեն մի գործի համար:

1) Փոխ-դատաւորները, որոնք միւսների հետ միասին պարտաւորեալ մասնակցում են դատարանական նստին, փոխարինում են դատաւորներին, երբ վերջինները որ և է գետքով չեն կարող շարունակել դատարանը, կամ պրկուում են երդւեալ դատաւորի իրաւունքից:

Ուրեմն՝ դատարանի բացումից մի քանի ըսպէ առաջ ոչ ոք չէ ճանաշում՝ դատաւորներին՝ ուստի և կաշառել չէ կարելի: Բայցի այդ, երդւեալ դատաւորների վրայ, նրանց ընտրութիւններից յետոյ, ամենամեծ հակողութիւնն է սահմանւած, որ ոչ ոքի հետ, անգամ պետական դատաւորնախազահի հետ որ և է գաղտնի յարաբերութիւն չունենան: Եթէ ի նկատի ունենանք, որ երդւեալ դատաւորները բոլորովին անկախ են դատաւորնախազահից, անկախ որ և է կողմից և զերծ որ և է մարդկային աղղեցութիւնից, ուրեմն այնքան անկախ, որքան կարելի է անկախութիւնն ձեռք բերել աշխարհիս երեսին, օժտւած կեանքի բազմակողմանի փորձով, ազատ երկարամեայ պաշտօնավարութիւնից, որից մնա մասմբ միակողմանիութիւն և ըուտինա է առաջ զալիս, զեկավար ունենալով օրէնքների հմուտ դատաւորին, որը ազատ է պահում երդւեալ դատաւորներին օրինազանցութիւնից,—այդ տեսակ դատարանը ընդունակ է լինում ամենաանաշառ վճռաներ տալու և վերին աստիճանի անհատականացնելու (individualiser) մեջաւորութեան չափն ու սահմանը: Ացդպիսի դատարանը ամենամեծ հաւատարմութիւնն է վաստակում (ինչպէս է Անգլիայում) և նրա վճիռը ահազին հեղինակութիւնն ունի: Պէտք է աւելացնել, որ անզինական դատարանը իւր վճիռը կայացնում է միաձայնութեամբ, թէ արդարացնելու և թէ մեղադրելու համար:

VI.

Յըանսիական երդւեալ դատարանի գլխաւոր կէտերը. սկզբնական քննութեան ձեւը. պետական մեղաղըող հիմնարկութիւնը. դատարանի երկու մասերը. պետական և երդւեալ դատաւորների պաշտօնը. Երդւեալ դատարանի ընդհանուր նշանակութիւնը. դատարանական արարողութիւնների ձեւերը և նրանց նշանակութիւնը. վճառ ու աշխնջ դատաւոր ան ն. նրա երկու գլխաւոր պաշտօնները և նրա իրաւասութիւնը. վճռացնչ դատարանը նըանսիայում և Խուսասահում. վերջինի կազմակերպութիւնը. հաշտարար դատաւոր, հաշտարար դատաւորների ժողով և Սենատ, երբեմ հաշտարար դատարանի աստիճանները. Կովկասի դատարանների առանձնայակութիւնը համեմատելով ըուն Խուսասահուների հետ. վերջաբան:

18-րդ դարում, երբ եւրոպական գրականութիւնը սկսեց ուսումնասիրել Անգլիայի սիետական հիմնարկութիւնները, ուշադրութիւնն դարձրեց և նրա դատաւատանական կարգ ու կանոնների վրայ, մասնացոյց արեց անգլիական դատարանի մեծամեծ արժանաւորութիւնն

ներն և առաւելութիւններն համեմատելով Եւրոպական դատարանների հետ, որոնք սատիկանական կամ աւատական (ֆեղալական) կազմակերպութիւն ունեն և խառնած էին վարչութեան հետ, որից և լույսին կախումն ունեին:

Ֆրանսիան, որը Եւրոպական պետութիւնների համար միշտ նոր գաղափարների կարապետող է եղել, նոյն հարցում ևս կատարեց իւր սովորական դերը և սկսեց արծարծել նոր մտքեր և սկզբունքներ պետութեան դատաստանական գործավարութեան մասին։ Նա աւետեց Նւրոպային, թէ դատաստանավարութիւնը պետական պաշտօն է և ոչ թագաւորի, կամ աւատական իշխանի մասնաւոր արտօնութիւնը և նրանց արդիւնքի աղբիւր, ինչպէս էր Նւրոպան և ինչպէս կարծում էին այն ժամանակայ վարչական շրջանները։

Ամենից առաջ ինքը Ֆրանսիան իրեն սկսեց պատռաստել Եւրոպայի համար նոր դատաստանական հիմնարկութիւնները և համաձայն իւր կեանքի պայմաններին բաւականին նշանաւոր փոփոխութիւնների ենթարկեց անգլիական դատաստանը։ Մակայն մնացեալ Եւրոպայի համար օրինակ եղաւ ազգ՝ Ֆրանսիայի կերպարանափոխած՝ դատաստանը, որը իւր նախատիպարից աւելի ստոր է¹⁾, թէպէտ երկուսի սկզբունքներն էլ և ձգտումները նոյնն են. միայն Ֆրանսիայինը մի քանի ձեւական անյարմարութիւններ ունի, որոնցից գլխաւորը այն է, որ մինչև այժմն նոր սկզբունքների հետ միասին պահպանած են և մի քանի հին դատարանական կարգերի մնացորդներ։

Այսպէս թէ այնպէս, Նւրոպան Ֆրանսիայի միջնորդութեամբ փոխ առաւ անգլիական երգւեալ դատարանը և մինչև այսօր էլ բոլոր պետութիւնները ֆրանսիականից ընդօրինակած ձեւը պահպանել են։ Միայն վերջին 10—15 տարւաց ընթացքում նկատում են ձգտումներ աւելի խորը ուսումնասիրելու անգլիական դատարանական հիմնարկութիւնները և դորա համաձայն բարեփոխելու Նւրոպայինը։

Անգլիական և ֆրանսիական դատաստանները հետեւեալ գլխաւոր տարբերութիւններն ունին։ —

1) Ֆրանսիայում սկզբնական քննութիւնը կատարւում է խու-

¹⁾ Այդ հանգստմանքը ապացուցեց Գնեստը իւր «Անգլիական ինքնավարութիւն» մեծ գրւածքում։

զարկուական (inquisitionnel) ձեռվ և ոչ դատաստանական—վիճաբանական (судебно-состязательный), այսինքն՝ սկզբնական քննութիւնը ամբողջապէս յանձնւած է մի խուզարկուի (inquisiteur), որը ինքնազգութ կատարում է այն, առանց վիճող կողմերի մասնակցութեան. մինչդեռ անզլիականը, ինչպէս արդէն նկատեցինք, վիճող կողմերի մասնակցութիւնը թողարկում է վէճի առաջին իսկ բոպէից: Սորան պէտք է աւելացնել, որ քննիչը ենթարկւած է դատախազին և շատ բաներում նա սկարտաւորեալ կատարում է վերջինի պահանջները: Թուսաց օրէնքով (որը հետեւում է ֆրանսիականին) դատախազը կարող է անմիջապէս հսկել քննիչի ամեն մի քայլը (քր. դատ. 279), նա իրաւունք ունի ներկայ լինել սկզբնական քըննութեան ամեն մի արարողութեան (ib. 280) և քննիչի ուշադրութիւնը գարձնել գործի այս կամ այն հանգանքի վրայ. կարող է պահանջել քննիչից լրացուցիչ քննութիւն (ib. 286) և այն: Սրանից երեւում է, որ սկզբնական քննութիւնը իսկապէս մեղադրեալ կողմի ձեռքու մն է:

2) Ֆրանսիացում մշակւեց և զարգացաւ սկետական մեղադրութեան մի ամբողջ սիստեմ: Մինչդեռ Անգլիայում մեղադրողները մեծ մասամբ մասնաւոր մարդիկ են (յանցանքից վկաս կրողը), կամ պետական զանազան պաշտոնեաներ—ուստիկանութիւնից, կամ վարչութիւններից նշանակւած. Եւրոպայում սկետական մեղադրութեան համար սահմանւած է դատախազութիւնը (procuretura), որի ձեռքին սկետութիւնը ահագին միջոցներ և ոյժ է տալիս՝ ամեն մի գէպում յանցաւորների դէմ դաս բանալու համար¹⁾:

¹⁾ Իրաւաբանական գրականութեան մէջ ասս խնդիրը մինչև աչժմս էլ վիճելի է, թէ որ սիստեմը աւելի առաւելութիւն ունի՝ սկետական պարտաւորեալ մեղադրութիւնը, ինչպէս մշակւեց ֆրանսիացում և ընդունւած է Եւրոպայում, թէ անզլիականը, որը խսկապէս կազմակերպած դատախազութիւն չ'ունի. Պէտք է նկատել, որ-վերջն ժամանակների նշանները ցոյց են տալիս, թէ Անգլիան պիտի հետեւի ֆրանսիական սիստեմին. 1879 թ. Անգլիայում մի նոր օրէնք դուրս եկաւ, որով սահմանեց սկետական մեղադրողի (վեց օդնականներով) նոր պաշտօն (director of public persecution). Սրանով Անգլիան ցոյց տևեց պետական մեղադրութեան կարեորութիւնը. սակայն այդ նոր մեղադրողը պարտ առ որւած չէ ամեն տեղ դատ բանալ յանցաւորների դէմ, ինչպէս է Եւրոպայում, այլ ու նրա իրաւունքն է և ոչ սկարտաւորութիւնը.

3) Ֆրանսիական դատարանը բաղկացած է երկու առանձին խորհուրդներից՝ պետական երեք դատավորներից և երգւեալ տասներկու դատաւորներից (օրոնեալ և պարզական կոլլեգի): Այդ երկու խորհուրդները միացած չեն, գործում են միմեանցից անկախ և այն աստիճանի առանձին, որ պետական դատաւորները իրաւունք չունին իրենց կարծիքն անդամ յայտնելու մեղադրեալի մեղաւորութեան մասին: Մինչդեռ Անգլիայի դատարանը մի ամբողջութիւն է կազմում, նախագահ-դատաւորը մնացեաների զեկավարուն է և իւր կարծիքը միւսների հետ միասին յայտնում է. օրինակ, անգլիական դատաւորը ամեն մի բոպէ կարող է դատաստանական քննութիւնը ընդհատել և երգւեալ դատաւորներից պահանջել, որ մեղադրեալին արդարացնեն:

4) Տոլոր միւս երկիրներում, բացի Անգլիայից, դատաւորները իրենց վճիռը կայացնում են ձայների մեծամասնութեամբ, մինչդեռ Անգլիայում պահանջնում է միաձայնութիւն թէ՛ մեղադրելու և թէ արդարացնելու համար:

Եռուսաստանը իւր երգւեալ դատարանը կազմել է Ֆրանսիայի օրինակից և նոյն գլխաւոր սկզբունքներն ու յառկութիւններն ունի: Աւստրի կրկնել աւելորդ ենք համարում:

Երգւեալ դատարանով վերջ է տրում Եւրոպայում շինումնիկական դատաստանավարութեան և սկիզբ է դրում խղճմուանքի դատաստանի: Ըստ ՀՕՄ:

Տասներկու բարեմիտ, անբիծ և անկախ քաղաքացիներ անընդհատ, ամենայն ուշադրութեամբ լսում են դատարանական քննութեան բոլոր մանրամասնութիւնները, որ կատարում են օրէնքների հմուտ պետական դատաւորի (կամ դատաւորների) զեկավարութեամբ: Այդ մանրակրկիտ քննութիւնից յետոյ, նոքա իրենց խղճմուանքի ձայնին համաձայն, առանց որ և է պատճառաբանութեան իրենց կարծիքի, լոկ խղճի թելադրութեամբ վճռում են գործը: Այդպիսի դատաստանը, յայտնի բան է, անաշառութեան, անկողմնապահութեան և արդարութեան ամենամեծ զրաւականն է, անհամեմատ աւելի մեծ, քան որ և է ուրիշ ձեւի դատարան, որ յայտնի է եղել մարդկութեան: Այդ է պատճառուը, որ երգւեալ դատարանը, ամենալաւ պաշտպան լինելով քաղաքացու իրաւունքներին, և ամենախիստ դատաւոր՝ այդ իրաւունքները գեղծողներին, այսօր համաշխարհային հիմնարկութիւն

է գառած. բացի Տաճկաստանից, ամեն տեղ ընդունւած է և մեծ ժողովրդականութիւն ունի:

Թէպէտ երդւեալ դատարանը ինքն ըստ ինքեան մեծ երաշխաւորութիւն է անհատի իրաւունքների պաշտպանութեան, սակայն դատաստանավարութեան ժամանակ թէ՛ վիճող կողմերը և թէ պետական դատաւորները կարող են որ և է ձեռվ կամ միջոցով ազդել երդւեալ դատաւորների խղճի վրայ, կամ շփոթեցնել վերջիններին: Դրանք աշնալիս ուղղութիւն կարող են տալ դատարանական քննութեան, որ երդւեալ դատաւորները անկարող լինին գործի բոլոր հանգամանքները աշքի առաջ ունենալ վճիռ կայացնելիս: Այդ դէպքերում, յայտնի բան է, չէ կարելի անաշառ վճիռ սպասել:

Այդ չարիքի առաջն առնելու համար, օրէնքները մի շարք ձեւակատարութիւններ են սահմանել, որոնց գործ դնելլ պարտաւորին են դատաւորների և ամբողջ դատարանի համար: Օրինակ՝ դատաւորը պարտաւոր է նիստը գրնբաց անել, վկաններին առանձին սենեակում պահել, որ կողմերի հետ հաղորդակցութիւն չ'ունենան, երբ վկանները վկայութիւն են տալիս. թոյլատրել որ մեղադրեալը վերջնական բացարութիւն տայ այդ վկայութիւնների մասին (քր. դատ. 632) և այն, և այլն:

Այդ ձեւակատարութիւնները այնքան կարևոր են վճուի կայացման համար, որ նրանց որ և է կէտի չը գործադրելլ մեծամեծ հետևանք կարող է ունենալ: Բացի այդ՝ դատաստանավարութեան ժամանակ դատաւորները կարող են օրէնքներին սխալ բացատրութիւն տալ, ազաւազել նրանց իմաստը:

Այդ երկու նպատակների համար — հակելու, որ օրէնքով պահանջւած բոլոր ձեւակատարութիւնները ճշդութեամբ զործադրւին և ամեն տեղ միատեսակ և ճիշդ բացատրւին օրէնքները — հարկաւոր է մի հիմնարկութիւն, որը հսկէ պետութեան բոլոր դատարանների վրայ, որ օրինազանցութիւն չը կատարւի և պահանջէ օրէնքների խսկական խմասով դործադրութիւն: Այդ հիմնարկութիւնը, բնական է, վերին աստիճանը պիտի կազմէ դատարանական ամբողջ կազմածքի, ուստի և իրեն դրութեան վայել դիրք և ընդունակութիւն պէտք է ունենայ:

Այդ պաշտօնի համար սահմանւած է վճռաջինջ դատարանը

(juge de cassation): Ֆրանսիայում նա առանձին հիմնարկութիւն է կազմում, իսկ Մուսասատանում նա Սենատի մի նոր բաժինն է կազմում (кассационные департаменты сената):

Այդ հսկողութեան համար հարկաւոր է, որ դատարաններում բոլոր կատարւածքը արձանագրուի նւատի, երբ դատաստանավարութեան ժամանակի որ և է կանոն զեղծւած է կամ չէ գործադրւած, հակառակ օրէնքի պահանջին, կամ վիճող կողմերի իրաւունքները սահմանափակւած են, դատարանին ամեն մի մասնակցող պահանջում է անմիջապէս արձանագրել ատենագրութեան մէջ: Դատարանը պարտաւոր է իսկոյն կատարել ացդ պահանջը: Այդ արձանագրութիւնը միան ենթարկում է վճռաջինջ դատարանի վերահսկողութեան:

Աճռաջինջ դատարանը ծայրագոյն և վերջին աստիճանն է դատարանական բոլոր հիմնարկութիւնների. նրա կարեւորութիւնը շատ մեծ է: Նա հսկում է բոլոր դատարանների ներքին և արտաքին բարեկարգութեան վրայ (դատաստանական կազմակերպութեան կանոնագիրք, յօդ. 5.) և օրինազանց դատաւորներին դատաստանի ենթարկում: Այդ բոլորը կատարում են Սենատի երկու վճռաջինջ բաժինները, մէկը քրէական գործերի համար (քրէական վճռաջինջ բաժին — յուղովուն կասացիոնական դպրություն), միւսը՝ քաղաքացիական (գրաժանական կամ ազգային դպրություն) և Սենատի որ և է միւս վճռաջինջ բաժինների արտակարգ նիստերը (օօսական պարտաւորություն, թւով երեք):

«Սենատի վճռի գէմ չէ կարելի գանգառ տալ (на рѣшеніе Сената неѣть апелляціи), ասում է օրէնքը:

Բացի ընդհանուր դատարաններից (նահանգական դատարան, պալատ և Սենատ), Աղէքսամնդր II կայսեր դատաստանագրքերը սահմանում են և հաշտարար դատարան (միровой институтъ), որի իրաւասութեան յատկացրած են մանր քրէական և քաղաքացիական գործեր:

Հաշտարար դատարանը բոլորին առանձին է և ընդհանուրից տարբեր կազմակերպութիւն ունի: Նա չէ ստորագրուում ոչ նահանգական դատարանին, ոչ էլ պալատին: Միայն Սենատին է ենթարկում նա, իբրև վճռաջինջ և ծայրագոյն վերահսկող դատարանի:

Այս յօդւածի նպատակից դրւուէ բացատրել հաշտարար դատարանի կազմակերպութեան սկզբունքները. իբրև տեղական ինքնավարութեան մի ճիւղ, մենք այդ խնդրի մասին մանրամասնօրէն կը խօսենք, երբ կը խօսենք տեղական ինքնավարութեան մասին։

Դատաստանական վերանորոգութեան խնդրի ամբողջութեան համար հարկաւոր է համառօտապէս բացատրել, թէ ի՞նչ կազ ունի հաշտարար դատարանը անհատի իրաւունքների պաշտպանման գործի հետ և թէ ի՞նչպէս է նրա կազմակերպութիւնը։

Հաշտարար դատարանը ժողովրդի ամենաձեռնհաս դատարանն է, նրա կեանքին ամենամօտն է, ուստի այդ հանգամանքներին էլ յարմարւած պիտի լինի։

Ժողովրդի կեանքում սպանութիւն կամ դորա նման ծանր յանցանքներ շատ հազիւ են պատահում. մինչդեռ մանր օրինազանցութիւններ աւելի յանախ են սպատահում և արագութեամբ պէտք է այդ զեղծումների առաջն առնել։ Արագ գործավարութիւնը հաշտարար դատարանի առաջն յատկութիւնը պիտի լինի։ Այս պատճառով հաշտարար դատարանը գործումէ առանց սկզբնական քննութեան, առանց պետական մեղադրողի, այլ մեծ մասամբ մասնաւոր մարդկանց խնդրի կամ ռատիկանութեան արձանագրութիւնների առիթով։

Հաշտարար դատարանի նիստերն էլ նոյն սկզբունքներն ունին, ինչ որ ընդհանուր դատարանները. նրանց նիստերը դռնբաց պէտք է լինին, հրապարակական, կողմերի բացատրութիւնները բերանացի և այն։ Ուրեմն նոյն ապահովութիւնները անհատի իրաւունքների տալիս են և հաշտարար դատարանները։

Հաշտարար դատաւորը ընտրողական է Ռուսաստանում. նրան ընտրում են երեք տարին մի անգամ՝ տեղային հողատէրերը. ինքն ևս հողատէր կամ կալւածատէր պիտի լինի, պիտի ունենայ ուսումնական ցենզ (միջնակարգ ուսումնարանի. իրաւաբանական մասնագիտութիւնը զժբաղդաբար պարտաւորեալ չէ) և տեղացիների յարգանքը վայելող և անկախ զիրք ունեցող անձնաւորութիւն պիտի լինի։

Հաշտարար դատաւորի իրաւասութեան ենթարկում են այն բոլոր քրէական գործերը, որոնց համար օրէնքը մի տարի և Յ ամիս պատահժ է դնում (մի քանի բացառութիւն կայ), իսկ քաղաքացիա-

կան գործերից՝ մինչև 500 բուրլի արժեք ունեցող վէճերը:

Հաշտարար դատաւորը մինչև 30 ր. վէճը քննում է վերջնականապէս. մնացեալը—իբրև դատարանի առաջին աստիճան: Երկրորդ աստիճանը կազմում է հաշտարար դատաւորների ժողովը (ընթացակարգության համապատասխան ժամանակաշրջանում):

Այդ ժողովին մասնակցում են նոյն հաշտարար դատաւորները. միակ զանազանութիւնը այն է, որ ժողովում ամենաքիչը երեք դատաւորներ պիտի լինին, իսկ հաշտարար դատաւորը միայն է վճռում գործերը: Ժողովը ունի իւր ընտրեալ նախագահը, քարտուղար և առանձին դիւանատուն:

Դատաւորների ժողովին ներկայ է գոտնուում և նահանգական դատախազի ընկերներից մէկը, որի պաշտօնն է զեկուցումներ տալ օրէնքների իմաստի և գործադրութեան մասին:

Հաշտարար դատաւորների ժողովի վճիռը վերջնական է և միայն նենատի վճռաշխնչ բաժինը կարող է անվաւեր համարել նրա վճիռը և նորից պահանջել գործի վերաքննութիւն (պերեսմութեան):

Այս ևն հաշտարար դատարանի գլխաւոր կէտերը, որ տեղային ինքնավարութեան ամենազիստաւոր ճիւղերից մէկն է և արագութեամբ գործելով, մէծամեծ օգուտներ է տալիս ամենահասարակ ժողովրդին:

Մեզ մնում է համառօտապէս հաղորդել ընթերցողին այն փոփոխութիւնները, որոնց ենթարկեց դատաստանական վերանորոգութիւնը կովկասի վերաբերմամբ:

Մեր մինչև այժմս պատմածը դատաստանական հիմնարկութիւնների մասին՝ ամբողջապէս վերաբերում է բուն Ռուսաստանին: Մենք աշխատեցինք բացառել դատաստանական բարենորոգութեան սկզբանքները իրենց իսկականութեամբ, այնպէս՝ ինչպէս մշակել կամ մըտածել էին դատաստանագրքերի խմբագրուները: Ուսաի այն բոլոր փոփոխութիւնները, որոնց ենթարկեց նոր դատարանը Ռուսաստանում վաթուն թւականներից յետոյ, դրանց բացատրելը սոյն յօդածի նպատակից դուրս է:

Դատաստանական վերանորոգութիւնները աւելի մէծ փոփոխութիւնների ենթարկեցին Ռուսաստանի սահմանական նահանգների վե-

րաբերմամբ, այնպէս որ վերջինները ընդհանուր կանոնից բացառութիւն են կազմում:

Նախ՝ դատարանական վերանորոգութիւնը բոլորովին չէ վերաբերում Ֆինլանդիային, որը ունի իւր առանձին պետական կազմակերպութիւնը¹⁾:

Երկրորդ՝ Օսուզէքեան (Շուլց-Յալտեան) նահանգները, որոնք նոյնպէս, վայելում են վարչական և դատարանական ինքնավարութիւն:

Երրորդ՝ Լէհաստանի և Կովկասի դատաստանական հիմնարկութիւնները առանձին պայմանների մէջ են սահմանափակած:

Կովկասը կազմում է առանձին դատարանական շրջան և դատաստանական վերանորոգութիւնը հետևեալ փոփոխութիւններով մըսցրած է:

1) Բոլոր դատաւորներին նշանակում և հրաժարեցնում է կառավարութիւնը, ինչպէս միւս վարչական պաշտօնեաներին. մինչդեռ Ռուսաստանում դատաւորը անփոփոխ է սկզբունքով և արձակում է իւր պաշտօնից միմիայն դատարանի վճռով և ոչ կառավարութեան կարգադրութեամբ: Ուրեմն դատաւորի անփոփոխութեան սկզբունքը մեղանում չէ ներմուծւած:

2) Երդւեալ դատարանը իւր բոլոր սկզբունքներով և առանձնայատկութիւններով նոյնպէս չէ ներմուծւած: Երդւեալ դատարանի իրաւասութիւնը յանձնւած է նահանգական դատարաններին:

3) Որովհետեւ անհատի իրաւունքներին և ազատութեան մեծ վտանգ կը լինէր, եթէ դոքա լոկ նահանգական դատարանին յանձնեին, գորա համար սահմանւած է դատարանական պալատ Թիֆլիսում, որը վերաքննում է նահանգական դատարանի վճիռը և նոր վճիռ է կայցնում: Եթէ վիճող կողմերից մէկը անբաւական է նահանգական դատարանի վճռից, կամ վճռի մի մասից, նա դործը պալատ է գրցում: Պալատը իւր վճիռը մեծ մասամբ առաջւայ դրծավարութեան տեղեկութիւնների վերայ է հիմնում, թէպէտ իրաւունք ունի հարկաւոր դէպքում վկաններին և մեղադրեալին նորից հարցնել: Վերջինը շատ հազիւ է պատահում: վճիռը կայացւում է մեծ մա-

1) Ֆինլանդիան Ռուսաստանի վիճակն է (պրովինցիա), որը ընդ միշտ միացրած է Ռուսաստանին (union réelle). Սակայն՝ Ֆինլանդիան ունի սեպական պետական կազմակերպութիւն և կառավարութիւն:

սամբ առանց վկաների և մեղադրեալի ներկայութեամբ, միմիայն գործավարութեան հազորդած տեղեկութեան հիման վրայ:

4) Միշղեռ բուն Ռուսաստանում հաշտարար դատարանը բոլորովին առանձնացած է ընդհանուր դատարանից, կովկասում՝ վերջինը ենթարկւած է նահանգական դատարանին, որը վերաբննութեան աստիճան է կազմում: Խակ Թիֆլիսի դատարանական պալատը կազմում է վերջին և վճռաջինջ աստիճան նահանգական դատաւորների համար:

5) Կովկասում հաշտարար դատաւորը, բացի իւր պաշտօնից, կատարում է և քննիչի պաշտօն, որի համար նա օգնական ունի (Պօ-Կոպնիկ միջազգային սահմանադրութեան կազմում) մինչղեռ Ռուսաստանում՝ դատաւորը բոլորովին չէ խառնուում քննական գործերին:

6) Դատախազութիւնը կովկասում աւելի լայն իրաւասութիւն ունի, քան բուն Ռուսաստանում: Օրինակ, դատախազին իրաւունք է արւած, երբ մեղադրեալը արդարանազ նահանգական դատարանում կամ պալատում՝ պահանջել որ մեղադրեալը բանտից չ'արձակվի, մինչև վճռաջինջ դատարանի վճիռ կացնելը:

Նոր դատարանական կարգը իւր հիմնական սկզբունքներով (եթէ առնենք իրենց սկզբնական մաքրութեամբ), Ռուսաստանի կեանքը մօտեցնում է եւրոպական առաջաւոր ազգերի կեանքին: Այս է դատաստանագրքերի ամենամեծ նշանակութիւնը և նրանց մատուցած ամենամեծ օգուտը: Դատաստանական վերանորոգութիւնով Աղէքսանդրը Ա կայսրը կամեցաւ օրինականութեան առաջին հիմքը դնել: Ապագայում, երբ նոր դատաստանի սկզբունքները զարգանան, այն ժամանակ աւելի պարզ կը լինի Աղէքսանդր Ա-ի վերանորոգութեան նշանակութիւնը: Սակայն դատաստանական վերանորոգութիւնը միակ բանը չէր, որով Աղէքսանդր Ա- անմահացրեց իրան. նոյն նպատակին ծառացում է և նրա երկրորդ վերանորոգութիւնը, այն է տեղական ինքնական վարութիւնը:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1837—1887. ՅԻՍԱԱՄԵԱԿ Հայոց Հոգևոր Թեմական Դպրանոցի Երեւանաց Տփխիս. տպարան Վարդանեանցի, 1888. քառածալ 321 էրես,
չորս մեծաթերթ յուցակներով:

Ներկայ հրատարակութիւնը, իւր տեսակում, առաջին օրինակն է մեր գրականութեան մէջ: Դեռ ևս ոչ մի Ռուսա-հայ դպրոց չէ չաւէրժացրած իւր պատմութիւնը մի հրատարակութեամբ, որտեղ առաջ բերած լինէին դպրոցին վերաբերեալ պատշաճաւոր կերպով համակարգւած եղելութիւնները՝ մի երկարամաս չօքէլեանի առիթով: Հայկական գրականութիւնը ունի արդարեն պատմութիւններ Պարիզի նախկին Մուրադեան վարժարանի, գրած հայ թէօգորեանի ձեռքով, Խալիպեան ուսումնարանի մասին՝ գըրած Գաբրիէլ արքեպիսկոպոս Ակվաղեանի ձեռքով և հրատարակւած նորա մահից լետով. բայց դոքա գըրած են անհատական նախաձեռնութեամբ և ազ նովառակներով, քան ներկայ հրատարակութիւնը:

Այս գիրքը նշանաւոր է ոչ միայն իւր տեսակի նորութեամբ, ազ և նորա բովանդակութեամբ և, որ աւելին է, նորանով չարուցւած բաղմատեսակ խնդիրներով: Ինչ վերաբերում է վեր-

ջիններիս, գրախօսութեան մէջ տեղը չէ, որ նոցա մասին խօսւի. զոյցա մննք կը նւիրենք մի ազ չողւած՝ բաւականանալով այստեղ խօսել գրքի մասին միայն գրախօսական տեսակէտից՝ որպէս գիրք և բովանդակութիւն:

Գիրքը բաժանւած է երեք մասերի, որոնցից առաջինում ներկալացւում են կարեսոր տեղեկութիւնները Դպրանոցի գոլութեան իւրաքանչիւր տարւաչ համար առանձին-առանձին. երկրորդ մասում հրատարակութեան պաշտօնական խմբագիրները աշխատած են ամփոփել առաջին մասում առաջ բերած նիւթերը առ արկա չ-առ արկա լ. խկ երրորդ մասում զետեղւած են Դպրանոցի կանոգը ութիւնները, Դպրանոցին նըւերներ տած անձերի անունները և, վերջապէս, չորս մեծ յուցակներ, որոնց մէջ ամփոփւած են Դպրանոցի պատմութեան բոլոր անուան ական և թւանշան ական տեղեկութիւնները:

Դպրանոցի պատմութիւնը բաժանւած է երկու շրջանների, որոնցից առաջինը բարում է 1837—1849 թւականները, իսկ երկրորդը՝ 1857—1887 թւականները։ Դորա պատճառն այն է, որ 1849-ին թեմական Դպրանոցը փակւեց Ներսէս կաթողիկոսի հրամանով, և այն պատճառով, որ, ասում է մեծ կաթողիկոսը, «Անմիտարիա անոնը նշանակում է սերմարան և... աղ մեծ անոնը դրած են մի մանկալարժարանի վերաէ, որից ահա 10 տարուց աւելի է որ սերմարանական ոչ մի արդիւնք չի տւել... Իսկ ժողովրդի մանուկների համար աշխատենք շինել մանկական վարժարաններ խրաբանչւար և կեղեցու գաւթում... ուր ուսանեն 7—13 տարեկան մանուկներ»։ Դպրանոցը կրկին բացում է 1857 թւականին։ Վէտք է առած՝ թեմական Դպրանոցի բացումը, փակումը և կրկին բացումը կապւած էն եղած Երեանի թեմական կոնսիստորիայի ստեղծւելու, Երեանից Վաղարշապատ տեղափոխւելու (1846 թ.)։ և վերստին Երեան տեղափոխւելու հետ (1857 թ.)։ Առաջին շրջանը (10 տարի) բռնում է ընդամենը 28 երես, իսկ 1857—1887 երեսնամենաց շրջանը՝ 229 երես։ աղնապէս որ, քանի մօտենում ենք մեր օրերին, աղնքան տեղեկութիւնները առատ են և, օրինակ, վերջին 1886—87 թւականը բըռնում է զրքի 33 երեսը։ Այդ բացառը բռնում է նորանով, որ ինը տարիների համար արիխում նկաթերից շատերը պակաս են և, վերջապէս, Դպրանոցը առաջին տասնեակներում այն կարևորութիւնը չէր ներկայացնում, ինչ նա ունեցաւ վերջին տա-

րիներս։ Եւ արդարե, Դպրանոցը, որ թեմական դպրոցի, Ներսէս կաթողիկոսի ասած, մեծ անունն էր կրում։ ոչնչով չէր տարբերում մի հասարակալքաստիկ ծխական դպրոցից մինչև 70 թւականների մէջերքը, քանի որ Դպրանոցը ունեցած է եղել 1876 թւականին Յ պատրաստական և միմիաւն 1 հիմնական դասասուն։ Միմիաւն այս վերջին տասնեակ տարիներում Դպրանոցը բացեց աստիճանաբար 2-դ, 3-դ, 4-դ, 5-դ, և, վերջապէս 1887 թւին, 6-դ հիմնական դասասուն, ունենալով, միենոն ժամանակ, Յ պատրաստական դասարաններ։ Համեմատ զարգացման այդ եղանակին՝ Դպրանոցը ունենում է ծախք՝

1837—38-ին	810 ր.
1845—46-ին	280 "
1862—63-ին	2031 "
1876—77-ին	3408 "
1878—79-ին	6188 "
1883—84-ին	7898 "
1886—87-ին	9371 "

Գիրքը մանրամասն տեղեկութիւններ է տալիս իւրաքանչիւր տարւայ ուսուցչական խմբի, անսուչների, հոգաբարձուների մասին և այդ տեղեկութիւնները զուրկ չեն հետաքրքրութիւնից։ Ազդպէս է, որ իմանում ենք, թէ Դպրանոցի զուրութեան սկզբներում, 1839—41 թւականներին, տեսչի պաշտօնակատար է նշանակում ազգով լոյն ուռւ քահանաւ ոմն Ռօմանով։

Առհասարակ պէտք է ասած, որ Դպրանոցի սկզբնական տարիներում ուռւ-գպրոցական կարգը ազդեցութիւն է ունենում դպրոցի վերաէ։ 1844—45 թւականին, օրինակ Սինոդը ու-

զարկում է Սեմինարիակի համար կանոններ՝ Երևանի փոխանորդի ի հաստատութիւն Սինողի առաջարկած կանոնները, որոնք սկզբում լինում են ուռւերէն կազմած: Սինողը, թարգմանել տալով, ուղարկում է ի գործադրութիւն (եր. 22): Միւս առարկաների մէջ սուսաց լեզուն համարուում է վսեմ առարկաց:

Ուսուցիչների ուռիկների բաժանելու ձեփի կողմից՝ որոշում ենք ըսրջանը մինչ 1860 թ. և ալդ տարուց դէսը. միան այդ թւականից սկսում են ուռիկները բաժանել ամսէ ամիս:

Ամենակարենոր փոփոխութիւնը, որին ևն թարկում է Դպրանոցը իւր գոտութեան ընթացքում, կատանում է նորու կառավարութեան մէջ: Հիմնելու օրից մինչ 1860 թւականը Դրանոցը անմիջապէս կառավարում է է տեղական կոնսիստորիակի և թեմակալ փոփոխորդի ձեռքով. 1860 թ. մարտի 23-ին Մատթէոս կաթողիկոսի հայրապետական կոնզակով և Սինողի նոյն թւակ. սեպտ. 15-ի որոշմամբ՝ կարգուում է հոգաբարձական հաստատութիւնը Երևանի Դպրանոցի համար: Հետաքրքրել տալ յողավրդին ժողովրդական կրթութեան դործով, դըրգել նորան՝ նիւթապէս նախատել ուսումնարանի դուռութեան և առաջդիմութեան՝ ահա այն շարժառիթները, որոնք թելալրում են կաթողիկոսին ստեղծել ալդ հոգաբարձական հաստատութիւնը:

Հոգեոր կառավարութեան լուսերը առկան, որպէս վիրապում է մեր առաջը դրած հրատարակութիւնը, շուատ չեն իրազործուում: Ելի զրեթէ հոգեոր կառավարութեան աղբիւրներով

էմիակն կառավարուում Դպրանոցը մինչօրս: Զարմանալի է ալդ կողմից Երեւանցոց, կարելի է ասել, քարասրառութիւնը դէպի իրանց ազգակին Դպրանոցը: Ո՞չ մի նւիրատութիւն է անում, լինում է մի Շուշիցի Ալեքսանեանց, որը նւիրում է 2000 ր.: Բայց ալդ օտարաժքաղաքացու բարերարութիւնը օրինակ չէ զառնում Երևանցոց, այնպէս որ իսկապէս միայն 1878 թւականից սկսում են Երևանցիք սասրազրւել շատ թէքիչ խոշոր գումարներ. բայց, ոճ, առատածեռնութիւն, խոստունք և գործ անպէս իրար հետ միատին են գնում, որ 1881—82 թւականին հոգաբարձութիւնը վճռում է դատ բանալ մինչև արժմ չը վճարած սոտրագրողների դէմ: Խնչ և իցէ, լինամեակի վիրջը 1885—86 թ. անձեռնմխելի գումարի անունով կար մօտ 14.000 ր., որից սական միսելի էր եղած արդէն աւելի քան 6000 ր. ասել է թէ զարոցական մշտական աղբիւրները չեն բառում սովորական ծախքերը ծածկելու համար:

Երևանի թեմական Դպրանոցում ծառալած են, աւելի կամ պակաս անուն վաստակած ուսուցիչներից և գործիչներից՝ Մելեանց Յովսէփ քահանաէ, Արտօվիք վարդ. (յետոչ եպ.), Աղափիրեան Դրիգոր վարդ. (ակժմ եպ.), Զալալեան Ռուբին, Բէդնազարեան Սարգիս, Տէր-Ցարութիւնեան Գէորգ, Աղական Ղազարոս, Քալանթարեան Դաւիթ, Բարաջանեան Վասակ, Նաւասարդեան Բազրատ (բժ.), Տէր-Աւոնդեան Նիկողայոս և Յովհաննիւեան Արխաողոս:

Տեսուչներ ունեցած է Դպրանոցը առաջին շրջանում՝ 5, երկրորդ վերջին՝ 30-ամյակ՝ շրջանում՝ 9, բացի այն, որ 1867—1871 տեսչութիւն անում էն թերթակալի գոփանորդները՝ Անդրովէ վարդ. (աղժմ եպ.), Մեսրով վարդ. (աղժմ արքևպիտկ.), և Մկրտիչ արքևպիտկ., Բարսեմեան:

Տեսուչների ցուցակից վշենք՝ Դորդանեան Յովհաննէս (1861—1863 և 1865—67), Մելիան Յովհէփ Քահանաւ 1862—65 (լնդմիջումով), Աղափիրեան Գրիգոր վարդ. (աղժմ եպ.) 1863—64, Ստեփանէ Խորէն վարդ. 1872—73, Քէզնաղարեանց Ս. (աղժմ.ք.) 1876—86 և Յովհաննիսեան Արքանոցի 1886—88:

Դպրանոցի թէն նիւթական և թէ մըսաւոր, բայց մանաւանդ լարտական զրութիւնը, պէտք է որ շատ աննախանձելի եղած լինի: Դորա լաւագուն ասպարոցը մենք գտնում ենք ուսուցչական խմբի հոգաբարձութեանը տաճ բաղոքալի մէջ Դպրանոցի տեսչի դէմ 1878—1879 թւականին. և զա՞ նո՞ն տեսուչն է, որը տիտուր վիշտակի արժանի գեր պիտի խաղար Երևանի Դպրանոցի առելի բարձր՝ թիֆլոսի Ներսիսին Դովորոց: Ահա թէ ուսուցչական խումբը ինչպիսի մի թուղթ զրելու է ստիպւած տեսնում իրան մի տեսչի դէմ, որը սական վաելում էր հոգաբարձութեան հովանաւորութիւնը: Առաջ ենք թերում զրքի ազդ կտորը in extenso. «Յունաւրի 14-ին մի ընդարձակ լայտարարութիւն են ողարկում հոգաբարձութեանը, բացի Սալուստեանից, բոլոր ուսուցիչների ստորագրութեամբ, ուր գրում են, որ ներկայ ուսումնական տարրուաչ հէնց սկըզբից շարունակ, թէ բանաւոր և թէ

զրաւոր կերպով, բողոքել են ալ. Բէդնաղարեանցի բարուական և մանկավարժական սխալանաց դէմ, որոնք են՝ մի. աշակերտներին չափազանց դրաւոր և մտաւոր աշխատանքներ տալը: Բ. աշակերտներին չարաչար ծեծելը, որպիսի զիալուածում մի անդամ անձիքո սաստիկ ապաւակեց, որ իւր մատի մատանին կոտրուեց: Գ. առօնց մանկամարժական խորհրդին հարցնելու՝ տարրուաչ ընթացքում աշակերտները ընդունելն, արձակելն, արձակուածը վերստին ընդունելը և աշակերտը մի դասարանից միւսուը փոխաղընելն: Դ. աշակերտներին ժամելով դուրսը ցրուում կանգնեցնելը: Ե. ուսուցիչների հետ առհասարակ կոպիտ վարմունքը: Զ. ուսուցիչների դասախոսութեան ընդհատելը և անձամբ նոյնը շարունակելով, վայր ձըգելն աշակերտաց տուաջ ուսուցչի վարկը: Լ. ուսուցիչներին մանկավարժական ժողովներում «Աշ» անուանելը: Ը. ուսուցիչներին վիմար, անհոգի, խարզախ անուանելը, որից անցեալ ամի գեկտ. 29-ին ծագեցաւ մի փոքրիկ տարաբազզ անցք և աչս վերջնից՝ ներկաւ խովութիւնը տեսչի ուսուցչաց մէջ: Թ. իւր զատերը թողնելը և, որպէս թէ նոցա փոխարէն, ծխական զպրոցում փորձնական դասեր խօսելը, փոխանակ ազդ իւր կատարից աղաս միջոցներումն անեղաւու: Ժ. ն-դ դասեր թողնելը և աչդ միջոցումն մանկավարժ. խորհրդի նխառել կապացնելը: Ժ. հոգերէն զրութեան մէջ ունեցած ուղղազրութեան դէմ սխալները, Ժ. անպիսի զասաղբեր Դպրանոցում մացնելու համար լամառութեամբ աշխատելն: Ժ. վայր

ընկնող աստղերի մասին աշակերտաներին տուած թիւր բայցատրութիւնը, երեխ Նահանգան դիտելեաց» զրքից օգուտ քաղելով։ ԺԴ. Երեք ամիս շարունակ միաէն կիւրոսի պատմութիւնը ուսուցանելու։ ԺԵ. առհասարակ մանկավարժական խորհուրդների մէջ իւր կարծիքը միշտ չամառութեամբ պահպանելը և ուսուցիչների կարծիքը բացէ ի բաց մերժելու։ ԺԶ. աշակերտներին դէպի ուսուցիչները դրդուելը

ազն և ազն։ Եւ նոյն ազդ մարդը 10 տարի տեսչութիւն արեց Նըսանի Գալրանոցում, որպէս վկանում է ներկայ զիրքը։

Գիրքը կազմած է խճամքով, բավանդակում է հարուստ նիւթեր, որոնք դասաւորւած են խելացի խմբագրութեամբ։ Բայց թէ արգեօք որքան լիակատար է անձնուննաս և նք դատելու։

—

ՆԱԽՍՍՐԴԵԱՆՑ ՏԻԳՐԱՆ — «ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՅՇԻԱՅԹՆԵՐ», Զորբորդ գիրք։ Թիֆլիս, 1888. տպ. Վարդանեանի, 8-Ճալ, տառ. № 12, գինն է 50 կ.։ Նոյնը՝ Հինգերորդ գիրք, 1889 թ., 80 երես և յաւելած «Արարատեան բարբառ» (բառարան) երես 80—143։ 1889 թ. գինն է 50 կոպ.։

Այն ժամանակներից, երբ գերմանացի Յակովի Գրիմմը, հայրենական լեզուի, գրականութեան և հնագիտութեան գիտնականորէն ուսումնասիրներու ուղղութեան հիմնադիրը, իւր եղբայր Ալբերտի հետ հրատարակեց «Մանկական և տնաւին հէքիաթները» (Kinder-und-Hausmaerchen), երեք հատոր, 1812 թւականին, «Գերմանական զրոցներ» (Deutsche Sagen), երկու հատոր, 1816-ից մինչ 1818 թ. «Իրանդացոց կախարդական հէքիաթներ» (Irische Elfenmaerchen), 1826 թ., — ժողովրդական աւանդութիւնների, հէքիաթների, առածների և ազն ժողովելը նաև միւս երկրներում դարձաւ և կարեռի և պատւառը գրական գործ։ Այդ հէքիաթները և աւանդութիւնները, զրւած անողիս, ինչպէս ժողովրդը պատմուած է, մնա նիւթ է

տալիս գիտնականներին, որոնք ուսումնակիում են մի ազգի լեզուն, նրա բանաստեղծական ովին, ժողովրդական հաւատալիքները և ազն և ազն։ Հէքիաթների հետ կապւած է նաև մանկական գրականութեան մի ձիւզը, որը ժողովրդական հէքիաթներից նիւթ է քաղում՝ անբնականի մէջ ևս զւարճութիւն գտնող մանկական վաւ երեսականութիւնը զրադեցնելու համար։

Մեղանում գրականութեան ազգ ձիւզը նոր է սկսում զարգանալ բայց որ ուրախալին է, ազդ զործի մէջ արդէն մտել է գիտակցութիւն։ Ժողովել հէքիաթները և աւանդութիւնները բոլորովին անողիս, ինչպէս նոքա ժողովրդի լերանով պատմուած են, կարող է միան նոցա գիտական և կրթական նշանակութեան գիտակից

մարդը։ Ազդ գործին ձեռնամուխ լինողից պահանջւում է ամևնից առաջ բարեխղճութիւն։ Նորանից չէ պահանջւում, որ առաջ քերած հէքիաթները լինին անպատճառ լաւ, անպատճառ հետաքրքրական, անպատճառ գեղարեսատօքէն պատմւած, —ոչ, այդ տեսակ գրւածները ժողովողի հեղինակութիւնը չեն, ուրեմն և նա պատասխանատու չը պիտի լինի նոցաներքին արժէքի համար։ Բայց նա, այդ ժողովողը, պէտք է անպատճառ պատասխանատու լինի իւր հրատարակած հէքիաթների և աւանդութիւնների ճշգութ և առաջ և անդամար։ Ազդ ձեռվ հաւաքած հէքիաթները նշանակւած չեն երեխանների ձեռքը տալու համար, այլ նոքա նշանակւած են բանստէրների և ընդհանուր գրականութեան համար։ Թող, ով ինչպէս կարող է, նոցանից օգտւի—լեզվագէտը՝ ժողովը դական ոճերից, բառերի ձեւերից, պատմաբանը՝ այդ պատմութիւնների մէջ արտակալուող ժողովրդական ոգուց և պատմական եղելութիւնների հետքերից, բանստեղծը՝ պատմւած աւանդութիւնների մէջ արտաքայտած բանստեղծական և հոգեբանական դրութիւններից, և այլն և այլն։

Այս պատմէս լինելով, հասկանալի է, թէ ինչու պ. Տիգրան Նաւասարդեանցի հէքիաթների ժողովածուի առիթով, մինք այստեղ, դրախոսական բաժնում, ոչ այնքան պիտի կանգ առնենք նորա ժողոված հէքիաթների ներքին արժանաւորութեան վերակ, որի համար ժողովողը չէ պատասխանատու, այլ ինքը ժողովուրդը, որքան ժողովողի անձնաւորութեան վերակ, Մեղ հարկաւոր է իմանալ, թէ

ինչ դրաւական է ներկալայնում պ. ժողովողը իւր պատմածների ճրշդութեան համար, որ չափով նա կարող է հեղինակութիւն, աւտօրիտետ համարել, իբրև կենդանի ձայն ժողովրդի։ Ազդ հարցին մինք մի որոշ չափով պատասխանած կը լինենք, եթէ առաջ բերենք պ. Նաւասարդեանցի հէքիաթների ժողովիլու ձեր, եղանակը, վերջապէս պատմութիւնը այնպէս, ինչպէս մինք այդ անձնական ծանօթութիւնից իմացած ենք։

Պ. Հաւաքողը բնիկ Վաղարշապատցի է. իւր ուսումը ստացել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում, Նա հէքիաթների էտեսից ընկել է 1876 թ. դեռ ես իբրև աշակերտ փշած դպրոցի։ Նա այդ անում էր, օգտեկրով ամրան արձակուրդներից, գնալով իջմիածնի, Նրեանի, Նոր-Բալաղէզի, Գանձակի և Շուշաչ զաւառները։ Ժողովում էր՝ գիւղերում անուանի հէքիաթ-ասողներին պատմել տալով և նոյն հէքիաթը մի քանի մարդկանց բերանից լսելով։ Պ. Նաւասարդեանցը սկսել է աւելի պարապել այդ գործով, երբ նա 1879 թւականին դուրս եկաւ Ներսիսեան դպրոցից, որից էտ, 1880—82 թւականներին, ուսուցչութիւն արաւիւր հայրենի Վաղարշապատում։ Ազդ հանգամանքից օգտեկրով, նա ստարացրել է իւր ժողովածուն, որ և սկսել է պարբերաբար հրատարակել, Առաջին գիրքը լուս է տեսել Վաղարշապատում 1881 թւին։ Նոյն տարում հրատարակեց նա երկրորդ գիրքը Նրեանում և երրորդ գիրքը՝ Թիֆլիսում։ Դոքա բոլորը կրում են մի վերնագիր, որ և այս տողերի ճակատին վիշտած է, Բայց, բացի հրատարակու-

թիւնների ալղ շարքից, 1882 թւականին պ. Նաւասարդեանցը լուս ընծացեց իւր ժողոված «Հակ-Ժողովրդական Աւանդութիւններ» անունով զիրքը, որը բովանդակում է իւր մէջ՝ առածներ, երգեր, օրհնութիւններ, հանելուկներ, երգումներ և այլն։

1884 թ. պ. Նաւասարդեանցը գնում է արտասահման՝ օժանդակութեամբ պ. գնդապետ Մելիք-Հայկազիանցի և Կովկասի ու Բաքուի Բարեղործական Ծնկերութիւնների Աւտեղ նա լսում է զրականութեան մասին դասախոսութիւններ, և մասնաւրապիս հետամուռ է վճում իւր բնտրած ձիւղին վերաբերեալ զրականութեան։ 1887 թւին նա վերադասում է Թիֆլիս, ապա Վաղարշապատ, որտեղ շարունակում է իւր սկսած ձեռնարկութիւնը։

Գլխաւորապէս միջոցների սպութեան պատճառով, բոլոր վեց զիրքերից հրատարակած են 300, 400 և միան հինգերորդը՝ 600 օրինակով։ բոլորն էլ հասարակ թղթի վրայ առաջին չորս զիրքերի զինն է 30 կոպէկ, վերջին երկուսինը՝ 50 կոպէկ։ Միմիան որպէս մի հանդամանք, աւելացնենք որ 4-րդ զիրքը տպարանում շարել է ինքը հրատարակիչ հաւաքողը։

Բոլորը, ինչ հրատարակւած է Արարատնան բարբառով, ինքը հրատարակիչն է հաւաքել ժողովրդի բերա-

նից անմիջապէս, իսկ ներկաւ Վ զըրքում հրատարակւած ին նաև Խրիմուն և Լուսու բարբառներով հեքիաթներ, թւով 8 կտոր, որնց հաւաքողները պ. Հմագեակ Մաժինեանցն է բնիկ Լուսուցի և Գրիգոր քահանաւ Մատինեանցը՝ Թիֆլիսեցի, բայց երկար տարիներ նրիմում ուսուցչութիւն արած, որոնք և ներկազումն Թիֆլիս գտնւելով իրենք են անուած ալղ հեքիաթների սրբագրութիւնը տպագրութեան ժամանակի՝ աեղական բարբառի հարաբառութիւնը պահպանելու համար։ Հաւաքողը նոյնպէս ունի Պարաբաղի, Գանձակի և Վանի բարբառներով ձեռագիր աւանդութիւններ, որոնք նա ինքը չէ հաւաքել ժողովրդից անմիջապէս, այլ ստացած է ուրիշներից։ Դոցա հրատարակելու համար պ. հաւաքողը բարեւաջող առիթների է սպասում, որ ինքը լաւ ծանօթանակ ապ բարբառների հետ՝ սրբագրութիւնը լսու կատարելու համար։ Ի վերջոց աւելացնենք, որ ներկայ Վ զրքում գետեղւած է և մի բառարան Արարատնան բարբառով բարորը աղն բառերի համար, որոնք հրատարակւած հեքիաթներում գործ են ածւած և որ և բացատրութեան կարուուն։ Դոցա թիւը մօտաւորապէս 3000-ի է հասնում։

Е. П. Ковалескій. Е. Е. Марковъ. НА ГОРАХЪ АРАРАТСКИХЪ
(изъ поѣздки студен. экsp. по Закавказью). Съ рисунками художника
С. В. Иванова. Москва 1889 г. шапк. № 12. 8-дшл, 316 երես,
գինն է 1 ր. 50 կուպ.:

Անցեալ տարի, օգոստոս ամսին, Անդրկովկաս եկաւ մի խումբ ուստ ուսանողների, որոնք պիտի բարձրանալին Մեծ և փոքր Մասիսի վրայ, որը և կատարեցին օրոտոսի 12-ին. լեռով նոր նւաճած երկրով նորա ածցան Բաթում, որտեղից և վերադարձան հրամա: Այդ խմբից երկուուր՝ պ. Ե. Կովալևսկին և պ. Մարկովը՝ զրել են իրանց Անդրկովկասում արած ճանապարհորդութիւնը՝ «Արարատեան սարերի վրայ» անունով վերադիսեալ նոր հրատարակած գեղեցիկ, մաքուր տպած գրքում, որի մէջ կան մի քանի նկարներ տեղական կեանքից: Դրիբ մի մասը զրել է պ. Կովալևսկին, իսկ միւսը՝ պ. Մարկովը: Ճանապարհորդութիւնը պատմում է հեշտ ընթերցանելի, թերեւ, քէլիշանական ընդուլ:

Կական ծով տեսել), ինչպէս և հենց սովոր հայ ժողովուրդը այդ անում է, տալով արևեստական աւազաններին (բասեանի) էլ ծով անունը: (Օրինակ Գողթնում, ուր մի քանի գիւղերում բազմաթիւ են այդ տեսակ աւազաններ. այդ (ծով) երում հաւաքւում է աղբիւրներից ջուրը և լեռով ուղղելու համար բաց թուլում): Եւ վերջապէս ինչ զարմանք բան է, որ սկզբ բից Ժողովուրդը այդ ահազին, ջրավին տարածութեան ծով անունն է տել, որը և անցել է սերնդից սերունդ և ոչ թէ լեռով է ստեղծւած «ազգասիրութիւնից»: Զեսը այդ լճի նմանութիւնը ծովի հետ անքան մնձ է, որ գիտնական պարուն էլ ակամաց ասում է. «Էտա եզօքայ, գուբայ ճալ դո օօմանա հայունատ մօր».

Անախորժ տպաւորութիւն են թողնում հայ ընթերցովի վրայ տեղ-տեղ պատահող ոճը և վագր ի վերոց տեղեկութիւնները հայերի վերաբերմամբ: Օրինակի համար, պ. Կովալևսկին կարծում է՝ թէ հայերը Սևանակ լճի համար (ծով) բառն են դործ ածում՝ ազգասիրութիւնից զրուած, «ինչպէս որ պատրաստ են միշտ ծաղկացնել և բարձրացնել իրանց հարսղաւը» (եր. 24): Ո՞չ, այդ չէ պատճառը. այլ հին հայերը պարոնի չափ հմուտ չեին աշխարհագրական տերթիւններում. նորա (ծով) բառին մի որոշ, զուտ աշխարհագրական միտք չեին տալիս (նախնի հայ ժողովուրդը որտեղից եր իս-

ձին նորութիւն է, որ հոգևորական դասի՝ քահանաների՝ ժառանդները, թէ ուուների և թէ հավերի մէջ, չափանի առանձնաշնորհումներ ևն վայլում, ուրեմն բոլորովին աճանեղի է բայցականչութիւնը՝ «Տօ-Տօ Եւ Արմենի տեղի շուրջ առաջարկութեամբ»:

Այս զրգում մի քանի իրաւացի նկատողութիւններ էլ է անում. իբրև թէ հայ հոգեորականութիւնը ժողովի, մէջ նախապաշտրմունքներ է տարածում Արարատի մասին (եր. 157):

Այս զրգում մի քանի իրաւացի նկատողութիւններ էլ կան: Ուուս ուսանողներին զարմացնում է Սևանալ հայոց վանքի ուղանի վրայ գտնել ուսուվարպեսի վրձինին պատկանող մի պատկեր. «ՏՅ. Սմոլենսկոյ Եօնի Մատեր» վերնազրով: Նոյնպէս երեկի իրաւացի է, որ կչմիածնի թաճզարանի

եկեղեցական զարդերի թաճնկագին քարութիւնը, մարդարիտները ու աղամանդները հրաշքով փոխել են հասարակ ասբակու կտորների... Ուուս ուսանողներին հիացրել են Արդուինի հայուհները իրանց գեղեցկութեամբ: Գրքիս մէջ պատահում են օրինակ ալսպիալ սխալներ. «Շարմամ» (եր. 130), «Տար Խաւմ Ա» (եր. 132), «Դարեպէ Ըստա Եագուանց» (եր. 239) և այլն:

Առ հասարակ այդ գիրքը կարգացում է հետաքրքրութեամբ, նամանաւանդ հետաքրքրական կը վիճի ուուս հասարակութեան համար, բայց սփոսն որ, գուցէ ակամաէ, պիտի տարածեն հեղինակները մի քանի ես ըստիալ, թիւր կարծիքներ հայերի մասին: 1. Ա.

ԳԱՆՉԱԿԻ ՆԱՀԱՆԳԻ, ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՎԵՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԻ՝ Քաղաք Կովկասի ազգա-ընակութեան ընտանիքների յուցակից: Հաստարակութիւն Կովկասի ՎԵՃԱԿԱԳՐԱԿԱՆ Մանաժողովի: (Елизаветопольская губерния). Сводъ статистическихъ данныхъ, извле-ченныхъ изъ посемейныхъ списковъ населенія Кавказа. Издание Кавказскаго стати-тическаго Комитета: Тифлисъ. тип. И. Мартirosianца. 1888: Մի մեծ քարտէզով Գանձակի նահանգի, քառածալ, մեծ, XVII և 475 երես, անունների այլը բենական յուցակ ուուսերէն և ֆրանսերէն և յաւելած՝ նահանգի վարչական բաժանման մասին՝ 54 երես:

Ներկաւ հասորը, որպէս ասւած է լառաջարանում, շարունակութիւն է նոյն վիճակագր. մասնաժողովի հրատարակած «Համագումարի», որի վեցերորդ հրատարակութիւնն է կազմում ներկաւ հասորը:

Այս զործի խմբագրութիւնը պատկանում է իսկական պետական խորհրդական պ. ԶԵՂԱՂՄԱՐԻ, որը Կովկասի պիճակագր. մասնաժողովի կառավա-

րիչն է «գլխաւոր խմբագիր» անու-նով: Այդ վերջին աստիճանի կարենորդութիւնը օգուտ քաղելուց առաջ, անհրաժեշտ համարում մի քանի խօսք ասել զործի խմբագրութեան մասին առհասարակ: Խճչ է Կովկասի վիճակագր. մասնաժողովը: Դա՝ մի զիտնական հիմնարկութիւն չէ, օժտւած գիտնական ոչժերով: Այդ մասնաժողովը Կովկասի կառավարչութեան: ՕՐ-

դաններից մէկն է և նորա կառավագարչը կամ «զլխաւոր խմբագիրը» նըշանակւած է այդ պաշտօնի համար տասնեակ տարիներից ի վեր, առանց որ նա զիտնական կոչում ունեցած լինի վիճակագր, աշխատանքներ կատարելու, Մասնագիտութեամբ պ. Զէջլիցը բուսագէտ է, բուսանիկոս, Դասելով նորա մինչ աչժմեալ գործունէութիւնը, մենք գալիս ենք այն եղանակացութեան, որ պ. Զէջլիցը անկարող է եղել թերես մասնագիտութեան պակասը լրացնել, Շնորհիւ իւր մասնագիտական անպատրաստութեան, մինչ աչժմ մի ալդքան մեծ անուն կրող հաստատութեան կառավարիչ չի կարողացել որ և է գրական-գիտական աշխատանքով մի անուն ստեղծել գիտնական աշխարհում և ոչ իսկ կովկասի, համեմատաբար այնքան անձուկ, գրականութեան մէջ, Բայց երկու բան, որ չի կարելի մերժել պ. Զէջլիցին՝ այդ նորա մեծ ջանասիրութիւնն է և կարողացածին չափ՝ բարեխղճութիւնը:

Ինքը վիճակագր. մասնաժողովը, որպէս ասացինք, զիտնական հիմնարկութեան ոչ մի պամանը չունի. Հաւաքած տեղեկութիւնները կատարում են նահանգապետների, գաւառապետների, բայց անմիջապէս միան պրիտանիների, եասաւուլների և տանուտերերի ձեռքով։ Եւ ինչ ճշգութեան գրաւական կարող են ներկայացնել այդ մարդկանց ձեռքով հաւաքած տեղեկութիւնները— աւելորդ է անդամ ասելն ու խօսելը։

Ազգանը բաւական է համարցնելու համար, որ ընթերցաղը մեծ խլուրութիւն պէտք է անի Եւրոպացում

հաւաքւող վիճակագր. (առաջիատիքական, թւազրական) նիւթերի և մեղանում հրատարակող վիճակագր. նիւթերի մէջ, մանաւանդ ինչ վերաբերում է ազգաբնակութեան, Եւրոպացում կատարող թւազրութիւնը ներկայացնում է մեծամեծ գրաւական-ներ ճշգութեան համար և կամ գոնէ որոշում է ճշգութեան աստիճանը. խոկ մեղանում այդ չը կաչ և բոլոր տեղեկութիւնները պէտք է ընդունելն իբր վերաստուգելի, և ուրեմն միան մօտաւորանդէս ճիշդ, և այդ «մօտաւորապէսը» չաճախ չատ «հեռաւոր» կարող է լինել։

Ի հարկէ, նաեւ վարչական ձեռվ ժողովւլը ենթակալ է կատարելագործութեան։ Եւ աչպէս, 1873 թւականին կամերամը շատ աւելի անկատար էր, քան 1886 թւականին ժողովածը. մենք ինքներս առիթ ենք ունեցած այդ բանին վերահսա լինելու. Ուրեմն համեմատել 1873-ին վերաբերեալ թւերը 1886-ին հաւաքած թւերի հետ և դորանից եղանակացութիւնները դուրս բերել ազգաբնակութեան աճման աստիճանը ցուց տալու համար՝ գրեթէ միտք չունի։

Այս ասելուց լեռ, առաջ բերենք Գանձակի նահանգի վիճակագրութիւնից լից ընդհանուր եղանակացութիւնները։

Գանձակի նահանգը բաղկացած է հետեւեալ դաւառներից, որ մենք դասաւորում ենք իրանց մեծութեան համեմատ։

Գանձակի դաւառ. 8.398 քառ. վ. ¹⁾
Զանգեզուրի » 6.644 »

1) Մի քառակուոփ վերսուը = 1.1380²¹ քառակուսի կիլոմետրին և 104.₁₇ դեսետինին։

Ղաղախի	»	6.092	»
Շուշւաչ	»	4.446	»
Ջիւանչիրի	»	3.904	»
Նուխտաչ	»	3.284	»
Արեշի	»	28.229	»
Զեբրակիլի	»	2.749	»
		3.8340.3	»

Բնակիչների խտութեան կողմից, դաւառները աչս հերթով են զասաւորած.

Նուխտաչ, Շուշւաչ, Զանդեզուրի, Արեշի, Զեբրակիլի, Գանձակի, Ջիւանչիրի և Ղաղախի գաւառներու Առաջինում մի քառակուսի վերստի վրաց գալիս է 35.6 բնակիչ, վերջինիս վրաց՝ 13.9.

Ազգաբնակչական տեղեկութիւնները վերաբերում են միմիան բնիկներին, ուրեմն չեն հաշւած՝ զինուրները, տէրունական և առևտորական և այլ բնկերութիւններում ծառապողները և օտարահպատակ, մանաւանդ պարա-

Գիւղեր	Գանձ. Արեշ. Զերք. Ջեւ. Զանդ. Ղաղ. Նուխ. Շուշ. ամբ. նահանգ.	Թուրքական	120	105	130	171	149	80	96	158	»	1009
Հայկական	36	17	28	32	81	43	24	92	»	353		
Քրդական	—	1	8	13	91	—	—	—	»	113		
Ռուսական	8	—	1	—	1	3	—	1	»	14		
Հապուտի	—	7	—	—	—	—	2	—	»	9		

Յետող գալիս են՝ քիւրինցիներից 7, թաթերինը 5, Ռւսիական 4, գերմանական 2, զնչունական 1, հրէական 1՝ ամբողջ նահանգում:

Նկատենք, որ պ. Զերքիցը ազգերը ալսպիսի շարքով է դասաւորել՝ ուռաներ, զերմանացիք, թաթեր, քուրդեր, հայեր, զնչուներ (ցիդան), հրէաներ, քիւրինցիք, Հապուտիցիք, Ռւսիացիք, թուրքեր: Նկատողութիւնները առելուող են:

Կահաղատակները: Բայց աչս ամենքը միասին կազմում են ազգաբնակութեան միան 2.3%՝, աճնպէս որ շատ մեծ բան չեն առելցնում եղածի վրաց: Ահա գիւղական համագնքների և զիւղերի ու նոցա բնակիչների թիւը զանազան զաւտոներում՝

Համացնք	Դիւղ	Հողի
Գանձակի գաւ.	56	166
Արեշի	44	131
Զեբրակիլի	40	167
Ջիւանչիրի	46	216
Զանգեզուրի	76	326
Ղաղախի	52	128
Նուխտաչ	58	133
Շուշւաչ	60	251
	432	1518
		655.257

Ալդ 1518 գիւղերը բաժանում են ալսպէս, նախած թէ; իւրաքանչիւրում նր աղղի բնակիչներ են գերակշիւթիւր կազմում:

Գանձակի ամբողջ ազգաբնակութիւնն է 728.251 հոգի երկու սեռի, արոնք կազմում են 123.838 ծովի կամ տուն:

Ալդ ազգաբնակութիւնը և տների թիւը ալսպէս են խմբւած նահանգի քաղաքներում և գաւառներում:

Գաղաքներ	տուն.	հոգի.
Շուշի	5779	26.806
Եսուխի	5268	25.894
Գանձակ	4082	20.294

Գաւառներ			
Գավախինը	11.524	84.888	ուստիացաց մեծագուն մասը, լուսաւոր-չական են և իրանց համարում են հայ,
Զիւանչիրինը	9694	54.950	ուրեմն նոքա հայեր են աղջութեամբ
Արէշինը	9617	51.845	և ուստիական են միմիայն ցեղով:
Զերբարիլմնը	8663	46.402	Նկասաւած բան է, որ Կովկասով
Զանդեպութինը	19.447	123.997	բալոր նահանգներում, բացի հիւսիսա-
Գանձակինը	16.458	102.594	վին Դաղսառնից, արու բնակիչները
Նուշւանը	16.368	99.462	աւելի են խականներից, Եւրոպա-
Նուխւանը	16.368	91.119	ցում ընդհակառակն է, Ներկայ
Մի ծուխի վրայ միջին թւով զալիս է			գիրքը այդ նշանաւոր երեսովի բա-
հայերի մէջ	7. 1	հոգի.	ցարութիւնը չի տալիս, բայց իրա-
թուրքերի մէջ	5. 1	հոգի.	ացի կերպով ակնարկում է, որ դա
Ազդ նորանիցն է, որ հայերի մէջ			պէտք է կապ ունենայ կենցաղավա-
ընտանեկան բաժանմունք աւելի քիչ			րական և կրօնական հայեացքների
է լինում, քան թուրքերի մէջ:			հնաւ ու մանաւանդ ազգերի առանձնա-
Դիւղերի մեծութիւնը շատ զանա-			լատկութիւնների հետ: Ազդ նահանգում
զան է: Ընդհանուր առմամբ, Գան-			միթիան գիրմանացոց մէջ խական
ձակի նահանգում ամենից մեծ գիւ-			տարրը արակոնից աւելի է, մնացած
զերը Նուխւաչ գաւառումն են: Եթէ			բոլոր աղբութիւնների մէջ հակառակն
այդ գաւառի գիւղերի ծուխների թիւը			է և ահա թէ խնչպէս:
բաժանենք այդ գիւղերի թիւի վերաբ,			100 արու բնակիչների վերապ ընկ-
կը տեսնենք, որ, միջին թւով, Նուխ-			նում է Գանձակի նահանգում՝
ւապ գաւառում մի զիւղ տնի 120. 2			Գերմանացոց մէջ 103. 23 խական
ծուխ, միջնչես Զիւանչիրի գաւառում՝			Ռուսների մէջ 90. 96
միմիան 44. 8 տուն կամ ծուխ:			Հայերի մէջ 82. 79
Ազգութիւնների նկատմամբ, Գան-			Թուրքերի մէջ 73. 71
ձակի նահանգում, միջին հաշով, մի			խնկ ամբողջ նահանգում, բոլոր աղ-
թուրքի գիւղը ունի 358 երկու սեռի			դութիւնները միասին առած, 100
բնակիչ, ուստաց գիւղը՝ 559. 9, հայ-			արուի վերապ ընկնում է 77. 61 խա-
կական գիւղը՝ 639. 7, եւ գերմանական			կան, միջնչես Եւրոպակում, ընդհան-
զիւղը՝ 947 երկու սեռի բնակիչ: Ա-			րապէս առած, 100 արուին ընկ-
սեռ է թէ հավկական գիւղերը այդ			նում է մօտ 105 խական: Ժողովրդի
նահանգում շատ մեծ են, և քիչ է մը-			աճման տեսակէտից աւելի պէտք է
նում, որ կրկնասպատիկ աւելի մեծ լի-			ցանկալ, որ խականների թիւը ըս-
նին, քան թուրքական գիւղերը: Եւ			տոր չը լինի արականների թւից: Վե-
դեռ այդ հաշով մէջ Ուստիացոց Նիժ			րը առաջ բերած համեմատական թւե-
է Վարդաշէն գիւղերը հայկական չեն			րը կարեար են նաև ուրիշ ինդիրներ
հաշած, այդ սոսկ Ուստիական, մինչ-			լուծելու համար: Օրինակ, նոքա չօ-
զես լավանի է, որ Նիժի ահազին գիւ-			շափում են սեռական բարուականու-
ղի սոտիացիք, որպէս Վարդաշէնի			թիւամ խնդիրը:

Շատ հետաքրքրական ցուցակ է	61—70	545	100	136
տալիս զիրքը ընակիչների թւի մա-	70-ից անց	279	68	64
սին ըստ հասակի ։ Ավտոն, որ ազդ	կարձն ասած, այդ ցուցակը ցուց			
թւերը ճիշդ ստատիստիքական մե-	է տալիս, որ Արևմտեան Եւրոպակամ			
թօդով չեն հաւաքւած և մեր հա-	երեխաները միայն մեռնում են, հա-			
ւատը այդ պատճառով թերի է զեղի	վերիս մէջ՝ մեռնում, իսկ թուր-			
մասնաժողովի տւած թւերը. բաց և	քերի մէջ՝ կոտորում:			
անպէս, բանից դուրս է գալիս, որ	Ազգութեան կողմից, Գանձակի			
անշափահասներ մնանում, համե-	նահանգում առաջին տեղն են բանում			
մաստաբար, շատ աւելի հոդի կան,	թուրքերը, վատու հայերը. միացեալ-			
քան Արևմտեան Եւրոպակամ (Դերմա-	ները համեմատաբար շատ աննշան են:			
նիս, Ֆրանսիա և ազն). իսկ շափա-	Ահա թէ որբան պրօցենս են			
հասներ՝ շատ աւելի քիչ. Ահա	ամեն ազդից քաղաքներում, զիւղե-			
ազդ թւերը. Ամեն 10.000 արական	բում և ամբողջ նահանգում, եթէ կո-			
ընակիչների վերաէ գալիս են՝	տորակները կոլուացելու լինենք:			
հասակ Արևմտ. հացերի թուրք.	քաղաքներ			
Եւրոպ. մէջ մէջ	Գանձակ, Նուխի, Շուշի			
0—15 3356 4101 4171	Թուրքեր 55% 80% 43%			
16—20 876 1264 1378	Հայեր 44% 18% 57%			
21—60 4944 4467 4251	Փուրգեր — — —			

Գաւառներ

Գանձակ, Արևշ., Զիբր., Զեւ., Չանգ. Ղաղ. Նուխ. Շուշ. Նահանգ	Թուրքեր	67%	72%	72%	61%	31%	57%	70%	41%	56%
Հայեր	26	24	25	29	46	39	16 ¹⁾	58	35.4 ²⁾	
Փուրգեր	—	0.7	3	10	21	—	—	—	—	4.6

1) Իսկ լուսաւորչական Ուտիացոց հետ միասին աւելի քան 22%⁰:

2) Լուսաւորչական Ուտիացոց հետ միասին 36%⁰-ից աւելի:

Ուռւներ (թէ ուղարկառ և թէ աղանդառներ) մի քիչ շատ են (5%⁰) միայն Գանձակի գաւառում, իսկ ամբողջ նահանգի միայն 1%⁰ են կազմում:

Մնացեալ աղգութիւնները շատ չնշին տեղ են բոնում և ոչ մէկը նոցանից մի պրօցենտի չի հասնում: Ընդհանրապէս խօսած՝ թուրքերը և հայերը կազմում են նահանգում 91.4%⁰ միացածները միասին՝ 8.6%⁰.

Որպէս կարող է տեսնել ընթեր-

ցողը, հայերը մեծամասնութիւն են կազմում միայն Շուշաց և Զանգեզուրի գաւառներում և Շուշի քաղաքում:

Գրքի մէջ ցուցակներ կան լեզուների և գրադիտութեան մասին: Գիշ հաւատ ենք ընծանում այդ ցուցակներին. բաց ըստ ազդ ցուցակների, Գանձակի նահանգում հայերից 8.%⁰ գրադէտ են, երեք քաղաքներում 42.%⁰:

Կրօնական տեսակէտից՝ նահանգը ներկայացնում է հետևեալը. Ամենից

շատն ևն հայ-լուսաւորչականները (36. ⁰ / ₀), զրեթէ նոցա հաւասար ևն մահմեղական-շիաները (36. ⁰ / ₀), գե- տոք գալիս ևն սիւնիները (25. ⁰ / ₀), ուռա աղանդաւորները կազմում էն 1 ⁰ / ₀ իսկ ուրիշ կրօն դաւանողները աւելի էլ ամնշան ևն և միասին կազմում էն միան 1. ⁶ / ₀ նահանգի ազգաբնակու- թեան թւի. — Մահմեղականներից սիւնիները աւելի ևն քան շիաները Դուխւաչ և Արեշի գաւառներում մի- ալն, իսկ մեացեալ բոլոր վեց գաւառ- ներում շիաները աւելի էն քան սիւն նիները. Սիւնիներ չը կան ամեն կին Գանձակի և Շուշւաչ գաւառներում, իսկ շիաներ կան բոլոր 8 գաւառնե- րում:	Կալւածատէրերի 255.556 Սևսհական 7.074 Զանազան հողերի 625.129 ¹⁾
Հայ-լուսաւորչականները աւելի ևն քան որ և է ազ կրօն դաւանողներ միմիան Շուշւաչ գաւառներում և Շուշի քաղաքում:	Ուրեմն տէրունական հողերի վրաց բնակւող գիւղացիք կազմում էն մօտ 58 ⁰ / ₀ , կալւածատէրերի հողերի վերաց՝ 41 ⁰ / ₀ , իսկ սեպհականատէրեր գիւ- ղացիք կազմում էն միան 1. ₁₁₃ ⁰ / ₀ :

Կալւածատէրական (Կալւածատէ-
րերի, վանքերի և մեշխտների) հողե-
րի վերաց բնակւողներ ամենից շատ
ևն Շուշւաչ գաւառում, տէրունական
հողերի վերաց բնակւող ամենից շատ
ևն Դուխւաչ գաւառում: Համեմատա-
բար ամենից շատ զիւղացի սեպհա-
կանատէրեր կան Արեշի գաւառում
(գաւառի զիւղացիների թւի 3.₆₆⁰/₀),

իսկ Ջիւանչիրի և Ղաղախի գաւառ-
ներում սեպհականատէր զիւղացիք
ամենելին չկան:

Գիրքը վերջանում է տեղեկութիւն-
ներով անդամալոցների և կուրերի
թւի մասին: Բանից զուրած է գալիս,
որ կորութիւնը բաւականի տարածւած
է թէ հայերի և թէ թուրքերի մէջ,
աչս զանազանութեամբ, որ հայերի
մէջ աւելի արականներն են, թուրքե-
րի մէջ աւելի իդականները աչտ պա-
կասութեամբ, Ընդհանուր առմամբ
աչտ երկու աղքերի մէջ կուրերը կազ-
մում են ընդհանուրի 0.₁₇⁰/₀ ալոյնքն
779 հոգի:

Ա.

1) Անհասկանացի են թւում մեզ այդ
թւում, քանի որ նահանգի բոլոր ազգա-
քնակաւթիւնը է միայն 728.251 հոգի:

Էլ առօպերայի համար կարգավորութիւնը և օրէնսդրական սահմանադրութիւնը, որ է Կովկասեան Գիւղատ. Ընկ. Հրատարակութեան անցեալ տարւաց վերջին չորս համարներից: Գրքովը խօսում է կալւածադրական կարգը մտցնելու անհրաժեշտութեան մասին, որը մեծապէս շօշափում է «Մուրճ»-ի 2 համար լարուցած Գիւղական վարկի խնդիրը:

Սի քանի խօսքով բացատրէնք ինդիրի էռթիւնը:

Սի կալւածք գնելու, գրաւի առնելու կամ կալւածքի արժողութիւնն նախած պարագ տալու կամ վարկ բանալու համար՝ կարեոր է որ կալւածքի մասին տեղեկութիւնները լինին պարզ և որոշ, աւտինքն պէտք է չափանի լինի թէ կալւածքը ումն է հաստատապէս, թէ կալւածատէրի պարտատէրի բնէ իրաւունքներ անեն կալւածքի վերակ, թէ որչափ ապահով է կատարուող պայմանագրութիւնը և աղն:

Ոչ ոք չէ կարող հաւատալ իւր զրամը կալւածատէրին, քանի որ սուր իրաւունքները և պարտաւորութիւնները հաստատապէս և օրինաւոր որոշած չեն լինիլ:

Արտասահմանում վազուց հիմնած է առանձին կարգ, որի նպաստակն է կալւածքի մասին անհրաժեան տեղեկութիւնները արձանագրած ունենալի ցուց ամենին Այդ կարգը չափանի է կալւածադրական կարգ (Խաղաքէքի սիստեմ) անունով: Ընդհանրապէս Ռուսաստանում և մասնաւորապէս կովկասում զեռ չի մտցրւած կալւածադրական կարգը: Ի հարկէ սեպհականութեան իրաւունքները վարքը:

շատէ որոշած են և մեզանում, բայց ոչ ան կարգաւորութիւնը և օրէնսդրական սահմանադրութիւնը, որ ցանկալի է:

Կալւածադրական կարգի կատարելութեան նպաստում են երեք պարման.—Հրապարականութիւն, մասնաւորութիւն և անդրանկութիւն: Հ ր ա պ ա ր ա կ ա կ ա ն ու թ ի ւ ն ը պահանջում է, որ կալւածքի մասին անհրաժեան տեղեկութիւնները արձանագրւած լինին հաստատ մատենում, որի մէջ զետեղւածները միաւն կարող են օրինական ոչ ունենալ: Մասն աւորութիւնը լինի պահանջում է, որ պարտավճարումի համար որոշած լինի անշարժ կալւածքը և որ կալւածքի վերակ անելիք պարտգերի չափը սահմանած լինի թւանշաններով: Անդ բան կութիւնը լինի պահանջում է, որ օրինադրական կերպով սահմանած լինի, թէ չաջորդաբար կուտակւող պարագերի վճարումը պէտք է կատարուի ըստ անդրանկութեան, ապինքն, ըստ պարտ առնելու ժամանակի չաջորդութեան:

Պ. Կովկասի զօդւածի նպատակն է ցուց տալ, որ կալւածադրական կարգի մտցնելը անհրաժեան է անտեսական առաջադիմութիւն համար, որ նա մեծապէս կարող է նպաստել հոգավին վարկի չաջորդելուն մեր երկրում: Հեղինակը հրաւիրում է Կովկասեան Գիւղատնական Ծնկերութեան նախաձեռնութիւնը՝ զարթեցնելու կալւածադրական կարգի խընդիրը և նիւթեր պատրաստել նորակատարելագործուած ձևով ներմուծութեան համար:

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ.

Կովկասի Ստատիստիքական (վիճակադրական, թւահամարական) կոմիտեության ստացանքը հետևեալ գրքերը. —

Сборникъ Свѣдѣній о Кавказѣ, հասոր I. 342 էր., հասոր II, մասն 1.—353, մասն 2.—111—464 էր. (հասոր III, IV և V սպառւած էն), հասոր VI, մասն 1—314, լաւելած—222., (հասոր VIII—սպառւած), հասոր IX—446 էր. մասն 2.—99 էր.

Списки населенныхъ мѣстъ Россійской Имперіи. По Кавказскому краю. LXV. Бакинская губернія. Тифлісъ. 1870. 103 էր.

Статистическій Временникъ Кавказскаго Края.—Համագումար ստատիստիքական նիւթերի, քաղած կովկասի ազգաբնակութեան ընտանիքների ցուցակից. Հասոր I. տեսր 1. Զաքալթալի շրջան (նահանգ). 1887. 115 էր. և չափուածներ. Հասոր I. տեսր 2. Ախալքալաքի գաւառ, 1887. 117 էր. Թիֆլիսի նահանգում. Հասոր I. տեսր 3. Սև-ծովեան շրջան. 1887. 65 էր. Հասոր I. տեսր 4. Դարդինի շրջան. Դարդինի պրօվինցում. 1887. 81 էր. Հասոր I. տեսր 5. Սղնախի գաւառ, Թիֆլիսի նահանգում. 1887. Հասոր II—Դանձակի նահանգ, 471 էրես, որի մասին ներկաւ Հ.-ում ընդարձակօրէն զեկուցւած է.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՐՃ ՊՈՅԵՍԱՆՅԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆՔՈՒԹԵԱՆ ԵՐԵՄԵԱՄԵԱՅ
ՅՈՒԽԵԱՆՅԻ:

Այն մեղ շատ մօտ ժամանակից, երբ հաչ ազգը ըմբռնեց իւր գրական աշխատաւորներին տօնելու իմաստը, նա արդէն զգացել էր այն սերտ և մտերմական կապը, որը կապում է զբովզին ժողովրդի հետ։ Գրողի սիրող ժողովրդի հետ է, և ով կարողանում է իւր սրտի բարախումը աւելի զգացնել տալ ժողովրդին և նոյն ժողովրդին լսել տալ իւր սրտի բարախումները՝ նա այդ է, որ ամենից ժողովրդականն է, նա, որը սիրում է և սիրելու ընդունակ է և այդ նա է, որը սիրւած է ժողովրդից։ Արտաւաշտել այդ զգացումները—միշտ չի լինում։ հարկաւոր է, որ առիթներ լինին, իսկ այդ առիթները ստեղծւում են, քանի որ հեղինակը կենդանի է։ Տօնել նրա գործունէութեան մի որոշ շրջանը լրանալու առիթով—ահա ամենավեճուչ ձեւը, որով հասարակութիւնը արտաքայտում է այն, ինչ տարիներով թագցրած էր իւր սրտում։ Եւ աչսօր ահա Պոօշեանց Պերճն է, որի վրայ դարձրած է ընդհանուրի ուշագրութիւնը—ականաւոր աշակերտը մեծ Արովեանի, նկարագրողը մեր ժողովրդական կեանքի—որպէս ոչ մէկ ուրիշը մեր գրականութեան մէջ, անկասկած առաջինը բուն ժողովրդական գրականութեան մէջ։ Առիթը շուտով պիտի ներկայանաց—զէմ լանդիման կանգնացնել Պոօշեանցին՝ հաչ հասարակութեան առջև և ընդունել տալ սորա երախտագիտական բոլոր զգացումները։ Որ այդ ցուցը կը լինի վայել վիպասանի տաղանդին և համապատասխան գրականութեան մասուցած նրա ծառալութեան չափին—ոչ մի կասկած չունինք։ Աչն, ինչ հասարակութիւնը պիտի գնահատի Պոօշեանցի մէջ՝ այդ նրա զուտ ժողովրդական զաւակ լինելն է։ Նրանով կարող է պարծենալ հաջութիւնը, աչն պատճառով, որ բոլորը, ինչ տւած է Պոօշեանցը—արդիւնք է մեր հողի, օդի, բուն հայկական զգացումների և կրթութեան ներչնչման։ Պոօշեանցը շատ և շատ քիչ է պարտական օտարին՝ մի կողմից, երեակալութեան՝ միւս կողմից։ Նրան զրդող ոչժը՝ հազրենական զգացումների մտերմութիւնն է։ իսկ նրա տաղանդը՝ ոչ թէ վառ և հարուստ երեակալութիւնն է, այլ

Նրա բարձր աստիճանի զղաճութիւնը՝ հայրենական կեանքի տպաւորութիւն-ները ընդունելու համար։ Նրա բալոր երկերը ազգ կարգի տաղանդի ծր-նունդ են։ Երկեր, սրոնց վերջնու ավաօր «Ցեցեր»-ով հայ հասա-րակութեան առջե է զնուում, խակ մօտ ապագայում կ'երեաց «Բզզկ»-ն, որով Պաօշեանցի տաղանդի ծաւալը, ըստ մնալ վերջնականապէս կ'որոշւի:

«Մուրծը» իւր կողմից արելէ և մնում է, ինչ հարկաւոր է Պաօշեանցի չօրէլեանը գիտակ ցօրէն կատարելու համար։ Մի կողմից նա տպու՞՞ է չօրէլեարի «Ցեցերը», մի գործ, որը վատկապէս «Մուրծ»-ի համար է զրւած (և զրւած՝ զարմանալի բան, զրւած, ասում ենք ամիս ու կիսում՝ նովմբերի սկզբից մինչ դեկտեմբերի կեսը, անցեալ 1888 թւականի)։ միւս կողմից՝ «Մուրծը» տես Պաօշեանցի վէպերի ընդարձակ քննադատութիւնը ազգ վէպերի բովանդակութեամբ միասին։ «Մուրծը» զո-րանով կամեցաւ ծանօթացնել հայ հասարակութեան ան մարդու հետ, որին արժանաւոր կերպով տօնելու համար՝ իւր ձանը միացնում է ընդ-հանուրի ձանի հետ։ Պաօշեանցին բոլորովն արժանի զտնելով ազգ մեծ պատին, ցանկանում ենք որ մեր բաժանորդները և ազ ընթերցող-ները միշտ առաջնոր լինին ընդհանուր հրաւերին արձագանք տուղը։ Չօրէլեանը կատարելու է գալ ապրիլ ամսին և այդ օրը թող զգացվի ամենուրեք, որպէս հայկական գրական մեծ տօն։

ՆԵՐԱԾՈՒԱՆ ԴՊԲՈՅԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻՆ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՒՆ.

Սեծ. Խմբագիր.

Մօտ օրերս ստանալով մի ժըաջան և հայ գրականութեամբ զիշեր ու ցերեկ պարապող բարեկամիցս հետեւեալ նամակը, բառ առ բառ ար-տագրած դրութեան էական կէտերը՝ տվարիում ևմ Ձեզ, խնդրելով տեղ տալ Զեր նորաբոցբոջ ամսաթերթի մէջ։¹⁾

...«Գիտես, Պէրձ, որ Ներսիսեան դպրոցը որքան էլ մեզ գառնաց-նում է, ազնուամենախիւ մեր լեզուն չի պատւում ասելու, և եզիցի տուն քո քեզ աւերակ»։ Մենք նրան պարտական ենք մեր զգացմունքնե-րից, մեր ձգտումներից ամենալաւը, ազգ անուան հետ կապւած են մեր գե-ղածիծաղ վիշողութիւնները, ցնորքները, լուսերը։ Նրան ենք պարտական, որ սովորել ենք արհամարհել նիւթականը, կամ չը մոռանալ, որ միմիաւն

¹⁾ Թէպէս ըաթեկամ էրաւունք չի տեղ ինձ հըատաբակելու իւր մասնաւոր նամակը, բայց ըստ որում ինդիքը վերաբերում է ամենքի հետաքըքըութեան ար-արժանի գործին, յոյս ունեմ որ կը ներէ նա ինձ ոչ միայն նամակը տպագըել, այլ և իւր անուանն ևս յիշել։ Դա մեր գրականութեան անխոնջ մշակներից մշկն է։ բժիշկ Միակ Արամեանցը, որին վիճակած է կենալունից հեռու թափառել և ուղ-տով մօտ լինել հայ ազգայնույն գաղափարին։ Պ.Պ.

հայով չէ որ մարդ սպրում է։ Հազարաւոր մարդիկ կան ակօք, որոնց համար Ներսիսեան դպրոց խօսքը կեղծիք չէ, բիւրաւոր մարդիկ կան, որ Ներսիսեան դպրոցի անունը տալիս՝ կարծես նրանց հոգու և սրամբի մէջ մի անաղարտ ու պարզաւոր լուս է ծագում, մի հրաշագեղ դիցուհի ժամանմ է նրանց՝ լուսատու, խրախուսիչ, վարթացուցիչ ժպիսով։ Բայց ինչ է զարմանալին, — դրանցից, հաւասարի եմ, ոչ ոք չը զիտէ նրա պատմութիւնը։ Ի՞նչ զրանք, հանողական պարզուցիչ անունով պահպար են մոտած։ Արդեօք այս ախուր իրողութեան պատճառը վերագրելու չէ նրան, որ ահա Ներսիսեան դպրոցը 15 տարոց աւելի է, որ թիւր ու թիւք քենութիւնների, փորձերի, բամբասանքների, մանաւանդ շահախնդիր ձգտումների կուտան է եղած։ Ի տես այն անցքերի, այն փոթորիկների, որ անցել են նրա դլխով, միթէ կարելի է անսարքեր մնալ, որ Ներսիսեան դպրոցի նւան մի հաստատութիւն մինչև ալժիմ խւր պատմութիւնը չունի։ Պ. Արգար Յովհաննիսեանը մի օր «Փորձ»-ի մէջ երկիւղ էր լատոնել, թէ կարող է Ներսիսեան դպրոցն առանց պատմութեան մնալ։ 8—9 տարի է անցել ալդ աղղարարութիւնից և տակաւին մի փորձ եղած չէ, եթէ ոչ զրելու, զոնէ նիւթեր ժողովելու ապակազ պատմութեան համար։ Այս հանդամանքն ինձ միշտ զբաղեցրել է և միշտ մասձել եմ, թէ ինչպէս սուս պահանջը կարելի է կատարել։ Ինձ ցաւեցնում էր այն հանդամանքը, որ այս գործին ձեռնարկելու կարող անձինք՝ Ներսիսեան դպրոցի հին աշակերտք, որոնք և ականատես են եղել և վկաչ նրա զլխոց անցած փոթորիկներին, մանաւանդ 57—61, 64—68 ժամանակաշրջաններում, վարպահատին ցրւած, պառակտած են, և չկաչ մէկը, որ խւր հեղինակական ձաշնով ժաղավար նրանց՝ Ներսիսեան դպրոցի պատմութեան նիւթերը հաւաքելու։

«Երբ որ լսեցի, որ ածխի անկածող առուառուից լեռով էլլ եկել ևս թիֆլիս և... մոել ես Ներսիսեան դպրոց աւտուցչի պաշտօնով... շատ ուրախացաւ, որ զուցէ քո մէջ արթնանաւ ալդ մոռացւած, բայց կենուական կարեռութիւն ունեցող գործերի ձեռնարկութեան անհրաժեշտ վիճելու զիտակցութիւնը։

«Վաղուց ուզում էր զրել այս մասին, բայց ալժմ պատհ ևմ համար բառմ։ Փանք Ասաւածոյ, վերջուպէս մի ամսապիր ստացանք և զու ալդ ստորի սիւներից մինն ես»

«Պակասամ էր մինչև ալժմ իմ ասած գործը սկսելու համար մի կենդրուն և մի անձն, որ խւր լատկութիւններով կարողանար տուածնորդել այն աշխատութեանը, որ անշուշա շատերը կը սկսէին կենդրոնի ձանի վերակ։ Քո արժանաւորութիւններից մինն այն է, որ սուր վիշտութիւն ունիս... արդիօք լաւ բան արին լիտագու զատակարակները, որ այս կարօտութիւնը զանցաւութեան տվին։ Արդեօք մեր վիշտութեան պակասաւթեան վերագրելու չեն այն բաղմաթիւ մեղքերը, լանցանքները, որ մենք գործեցինք 25

տարւում ընթացքում՝ լուսուն աղբալին լուսաւորութեան, դպրութեան, կըրթութեան և ազն և ազն:

«Իմ կարծիքով, կատարեալ լաջողութիւն կ'ունենար, եթէ պ. Արտո-իսանեանցը չանձն ասենք մի բաժին բանալ իւր «Մուրճ»-ի մէջ ազգ գործի համար նիւթեր ժողովելու. հրաւէր կարդար ամենքին, որոնք կարող են նիւթ մատակարարել, ինչ ձե կողէ լինի, թէ վշողութիւն, թէ գրաթիւններ, թէ գրագրութիւններ և ազն և ազն, մի խօսքով՝ այն ամենը, որ կարող էր պէտք գալ Ներսիսեան դպրոցի լիակատար պատմութեան համար։

«Իու կենդանի վկաց ես Ներսիսեան դպրոցի պատմութեան ոկտոծ 51-ից մինչև 64—65 թւականները... Եթէ մի ազգէս հրաւէր լինի, կարծում եմ, իսկոն ձամոց կը տան Կուսիկնանը, Թորսաը, Արբակիանցը (մեռած), Յավսէվ Արտվեանցը, Գարեգինը, Տէր-Յարութիւննեանցը, Քաջարմանցը, Քաջըներունին, թժիկք՝ Արամեանց, Ղաղաղեանց, Լունը. որ մինն ասեմ. որանք 58—64 թւերի պատմութեան համար։ 73-ից վտառ և կող ժամանակների համար ձախատուններն աւելի շատ կը լինին, մանաւանդ որ նրանց վշողութեանը կարող է նպաստել արդէն կազմակերպւած պարբերական մասուլը։ Դու՝ որպէս դործին քաջ տեղեակ՝ հաւաքւած նիւթերը կարող են ընտրել, ստուգել, զաել և վետո շահմարան մացնել։

«Ես աղջմ աւելորդ եմ համարում աւելի խօսել. եթէ սկզբունքով ընդունես իմ միտքը և համոզվիս, որ աչս ձեռով կարելի է նպաստակին հատնել և ազատել Ներսիսեան դպրոցի անցեալն առանց պատմութեան մնացու վտանգից—զրիր ինձ, ես կարող եմ իմ միտքն աւելի սրարդել։»

Բարեկամիս դիտաւորութիւնը անքան համակրելի է և մօտ իմ որտին, որ ես չանձն եմ առնում սիրով ձեռնարկել գրելու այն հաստատութեան պատմութիւնը, որը միակ կարող է ըարձիգութիւն պարծենալ Ռուսաստանումն իւր տւած օգուտներով և արած ծառացութիւններով։

Հաստ ուղիղ է դասել պատուական բարեկամո, բաւական չին Ներսիսեան դպրոցի պատմութեան համար իւր արխիվից հանած նիւթերը, որոնք ըստ մեծի մասին ներքին տեղեկութիւնների և թւանշանների կուտակումներ են աճշտչու և որոնք անհրաժեշտ են դործիս ձեռնարկութեան համար։ Հարկաւոր են և արտաքին ժամանակակից անձինքների լրացուցիչ փաստերը։ Դժբաղդարար՝ մի փոքր ուշ է։ Ներսիսեան դպրոցը զրկում է իւր սկզբնական տարիների կենդանի վկաների կենդանի խօսքերից և բերանացի պատմածներից։ 5—10 տարի առաջ դեռ կենդանի էին խորին ծերութեան հասած բաւականաչափ բազմազէտ անձինք, որոնք իւրեանց հետ գերեզման տարան դպրոցին վերաբերեալ շատ մանրամասնութիւններ։ Դեռ էլի ապրում են սամկան սակատաթիւ պատկառելի ալեռդներ, որոնք եթէ Փիղիքապէս չը դժւարանան, կարող են մնածապէս նախուսած լինել օդուակար ձեռնարկութեանու։ Մեծավաստակ հայր Գարբիել Պատկանեանի բաղմանմատ ուղեղում ամբարած կան Ներսիսեան դպրոցի նախկին ասրիների

շատ լիշողութիւններ. Ժրաջան Միքայէլ Պատկանեանցը, հայր Դաբրիէլի հարազատ եղբագը, երկար տարիներ մաշել է իւր երիտասարդական ոճը Ներսիսեան զպրոցի սահերի կրթութեան դործովը. խոհական Պետրոս Շանչեանի զգալուն սիրաց աւազ, ազ ևս չէքաբախում Ներսիսեան զպրոցի քաղցր և դառն ժամանակակից արկածքներով. Այս լարգելի անձինքներին մօս եղող երիտասարդների սրբազն պարտքն է՝ անհանգիստ անել Ներսիսիան ծերութիւններին, և կը համոզւն անցալիքը, որ բացի Ներսիսեան զպրոցից, շատ ժամանակակից հետաքրքիր և կինսական խնդիրներ կը պարզեն իւրեանց մասուցած ծառալութիւններով.

Նթէ Դուք, պ. խմբագիր, լանձն առեկիք բարեկամիս առաջարկութիւնը լարգելու, մի բաժին բանակիք «Մուրճ»-ի մէջ Ներսիսեան զպրոցի պատմութեան նիւթերի համար, ևս չուս ունիմ, որ ոչ միան զպրոցիս սահերը, որոնց մի քանիսի անունները թւում է աղնիւ բարմեամս, ազ և շատ ուրիշները, թէ աշակերտներից և թէ կողմնակի զիտակ անձինքներից, չին զլանալ իւրեանց լուսման ձեւ ազգային գանձարանի մէջ. չին խնամիլ իւրեանց գիտեցածները և ունեցած զբաւոր ապացուցները ուղարկիլ խմբագրութեանդ՝ հարստացնելու Ներսիսեան դպր. պատմութեան նիւթերը:

Ան ժամանակն և ես իմ ունեցած բաւականաչափ պաշարն էլ միացրած նոցա տածի հետ՝ չի զանդադիլ զիմել խոնարհաբար Ներսիսեան զպրոցի լարգու Հոգաբարձութեանը և թուլութիւն խնդրել քրքրելու զպրոցի արխիւու:

ՊԵՐՃ ՊՈՅԵՆԵԱՆՑ

Տեղ տալով պ. Պոյշեանցի աշը ընդարձակ նամակին, շտ սպում ևնք պատասխանել նրան, որ նրա առաջարկութիւնը բոլորովին անընզունիլի է. Մենք չենք կարող «Մուրճ»-ի մէջ տեղ տալ հում նիւթերին, որոնց մէջ կամ դանելու համար հարկաւոր է մի մատնաժողովի երկտրամսեաց դուցէ և երկարամեակ աշխատութիւնը. Ազ կը նշանակեր՝ բոլորովին անտես առնել մեր ընթերցողների իրաւացի պահանջները, որ և մեր պահանջներն են՝ տալ միան մշակած և ամփոփ լոգւածներ, լոգւածներ, որոնք բացի ալդ լատկութիւններից, պէտք է ժամանակակից, ուսանելի և «Մուրճ»-ի գիտաւորութիւններին ծաւակնու. կարողութեան արժանաւորութիւններն ունենան. Առաջարկութիւններ՝ զպրոցների արդէն զրած պատմութիւնները հաստարակել—սորանով երրորդ թէ չորրորդն է, որ ըստանում ենք. Եթէ հետեւնք զոցա տա աջարկութիւններին և խորհուրդներին—շուտով «Մուրճ»-ը կը դառնար մի արխիւական հարստաբակութիւն, ալսինքն ան, ինչ նա երբէք չը պէտք է լինի և ինչի համար աչդ ամուազիրը դիտաւութիւն չունի ծառապելու. Ներսիսեան զպրոցը ինքը պէտք է հոգալու պատմութեան համար, դէք աչն ձեռլ զրւած, ինչպէս երեանի թեմա-

կան Գոլրանոցինն է և որի մասին ներկայ Ա-ի գրախօսութեան մէջ խօս-
ում է: Աթէ այդ հազկական անդրանիկ գոլրոցը աչժմ պատմութիւն չունի,
աչդ, կարծում ենք գոնէ, նրանիցն է, որ վերջին քսան տարիներում,
ոչ մի տեսչութիւն և հոգարարձութիւն չը պէտք է ցանկացած վնի իւր
մաղհական պատկերը նկարագրաւած տեսնել: Միթէ, օրինակ, նրեանի գոլրոցի
վարչութիւնը գլուխ կը բերէմ իշեալ գրքի հրատարակութիւնը, եթէ այդ
տարին տեսուչ վիճէր ոչ թէ պ. Արքողութ Յայնաննիսեանցը, այլ նրա նա-
խորդ Սարգիս (աչժմ քահանայ) Բէդնազարնանցը: Բնական է որ—ոչ:

Մենք, ուրիմն, մեր կողմից սպասում ենք Ներսիսեան գոլրոցի պատ-
մութեան հրատարակութեան, երբ այդ գոլրոցի վարչութիւնը կազմւած կը
վնի երեսները պարզ մարդկոնցից, բայց մանաւանդ գոլրոցի վերաէ ման-
կավարժօքէն նախլու ընդունակութիւն ունեցող մարդկանցից: Բայց այդ
պատմութիւնը, մեր կարծիքով, չը պէտք է ան ծաւալն ունենալ, ինչ ոք.
Պոօշեանցի նամակը ենթադրել է տալիս: Մացնել այդ պատմութեան մէջ
յամանակների բոլոր հոսանքների նկարագիրը, հէնց այն պատճառով, որպէ-
հնուե զործող անձերը միենան ժամանակ ուսուցիչներ կամ հոգարարձուներ
են եղած—կը նշանակէ զոլրոցի պատմութիւնը ուրիշ, ոչ գոլրոցական
նպատակների ծառալացնել Բաւական է, եթէ զիրքը, զրւած ժամանա-
կագրական կարգով, բաւականաչափ նիւթեր պարունակի եղարակացութիւն-
ներ դուրս բերելու համար, թէ բնչպէս է զարգացել այդ գոլրոցը, ինչ ձեի
վարչութիւններ է անեցել նա, ինչ ծրագիրներ է ունեցել զոլրոցը, ինչ
ուղղութիւնների է ենթարկել նա, ինչ մանկավարժական ոխատեմներ են
իշխել զոլրոցում, բնչպէս է եղել զոլրոցի բարունակն զրութիւնը զանա-
զան շրջաններում, ինչ կարգի աշակերտներ է ունեցած զոլրոցը, ինչ փո-
փոխութիւնների է ենթարկել ցալմ առարկաների զասաւանդութիւնը, ինչ
մանկավարժական և նիւթական պատուղներ է առել հոգարարձական ացժ-
ման ձեռ և այն և ազն. մի խօսքով այդ պատմութիւնը պէտք է իւր
նիւթերով զոլրոցի սահմանից դուրս չգափ: Դիրքը պէտք է ուսանելի վնի
թէ ուսուցչի ձեռքում և թէ կառավարչի ձեռքում: Մենք համոզւած ենք,
որ զոլրոցական գրականութեան պակասութիւնիցն է, որ մեր զոլրոցնե-
րում ամեն տարի նուն խաղերն են խաղայւում: Եթէ մեր զոլրոցների ման-
րամասն հաշիւնները պարբերաբար հրատարակեին—շատ թիւրիմացութիւն-
ների առաջն առնւած կը վիճէր. մանկավարժական ժաղովները ստիպւած
չեն վնին միշտ միւնոն խաղիրները ամեն տարի բարուցանել, այլ, ծա-
նօթ վնինելի անցեալ տարիների մանկավարժական ժողովներում եղած
խօսակցութիւնների և վճիւնների հետ—կը չարուցանէին նուն խնդիրները,
եթէ մի որ և իցէ նոր բան կ'ունենան առելու: Բացի դորանից, մի զոլրոց
միու զոլրոցից կարող էր օգուտ քաղել: Խակ աչժմ: Աչժմ ոչ մանկավար-
ժական ժողովներն են օգուտ քաղաւ իրանց անցեալ տարիների զործու-
նութիւնից, ոչ էլ հոգարարձութիւնը կամ հոգարարձութիւնները: Դուրս

ողբացի հետեանքն այն է, որ գպրոցական առաջադիմութիւն չի նկատում մեղանում, չը նաևած որ Հերլարափի և Յիլերի անոններազն ենք երդում: Հարկաւոր է ամեն տարւազ գործանկութեան հաշվաները հրատարակել, դոքա են, որ հիմք կը ծառալին գպրոցներին: Ինչ ասել կ'ուղէ, որ, ներկայ դէմքում, Ներլարանեան գպրոցի բազմամեակ պատճութիւնը հրատարակելու մասին մատածողը պէտք է լինի նոն առդ գպրոցի վարչութիւնը և ոչ թէ մինք:

Խմբ.

ԿՈՎԿԱՍՍԵԱՆ ԱՐԴԻԿԻՆԱՅԱՆԴԵՍ

Ծ Ր Ա Գ Ի Բ

Բաժին I. Նըրկագործական արդիւնքներ:

Խումբ 1 Հացարտակեր, ցորեն, զարի, եղիպտացորեն, կորեկ, զօմի, բրինձ, պօլրա, խոփուկ և ազն, ոչ աւելի քան մի պուդ և նոցա հետ հասած հացարոսի խուրձեր: Բրինձը, պօլրան, զօմին և կորեկը ներկացնելու են թեփահան և անթեփահան: Դարման և ծղօս:

Խումբ 2 Հացարոյսերի նմուշները ըստ կարելիութեան պէտք է լինեն այն ձեե, ինչպէս նուրա վաճառուում են արդեւնաբերողների կողմէց: Բացի այց՝ ցանկալի է ունենալ հացարոյսերի զանազան տեսաների ժողովածուները, միայն ըստ կարելիութեան զոտած ուրիշ հատկեների խառնուրդներից: Զըրազը և անջրդի հողերի հացարոյսերը պէտք է ներկացնելու առանձին առանձին:

Խումբ 2 Աերակաբրոսերի: Մշակող կամ մշակելու առաջադրելի կերակրաբրոսերի սերմեր և փափր խուրձեր: առողտ (եօնջա), կրոնգան, ֆիլի, կատաւատ, կանեփ, սորեսկ և ազն, ջիթապտուզ: Ալդ բուսերի և ձիթապտի սերմերը—ոչ պակաս քան քառորդ պուդ (10 ֆունտ) քանակութիւնով և նոցա հետ բռների խորոմիկներ՝ քաղցւած՝ ծաղկած միջոցին:

Խումբ 3 Խուրաբուսերի չորացրած նմուշներ. քնջիթ, գաճապերչուկ, կատաւատ, կանեփ, սորեսկ և ազն, ջիթապտուզ: Ալդ բուսերի և ձիթապտի սերմերը—ոչ պակաս քան 10 ֆունտ՝ իրանց վաճառելի ձեսվ:

Խումբ 4 Թելաբոսերի: Բամբակ, տեղալին և օտարերկրեակ տեսաներ, մաքրած և աճմաքուր. լատոնել ընդ սմին թէ ինչ մելքնապալ է մաքրած: Բամբակաբազը արմատներով: Յալտնել սերմերի (հատիկները) ինչ սակի լինելը: Բամբակից և սեղմից ներկացնել ոչ պակաս քան 10 ֆ.

իւրաքանչիւր տեսակից: Բամի (մանելի և դինջ), կանեփ, կտաւառ և աղն, մի մի խորոմիկ մշակած և անմշակ:

Խումբ 5 Ծխախոտ: Յերթածխախոտի նմուշներ վերին և սատրին աեսալիի:

Ծանօթ: Յերթածխախոտը պէտք է հանդէս ու վարկի պապուշներով, հակերով, առհասարակ այն կերպ, ինչպէս նու վաթաթւում՝ պահպահնելու և ուղարկելու համար: Սերմերը $\frac{1}{4}$ փունտ:

Խումբ 6 Ներկարտոսեր, սորոն, սարազան և աղն, մշակւող և վարի: Խոցանից ստացւող ամենայն տեսակ ներկեր:

Խումբ 7 Երկրագործական արդիւնքներին վերաբերեալ՝ շարադրութիւններ, հողի նմուշներ, զանազան իրերի քիմիական լուծամիներ: Ուռագումի լատակապձեր, ցանքացուց քարտէզներ և աղն: Երկրագործութեան վեսուղ միջատների ժողովածուների: Ապարդիւն (ժանգիւալ) խոսեր, որոնք պատում են թէ հացարտսերի և թէ ուրիշ արդիւնաւոր բուսերի ցանքսերը. (ապարդիւն խոտերը ծաղկած հասակում և նոյն սերմերը):

Բաժին II. Ազգեզրծութիւն և բանջարանոց:

ա. ՄԻԳԱՅԻՆ ԱՅԴԵԴՈՒԹՈՒԹԻՒՆ

Խումբ 8 Զանազան տեսակի պտղատու ծառերի և թփերի նմուշներ: Սերմից բուսած թփեր: Ազնւացրած, կրթած ծառեր և թփեր կանոնաւոր բուսցրած: Թղուկալին և պտղատու ծառեր: Այս խմբի առարկաները ներկացնում են 1—5 օրինակ իւրաքանչիւր տեսակից:

Խումբ 9 Զանազան թարմ պտղաներ՝ տեսակը և տեղական անունը նշանակած. ոչ պակաս քան 5 ֆունտ իւրաքանչիւր տեսակիցն:

Խումբ 10 Պահպանելու պատրաստած մրգեր. չորացրած (չիր) ոչ պակաս քան 1 ֆունտ իւրաքանչիւր տեսակից. կօնսերմի և քաղցրաւենու կերպ՝ ոչ պակաս քան 2 ֆ., պաստիլա: չուչինել և աղն, ոչ պակաս քան 2 ֆունտ: Մաթ (դօչար, բաքմաղ) և նոյնանման, ոչ պակաս քան 1 ֆ. իւրաքանչիւր տեսակից:

Խումբ 11 Պաղատու ծառերի և թփերի սերմեր՝ ոչ պակաս քան 1 ֆ. իւրաքանչիւր տեսակից:

բ. Զ Ա Ռ Դ Ա Ծ Ա Ռ Ե Բ

Խումբ 12 Ասեղատերե և լախատերե զարդածառերի և թփերի նմուշներ (սերմնաբուժերի):

Խումբ 13 Բացօդեալ մշակութեան զարդածաւերի և թվերի նմաչներ, միամիտակ և բավմամեալ բացօդեալ ծաղկաբուսերի նմուշներ:

Ծանօթ. Յուցաքերժները կարող են մնցահանողէս բերել ջերմանոցի բոյսեր, բայց երանք պէտք է նոցա խնամեն:

Խումբ 14 Զարդածաւերի սերմեր, ոչ պակաս քան 1 լոտ իւրաքանչիւր տեսակից:

Դ. ԲԱՆՁԱՐԱՆՈՅ ԵՒ ԲՈՍՏԱՆ

Խումբ 15 Բանջարանոցի և բօստանի թարմ հնդեղէններ և ուրիշ արդիւնքներ:

Խումբ 16 Մինուն արդիւնքները՝ լարմարեցրած պահպանելու, չորացրած հնդեղէններ, կանաչի և աղ ու թթու զրած ուտելեղէններ:

Խումբ 17 Բանջարանոցի և բօստանի բուսերի սերմերը՝ ոչ պակաս քան $\frac{1}{4}$ փ. խրաքանչիւր տեսակից:

Խումբ 18 Դեղատան բուսեր—վայրի և մշակուղ:

Խումբ 19 Պաղատու ծառերը խնամելու, պատողների և հնդեղէնների քաղելու, պահելու, տեղափոխելու, մաքրելու և զօրացնելու գործիքներ: Այս առարկաների կազմակարավերանուրը (մօդելները):

Խումբ 20 Պատողների և հնդեղէնների նկարները կամ լուսանկարները (բուսի և տերենների ներ): Պաղատու ծառերի և պարագների նկարագրութիւններ և չատակաղձեր: Ազգեգործական զպլոցի և պաղատու ալյու շինութեան ծրագիրներ և նախահաշիններ—զիսնական և արդիւնագործական նպատակների համար: Բոլոր երկրի կամ մի առանձին տեղի ազգեգործութեան և բանջարանոցախնամութեան նկարագրութիւն: Ազգեանաս և բանջարանոցախնամութիւնների նկարագրութիւն, ցուց տալով նոցա գեմ մարտնչելու հնարիները Շարաղրութիւններ վերաբերեալ տեղական ազգեգործութեան և բանջարանոցապութութեան:

Ծանօթ. 19 Խմբում կարող են մասնակցել ուուս և այլազգի տներ:

Էաժին III. Վինեգործութիւն:

Խումբ 21 Էտիլկասում և Անդրկովկասում երկրում պատրաստած զանազան գինիների նմուշներ, իւրաքանչիւր տեսակից ոչ պակաս քան 2 շիչ:

Խումբ 22 Գինեգործութեան երկրորդական արդիւնքներ (խաղողի). օղի, քացախ, չորացրած գինեքար:

Խումբ 23 Գինին և գինեգործութեան երկրորդական արդիւնքները ձնչելու, եփ տալու, պահպանելու, փոխադրելու, քամելու, ծիսահարելու, սոսնձաթափելու և պահպանելու գործիքներ և անօթներ: Ծծումբ շաղ տալու իւրաքանչիւր, միլդիու և ուրիշ խաղողի հիւանդութիւններ բժշկելու

համար որսկիչներ (պուլվերիզատոր). Փիլօկտերա ոչնչացնելու ժամանակ գործածող ինժեներոր: Վաղապահութեան և զինոզործութեան մէջ զործածող ուրիշ ամեն տեսակ խոչոր և մասն զործիքներ. Նկազների և ուրիշ զինհզործական շինւածքների կաղապարակերտներ (մօդել):

Խումբ 24 Դինիները հետազոտելու զործիքներ:

» 25 Հիւանդութիւններից և միջատներից վիատւած խաղողի վաղի, ճիւղերի և տերեների նմուշները: Վաղերին վիատող միջատների և ուրիշ օտարակերերի ժողովածուներ նմուշներով (արլազարառ) և նկարներով: Հիւանդանունների նմուշները՝ որոշելով նոյս հիւանդութիւնը:

Խամութ. 23 և 24 խմբեցի հանդեսաբերները կազող են լինել նոյնպէս ուռւա օտարերկրեայ աներ:

Բաժին IV. Ներամապահութիւն և մեղուապահութիւն:

ա. ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Խումբ 26 Ներամի որդը ինսամելու զործիքներ և միջացներ:

» 27 Զատած և չը զտած, չորացրած և մամուլած կոկաններ:

» 28 Թիթեռների հնատ տոպրակում և վերջնականապէս պատրաստած սերմեր: Սերմ պատրաստելու համար զործածող զործիքներ:

Խումբ 29 Կոկանների չորացնելու, ջոկելու և ծրարելու համար զործածող միջոցներ և զործիքներ:

Խումբ 30 Մարդաշարժ մանարաններում և զործարաններում շերամապահների իրանց մանած մետաքսաթելեր: Մանելու զործիքներ. Մանելուց մնացորդներ:

Խումբ 31 Մանր, կիսապործարանական և զործարանական եղանակով ոլորած մետաքսաթելեր. ոլորելու զործիքներ:

Խումբ 32 ոլորելու, կարելու և հանելու մետաքսաթելեր: Մետաքսաթելի ոլորելու զործիքներ:

Խումբ 33 Մետաքսաթելի ներկելը, մանր արհետառորների և մեծ գործարանների ներկած մետաքսաթելեր: Ներկելու համար զործածող նիւթը և զործիքները:

Խումբ 34 Ժողովածուներ, աղիւսակներ, նկարներ, հեղինակութիւններ. և շերամաբութեան գառասութեան ձեռնարկներ և միջոցներ:

Խումբ 35 Մետաքսի ոստանանկութիւն:

բ. ՄԵՊԱՒԹՈԱՀՈՒԹԻՒՆ

Խումբ 36 Փետակներ և զործիքներ:

Խումբ 37 Մեղր, մոմ և մամանշակութեան արդիւնքներ:

Խումբ 38 Մեղրասու բուսերի ժողովածուներ: Մեղրասապահութեան աղիւսակներ, աղովածուներ, նկարներ, շարադրութիւններ, նմուշներ և ալն:

Բաժին V. Կաթնառնութեան և տաւարապահութեան արդիւնքներ:

ա. ԿԱԹՆԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Խումբ 39 Կաթ, արածան, թիւու արածան, ալօրօզ, մածուն, սեր հազն,
 » 40 Կումիս, քէֆիր և կաթնակին օղլու
 » 41 Եւրոպական և անգլական եղանակով պատրաստած խղեր:
 » 42 Եւրոպական եղանակով պատրաստած պանիրներ, ոչ պակաս քան 1 ֆունտ:

Խումբ 43 Տեղական ամեն տեսակի պանիրներ, նոշնպէս չում (չօր), չորաթան և ալճ, իւրաքանչիւրից ոչ պակաս քան 3 ֆունտ:

Պանիրները կարող են բերել և այն անօթներում, որոնց մէջ նոքապահուում են:

Խումբ 44 Խախոցներ և խախոցի մակարովներ (մալեա): Խւզի և պանրի համար գործածող ներկներ և ուրիշ նիւթեր:

Խումբ 45 Առանձին տնտեսութիւնների նկարազրութիւններ, նկարներ, լատակագծեր, կաղապարակերտեր, պանրագործարաններ, դաստակերտների, զամերի և զոյցա նմանների նկարներ: Արօտառեղինների բառականութեան ժողովածուներ:

Խումբ 46 Կաթնառնակեսութեան գործիքներ և պատկանելիքներ, որոնք դարձ են ածուում կաթը կթելիս, փոխադրելիս, փուկիս: Խնոցիններ, պանրագործութեան գործիքներ, կաթնային արդիւնքներ, տեղափոխելու և պահպանելու անօթներ: Թիթեղեաչ ամաններ, տաշտեր, արկղներ, տկեր և ալճն:

Խումբ 47 Կաթը հետազոտելու և ստուգելու գործիքներ:

Ծանօթ. 46 և 47 խմելքում կարող են մասնակցել նոշնպէս ուռւու և օտարերկեցայ տներ:

բ. ՏԱԼԱՐԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Խումբ 48 Ցուրզ, մազ, կոշտամազ՝ աչի և ուզտի:
 » 49 Ճարապ և դմակ:
 » 50 Շիռահամ և վետչինի մըս ընտանի կենդանիների ամեն տեսակից: Մոի կոնսերվ՝ ապուխտ, զաւորմա, չաչիի և ալճ:
 Ծանօթ. 48, 49 և 50 խմելքի արդիւնքները բերում են իւրաքանչիւր տեսակեց ոչ պակաս քան 3 դունտ քանակութիւնով:

Բաժին VI. Անտառապահութիւն:

Խումբ 51 Ծառերի և թփերի տեսակները կոճգներով և նմուշներով թէ վայրի և թէ արհետական խնամած անտառներից: Գոյսա ուրմերը

Խումբ 52 Անտառի արդիւնամշակութեան տուարկաների նմուշները, ուսուցիչներ, գերաններ, ուլառախոտակներ, կողառախոտակներ և ընդհանրապէս ամենահասարակ փառաւեալ կերտուածքներ, Տակառագործական կերտածքներ: Ածուխ:

Խումբ 53 Փակոփ ցամաք ջևուցման արդիւնքները, գվառանման նիւթեր: Կերակրի և դեղի համար գործածող վայրի անտառի արդիւնքներ:

Խումբ 54 Անտառի մշակութեան համար գործածող գործիքներ և մեքենաներ, սոցա և ուրիշ շինագֆների կաղապարակերտեր, չառակազմեր:

Խումբ 55 Առանձին անտառապին անտուութիւնների և անտառների նկարագրութիւններ, անտառապին քարտեզներ, հեղեղներից, թափառող աւազներից, հողթափներից, ձիւնթափներից և այն պատապարելու նպատկավ անտառ գյելու նախագծեր, երկրի անտառապահութեան վերաբերեալ ուրիշ գիտնական աշխատանքներ:

Խումբ 56 Անտառներին վնասող միջատների և ծառերի ու թփերի հիւանդութիւններից վնասուած մասների ժողովածուներ:

Բաժին V III. Զկնապահութիւն:

Խումբ 57 Զկնապահութեան և ձինորսութեան վերաբերեալ գործիքներ և ուրիշ առարկաներ:

Խումբ 58 Զկնապահութեան արդիւնքներ.—թարմ և երկան պահպանելու միջոցներ, թարմ ձուկն, ձինկիտ (թկրու), ողնաշիլ (վեճպիլա), չորացրած և ծիւատապ ձուկն, դօշ, բալիկ, սոսինձ և այն: Զկները բերում են թիթեղապատեաններում, տակառիկներում—վաճառահանումի ձեռլ, ձիները ամբողջ—մարմնով:

Խումբ 59 Զկնապահութեան և ձինորսութեան վերաբերեալ շարադրութիւններ:

Բաժին V III. Երկրագործական գործիքներ և մեքենաներ:

Խումբ 60 Գութաններ իրենց բոլոր պատկանելիքներով, աեղական (ջլղիդութան, օրիսելի և ալլն) և կատարելագործւած—առաջազենով և առաջազմակենի, մին և բազմախոսիանի և ալլն, Տեղական արօրներ (աչեչա, ձիրիբի, օկօկա, ջութ, կեռ, կալի, չորսց վեցիկի և ալլն) և կատարելագործւած ալորներ:

Խումբ 61 Անրմբ հողով անելու և հողի մակերեսովթը փիսրեցնելու գործիքներ, արօր, տափան (ցաքան, պարցիսի, տափ, մալա, պօրչխի և ալլն), Ցաքաններ (բօրօնա) երկաթիսալ և փառաւեալ, բաղմաշար աեղական ձեր (մանդեռ, գրմաղ և ալլն):

Խումբ 62 Բողոքի՝ աճելու միջոցին՝ խնամելու համար զործածւով գործիքներ—միջաներկ արօր, էկստիրապատօր, հող թաւալող արօր և այն, նոյն նպատակին ծառապող մարդաշարժ գործիքներ (մօտիկա, տօխի և այլն), Ոռոգելու ախոսագիծ բացելու գործիքներ, մարկոս և այլն:

Խումբ 63 Հնձելու, խոտահարելու գործիքներ և մեքենաներ, մանգաղ, գերանդի, փոցի, եղան, հնձող-մեջունաչ, ձիաշարժ, տրմուղ խոս շրջող, խոտի, բրդի բամբակի, խողի, և այլն մամուլներ:

Խումբ 64 Կասելու և մաքրելու գործիքներ, կամ ջառջառ, թակեր, եղիպատացորենի կամեր և այլն. թեփահան, ջոկջոկող մաղեր, եղան, թիակներ և այն: Կասելու մեքենաներ, հողքամ մեքենաներ (վլալիա), բարբակ մաքրելու տեղական (չիսրիխ, ջակրիխ) և կատարելազործած զանազան կերտուածք:

Խումբ 65 Մաշկահան և հատ մանրացնող մեքենաներ, զընդի (բըրինձի համար), ջաղացաքարեր և առհասարակ ջաղացների պատկանելիքներ:

Խումբ 66 Հատիկների և զարման չորացնելու և պահպանելու, մեքենաներ, հորեր, արկղներ, սպահարաններ, տոպրակներ, ամրադներ, եղիազտացործոց, գարմանանոց և այլն—կաղապարակերաների ձևով կամ խկական մեծութիւնով:

Խումբ 67 Զուր բարձրացնելու համար գործիքներ, անխւներ, թիւրբիններ, քեահրիններ և այլ տեղական կերտուածքի և կատարելազործած կաղապարակերու՝ ընական մեծութիւնով:

Խումբ 68 Շարժող մեքենաներ. քամիշարժ, ջրաշարժ և շողեշարժ:

Խումբ 69 Գիւղատնտեսական սալիեր, արաբաներ և այլն: Ապրանքների ընուալ փոխադրելու գարմարեցրած գործիքներ: Տաւարի կերակուրը պատրաստելու գործիքներ, բարդահատեր և այլն:

Նախօթ. Այս բաժնի համար կարող են լինել նոյնպէս սուս և օտարեցկրեայ տնեց:

Բաժին IX. Գեղջկարհեստ, արհեստ և գործարանական արդիւնապութիւն:

ա. ԳԵՂՋԿԱՐՀԵՍՏԻ ԵՒ ԱՐՀԵՍՏԻ ԱՐԴԻՒՆԲՆԵՐԻ

Մ Ե Թ Ա Լ ի և կ ա ւ ի մ շ ա կ ո ւ մ ը

Խումբ 70 Փականազործական կերտուածքներ, փակոցներ, կացիններ, մուրճներ, զանակներ, ասպանդակներ և այլն:

Խումբ 71 Պարզնաւին կերտուածքներ, պատեր, բաքոներ, շղթաներ, խոփեր և այլն:

Խումբ 72 Թիթեղեաչ և ցլնկի կերտուածքներ:

Խումբ 73 Պղնձեալ կերտւածքներ, զանազան անօթներ և ավեն:

» 74 Պաղ զէնք:

» 75 Հրաճիդ զէնքեր:

» 76 Ոսկեալ, արծաթեալ և ոսկերչական կերտւածքներ:

» 77 Բրուտի կերտւածքներ, կաւագործներ, ամին տեսակ անօթներ և ավեն:

Բռուաթիլից, բրդից, սոսից և մնացախից գործւածքներ:

Խումբ 78 Բրդեալ և կիսաբրդեալ զործւածներ:

ա. Մահուղ, շալ, զիփտիկ, թաշկինակներ և ավեն:

բ. Դորգեր, կարպետներ, քեօչաններ և ավեն:

գ. Խափնջի, թաղիք, զզակներ և ավեն:

Խումբ 79 Բամբակից կանեփից, կտաւատից և ավ նիւթերից պատրաստած մանածներ, ճովիներ և ավ զործւածներ, կտաւներ, չւաճներ, թելեր և ավեն:

Խումբ 80 Մետաքսի գործւածներ, թաշկինակներ և ավեն:

Խումբ 81 Ճոթերի ներկելը և նկարաղլուշմելը:

Արհեստի խառն արդիւնքն և բը:

Խումբ 82 Կաշիներ, կոշկակարական արհեստ, թամբարհեստ, տիկերի, տիկորիների և ուրիշ կաշեսոյ կերտւածների պատրաստութիւն:

Խումբ 83 Մորթու պատրաստութիւնը, զդակակարութեան արհեստ:

» 84 Գերձակութեան արհեստ, պատրաստի շոր, ճերմակեղին և ավեն:

Խումբ 85 Հանելը, զործելը, արհեստական ծաղիկների պատրաստութիւնը և ուրիշ ճեռագործներ:

Խումբ 86 Ժապաւէնի և երիզի ուստրաստութիւնը:

» 87 Կաղմարարական և ոտուարաթղթի (կարտոնի) կերտւածքներ:

» 88 Երաժշտական զործիլքների ստատրաստութիւնը:

» 89 Կահ-կարասիկի (մերկել) ստատրաստութիւնը:

» 90 Եղիշւրից, վաւատից, մնացաթելից և ուրիշ նիւթերից պատրաստած արկազագործական, տակաւալործական, պատենագործական և ավ սիստեմների կերտւածքներ:

Խումբ 91 Անուշեղինական կերտւածքներ:

Ծանօթ, Գերզկարդեստաւորներին և արհեստաւորներին թոյլ է տրւում իրանց զործիլքներով գուլ հանդիս արդիւնագործութիւնը յոյցերով ներկայացնելու նպատակով:

բ. Գնիրֆերսն Անուշեղինական

Խումբ 92 Զանտղան հայրաբանիքի զանազան տեսակի ավելու, ինեփ, կորկոս, կալահան հատկիներ, պլենօ և ավեն—իւրաքանչիւր տեսակից ոչ պակաս քան մի ֆունտ: Դգմանչ (մակարոն), խմորթել (մերմիշել):

Խումբ 93 Օսլաէ և զետնախնձորի մաթ:

Խումբ 94 Բուստիւղեր, քնջիթի, կտաւատի, կանեփի, գենազերչակի, սորեկի, ընկողի, մեկոնի և ալճ. հում և մաքրած տեսակից իւրաքանչիւրից աչ պակաս քան 5 ֆունտ:

Խումբ 95 Ըմպելիքներ, խմելիքներ:

ա. հացօղի, ալքօհօլ, նաստօվկա, լիկեօր, նալիսկա:

բ. զարեջուր, պօրտեր, մեղր, կվառ և ալճ:

գ. հանքաջրեր, Փշացող և թարմացնող խմելիքներ:

Խումբ 96 Ծխախտու—փշտոծ և հարած, ծխելու և հոտառութեան, սիդարներ և գլանակներ:

Խումբ 97 Մոմեր, ճրադրուի, մոմի և սանարինի:

» 98 Սարօն և աճուշանոս կերտուածքներ:

» 99 Կազի և կաշեալ կերտուածքներ:

» 100 Քիմիական արդիւնքներ, ներկեր, լակ, լուցկի և ալճ:

» 101 Ապակեղիններ:

» 102 Բամբակից, մետաքսից և ուրիշ թելանիւթերից ճոմիեր:

» 103 Շինութեան նիւթեր, աղլուս, կղմինտր, խողովակներ, կա-
ֆելիեր, մածանիւթ (ցիմինտ) և ալճ:

Խումբ 104 Արհեստի և գեղջկարհետափ արդիւնքների պատրաստու-
թեան գործիքներ և կաղապարակերներներ, նաշխաղումական, ստանան-
կական, կահազործական, ուկերչական և ալճ տեսակ կերտուածների գոր-
ծարանական նկարներ: Տեղակն արհեստների, գեղջկարհետափների և զոր-
ծարանական արդիւնագործութեան վերաբերեալ հեղինակութիւններ:

Բաժին X. Աւոնացին (Հանքացին):

Խումբ 105 Նափթ, հում նափթ և նորանից մշակւած արդիւնքներ՝
ասփալտ, զլու, օլոկերփատ, նափթագիլ:

Խումբ 106 Հանքավառելիք, քարածուիս, անտրացիտ, լիզնիտ, տօրփ:

» 107 Մետալուրհներ:

ա. Երկաթահանքեր, թուղ, երկաթ, սուլպատ, երկա-
թահանքերի հետ գործող հանքատեսակների նմուշ-
ները, թուղից թափուածներ և զանազան գործարա-
նական երկաթեալ և պողպատեալ կերտուածներ:

բ. Պղնձահանքեր, յինկահանքեր և նոցա մշակութեան
արդիւնքները, պղնձեալ թղթեր, նիղակներ, ցինկ:
Ացք հանքերին ուղեկից հանքատեսակներ:

գ. Արձիձի, աբծաթի և կօրալտի հանքեր, նոցա ուղե-
կից տեսակներ, հանքերի մշակութեան արդիւնքնե-
րը, Ֆլիւսների, հրատառող կուլի և քարերի նմուշներ:

Խումբ 108 Աւաղացան և երակաձիգ սոկու նմուշներ:

» 109 Մարդանեցի և մինդեղի հաճքերը ու մշակութեան արդիւնքներ:

» 110 Ծծումբի և նորան ուղեկից հաճքատեսակների նմուշները,
ծծմբաթիռու:

Խումբ 111 Աղ, քարաղ և ինքնանիստ աղ: Դառն աղ: Գլառւքերեան
աղ: Բուրա:

Խումբ 112 Քարեր, պաղլեղաքար և պաղլեղ (չիր): Վիմատիպաքար,
պուղինզի, մարմարիօն և օբսիդիան: Զանազան հաճքատեսակներից կերտ-
ւածներ:

Խումբ 113 Երկրաբանական քարտէզներ և ձեղքանկարներ—հաճքա-
փն վառելիքի, հանքերի, աղերի, քարերի և այլ նիւթերի ծննդատեղերի
բացատրութիւնով: Զանազան հաճքերի և նոյսա մշակութեան վերաբերեալ
կաղապարակերներ, նկարներ և լուսանկարներ:

Բաժին XI. Մանկավարժական-Արհեստագիտական:

Խումբ 114 Աշակերտաների արհեստագլանական կերտաւածներ, փակա-
նապործական, գարբնազին, կահաճիւմնազին, հիւմնազին և ազն:

Խումբ 115 Օրիորդական զարոցների աշակերտուհիների ձեռագործներ:

» 116 Դպրոցների գիւղատնաւուական գործունէութեան ար-
դիւնքներ:

Խումբ 117 Նկարչական և տեխնիկական նկարներ և դպրոցների ա-
շակերտաների և աշխատանքների գծագրաւթիւններ:

Ներկաւ թւականի վեհարարի 19-ին վախճանեց Ա. Էջմիածնում
Ստեղիաննու Պալատանիան, լազանի ուսուցիչը հայոց լեզուի, հայոց զրա-
կանութեան, հայոց պատմաթեան և Քրանուերէնի, «Փորձ» ամսագրի նախ-
կին աշխատակից կրթաբիկուը «Գրիչ» ստորագրութեամբ:

Սուն մարտի 10-ին Յիֆլիսում կնքեց իւր երկրաւորը Պետրոս
Հանշեան, 71 տարեկան հասակում: Հանգուցեալլ իւր ժամանակի ամենա-
խսչոր անձնաւորութիւնն էր՝ սկսած վատուն թւականների ոկզրից մինչև
60 թւականների վերջները: Շանշեանը կատարելատիան էր կրօնական-
քարուական մարդու, հասարաւոն կազմին ամենաամուր արմատով՝ իւր ժո-
մանակի բալոր հալածաճաճների և փոթորիկների մեջ: Հոգեոր իշխա-
նութեան անօրինութեամբ նա թաղւեց վանքի մայր եկեղեցաւ գաւթում
ներկազաթեամբ հայ հասարակաթեան աղն մասի, որ մաքով և բարձր
զգացումներով ապրել զիտե: «Մործ»-ը կը զբաղւի աղդ մարդով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՆԵՐԱԼ ԲՈՒԼԱՆԺԵ

Ներկայ տարւայ առաջին երկու ամիսներին քաղաքական աշխարհում իրանց վերայ առանձին ուշադրութիւն դարձրին՝ Բուլանժէն՝ Ֆրանսիայում, Տեսան՝ Ռևոլուցիայում, Միլանը՝ Սկրիայում։ Դոցանից ամենակարևորն է առաջինը և նորան նւիրած կը լինի այս յօդւածը։

Ո՞վ է Բուլանժէն։ Մի մարդ, մի զինւորական, որը առանց որ և է անցեալի, նշանակւեց զինւորական մինիստր սորանից երեք տարի առաջ և հէնց այդ րոպեից գարձաւ կատաղի բանակութի առարկայ հանրապետականների շրջաններում։ Նորան հովանաւորողները և պաշտպաններն էին՝ հանրապետական ծայրայեղ ճանակողմեանները, այսինքն նոքա, որոնք ներքին քաղաքականութեան մէջ սպահանջում են մեծամասնութիւնից մերժուած բեֆօրմներ։ Բայց ի՞նչ գործ ունէ մի պատերազմական մինիստր ներքին քաղաքականութեան մէջ և մի՞թէ մի մարդ պատերազմական մինիստր կարող է նշանակւել ներքին քաղաքականութեան մասին իւր յայտնած հակումների պատճառով։ Ի հարկէ ո՛չ, գոնէ մի պատերազմական մինիստրից, բացի դորանից, ուրիշ բաներ էլ են պահանջւում, որոնցից զուրկ էր զեներալ Բուլանժէն։ Բայց բանը նորանումն է, որ Բուլանժէին հովանաւորելը և պաշտպանելը արմատական կուսակցութիւնների վերայ էր հիմնած։ Իբր թէ նոքա, այդ արմատական կուսակցութիւնը, պաշտպանում են մինիստրութեան հասած մի մարդու, որին պախարակում են չափաւորականները։ Իսկ արմատականների ամենամեծ զւարձութիւնն էլ, շատ տարիներից ի վեր, հէնց սկզբունքով հակառակելն է հանրապետական

մեծամասնութեան (պատեհական կոչւած կուսակցութեան — Գամբետա-
տիստներից): Բայց ի՞նչ բանի դէմ էին բողոքում պատեհականները:
Այն բանի դէմ, որ Բուլանմէէն իրանց կուսակցութեան բարեկամ չէր
ճանաչւած. այդ մէկ: Երկրորդ՝ որ այդ մարդը ոչ մի պատե-
րազմական անցեալ չունէր: Նշանակում է, որ արմատականների ոգե-
ւորութիւնը այդ մարդու համար պէտք է բացատրւէր մի այնպիսի
բանով, որը ոչ մի կապ չունէ զինւորական գործի հետ, ուրեմն քա-
ղաքական բնաւորութիւն ունեցող ձգտումներով: Բայց այդ չէր կա-
րելի թոյլ տալ. նախ՝ որ մինխատրութիւնը, իւր ամբողջութեամբ
առած, պատեհական կուսակցութիւնիցն էր կազմւած, ուրեմն ի՞նչ
է նշանակում մի այդպիսի մինխատրութեան մէջ մի մինխատր ունե-
նալ, որը հակառակ կուսակցութեան մարդ է ճանաչւում և սորա-
կատաղի պաշտպանութիւնը զանում: բացի այդ՝ ե՞րբ է լսւած, որ
պատերազմական մինխատրի պաշտօնին քաղաքական նշանակութիւն
տան. գա հակառակ է հարգ ու կանոնին և վտանգաւոր հայեացք
է. պատերազմական մինխատրը, որպէս առհասարակ ամեն զինւոր —
քաղաքականութեամբ չը պէտք է զբաղվի: Եւ այդ բոլորը չէ: Բու-
լանմէն զեներալի ատոմիճան էր ստացել ո՛չ թէ պատերազմական գոր-
ծերով, այլ, որպէս այդ պատացուցեց, շողոքորթութեամբ: Նորա-
նամակը դուքս Օմալին հրատարակւեց: Կրկնակի անպատութիւն՝
գեներալութիւն ստանալու համար իւր մեծաւորին շողոքորթական
նամակ զրել և այն էլ հանրապետութեան հակառակ նախ-
կին թագաւորական տան ներկայացուցիչներից մէլին, որպի-
սին է դուքս Օմալը, որին Բուլանմէն արքայազնի տիտղոսներ է
տալիս իւր նամակում: Եւ այդպիսի անպատեհ կերպով աստիճան
ձեռք բերած մարդուն պաշտպանում էր արմատական կուսակցու-
թիւնը և այն էլ ի՞նչպէս... Բայց ի՞նչ արած. սխալմամբ թէ այլա-
պէս, Բուլանմէն մինխատր էր դառած, ուրեմն հարկաւոր էր զոնէ մի
փոքր համբերել, տեսնելու համար թէ ի՞նչպէս է զործը վարում:
Մարդուն հօ չի կարելի հալածել այն բանի համար, որ հակառակ
կուսակցութեան է պատկանում: Կարելի է շատ լաւ մինխատր է դառ-
նալու:

Եւ... ի՞նչ էք կարծում: Բուլանմէն, իբրև մինխատր, շատ աւելի
բարձր զիրք բռնեց, քան կարելի էր սպառել նորանկից: Նա սկսեց

մի շարք զինւորական բարենորոգումներ մացնել, որոնց գլուխ բերելը վաղուց սպասում էր և այդ գործը նա կատարեց այնքան լաւ, որ ընդհանուր գովեստների արժանացաւ։ Պատեհականները մի առ ժամանակ լուցին և մի տեսակ հաշտուցին, ոչ բուլանմէի հետ, բայց գոնէ նորա մինիստր մնալու մտքի հետ։

Բայց եկէք ու տեսէք, որ նոյն այդ մարդը, որը անուն էր հանում իւր բարենորոգումներով, յաճախ դուրս էր գալիս իւր պարտականութիւններից և ամեն անզամ, երբ դէպք էր գտնում, թունդ ճառեր էր խօսում, բացարձակ քարոզելով Գերմանացիներից վրէժինդիր լինելու միտքը։ Բայց ի՞նչ նորա գործն էր արտաքին քաղաքականութիւնը, քանի որ հաստատ է, որ նա այդ անում էր հակառակ իւր ընկեր-մինիստրներին։ Անհասկանալի էր այդ մարդու ցանկութիւնը—անպա՛տճառ որ և է աղմուկ հանել։ Այդ բաւական չէր։ Նորան հարկաւոր էր իւր անունը սիրելի դարձնել բաներ դասկարդին, և ահա՛ նա Դեկազիլի հանքային բանւորների գործադուլ եղած ժամանակ, ինքն իւր կամքով հրաման է տալիս տեղական գորքերին՝ բռնել բանւորների կողմը լինդդէմ հանքատէրերի։ Բայց դա էլ բաւական չէր։ Նա սկսեց խիստ կերպով յարձակել հանրապետութեան թշնամի նախկին թագաւորական և նապօլէնական տների ներկայացուցիչների դէմ և պաշտպանել այն, ինքն ըստ ինքեան հանրապետականներին մանաւանդ արմատականներին խիստ համելի միտքը՝ թէ պէտք է նրանց աջսորել ֆրանսիական հողի վրայից։ Այդ բանը զլուխ եկաւ ի մեծ ուրախութիւն գրեթէ բոլոր հանրապետականների, որովհետու այն թագաւորականների և կայսերականների ներքին ինստրիգները արգէն ենթադրել էին տալիս մի ահեղ դաւադրութիւն հանրապետութեան դէմ։ Հասարակական մեծամասնութեան երկիւղը նուլանժէից աւելի ու աւելի աճում էր և հաստատում։ Բայց ի՞նչ արած, որ նուլանժէն, թէպէտ և իւր պարտականութիւններից դուրս, այնպիսի վարմունք էր բանեցնում, այնպիսի խօսքեր էր ասում և գործեր կատարում, որոնք հասարակութեան շատ խաւերին համելի էին։ Բուլանժէի ուղղամտութեան պատգամաւորների մեծամասնութիւնը չէր հաւատում։ Բայց պնդել և պահանջել նորա հեռանալը մինիստրութիւնից, այդ կը նշանակէր աեղիք տալ «հայրենասէրներին» մեղադրել

նոյն այն մեծամասնութեան և կառավարութեան, թէ սոքա ուրեմն հակառակ են Գերմանացիներից վրէժինդիր լինելու գաղափարին. տեղիք տալ բանւոր դասակարգին՝ կարծել, թէ նոյն այն մեծամասնութիւնը հակառակ է իրան պաշտպանելու գաղափարին, և վերջապէս տեղիք տալ բոլոր հանրապետականներին՝ կասկածել ժողովի մեծամասնութեան հանրապետական ուղղութիւնը։ Այսպիսով Բուլանժէն շարունակեց մնալ իւր պաշտօնի մէջ շնորհիւ այն պաշտպանութեան, որը նա գտնում էր կառավարչական շրջաններից դուրս և, օրէց օր, աւելի ու աւելի հաստատում էր իւր բարեկամութիւնը մէկ կողմից Հայրենասէրների միութիւն (Ligue des patriotes) կոչած զօրեղ ընկերութեան հետ, իսկ միւս կողմից առհասարակ այն բոլոր հանրապետականների հետ, որոնք չէին պատկանում կառավարչական կուսակցութիւններին։

Միապետականները (մագաւորութեան և նապօլէօննեան կայսերութեան կուսակիցները) այդ բոլորից ուրախանում էին, որպէս միշտ, երբ հանրապետականները իրար հետ հաշա չեն։

Բուլանժէի խնդիրը այդ դրութեան մէջ էր, երբ վրա հասաւ ֆրանսիացում վերջին տասը տարիներս այնքան սովորական գառած մինիստրական փոփոխութիւնը, մինիստրական ճգնաժամ, ինչպէս ընդունւած է ասել։ Այս մէջին տասը տարիները մինիստրական ճգնաժամերը յառաջանում են նորանից, որ մինիստրութեան մի որ և է կարեւոր պահանջը պատգամաւորների ժողովում չի ընդունվում ձայների մեծամասնութեամբ։ Իսկ այդ դէպքը լինում է ամեն անգամ, երբ միասինական պատգամաւորների ձայների հետ միանում են հանրապետականների արմատական կուսակցութիւններին պատկանող պատգամաւորների ձայները։ Թէպէտ և այդ երկու կուսակցութիւնները իրար հետ բոլորովին հակառակ են և թշնամի իրանց ներքին քաղաքականութեամբ, բայց այդ երկուսն էլ միշտ իրար հետ միացել են, երբ հարկաւոր է եղել մի որ և իցէ մինիստրութիւն վագր դցել, որովհետեւ մինիստրութիւններ Ֆրանսիայում մինչ այժմն զրեթէ բոլորը կազմւել են չափաւոր հանրապետականների կամ պատեհական (օպպորտիւնիստ) կոչւած կուսակցութեան անդամներից, այն կուսակցութեան, որի դէմ նախանձի կողրութեամբ կուսում է նմանապէս հանրապետական, բայց արմատական քաղաքականութեան հետևող կուսակցութիւնը։

Մինխստրական փոփոխութեան ժամանակ մեծ հարց կար՝ բուլանմէին նոր մինխստրութեան մէջ սկահել թէ չը պահելու մասին։ Վերջին կարծիքը յաղթեց. կազմեց բուլիէի մինխստրութիւնը, որի մէջ պատերազմական մինխստր հրաւիրւեց գեներալ ֆերրօն։ Խնդիրը սա էր՝ ի՞նչպէս վերաբերւել գէպի Բուլանմէն. նայել նորա վերայ, որպէս բաղդախնդրի վերայ, թէ ընդունել նորան իբրև մի լաւ զեներալ, որը միայն գայթակղւել էր արմատականների գոռում-գոչումներից, շացել էր ձեռք բերած բարձր պաշտօնից։ Խնչ և իցէ, հարկաւոր էր Բուլանմէին կամ բոլորովին հեռացնել զօրքի շարքերից կամ տալ նորան մի այնպիսի պաշտօն, որի բնաւորութիւնը չը թուլատրէ գեներալին դուրս գալ խիստ դիացիալինից, խիստ կարգապահութիւնից։ Վճռեցին նորան տալ կօրպուսային հրամանատարի վերին աստիճանի պատասխանատու պաշտօնը, մի պաշտօն, որի մէջ նա պէտք է ըստիպւած կարգ ու կանոն պահպանէր, և մի պաշտօն, որի մէջ եղող զինւորականը, օրէնքի համաձայն, չի կարող ոչ մի ճառ արտասանել, առանց թուլատութեան մինխստրի։ Եւ վերջապէս, այդպիսի բարձր պաշտօն տալով, կարծեցին թէ ապացուցած կը լինին, որ անձնական թշնամութիւն կամ չկամութիւն չունին նորա զէմ և որ Բուլանմէն, եթէ որ և է պատճառ ունէր խէթ աչքով նայելու կառավարչական մեծամասութեան (պատեհականների) վերայ, այժմ նորա հետ կը հաշտի։

Բայց, ոե տուր ո ենլօ... Իւր նոր պաշտօնի մէջ նա շարունակեց իւր մասին անդադար խօսեցնել տալու մոլութիւնը, ասենք խորամանկ տակտիքը։ Իւր կարգադրութիւններով, իւր վարմունքով, իւր ձևերով նա մի կողմից շարունակում էր իրեն յանձնւած զօրքի մէջ պատերազմական ցանկալի եռանդքը պահպանել, իրան սիրելի կացուցանել զօրքին, մեծ հոգս տանելով նորա բարեկեցութեան վերայ. բայց միւս կողմից երևում էին նորա ձգոտմները՝ մի կորպուսի զլխաւորի պաշտօնի մէջ ցոյց տալ ամբողջ Ֆրանսիային, թէ պատերազմական գործի համար ինչ արել է երրորդ հանրապետութեան ժամանակ, իբր թէ նաէ արել մինխստր եղած միջոցին (մինչդեռ ճշմարտութիւնը սա է, որ նա միմիայն շարունակել է իւր նախորդների արածը, ինչպէս կը շարունակէր ամեն մի ուրիշը, ի հարկէ առանց աղմուկի)։ Կամաց կամաց սկսեցին համոզւել, որ

այդ մարդը, թէպէտ և լաւ կօրպուսի հրամանառար, որպէս առաջ լաւ պատերազմական մինիստր էր, վատ և կասկածելի դեր է խաղում։ Այդ համոզունքը ամրացաւ նորանով, որ նա շարունակ ընդունում էր տեսակցութիւններ լրագրական լրատուների՝ բետօրութունների կողմից։ բայց հասունութեան հասաւ այն զարմանալի, օտարութի, վերջապէս անկարելի դերով, որ Բուլանժէն խաղաց Պարիզի աղմուկների ժամանակ՝ 1887-ի նախագահական ճգնաժամի միջոցին, երբ հանրապետութեան նախագահ Գրեվին ստիպւեց թողնել իւր պաշտօնը և երբ ընտրւեց նոր նախագահ Կարնոն։ Գրեվի՛ի հետանալը հետեւանք էր այն անարդ վարմունքի, որ իրան թող էր տւել նորա փեսայ Վիլսոնը՝ օգուելով նախագահական կնիքից և առհասարակ իւր աներոջ ունեցած վատահութիւնից՝ պետական կապալներից օգուելու և փողով զանազան մարդկանց պատւանշաններ տալու համար։ Բանից երեաց, որ այդ խաւար գործերի համար զլիսաւոր միջնորդն էր մի կին, որի պատկերը երաշխաւոր է նորա տգեղութեան և մեծ տարիքին՝ տիկին Լիմուզին։ սրա տունը և թղթերը խուզարկեցին և գտան նամակներ և այցետոմներ շատ երեելի մարդկանց և կանանց, ի միջի այլոց և... Բուլանժէի։ Ինչ գործի համար կարող էր Բուլանժէն մի այդպիսի կասկածաւոր միջնորդ կնոջ մօտ այցելութեան գալ—այդ չը պարզւեց։ Այդ ոչինչ։ մի՞թէ մարդ չի կարող խաբւել և անգիտակցաբար մէկի մօտ լինել, որի «ժուլիկ»-ների թագաւոր լինելը միայն յետոյ է իմացւում։ Միայն թէ աւելացնելը աւելրդ չէ, որ իւր այցետոմնի վրայ Բուլանժէն միքանի առղերով յայտնում է իւր բոլոր անձնւիրութիւնը այդ աիկնոջ և, կարծեմ, մի բան է ինդրում «շոքելով» նորա առջև։ Ինչ և իցէ, այդ ինդիրը չը պարզւեց և շատ էլ հետամուա չեղան իմանալու այդ այցելութեան բնաւորութիւնը, որովհետև փաստեր չը կային գեներալին մեղաղղելու համար։ Անկարելի ասածս այդ չէ, այլ մի ուրիշ բան, որը հասուատւեց, ինչքան էլ անկարելի և անհաւատալի թւի։ Բանը սա է, որ նոր նախագահի ընտրութիւնների օրերում, գաղտնի ոստիկանութիւնը տեսել էր նորին գերազանցութիւն պ. կօրպուսի հրամանատար Բուլանժէին, որի պաշտօնատեղին Բուան էր, տեսել էր նորան, ասում ենք, Պարիզում և այն էլ՝ ծպտեալ շորերով և երեսը այլափոխած, կապոյտ ակնոցներ դրած, իրան էլ կազ ձևաց-

նելով։ Երբ հախագահ ընտրւեց Սաղի Կարնօն և մինիստրութիւն կազմեց Տիրարի ղեկավարութեամբ, սպատերազմական նոր մինիստր Լոժքրօ՛ի առաջին գործն եղաւ հեռացնել Բուլանժէին իւր պաշտօնից և առհասարակ ջնջել նորա անունը ծառայող զինուորների անւանացուցակից։ Այդ գործը կատարւեց արագութեամբ, առանց այլ և այլութեան, բայց, հետևելով օրէնքին, Բուլանժէին վերապահեցին նորա գեներալի տիտղոսը, ստացած շքանշանները, համազգեստ գործածելու իրաւունքը, որպէս նաև նորա պենսիան, որ, կարծեմ, տարեկան 20,000 ֆրանկ է։ Զինուորական ծառայութիւնից զրկւելով, Բուլանժէն կարող էր այժմ ազատ համարձակ քաղաքական ասպարէզ դուրս գալ։ Ինչ ասել կ'ուզէ, որ նորա կուսակիցները խօսքով և զրշով աղաղակեցին Բուլանժէին արած իբր թէ անարդարութեան դէմ։ Բայց ո՞վքեր էին նորա ացդ բարեկամները, — ահա՝ հետաքրքրականը։ Հետաքրքրական ենք ասում, որովհետեւ այն ինչ մեր ընթերցողը պիտի իմանայ և զարմանայ, արգէն ամբողջ աշխարհին զարմացրել է և ամենից առաջ Ֆրանսիացոց իրանց։ Պատգամաւորների ժողովի արմատուական կուսակցութիւնը, որը առաջացրեց Բուլանժէին, յետ կանգնեց նորանից, բացարձակ յայտնելով, որ հակառակ է Բուլանժէին։ Եւ ինչո՞ւ. որովհետեւ Բուլանժէի բոնած ընթացքը պախարակելուց զատ, ացդ կուսակցութիւնը ակիցայտնի նկատեց, որ Բուլանժէն ձգում է հանրապետական կարգ ու կանոնի ջնջման, պարլամենտի կորուստին և, վերջապէս, որ նա միապետական ձգումներ ունի։ Բայց արմատուականներից զրկւելով՝ Բուլանժէն ձեռք բերեց բարեկամութիւնը մի մարդու, որից մի ժամանակ դողում էր ինքը նապոլէօն Ա. և որը մեծապէս նպաստեց երկրորդ կայսերութեան խորտակւելուն։ Դա է զիւական և կախարդական բնաւորութեան տէր Ռոշֆորը՝ ճանաչւած որպէս ամեն բանի և ամեն սրբութեան հետ խաղացող, բայց հանրապետական գործող, խմբագիր «Անհաշտ» (Intransigent) լրագրի, մեծանուն և հարուստ ազնւական, բայց ռամկավարական հրապարակախօս։ Այդ մարդի մտերմութիւնը ձեռք բերեց Բուլանժէն, որպէս և մի ուրիշ մարդու և լնկերութեան, նմանապէս հանրապետականի և այն էլ խիստ հանրապետականի։ լա է՝ Դէլուլէդ բանաստեղծը, նախագահ «Հայրենասէրների միութիւն» կոչւած ընկերութեան։

Այդ երկու մարդկանց բարեկամութիւնը բաւական էր զէսլի Բուլանժէն գրաւելու համար բոլորը, ինչ կայ Ֆրանսիացում զեմառօդացին, ափեղցին մտածող ու խօսող, ամեն տեսակ աղմուկ և սկանդալ հանելու պատրաստ մարդիկ։ Եւ Աստուած միայն զիտէ, թէ ո՞րքան շատ են այդպիսի մարդիկ ամեն երկրում, ուրեմն և Ֆրանսիայում։ Այդ երկու մարդկանց ոյժը բաւակամնին կարևոր էր Բուլանժէի համար։ Խօշքօրը մի կողմից մեծ ազգեցութիւն ունի Ֆրանսիացի և յատկապէս Պարիզի մի քանի թէ բարձր և թէ սոորին խաւերի վերայ։ Խսկ Դերուլէզը Բուլանժէի կողմն անցնելով, իւր հետ գրաւեց նաև «Հայրենասէրների միութիւն» կոչւած մեծ ընկերութիւնը, որի անդամների թիւը պէտք է որ մի քանի հարիւր հազար հոգու հասած լինէր։ Այդ ընկերութիւնը, որը փակելու համար այս մի քանի օրերս ֆրանսիական կառավարութիւնը հրաման տւեց, մի կիսազինորական ընկերութիւն է, հիմնած՝ ֆրանսիական ազգի մէջ պատերազմական ոգին վառ պահելու համար։ Այդ ընկերութիւնը մի տեսակ ոչ-պաշտօնական նպատակ է զբել էլզաս-Լոտարինգիայի քառակարգ միշտ վառ պահել ֆրանսիացիների մէջ։ Ըսկերութիւնը շատ հարուստ է և իւր անդամներին պահում է մի տեսակ կիսազինորական դիսցիպլինի տակ, պարտաւորացնում է զինորական վարժութիւնների, մասնակցել է տալիս այն տօներին, որոնց տօնելուն ընկերութիւնը հայրենասիրական նշանակութիւն է տալիս և այլն։ Այդ ընկերութիւնը մի ժամանակ այնքան ժողովրդականացաւ, որ նորա անդամ զբւելը մի տեսակ պարտք էին համարում բոլոր հանրապետական զործող անձեր։ մինխատրներից շատերը, եթէ ոչ բոլորը, այդ ընկերութեան անդամ էին։ Բաց 1887 թւականի հանրապետութեան նախագահի նոր ընտրութեան ժամանակ, Դերուլէզը, յանուն ընկերութեան, մի այնպիսի փողոցային դեր խաղաց ընդդէմ Ֆերրի՛ի, որ ընկերութեան մեծամասնութեան վճռով, Դերուլէզը հրաժարւեց ընկերութեան նախագահութիւնից, խսկ անդամներից շատերն էլ հեռացան ընկերութիւնից։ Պէտք է իմանալ, որ այդ ընկերութեան կամոնադրութեամբ, որը հաստատած էլ չէ կառավարութիւնից, արգելւած է նորան պարապել թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեամբ (չը մոռանաք այդ, որովհետև մենք պիտի վերադառնանք այդ կէտին՝

ոռւս կօգակ Աշխնովի հետ պատահած դէսլքի առիթով): Բայց անցաւ մի քանի ժամանակ և ընկերութիւնը վերադարձրեց պատւառը նախագահութիւնը նոյն Դէրուլէզին, որը հայրենասէրների զօրեղ կերպով կազմակերպւած ընկերութիւնը գործիք դարձրեց յօդուտ Բուլանժէի, ամեն կերպ միջամտելով և միջամտել տալով ընկերներին՝ Բուլանժէի աջողութիւնը ապահովելու համար: Ասորինի էր այդ—բայց անուում էր: Տէրութիւնը համբերում էր, չուզելով հալածող կառավարութեան անուն վաստակել, քանի որ լիացցս էր, որ ժողովուրզը ինքը գատաստան կ'անէ հանրապետութեան հիմունքների դէմ գլուխ բարձրացած այդ անասնձ մարդկանց դէմ:

Պարիզի քաղաքային վարչութիւնը, որը ահազին մեծամանութեամբ ահա քանի՛ քանի՛ տարի է մի տեսակ խուլ կուիւ է վարում կառավարութեան դէմ, պահանջնելով արտօնութիւններ, որ ցայժմ բոլոր մինհատրութիւնները և պատգամաւորների ժողովը մերժել են, այդ՝ տէրութեան միշտ հակառակող մայրաքաղաքի վարչութիւնն էլ բոլոքեց Բուլանժէի միտումների դէմ:

Բայց ի՞նչ էին այդ միտումները, ահա՛ իննիդրը: Ի՞նչ էր պահանջում Բուլանժէն:

Զինւորական ծառայութիւնից զրկելով, Բուլանժէն դարձաւ քաղաքական անձնաւ որութիւն: Նա այժմ կարող էր անել և խօսել ինչպէս ամեն քաղաքացի: Նա սկսեց իւր քաղաքական նոր ասպարէզը, քարոզելով հետևեալ կախարդական մոքերը: 1) Պէտք է երկրի սահմանադրութիւնը փոխել: Բայց նորա ի՞նչ կէտերը փոխել—դորամասին լուում էր յամառութեամբ: 2) Պէտք է վերջ զնել պարլամենտական անիշխանութեան: Բայց թէ ի՞նչպէս պէտք է կառավարւի երկիրը—այդ մասին լուում էր: 3) Պէտք է հիմնել արդար և շխտակ հանրապետութիւն, որի մէջ մուտք ունենան բոլոր ուղղամիտ հանրապետականները: 4) Հարկաւոր է ունենալ զօրեղ կառավարութիւն: 5) Պէտք է այժմեան պատգամաւորների ժողովը ցրւել և նոր ընտրութիւններ նշանակել:

Ոչ ոք չէր հասկանում այդ խօսքերի ներքին իմաստը: Ի՞նչ է ուզում ասել Բուլանժէն, ի՞նչ դրական առաջարկութիւններ ունէ անելու—դոցա մասին ամենքը զարմացած հարցնում էին, բայց պատասխան չէին դանում: Զէին հասկանում մանաւանդ, թէ ի՞նչ

է նշանակում հանրապետութիւն խօսքը Բուլանժէի նման մի մարդու բերանում, որը կարծես երդւել էր ամեն բանի վարկը կոռրել, ինչ որ հանրապետական օրէնքներով և աւանդութեամբ էր հաստատած:

Ահա՝ կամաց կազմեց մի համոզմենք՝ թէ Բուլանժէն ձգտում է կառավարութեան գլուխ անցնել, իսկ յետոյ... յետոյ, նապօլէօնների օրինակին հետեւելով, կը դառնայ միապետ: Նա պահանջում է, որ պատղամաւորների ժողովը ցրւի և նոր ընտրութիւններ լինին՝ յատկապէս նոր սահմանադրութիւն կազմելու համար: Բայց որպէս զի իւր այդ պահանջները ներկայացնէ ժողովին, պէտք էր, որ ինքը պատղամաւոր լինէր, մանաւանդ ժողովում իւր կուսակիցներն ունենար և մինչև իսկ իւր սեպհական կուսակցութիւնը ստեղծէր: Այլապէս քաղաքական ազդեցիկ գեր խաղալ անկարելի էր:

Պատղամաւորների ժողովում Բուլանժէն սկզբում ոչ մի կուսակից չունէր, բայց շուտով ունեցաւ մի-երկուսին: Դոքա էին Լազեռ, Լոռ («Ֆրանսիա» բաւականին տարածւած թերթի խմբագիր) և գուցէ երրորդը: այդ էր բոլորը, իսկ մի-երկու հոգով ի՞նչ կարելի էր անել մի ժողովում, որը մինչ 600 անդամ ունի:

Նոր կուսակցութիւնը անուն չունէր, որովհետև ոչ ոք չը գիտէր նորա բուն ձգտումները, որպէս զի մի ածականով մկրտէին նորան: Անունը դրեցին Բուլանժէական կամ Բուլանժիզմ: Մի քանի ժամանակից յետոյ իրանք Բուլանժիստները իրանց նոր կուսակցութեան անունը դրեցին՝ ազգային կուսակցութիւն (le parti-national): Բնական է, որ իրանք իրանց հոչակում էին հանրապետական, բայց բոլոր հանրապետականները համարեցին և համարում են նոցա ոչ-հանրապետական, այլ ուղղակի Բուլանժէական: Բուլանժէի ամեն մի քաղլից նոքա նշմարում էին, որ ցանկանում է շփոթութիւն յարուցանել և, ամբոխի ոյժով, կառավարութեան ղեկն իւր ձեռքը դցել և վարել նորան որպէս իշխանապետ, զիքտատոր: Խօշֆօրի և Դէրուլէդի տջակցութեամբ նա արդէն ստեղծել էր մի ամբոխային շարժում իւր օգտին. այդ ամբոխը կեցցէներ էր արձակում ամեն տեղ, ուր երեսում էր Բուլանժէն, երգում էր մի չափազանց ժողովրդական եղանակով մի երգ, որը, յարմարւելով ներկայ դէպքին, վերջանում էր այս խօսքերով՝

Այդ Բուլա՛նժն է, Բուլա՛նժը,
Այն՝ Բուլա՛նժն է, Բուլա՛նժը
Որ մեզ հարկաւոր է:

Դա՝ «Լամպիօն» անունով յատնի երգի փոփոխութիւնն է, որը
երգւում էր յեղափոխականներից Նապօլէն Առերով:

Բուլանժեան շարժումը չէր դադարում: Նա զառաւ քաղաքական
կեանքի այնպիսի երևոյթներից մէկը, որ լրազիրները հարկաւոր հա-
մարեցին նորա զարգացման բոլոր աստիճանները և ելեէջները նշա-
նակել, բացելով իրանց սիւնեակներում մի ամբողջ բաժին՝ Բուլան-
ժիզմ վերնագրով:

Պատգամաւորների ժողովում ձայն և կուսակցութիւն ստեղծե-
լու համար, Բուլանժէն պէսք է յանձն առներ պատգամաւոր ընտրել: Ժողովի անդամներից մի քանիսը մեռան և նոցա տեղ նշանակեցին ընտրութիւններ՝ նոյն թւով նոր պատգամաւորներ ընտրելու համար: Բուլանժէն ներկայացաւ, ներկայացան նաև նորա կուսակիցներից Դէրուլէզը և մի ուրիշը—միւս տեղերում: Խըը Բուլանժէն ընտրւեց, իսկ նորա կուսակիցները—միւս գաւառներում՝ յաղթւեցին: Պարլա-
մենտի անդամ դառնալով, Բուլանժէն պահանջեց, որ ժողովը լուծեի և նոր ընդհանուր ընտրութիւններ կառարւին նոր սահմանա-
դրութիւն մշակելու համար: Ժողովը ի հարկի մերժեց. կծու հա-
կածաւութիւն եղաւ Բուլանժէի և նոր մինխարւութեան պարագլուխ արմատական ֆլոքէի մէջ, որից յետոյ մենամարսութիւն կայցաւ նոցա մէջ. այդ մենամարտութեան մէջ ծերունի ֆլոքէն յաղթեց գե-
ներալ Բուլանժէին, սորա վզին խորը վէրք տալով: Բուլանժէի պար-
տութիւնը կարծես նորա պատիւն էլ մի առժամանակ վայր գցեց. այնպէս որ, անցեալ տարւայ յուլիսին եղած նմանսապէս մասնաւոր ընտրութիւնների ժամանակ, Բուլանժէն, որը արդէն թողել էր իւր պատգամաւորութիւնը, և նորա կուսակից Դէրուլէզը և ուրիշները չընտրւեցին: Հանրապետականները կարծեցին թէ Բուլանժէի աստղը արդէն մարելու վրայ է. բայց նոյն տարւայ օգոստոսին եղան ընտ-
րութիւններ երեք նահանգներում և այդ երեքի մէջ էլ ընտրւեց Բուլանժէն: Կրկին եկաւ ժողով և պահանջեց լուծումն ժողովի, որ չընդունւեց: Կրկին հրաժարական տւեց իւր պատգամաւորութիւնից, որպէս զի մօտագայում մի ուրիշ նահանգում առաջարկւի և, ըն-
տրւելով, ապացուցի թէ ամբողջ ֆրանսիան իրան կուսակից է:

Ահա՝ այդ վերջին ընտրութեան խնդիրն է, որ ամենից հետաքրքրականն էր թւում և ի՞նչու... Որովհետեւ այդ ընտրութիւնը Պարփռում պիտի կասարւեր և որը կասարւեց ներկայ տարւայ յունարի 15-ին (նոր սահիլ), իսկ մեր հաշւով՝ 3-ին յունաւրի։ Խնդիրը սորանումն էր, թէ ի՞նչպէս է համարձակուում Բուլանժէի նման կասկածաւոր մի մարդ ներկայանալ Պարիզի նման առաջադէմ և զրականապէս հանրապետական մի քաղաքում, որը ատելով ատել է և հայածել ամեն գիքտասորութիւն։ Մի՞թէ Բուլանժէն պիտի կարողանար յաջողեցնել իւր ընտրութիւնը Ֆրանսիայի կենդրոնում։ Ֆրանսիայի սրտի մէջ, այն Պարիզում որի միւս 23 պատգամաւորները պատգամաւորների ժողովում, բոլորն էլ գրեթէ արմատական հանրապետականներ, կատաղի թշնամի են Բուլանժէին էլ, նորաբոլոր արարմունքներին էլ։ այն Պարիզի, որի քաղաքային վարչութիւնը գրեթէ ամբողջապէս ծայրացեղ հանրապետականներ են և ծայրացեղ ատող Բուլանժեան շարժման, որի մէջ նոքա գիքտասորութիւնից գէն—ոչինչ չեն կարողանում դուշակել։ Հանրապետականները առաջուց գուշակում էին Բուլանժէի խայտառակ պարառութիւնը, բայց երբեմն էլի կասկածում էին, մտածելով թէ որքա՛ն քմահաճ ժողովուրդ է Պարիզի ժողովուրդը, ո՛վ գիտէ թէ ինչ օյններով Բուլանժէին կը յաջողի, մանաւանդ ժողովրդի ստորին խաւերը իւր խոստումներով դէսի իրան գրաւել, ո՛վ գիտէ, թէ Դէրուէդը ինչ սկանդալներ կ'անէ, ինչ աղմուկներ կը յարուցանէ Բուլանժէի օգոտին։ և վերջապէս, մի բան, որ նշանակութիւն ունի՝ ինչ դիրք պէտք է բունէ ազգաբնակութեան այն մասը, որը թէպէտ և փոքրամասնութիւն կազմող, բայց հանրապետութեան ամենակատաղի թշնամիներն են, այն է՝ թագաւորական և նապօլէօնական կայսերութեան կուսակիցները, մի խօսքով՝ միապետականները։

Բայց մի՞թէ կասկած կարող էր լինել, թէ միապետականները, որոնք կատաղի թշնամիներ են հանրապետականներին առ հասարակ և որոնք իրանց ապահպանողական կուսակցութիւնների անունն են յատկացրել, մի՞թէ նոքա չը պիտի նոյնքան սաստկաբար մարտնչէին Բուլանժէի դէմ, որը ամեն տեղ իրան հանրապետական է հոչակում։ և վերջապէս Բուլանժէն նոյն մարդը չէ, որը, մինիստր եղած ժամանակ, այնքան անողոք կերպով վարւեց բոլոր Փրանսիական իշխա-

նազների գէմ, որի հետևանքն եղաւ դոցա աքսորելը Ֆրանսիայի հողի վրացից:

Ազգպէս պէտք է կարծւէր. բայց հանգամանքներ կային, որնք ուրիշ բան էին ցոյց տալիս և դա՝ Բուլանժեան շարժման գեռ ևս ոչ լաւ պարզւած գաղտնիքներից մէկն է: Փասոր նա է, որ Բուլանժէն որքան անգամ որ ընտրւել է, առեն անգամ նորան օգնել էին միապետականները: Զարմանալի է, բայց ճշմարիտ Դա քաղաքական մի զարհուրելի խարդաւանք է, որի վրացից վարագոյրը կը բայցւի անշուշտ, բայց որի խակական բնաւորութիւնը գեռ միայն նշաններով է յայտնի: Յայտնի է մի բան, որ միապետականները ամենից առաջ ուղղում են վայր գցել հանրապետութիւնը. արդ, նոքա ակնյացմնի կերպով տեսնում են, որ Բուլանժէի վերջնական յաղթութիւնը վերջնական հարւած պիտի տայ հանրապետութեան: Ուրեմն Բուլանժէն աց մոքով իրանց ընկեր կարող է համարւել: Խսկ երբ հանրապետութիւնը կը կրծանափի, դեռ խնդիր է, թէ դորանից օգուտ քաղոյլը Բուլանժէն կը լինի, թէ թագաւորութեան և կայսերութեան ժառանգներից մէկը կամ միւսը: Բայց թէ արգեօք միապետականների այդ պաշտպանութիւնը լինում է մի որ և է բերանացի թէ գրաւոր պայմանների հիման վերայ Բուլանժէի և միապետականների մէջ, թէ հէնց այնպէս, միապետականների իրար մէջ արած խորհրդով—աց յայտնի չէ: Գուցէ միապետականները այժմ պաշտպանում են Բուլանժէին, որ շփոթութիւն յառաջանայ և այդ շփոթութիւնից օգտւելով միապետականներին յաջողի, նոյն խսկ ազգի իրա կամքով, թագաւորական կամ կայսերական գահը վերահաստատել Ֆրանսիայում: Այսպէս թէ այնպէս, բայց Բուլանժէն ընտրւեց Պարիզում յունապիլ 15-ին (նոր սովորով), առանալով 435.860 ձայնից 244,070 ձայն, ընդդէմ ծաք'ի, որը ներկայացրւած էր հանրապետականների կողմից: Ել ի՞նչ նկարագրել Բուլանժիստանների ցնծութիւնը և հանրապետականների վիշտը: Վերջիններս սակայն չը վհատեցին: Արմատական ֆլոքէի մինիստրութեան առաջարկութեամբ լնդունւեց պատգամաւորների ընտրութեան ձևի փոփոխութիւնը, որի մասին մենք այլ անգամ խօսելու առիթ պիտի ունենանք: Ֆլոքէի մինիստրութիւնը, սահմանադրութեան խնդրի պատճառով, վայր ընկառ և մի ամիս է, որ կազմւեց Տիրարի մինիստրութիւնը՝ բաղկացած պա-

տեհականներից։ Այդ մինխառութիւնը խօսք է տւել Բուլանժեան շարժումը կոտրել, խասիւ հալածելով ամեն ապօրինութիւն։ Եւ որովհետև Բուլանժեան աղմուկների գլխաւոր պատճառներից մէկը Դէրուէդն է, ուստի մինխառութիւնը սկսել է իւր խասութիւնը «Հայրենասէրների միութեան» ընկերութիւնից, որի նախագահն է Դէրուէդը։ Սպասում էր մի նոր առիթ և այդ առիթը շուտով ներկայացաւ։ Այս փետրւար ամսին ֆրանսիական պատերազմական մի նաւ ոմբակոծեց Սագալլում (Կարմիր ծովի ափին) մի ամրութիւն, որտեղ պատասխարւած էր Աշխնով կողակի առաջնորդութեամբ հոգևորականներից և աշխարհականներից բաղկացած մի ինքնակոչ խումբ, որի գիտաւորութիւնն էր Արքիմիայի թագաւորիններկանալ կրօնականնազատակներով։ Խնչ ինչ թիւրիմացութիւնների պատճառով, ֆրանսիական նաւը ոմբակոծեց Սագալլոն, որը ֆրանսիական հովանաւորութեան ներքոյ է դատանում, Աշխնովի անհնազանդութեան պատճառով և վիրաւորեց ուուսներից մի քանի հոգու։ Այդ իմանալուն պէս, Դէրուէդը և մի քանի ուրիշները «Հայրենասէրների Ընկերութեան» անունից բողոքեցին ֆրանսիական կառավարութեան այդ արարմունքի դէմ, որը, ասում են «Հայրենասէրները», ուղղւած է Ֆրանսիայի միակ բարեկամ Ռուսիայի հպատակների դէմ։ Կառավարութիւնը յայննեց, որ «Հայրենասէրների միութիւնը» խառնում է արտաքին քաղաքականութեան մէջ, մինչդեռ քաղաքականութիւնը առ հասարակ դուրս է այդ ընկերութեան նպատակներից, համաձայն կանոնադրութեան։ Մինխառութիւնը հրամայեց ընկերութիւնը քանդել, խուզարկել նորա շինութիւնը և Դէրուէդի և ուրիշների տները։ Այդ խուզարկութիւնից բացւեց մի գաղոնիք, այն է որ ընկերութեան խորհուրդը գաղտնի հրաման էր արձակել, որ ընկերութեան անդամները զինւած պատրաստ կենան յայտնի չգէպքերում կառավարութեան աղենատներին դիմադրութիւն ցոյց տալու համար։ Ուրեմն քաղաքական դաւադրութիւն...

Խոկ այդ միջոցին, Բուլանժեի պատւին, մեծահարուսա ղքառհի դ'Պէտէս սարքեց մի փառաւոր խնճոյք, որտեղ հազարաւոր միտպետականների մէջ Բուլանժեն պատւի տեղն էր բոնում և բոլոր իւր ապագայ մինխառների, ծառայողների երկրպագութիւնն ընդունում...

„ՄՈՒՐՃ“-Ի ՆԱՐԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱԽԱԼՅԻՒԱՅ. պ. Զամոցեանցին: Ուզդագրութեան մասին Ձեր գրածը մեղ չը համոզեց: Դուք, որ անքան սիրում եք ու տառը, որտեղ նա աւելորդ է, մենք ինչ մեջաւոր ենք. Շատերը Գերմանիակում ափսոսում են իրանց ձև և ի տառերի բացակացութիւնը ան բառերի մէջ, որտեղ նոքա միացն պոչերի գեր են խաղում. բայց այդ չը խանգարեց Պոռուխաչի Կառավարութեան, որ այդ տառերը գործ չ'ածւն պաշտօնական գրութիւնների մէջ, օրինակ, Tot, Vorrat փոխանակ Todt, Vorrath և նման բառերում: Նոյնը գործեցին պարբերական հրատարակութիւններից շատերը՝ Koelnische Zeitung քաղաքական լրագրից սկսած մինչ Westermanns Monatsschrift զուտ գրական-վիպական ամսագիրը: Դուք, որ ազգքան ծանր եք վերաբերում դէպի ազգքան մնուի սովորութիւնները, ինչ կ'անէիք՝ եթէ Գրիգոր Լուսաւորչի ժամանակ Զեղ առաջարկեին Ձեր սիրած կուռքերից հրաժարուել: Մենք կարծում ենք, որ ոչինչ բան չը բարդող և միենան ժամանակ պարզող և հեշտացնող փոփոխութիւնները օգտակար են:

ԹԻՖԵՒՍ. Տիկին Եղիսաբէթ Տէր-Դաւթեանցին: Շնորհակալութեամբ ստացանք Ձեղնից 5 ըսուբի լոգուս «Մուրճ»-ի Փոխառութիւնական դանձարանին: Անցկացրինք մատեանի մէջ:

ՆՕՎՈ-ԱԼԵՆՔՍԱՆԴՐԻԱ. Ուսուցիչ Յ. Կ.-Են: Շնորհակալութիւն Ձեր ցանկութիւնների համար: Ազբիւրի համար ուղարկածը տեղ հասցրինք:

Մեր բոլոր բաժանորդներին: Մեր խոստացած լողածը, որ պիտի դուրս գար այս համարում, կը դուրս գաջ եկող Նոռմ: Նա կրելու է վերնագիր՝ «Մուրճ»ը որպէս հայկական օրդան և խօսելու է «Արուեկո»-ի և մասամբ «Նոր-Դար»-ի մասին: Մի առանձին լողած նւիրած կը լինի «Փորձ»-ին և «Արձադանք»-ին և առհասարակ պ. Աբգար Յովհաննիանի գործունէութեան և կրելու է վերնագիր՝ «Մուրճ»ը որպէս գրական օրդան:

ՀԱՇՏԱՐԻԱՆ. պ. Վ.՝ին. Ձեր այս երկրորդ անգամ ուղարկածը առաջնից լաջող է, բայց դեռ ոչ բաւականաչափ՝ «Մուրճ»-ում զետեղւելու համար։

ՕՒԵՍՍՍ. պ. Խ.՝ին. Ուղարկւած ոտանաւորների ժանրը «Աղբիւրի»-նն է. բարձր լիրիզմ չը կատ մէջը։

ՊԵՏԵՐԲՈՒԹԻԳ. Ուսանող. Կարելի է տպի. երկրորդ անգամ ուղարկածի մասին զաղափար չենք կազմել։

ՄԵՐ ԸՆԹԵՐ ՅՈՂՆ ԵՐ ԻՆ. Պ. Պոօշեանցի լորէլեանի առիթով, որ պէս լսում ենք, կազմակերպում է առանձին մասնաժողով, որին կը հասնեն բոլոր նէրները լորէլեարի օգտին, որպէս նաև ուղերձները։ Յուս ունինք, որ այդ մասնաժողովը չուսով իրան լաւտնի կը կացուցանէ հասարակութեան։ Մեր ընթերցողներին լաւտնում ենք, որ «Մուրճ»-ի խմբագրութիւնը ընդունելու է ամեն տեսակ նէրներ։ Պոօշեանցի օգտին և հասցնելու է մասնաժողովին, երբ վերջինս կազմակերպւած կը լինի։

«ՓՎԵՐԻ Բ» վրաց լրագրի խմբագրութեան։ Պր. Գ. Զմշկեանի լողւածի առիթով, որ գետեղւած էր «Մուրճ»-ի № 1-ում, արգոյ խմբագրութիւնոյ մի առաջնորդող ունէր գրած լրագրի № 27և մի ֆէլետօն № 33-ի մէջ։ Ֆէլետօնը աչքի տակ չունեցանք, բայց առաջնորդողը թարգմանել տվինք և կարդացինք։ Դուք հերքում եք պ. Զմշկեանի պնդածը, թէ «Պէտօն» վրաց բեմի վրաց վիրացած է ներկայացւում։ Մենք այդ վէճի մէջ խառնւելու ոչինչ չունինք. պ. Զմշկեանն ինքն է պատասխանառու իւր խօսքերի համար։ Եթէ ձիշդ չէ նորա պնդածը, ինչպէս Դուք եք վրացում, — «Մուրճ»-ի խմբագրութիւնը ոչինչ չունի դորա դէմ ասելու. թէպէտ, միւս կողմից, մենք ոչ մի պատճառ չունինք կասկածելու պ. Զմշկեանի տեսնդենցիալ ուղղամոռութեան մասին։ Բայց այդ խնդրի առիթով, Ձեր առաջնորդողում լաւտնում էք մտքեր, որ մենք չենք կարող ընդունել։ Իբր թէ պ. Սունդուկեանցի զրամաները զօրութիւն չունեցան վրաց բեմը վերակենդանացնելու համար այն պատճառով, որ, ասում էք Դուք, եթէ այդ ոժն ունենար Սունդուկեանցը, պէտք է որ առաջ հաւկական բեմը վերակենդանացնէր. մինչդեռ, շարունակում էք Դուք, հայկական բեմը մինչ հիմայ էլ չը կա։ Մենք մնող կոմիտենս չենք համարում վճիռ տալու, թէ որ աստիճանի արդարացի է պ. Զմշկեանի ասածը պ. Սունդուկեանցի մասին վրաց բեմի վերաբերմանը, բայց այս կ'առնենք, որ Ձեր ապացուցը թով է։

Դուք շփոթում էք և չեք զանազանում բեմը թատրոնից։ Շնորհիւ ի միջի ապրոց պ. Սունդուկեանցի, մենք ունինք արդէն հիմնաւոր սկիզբ թատրոնական գրականութեան և դերասանական շխուա, որի վերաբ աշխատել ևն տասնեակ տարիներւ

Սշտական թեմ չունենալը թատրոն չունենալ չէ նշանակում և, ընդհակառակը, մշտական թեմ ունենալը թատրոն ունենալ չէ նշանակում: Մեղ թւում է, թէ մենք՝ հայերս, թատրոն ունինք առանց մշտական բևմի, իսկ զուք՝ վրացիներդ, մշտական բեմ ունիք առանց թատրոն ունենալու: Ի հարկէ, մենք երկուս էլ զեռ շատ աղքատ ենք, մենք՝ թատրոնով, զուք՝ բեմավ, բայց ոչինչ չը կատ զարմանալու, եթէ հայկական թատրոնական մի պիես, վրաց լիգով թարգմանած, վրաց բեմին վերակենդանութիւն տայ, խակ հայկականին՝ ոչ: Այդ մի երեւոցի է, որ կապ ունի մեր երկուսիս աղքերի լնաւորութեան և կամ, եթէ ուղեք, հոգերանութեան հետ: Ան ինչ մենք միան կարդում ենք, զուք միան ներկայացնում էք: Մենք շատ անկի մտածում ենք մեր գրականութեան վերաէ, զուք՝ բեմի վերաէ: Ահա թէ ինչպէս կարող է պատահել, որ, առանց բեմը ի նկատի առնելու, մենք մեծ աջողութեամբ կարողանում ենք Շլյերի և Շեքսպիրի թարգմանութիւններ ստեղծել և դրանով ընթերցող հասարակութեան հետաքրքրութիւնը շարժել: Խակ զուք, մշտական բեմ ունենալով հանդերձ, մինչ օրս աղպիսի զրական քաջապրծութիւն կատարած չէք, թէպէտ և ձեր բեմի վերաէ Համելէտ էլ է ներկայացւում: Ահա թէ ինչո՞ւ Զեր խօսքը, թէ Սունդուկեանցը նախ պէտք է հայկական բեմը վերակենդանացնէր, որ կարողանար վրաց բեմի վերադ նոյն աղպեցութիւնը ունենալ—այդ խօսքը տեսամ ենք մեր աչքում ոյժ չունի:—Փակագծի մէջ ասենք, որ Դուռք զուր տեղն էք հեղում մեղ որ մենք Սունդուկեանցին բարձր տեղ ենք տալիս: Ի հարկէ, Զեր հեղութիւնը հիմնուում է «հանճար» խօսքի վերասուպութիւնը ունենալ—Ահրջացնելով մեր խօսքը, պարոր ենք համարում հաւատացնել Խվերխալի արզոյ խմբագրութեան և առանձնապէս բազմավաստակ իշխան Խլիա Զավշալաձէլն, որ, տափելով պ. Զմշկեանի լաւոնի տողերը, մենք ոչ մի բոպէ չենք կամեցել դորանալ անուղղակի կերպով որոշել մեր մտածողութեան եղանակը մի աղջի մասին, որի հետ զրացիական շխտակ լարաբերութիւններ ունենալը «Մուրճ»-ի խնամք-ներից մէկն է և կը լինի հանապատ:

Կոլկասի Հայոց Քարեզործական Ընկերութեան խորհրդին: Խմբագրութիւնու ստացաւ հինգ անդամակցական վճար՝ 5-ական բուքի ամեն մէկը:



ՄՈՒԲՃ

ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐԱԿԵԱԿԱԲԱՄ Ե:

Տորեկան բաժանորդագիրը	10 ր.
Աէս տարւանիլ	6 ր.
Երեք տարւանիլ	4 ր.
Մի գրքովիլ	1 ր. 50 կ.

Առաջիները, վարժուչիները և բարձրագոյն զողոցների տանօղները վայելում են զիջումներ, համեմատ առանձին տպած յաջարարութեան:

Մուրճի տեսն մի համարը որպէս առաջին «Հրաւեր»-ի մէջ տպած էր, ունենալու է 8—10 տպագրական թերթ, կամ՝ որ նուն է՝ 128 մինչ 160 երես: Մուրճի առաջին համարը ունեցաւ 196, երկրորդ և ներկայ Ն. Ֆ. Անդրեյ 176-ական երես, ամենիս որ ցացմած տեսն է՝ 113 եր. աւելի, քան միջին թւով խոսացածք: Ամ բոլջ տարին Մուրճը կազմելու է 12 զերք, երեք մեծ հատորներ, շուրջ 1800 երեսով:

Դոր բաժանորդները կը սպանան նուխարդ համարները:

ՅԱՅՑԱՐԱԲՈՒԹԻՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ Ե՞:

Ամսական մի երեսի համար	10 ր.
,, կըս երեսի համար	6 ր.
,, քառորդ երեսի համար	4 ր.

Խմբագրութեան հասցեն՝ Տիֆլուսъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“ Խմբագրութիւնը զամենում է՝ Գանովскій փողոց, տուն Յովհաննիսկանի, (Гановская улица, домъ Йоанниесіані). բոլորովին մօտ երեսներն հրազդարակին: